ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՄԱՄՅԱՆ ԼԻԱՆԱ ԼԵՎՈՆԻ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-ՈՒՄ 1965-2015 ԹԹ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Է.Գ.Մինասյան

ԵՐԵՎԱՆ-2017

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**........................................................................................... **3**

**ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ**

ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈԲԲԻԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1.1 Լոբբինգի ինստիտուտը ԱՄՆ-ում ........................................................... 19

1.2 Լոբբինգի դրսևորման վաղ ձևերը ամերիկահայության մեջ ........................... 28

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՄԱՐ (1965-1991 ԹԹ.)

2.1 Հայկական լոբբիի պայքարը ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման համար ........................................................................................ 63

2.2 Հայոց ցեղասպանության ճանաչման համար տարվող պայքարը Միավորված ազգերի կազմակերպությունում .................................................... 90

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻՑ ՀԵՏՈ (1991-2015 ԹԹ.)

3.1 Արցախյան հիմնախնդրի կարգավորումը և Հայաստանին տրամադրվող աջակցությունը ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների գործունեության առանցքում ........................................................................ 99

3.2 Հայոց ցեղասպանության ճանաչման համար մղվող պայքարը նոր պայմաններում ........................................................................................ 139

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ........................................................................... 169

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ............. 176

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XX դարի առաջին քառորդին տեղի ունեցած երկու իրադարձություններ բախտորոշ նշանակություն են ունենում հայ ժողովրդի պատմական ճակատագրում՝ կանխորոշելով նրա հետագա կենսագործունեության առանձնահատկությունները: Մի կողմից՝ 1915-1923 թթ. երիտթուրքական և քեմալական վարչակարգերի կողմից իրականացված հայ ժողովրդի ցեղասպանության հետևանքով ամբողջությամբ դատարկվում է Արևմտյան Հայաստանը և ստվարանում Հայկական սփյուռքը, մյուս կողմից՝ 1920 թ. անկում է ապրում Հայաստանի առաջին հանրապետությունը և երկրում հաստատվում են խորհրդային կարգեր, ինչի հետևանքով այն զրկվում է ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու իրավունքից: Նման պայմաններում, տասնամյակներ շարունակ, Հայ դատի և պահանջատիրության միակ հետապնդող է դառնում աշխարհի տարբեր երկրներում հաստատված սփյուռքահայությունը: Այդ գործում հատկապես մեծ ներդրում է ունենում ԱՄՆ-ի հայ համայնքը:

ԱՄՆ-ում հայերը հաստատվել են դեռևս XVII դարի սկզբներից, բայց որպես համայնք հանդես են եկել միայն XIX դարի վերջերից: Տեղի հայ համայնքն ավելի է ստվարանում Մեծ եղեռնից հետո՝ դեպի ԱՄՆ հայության զանգվածային հոսքի հետևանքով:

Ցեղասպանությունից փրկված և Միացյալ Նահանգներում հաստատված հայերը և նրանց սերունդները, հաղթահարելով տարաբնույթ դժվարություններ և հարմարվելով հյուրընկալող երկրի պայմաններին, լծվում են Հայ դատի

հետապնդման գործին: Ժամանակի ընթացքում նաև կյանքի են կոչվում հայկական լոբբիստական կազմակերպություններ, որոնց նպատակն էր հասնելու ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչմանն ու դատապարտմանը:

Արցախյան շարժման սկզբնավորումից և Հայաստանի անկախության հռչակումից հետո ամերիկահայ լոբբին ընդլայնում է իր գործունեության շրջանակները՝ Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրի կողքին դնելով նաև Արցախի անկախության ճանաչման, Հայաստանին ու Արցախին տրամադրվող ամերիկյան օգնության ապահովման, ՀՀ-ԱՄՆ հարաբերությունների զարգացման ու ընդլայնման այլ հարցեր:

***Թեմայի ուսումնասիրման արդիականությունը:*** Թեմայի արդիականությունն առաջին հերթին պայմանավորված է ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների կողմից որպես առաջնահերթություններ հռչակված և հայ ժողովրդի համար կենսական այնպիսի հիմնահարցերով, ինչպիսիք են Հայոց ցեղասպանության ու Արցախի անկախության ճանաչումը, Հայաստանի միջազգային դերի ու հեղինակության բարձրացումը:

Հետազոտվող հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է նաև Հարավկովկասյան տարածաշրջանում ամերիկյան արտաքին քաղաքականության վրա հայկական լոբբիի ունեցած ազդեցության հանգամանքով: Հարավային Կովկասը ներկայումս իրենից ներկայացնում է մի բարդ համակարգ, որտեղ բախվում են տարբեր պետությունների ու միջազգային կազմակերպությունների աշխարհաքաղաքական շահերը: Էլ ավելի բարդ պայմաններում է գտնվում Հայաստանը, որը շրջապատված է թշնամական

պետություններ Թուրքիայով և Ադրբեջանով: Նման պայմաններում ամերիկահայ լոբբին փորձում է ամերիկյան քաղաքական շրջանակներում պաշտպանել Հայաստանի տարածաշրջանային շահերը և չեզոքացնել Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից հայության դեմ իրականացվող քայլերը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այն մեծ աշխատանքով, որ իրականացնում են ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունները ԱՄՆ-ում գործող թուրք-ադրբեջանական լոբբինգի հակահայ գործունեության դեմ:Գաղտնիք չէ,որ թուրքական և ադրբեջանական լոբբիստական կազմակերպությունները, ստանալով սեփական կառավարությունների ֆինանսական աջակցությունը, նպատակաուղղված պայքար են ծավալում հայկական շահախնդրությունների դեմ:

Վերը շարադրված փաստարկները հիմք են տալիս պնդելու, որ ուսումնասիրվող թեման թե՛ գիտաիմացական, թե՛ քաղաքական առումներով միանգամայն արդիական է:

***Ատենախոսության նպատակն ու խնդիրները:*** Ատենախոսության նպատակն է համակողմանիորեն վեր հանել ԱՄՆ-ում գործող հայկական լոբբիստական կազմակերպությունների՝ 1965-2015 թթ. ծավալած կեսդարյա գործունեությունը: Այդ նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ հիմնական խնդիրները.

-Ներկայացնել Միացյալ Նահանգներում հայկական լոբբիի ձևավորման նախադրյալները և վաղ դրսևորումները:

-Ուսումնասիրել ԱՄՆ-ում լոբբինգի ինստիտուտն ու նրա առանձնահատկությունները, և այդ համատեքստում ներկայացնել հայկական

լոբբիստական կազմակերպությունների բնորոշ գծերը:
-Հետազոտել ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների գործունեության առաջնահերթությունները և լուսաբանել հայկական շահախնդրությունները պաշտոնական Վաշինգտոնի քաղաքական ուշադրության կենտրոնում պահելու նպատակով նրանց իրականացրած աշխատանքը:
-Ուսումնասիրել Հայոց ցեղասպանության ճանաչման համար ամերիկահայ լոբբիի ծավալած պայքարը թե՛ Կոնգրեսի երկու պալատներում, և՛ թե գործադիր իշխանության շրջանակներում:
-Ուսումնասիրել արցախահայության ինքնորոշման իրավունքի և Արցախի անկախության ճանաչման ուղղությամբ տարված աշխատանքները:
-Հետազոտել Հայաստանին և Արցախին տարեկան տրամադրվող ամերիկյան օգնության ծավալների պահպանման և մեծացման ուղղությամբ իրականացվող լոբբիստական աշխատանքը:
-Ներկայացնել հայկական լոբբիի ջանքերը և հաջողությունները չեզոքացնելու նպատակով թուրք-ադրբեջանական կառավարող շրջանակների և լոբբիի դրսևորած հակազդեցությունը:
-Բացահայտել ամերիկյան ներքին և արտաքին քաղաքականության վրա հայկական լոբբիի ունեցած ազդեցության իրական մասշտաբները:
-Ուսումնասիրել ամերիկահայ լոբբիի ծավալած գործունեությունը ԱՄՆ-Թուրքիա և ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունների դիտանկյունից:

***Ատենախոսության գիտական նորույթը:***

Ուսումնասիրության գիտական նորույթն առաջին հերթին այն է, որ հայ պատմագրության մեջ չկա ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների ձևավորման

պատմությունը, տարաբնույթ գործունեությունը, նրանց ձեռքբերումները լուսաբանող ամբողջական որևէ աշխատություն: Այս առումով փորձ է արվել համակողմանիորեն ուսումնասիրել և վեր հանել ԱՄՆ-ում գործող հայկական լոբբիի ծավալած գործունեությունը, նրա կողմից որդեգրված առաջնահերթությունները, պայքարի ձևերը և իհարկե, ամերիկյան արտաքին քաղաքականության վրա նրա ունեցած ազդեցությունը:

Բացի վերոնշյալից՝ ատենախոսության մեջ քննության են առնվել հետևյալ հիմնահարցերը.

- Աշխատանքում տրված են նաև ամերիկահայ վաղ լոբբիստական կազմավորումների ձևավորման և գործունեության կարևոր դրվագները:
- Թեև ԱՄՆ-ում գործում են ամերիկահայ լոբբիստական ու հայանպաստ մի շարք կառույցներ, այնուամենայնիվ, խոսելով մեր կողմից հետազոտվող ժամանակահատվածի ամերիկահայ լոբբիի մասին, ի նկատի ունենք երկու հիմնական կառույցներ՝ Ամերիկայի Հայ դատի հանձնախումբ և Ամերիկայի Հայկական համագումար: Ատենախոսության մեջ առաջին անգամ հանգամանալից քննության են առնվել այս երկու կառույցների ձևավորման պատմությունը, նրանց կողմից առաջնահերթություններ հռչակված խնդիրները, ծավալած գործունեության առանձնահատկություններն ու ունեցած ձեռքբերումները:
- Ատենախոսության մեջ լուսաբանված են ամերիկյան գործադիր և օրենսդիր իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ վերջին ավելի քան հիսուն տարիների ընթացքում արձանագրված հաջողությունները՝ ամերիկահայ լոբբիի ծավալած գործունեության համատեքստում:

- Աշխատանքում առաջին անգամ փորձ է արվել ներկայացնել ՄԱԿ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների իրականացրած գործունեությունը և այդ հարցում ունեցած որոշ ձեռքբերումները:
- Աշխատանքում քննության են առնվել Արցախի անկախության ճանաչման, Հայաստանին ու Արցախին տրամադրվող ամերիկյան ամենամյա օգնությունն ապահովելու ուղղությամբ նրանց կողմից տարվող աշխատանքները:
- Ատենախոսության մեջ առաջին անգամ շրջանառության մեջ են դրվել թեմային վերաբերող արխիվային նյութեր և տարաբնույթ այլ սկզբնաղբյուրներ:

***Ատենախոսության կիրառական նշանակությունը:*** Հետազոտության մեջ ներկայացվող հիմնադրույթները, եզրահանգումներն ու վերլուծությունները կարող են օգտագործվել ամերիկահայ համայնքին, Միացյալ Նահանգների լոբբինգի ինստիտուտին, ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների գործունեությանը վերաբերող հետազոտությունների և դասախոսությունների համար: Աշխատության դրույթները կարող են օգտակար լինել նաև Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության վրա հայկական լոբբիի ունեցած ազդեցության վերաբերյալ ուսումնասիրություններ և վերլուծական նյութեր պատրաստելու առումով:

***Ատենախոսության մեթոդաբանական հիմքը:*** Ատենախոսությունը շարադրված է թեմայի վերաբերյալ առկա արխիվային նյութերի, հայկական և օտար տպագիր սկզբնաղբյուրների, փաստաթղթերի, գիտական տարաբնույթ ուսումնասիրությունների

և պարբերական մամուլից քաղած նյութերի հիման վրա՝ վերլուծական, համադրական և պատմահամեմատական մեթոդների կիրառմամբ: Պատմահամեմատականության մեթոդը հնարավորություն է տվել ներկայացնելու հայկական լոբբիստական կազմակերպությունների գործունեությունը պատմական տարբեր շրջաններում:Ատենախոսության մեջ վերլուծական մեթոդը լայնորեն կիրառվել է՝ ներկայացնելու համար հայկական լոբբիստական կազմակերպությունների միջև առկա տարբերությունները, նրանց առանձնահատկությունները, թուրքական և ադրբեջանական հակազդեցությունը, ինչպես նաև դիտարկելու հայկական լոբբիի ունեցած հաջողությունները և ձախողումները Միացյալ Նահանգների պետական ու քաղաքական շահերի համատեքստում:

***Հետազոտության ժամանակագրական և տարածքային շրջանակը:*** Ատենախոսության ժամանակագրական շրջանակն ընդգրկում է 1965-2015 թթ. ընկած ժամանակահատվածը: Ժամանակագրական նման շրջանակի ընտրությունը միանգամայն հիմնավորված է: ԱՄՆ-ում հայկական լոբբիի գործունեության վերելքի շրջանը սկսվում է Մեծ եղեռնի հիսունամյակից կամ զարթոնքի շրջանից: Աշխատության ժամանակագրական վերին շրջանակը կապված է Մեծ եղեռնի հարյուրամյա տարելիցի հետ: Աշխատանքի տրամաբանական ամբողջականությունն ապահովելու նպատակով, ժամանակագրական թե՛ ներքին, թե՛ վերին, շրջանակները առանձին դեպքերում մեր կողմից գիտակցաբար խախտվել են: Բանն այն է, որ ԱՄՆ-ում հայկական լոբբիի վաղ դրսևորումներ առկա էին դեռևս XX դարի երկրորդ տասնամյակից: Ուսումնասիրվող հարցի

վերաբերյալ ավելի ամբողջական պատկերացում տալու, ինչպես նաև ԱՄՆ-ում ձևավորված լոբբիզմի համակարգի մասին անհրաժեշտ պատկերացում ապահովելու նպատակներով աշխատանքի առաջին գլխի շարադրանքում դուրս ենք եկել նշված ժամանակագրական շրջանակներից: Նույն պատճառով մեր տեսադաշտից դուրս չեն մնացել նաև վերջին երկու տարիների առանձին իրադարձություններ: Ատենախոսության տարածքային շրջանակը սահմանափակվում է ԱՄՆ-ի տարածքով:

***Ատենախոսության աղբյուրագիտական հենքը:*** Ատենախոսության աղբյուրագիտական հենքը բազմազան է: Այն շարադրվել է արխիվային վավերագրերի, փաստաթղթերի ժողովածուների, տպագիր այլ վավերագրերի, մամուլից և համացանցի տարբեր կայքէջերից քաղված բազմազան նյութերի հենքի վրա:

Մեր հետազոտության աղբյուրագիտական առաջին շերտը կազմել են Հայաստանի ազգային արխիվում և ՀՀ ԳԱԱ-ին առընթեր Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական ֆոնդերում պահվող՝ թեմային առնչվող փաստաթղթերը:

ՀԱԱ-ից օգտագործել ենք ամերիկահայ հասարակական-քաղաքական գործիչ Ներսես Փիլիկյանի գործունեության վերաբերյալ թիվ 408 ֆոնդում պահվող փաստաթղթերի հավաքածուն[1] և Ամերիկահայ ազգային խորհրդի՝ թիվ 426 ֆոնդում պահվող շրջաբերականները և հրահանգները մասնաճյուղերին՝ Համաշխարհային հայկական կոնգրեսի հրավիրման մասին[2]: Երկու ֆոնդերում պահվող փաստաթղթերը լույս են սփռում ամերիկահայ լոբբիստական

[1]Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 408, ց. 1, գ. 120:
[2]Տե՛ս նույնը, ֆ. 426, ց. 1, գ. 5, 7, 38, 39, 41, 49, ց. 2, գ. 37:

կազմակերպությունների վաղ շրջանի գործունեության վրա:

ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդերից թեմայի լուսաբանման համար արժեքավոր են եղել «ԱՄՆ,Հայկական հարցն ու Հայոց ցեղասպանությունը» վերտառությամբ 25-րդ բաժինը[3] և «Միջազգային պայմանագրեր, համաձայնագրեր, բանաձևեր Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման մասին» վերնագիրը կրող 41-րդ բաժինը[4]:

Ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների գործունեության վաղ շրջանի ուսումնասիրության տեսանկյունից կարևոր են 1945 թ. Սան-Ֆրանցիսկոյում գումարված ՄԱԿ-ի առաջին վեհաժողովին Ամերիկահայ ազգային խորհրդի և Հայ դատի ամերիկյան հանձնախմբի ներկայացրած հուշագրերը[5]:

Թեմայի լուսաբանման համար սկզբնաղբյուրային արժեք ունեն ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախմբի նախաձեռնությամբ և հրատարակությամբ լույս տեսած տպագիր վավերագրերը,կոչերն ու հայտարարությունները[6], որտեղ ներկայացված են Հայ դատի ամերիկյան հանձնախմբի ձևավորման, առաջադրած խնդիրների,

---

[3] Տե՛ս ՀՀ ԳԱԱ-ին առընթեր Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի (այսուհետ՝ ՀՅԹԻ) գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 10, փաստաթուղթ 1, թղթապանակ 11, փաստաթուղթ 2, թղթապանակ 51, փաստաթուղթ 3, թղթապանակ 52, փաստաթուղթ 4, թղթապանակ 53, փաստաթուղթ 1, 2, 3, թղթապանակ 58, փաստաթուղթ 1, թղթապանակ 65,փաստաթուղթ 1,թղթապանակ 80,փաստաթուղթ 26:

[4] Տե՛ս նույնը,բաժին 41,թղթապանակ 1,փաստաթուղթ 3, 4:

[5] Տե՛ս The Case of the Armenian People, Memorandum to the United Nations Conference on International Organization in San Francisco, Submitted by the Armenian National Council of America, New York, 1945; A Memorandum Relating to the Armenian Question, Issued by Armenian National Committee, New York, 1945.

[6] Տե՛ս Հաղորդագրութիւն Հայ դատի յանձնախումբի,Նիւ Յորք, թիվ 1, օգոստոս, 1945, Հայ դատի աշխատանքներ եւ անոնց արձագանքը Թուրքիոյ մէջ, Պոստըն, 1967, Հ. Յ. Դ. Ամերիկայի Կեդրոնական կոմիտեի կոչ-յայտարարութիւնը Հիմնադրամի հանգանակութեան առթիւ՝ ամերիկահայութեան, ա. տ., 1967, Քաղուածք Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի 40-րդ պատգամաւորական ժողովի արձանագրութիւններէն, Պրովիտենս,ա.հ.,1933:

առաջին քայլերի, ինչպես նաև ՄԱԿ-ում 1967 թ. ընթացքում ծավալած աշխատանքի պատմությունը:

Ամերիկայի Հայկական համագումարի հիմնադրման, ծավալած գործունեության և ունեցած ձեռքբերումների լուսաբանման տեսանկյունից կարևոր են կառույցի կողմից հրատարակված զեկույցները[7]:

Ամերիկյան իշխանության օրենսդիր մարմնի կողմից տարբեր տարիներին Հայոց ցեղասպանության հարցի շուրջ կազմակերպված լսումների, ընդունված բանաձևերի ներկայացման տեսակետից կարևոր են Կոնգրեսի հրատարակությունները[8]:

Թեմայի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն ամերիկահայ հեղինակ, «Կալիֆորնիա կուրիեր» թերթի գլխավոր խմբագիր և հրատարակիչ Հարութ Սասունյանի կողմից կազմված փաստաթղթերի և հայտարարությունների երկու ժողովածուները, որոնցում ներկայացվում են Հայոց ցեղասպանության վերաբերյալ Միացյալ Նահանգների օրենսդիր մարմնի կողմից ընդունված որոշումներն ու բանաձևերը[9]:

Միացյալ Նահանգների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի վերաբերյալ մեծածավալ տեղեկատվություն է պարունակում Յուրի Բարսեղովի կողմից կազմված փաստաթղթերի ժողովածուն: Դրանում ներկայացված են Ցեղասպանության վերաբերյալ տարբեր տարիներին Կոնգրեսի երկու պալատների ընդունած

---

[7] Տե՛ս Armenian Assembly of America, Annual Report, Washington, 1995, 1997, 2004, 2005.

[8] Տե՛ս The History of Armenian Genocide: Hearing before the Committee on International Relations, House of Representatives, One Hundred Fourth Congress, Second Session, May 15, 1996, Washington, 1996; Affirmation of the United States Record on the Armenian Genocide Resolution, United States Congress, House of Representatives, Committee on International Relations, Washington, 2000; H. Res. 398, The United States Training on and Commemoration of the Armenian Genocide Resolution, Hearing before the Subcommittee on International Operations and Human Rights of the Committee on International Relations, House of Representatives, 106th Congress, Second Session, Washington, 2001.

[9] Տե՛ս The Armenian Genocide: Documents and Declarations 1915-1995, Complied with an Introduction by Harut Sassounian, Glendale, 1995; The Armenian Genocide: The World Speaks Out (1915-2015), Documents and Declarations with an Introduction by Harut Sassounian, Glendale, 2015.

քանաձևերը, ԱՄՆ-ի նախագահների ամենամյա ուղերձները ապրիլի 24-ի առթիվ, ինչպես նաև ԱՄՆ-ի տարբեր նահանգների կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող որոշումներն ու հայտարարությունները[10]:

Հայաստանին տրամադրված ամերիկյան տնտեսական օգնության ծավալների ուսումնասիրության համար կարևոր նշանակություն են ունեցել ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանատան կողմից հրատարակված նյութերը[11]:

Թեմայի ուսումնասիրման համար շատ արժեքավոր են ժամանակի հայ մամուլի նյութերը, հատկապես ՀՅԴ-ի կողմից հրատարակվող «Հայ դատ» (Լոնդոն) ամսագրից, «Ասպարեզ» (Գլենդեյլ) ու «Հայրենիք» (Բոստոն), «Ազդակ» (Պէյրութ) և Ռամկավար ազատական կուսակցության պաշտոնաթերթ «Զարթօնք» (Պէյրութ) օրաթերթերի էջերից քաղված նյութերը:

Հայկական լոբբիստական կազմակերպությունների ծավալած գործունեության, Հայոց ցեղասպանության և Արցախի անկախության ճանաչման, Հայաստանին ու Արցախին տրամադրվող ամերիկյան օժանդակության և, ընդհանրապես, նրանց ամենօրյա գործունեության վերաբերյալ կարևոր աղբյուր են հանդիսանում Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի[12] և Ամերիկայի Հայկական համագումարի[13] պաշտոնական կայքէջերը, որտեղ տեղակայվում են կառույցների ամենօրյա գործունեության մասին մամլո հաղորդագրություններ:

---

[10] Տե՛ս Геноцид армян: Ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий, ред. и сост. Ю. Г. Барсегов, т. 2, ч. 1, Москва, 2003.

[11] Տե՛ս Ամերիկայի Միացյալ Նահանգների օգնությունը Հայաստանին, Եր., 1998, նաև՝ Միացյալ Նահանգների օգնությունը Հայաստանին. Նվիրումի և համագործակցության տասնամյակ, Եր., 2002:

[12] Տե՛ս https://anca.org/

[13] Տե՛ս http://www.aaainc.org/

Արցախի պատմության, երկրում տեղի ունեցող քաղաքական, տնտեսական գործընթացների, Արցախյան հակամարտության և այդ խնդրում ԱՄՆ-ի որդեգրած դիրքորոշման վերաբերյալ կարևոր աղբյուր է հանդիսանում Ամերիկայի Հայկական համագումարի ջանքերով Վաշինգտոնում հիմնված Ամերիկայի Միացյալ Նահանգներում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության կամ Գրասենյակի պաշտոնական կայքէջը[14]։

Հայոց ցեղասպանության պատմության, միջազգային ճանաչման գործընթացի, ԱՄՆ-ի նախագահների ապրիլի 24-ին արված հայտարարությունների և, ընդհանրապես, Հայոց ցեղասպանության վերաբերյալ բազմազան հիմնահարցերի վերհանման առումով կարևոր աղբյուր է Ամերիկայի Հայկական համագումարի կողմից ստեղծված Հայ ազգային ինստիտուտի կայքէջը[15]։

Հայոց ցեղասպանության հիմնահարցերի, Հայրենիք-Սփյուռք կապերի ուսումնասիրության համար առանձնակի արժեք է ներկայացնում ժամանակակից հայագիտական ուսումնասիրությունների և վավերագրերի Զորյան ինստիտուտի կայքէջը[16]։

Մեծապես օգտվել ենք նաև ԱՄՆ-ի Կոնգրեսի պաշտոնական կայքէջից[17], որտեղ տեղակայված են Հայոց ցեղասպանության վերաբերյալ թե՛ Ներկայացուցիչների պալատում, և թե՛ Սենատում ներկայացված կամ ընդունված բանաձևերը։

***Ատենախոսության ուսումնասիրվածության աստիճանը։*** ԱՄՆ-ում գործող հայկական լոբբիստական կազմակերպությունների՝ 1965-2015 թթ.

---

[14] Տե՛ս http://www.nkrusa.org/
[15] Տե՛ս http://www.armenian-genocide.org/
[16] Տե՛ս http://zoryaninstitute.org/
[17] Տե՛ս https://www.congress.gov/

ծավալած գործունեության ուսումնասիրությունը լիարժեք և ամբողջական չի կարող լինել առանց ԱՄՆ-ի հայ համայնքի կազմավորման պատճառների, նրա ձևավորման ու զարգացման գործընթացների և ամերիկահայ լոբբիի վաղ դրսևորումների վերաբերյալ գիտելիքների որոշակի պաշարների առկայության: Թե՛ հայ, և թե՛ օտար պատմագրության մեջ առկա են ամերիկահայ համայնքի պատմությանը, համայնքում գործող հասարակական, կրթական, եկեղեցական ու մշակութային կառույցներին նվիրված բազմաթիվ աշխատություններ, որոնցից կարող ենք առանձնացնել Աշոտ Աբրահամյանի[18], Քնարիկ Ավագյանի[19], Անդրանիկ Անդրեասյանի[20], Սերգեյ Գասպարյանի[21], Ռիչարդ Յովհաննիսյանի[22], Ռոբերտ Միրաքի[23], Վարդան Մալքոմի[24], Վլադիմիր Վերթսմանի[25], Արա Ավակյանի[26], Սարգիս Ատամյանի[27], Դեյվիդ Վալդսթրեյչերի[28] աշխատությունները: Վերոնշյալ աշխատություններում լոբբինգի թեման և ընդհանրապես ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունները ներկայացված են լոկ այնքանով, որքանով անդրադարձ է կատարված ԱՄՆ-ի հայ համայնքի քաղաքական ու հասարակական կառույցների համախմբման առաջին փորձերին և հայկական առաջին լոբբիստական

18 Տե՛ս Աբրահամյան Ա., Յամառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հատ. Բ, Եր., 1967:
19 Տե՛ս Ավագյան Ք., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը □սկզբնավորումից մինչև 1924 թ.□, Եր., 2000:
20 Տե՛ս Անդրէասեան Ա., Սփիւռքը եւ հայրենիքը, Պէյրութ, 1962:
21 Տե՛ս Գասպարյան Ս., Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Եր., 1962:
22 Տե'ս Hovhannisyan R., Armenian People From Ancient to Modern Times, vol. 2, New York, 2004.
23 Տե՛ս Mirak R., Torn between Two Lands: Armenians in America 1890 to World War I, Cambridge, 1987.
24 Տե՛ս Malcom V., The Armenians in America, Boston, 1919.
25 Տե՛ս Wertsman Vl., The Armenians in America 1618-1976, New York, 1978.
26 Տե՛ս Avakian A., The Armenians in America, Minneapolis, 1977.
27 Տե՛ս Atamian S., The Armenian Community. The Historical Development of a Social and Ideological Conflict, New York, 1955.
28 Տե՛ս Waldstreicher D., The Armenian Americans, New York, Philadelphia, 1989.

կազմակերպությունների ու նրանց ծավալած գործունեության:

ԱՄՆ-ում լոբբինգի ինստիտուտի առանձնահատկությունների, տեսակների, հատկապես էթնիկ լոբբինգի և ամերիկյան արտաքին քաղաքականության վրա վերջինիս ունեցած ազդեցության վերաբերյալ հրապարակի վրա առկա ուսումնասիրությունները, որպես կանոն, հրատարակվել են օտար հեղինակների կողմից: Դա միանգամայն բացատրելի է, քանի որ լոբբինգի թեման, չնչին բացառություններով, նոր է հայ պատմագրության համար: ԱՄՆ-ում լոբբինգի ինստիտուտի և լոբբիստական խմբերի՝ երկրի ներքին ու արտաքին քաղաքական գործընթացներում ունեցած ազդեցությունը լուսաբանելու տեսանկյունից կարևոր են Թոմաս Ամբրոսիոյի[29], Քեթլին Նյուլանդի[30], Միշել Դեկկերի[31], Քեյթ Վիլկինսոնի[32] աշխատությունները, ինչպես նաև Կարեն Վերանյանի[33] և Ռոբերտ Ղևոնդյանի[34] հոդվածները:

Միացյալ Նահանգներում հաստատված հայ քաղաքական կուսակցությունների համախմբման վաղ փորձերի լուսաբանման և առաջին հայ լոբբիստական կազմակերպությունների գործունեության ուսումնասիրության

---

[29] Տե՛ս Ambrosio Th., Ethnic Identity Groups and US Foreign Policy, London, 2002, նույնի՝ Irretendism: Ethnic Conflict and International Politics, Westport, 2001.

[30] Տե՛ս Newland K., Voice after Exit: Diaspora Advocacy, Washington, 2010.

[31] Տե՛ս Dekker M., Ethnic Lobbying and Diaspora Politics in the U.S. (the Case of the Pro-Palestinian Movement), Netherlands, 2010.

[32] Տե՛ս Wilkinson K., One Nation... Indivisible? Ethnic Interest Groups and U.S. Foreign Policy, Alabama, 1999.

[33] Տե՛ս Վերանյան Կ., Լոբբինգի ինստիտուտը Միացյալ Նահանգներում. Լոբբինգային գործունեության իրավաքաղաքական հիմքերը, // «21-րդ դար», Եր., 2010, թիվ 1, էջ 25-44:

[34] Տե՛ս Ղևոնդյան Ռ., Էթնիկ լոբբինգն ԱՄՆ-ում. Էթնիկ խմբերի շահերը ԱՄՆ քաղաքական օրակարգի ձևավորման առանցքում, // «21-րդ դար», Եր., 2016, թիվ 1, էջ 69-79:

տեսանկյունից շատ արժեքավոր է Մանուկ Ճիզմեճյանի աշխատությունը[35]:

Ամերիկահայ լոբբիի վաղ դրսևորումներին նվիրված աշխատություններից կարելի է առանձնացնել Վարդգես Եղիայանի՝ Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեին և նրա հիմնադիր Վահան Քարտաշյանին նվիրված աշխատությունը[36]: Ի դեպ, հետագայում այդ կառույցի իրավահաջորդը դարձավ ՀՅԴ-ի կողմից ստեղծված Հայ դատի ամերիկյան հանձնախումբը:

Ամերիկահայ լոբբիի, մասնավորապես Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեի և Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի հիմնադրման ու գործունեության վերաբերյալ արժեքավոր տեղեկատվություն է պարունակում Գրեգորի Աֆթանդիլյանի հեղինակած հետազոտությունը[37]:

Ամերիկահայ առաջին լոբբիստական կազմակերպությունների գործունեության և Հայկական հարցի լուծման համար իրականացվող աշխատանքների լուսաբանման տեսանկյունից արժեքավոր է Անդրանիկ Անդրեասյանի աշխատությունը[38]:

Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցին հաջորդած տարիներին Հայ դատի առջև ծառացած նոր խնդիրների և դրանց լուծմանը հասնելու նպատակով կատարվելիք մարտավարական բնույթի սրբագրումների վերաբերյալ ուշագրավ դիտարկումներ կան լիբանանահայ հեղինակ Գերսամ Ահարոնյանի աշխատություններում[39] և նրա

---

35 Տե՛ս Ճիզմէճեան Մ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց: 1890-1925, Ֆրեզնօ, 1930:

36 Տե՛ս Yeghiayan V., Vahan Cardashian: Advocate Extraordinary for the Armenian Cause, Glendale, 2008.

37 Տե՛ս Aftandilian G., Armenia, Vision of a Republic: The independence Lobby in America (1918-1927), Boston, 1981.

38 Տե՛ս Անդրէասեան Ա., Հայկական դատին նոր հանգրուանը, Պէյրութ, 1967:

39 Տե՛ս Ահարոնեան Գ., Խոհեր յիսնամեակի աւարտին, Պէյրութ, 1966, նոյնի՝ Մեծ երազի ճամբուն վրայ, Լոս Անճելըս, 1986:

կազմած՝ Մեծ եղեռնին նվիրված «Հուշամատյան»-ում[40]:

Սփյուռքում տպագրված և հիմնախնդրին առնչվող աշխատություններից հետաքրքրություն է ներկայացնում նաև ամերիկահայ լրագրող և հասարակական գործիչ Հրանտ Սիմոնյանի աշխատությունը: Նրանում մասնավորապես ներկայացվում է Հայոց ցեղասպանության ճանաչման համար 1965թվականից նոր թափով ծավալված պայքարի մարտավարությունը, ինչպես նաև Ամերիկայի Հայկական համագումարի (Ասամբլեա) հիմնադրման և գործունեության վաղ շրջանի պատմությունը[41]:

Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում ամերիկյան քաղաքականությունը, առանձին քաղաքական գործիչների կողմից ԱՄՆ-ի Սենատում և Ներկայացուցիչների պալատում արված հայտարարությունները, ինչպես նաև ՄԱԿ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ ծավալված աշխատանքները ներկայացված են Հակոբ Թարկմանյանի խմբագրությամբ լույս տեսած աշխատության մեջ[42]:

Հայկական լոբբիստական կազմակերպությունների, մասնավորապես Հայ դատի ամերիկյան հանձնախմբի և Ամերիկայի Հայկական համագումարի ձևավորման պատմությունը, դրանց կողմից առաջադրված խնդիրները, այլ էթնիկ լոբբիների հետ ունեցած համագործակցությունը, ձեռքբերումները, պայքարի ձևերը, ամերիկյան արտաքին քաղաքականության վրա նրա ունեցած ազդեցությունը վեր հանելու տեսանկյունից

---

40 Տե՛ս Յուշամատեան Մեծ Եղեռնի 1915-1965, պատր.՝ Գ. Ահարոնեան, Պէյրութ, 1965:
41 Տե՛ս Սիմոնեան Հ., Հայ դատի զինուորներ՝ լաւ մտիկ ըրէք, Լոս Անճելըս, 1983:
42 Տե՛ս The Truth about the Massacres and Deportations of the Armenian Population of the Ottoman Empire (1915-1922), edited by Tarkmanian H., Beirut, 1975.

արժեքավոր են Հիթեր Գրեգգի հեղինակած հետազոտությունը[43] և Կլոդ Մոնիկեի ու Վիլյամ Ռաչիմորայի խմբագրությամբ լույս տեսած ուսումնասիրությունը[44]:

Արժեքավոր է նաև Դեյվիդ Քինգի և Մայլս Փոմփերի հեղինակած ընդարձակ հոդվածը[45], որտեղ ներկայացված են ամերիկահայ լոբբիի ծագումը, վերջինիս հաջող գործունեության ակնառու օրինակ հանդիսացող՝ ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից թիվ 907 բանաձևի ընդունման և պահպանման համար տարված լոբբիստական աշխատանքը, ինչպես նաև Հայաստանի և Ադրբեջանի նկատմամբ ԱՄՆ-ի որդեգրած քաղաքականությունը:

Հայկական լոբբիստական կազմակերպությունների ձևավորման, պայքարի որդեգրած մեթոդների, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության վրա ունեցած ազդեցության, ինչպես նաև Հայաստանի և իր հարևան երկրների նկատմամբ Միացյալ Նահանգների դիրքորոշման բացահայտման տեսանկյունից շատ արժեքավոր է Ժուլիեն Զարիֆյանի հեղինակած հոդվածը[46]:

Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության նկատմամբ ամերիկյան քաղաքականության ուսումնասիրության տեսանկյունից կարևոր հարցադրումներ է պարունակում Սիմոն Փայասլյանի աշխատությունը[47]:

Ուսումնասիրվող հիմնախնդրի տարբեր ծալքեր բացահայտելու, Հայոց ցեղասպանության և Արցախյան հիմնախնդրի վերաբերյալ ամերիկյան քաղաքականության նրբերանգները վեր հանելու,

---

[43] Տե՛ս Gregg H. S., Divided They Conquer: The Success of Armenian Ethnic Lobbies in the United States, Boston, 2002.

[44] Տե՛ս The Armenian Job: The Role of the Armenian Lobby in the Pattern of Enmity in South Caucasus, European Strategic Intelligence and Security Center, edited by Claude Moniquet and William Racimora, Brussels, 2013.

[45] Տե՛ս King D., Pomper M., The US Congress and the Contingent Influence of Diaspora Lobbies: Lessons from US policy Toward Armenia and Azerbaijan, // «Journal of Armenian Studies», № 8, vol. 1, Cambridge, 2004, p. 1-26.

[46] Տե՛ս Zarifian J., The Armenian-American Lobby and Its Impact on U. S. Foreign Policy, //«Society» Journal, vol. 51, № 5, New York, 2014, p. 503-512.

[47] Տե՛ս Payaslian S., United States Policy Toward the Armenian Question and the Armenian Genocide, New York, 2005.

ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների վերաբերյալ ուշագրավ վերլուծություններ ու եզրահանգումներ կատարելու տեսանկյունից արժեքավոր են սփյուռքահայ հեղինակ Զավեն Մսըրլյանի աշխատությունները[48]:

ԱՄՆ-ում լոբբինգի ինստիտուտի ձևավորման ու հետագա զարգացման, ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների գործունեության և Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության վրա նրանց ունեցած ազդեցության վերաբերյալ կարևոր տեղեկատվություն է պարունակում Կարեն Վերանյանի, Հայկարամ Նահապետյանի, Արիստակես Սիմավորյանի և Տիգրան Ղանալանյանի հեղինակած աշխատությունը[49]:

ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի լուսաբանման առումով արժեքավոր է Լավրենտի Բարսեղյանի աշխատությունը[50]:

Միացյալ Նահանգների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ հայկական լոբբիստական կազմակերպությունների կողմից տարվող աշխատանքի և խնդիրը ամերիկա-թուրքական հարաբերությունների տիրույթում դիտարկելու տեսանկյունից արժեքավոր է

---

48 Տե՛ս Մսըրլեան Զ., Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական հարցը (1900-2009), Պէյրութ, 2010, նույնի՝ Հայկական հարցի մասին, Պէյրութ, 1978, նույնի՝ Հայկական հարցի հոլովոյթը 1939-2010 թթ., Պէյրութ, 2012, նույնի՝ ՄԱԿ-ի 30-րդ պարբերութեան ծննդոցը, //«Հայկազեան հայագիտական հանդէս», հատ. ԺԱ, Պէյրութ, 1991, նույնի՝ Համաշխարհային Երկրորդ պատերազմին վախճանը եւ հայերը, //«Հայկազեան հայագիտական հանդէս», հատ. ԺԳ, Պէյրութ, 1993, նույնի՝ Հայկական հարցի եւ Արցախեան հիմնախնդրի հոլովոյթը Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակին, //«Հայկազեան հայագիտական հանդէս», հատ. ԼԶ, Պէյրութ, 2016:

49 Տե՛ս Վերանյան Կ., Նահապետյան Հ., Սիմավորյան Ա., Ղանալանյան Տ., Հայ համայնքն ԱՄՆ-ում, Եր., 2010:

50 Տե՛ս Բարսեղյան Լ., Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը, Եր., 2001:

Բենիամին Պողոսյանի հեղինակած աշխատությունը[51]:

Արցախյան հիմնահարցում ԱՄՆ-ի որդեգրած դիրքորոշումը բացահայտելու առումով կարևորվում են ամերիկահայ հեղինակ Արմեն Բաղդոյանի աշխատությունը[52], ինչպես նաև հիմնախնդրի վերաբերյալ Ամերիկայի Հայկական համագումարի հրատարակած ուսումնասիրությունը[53]:

1991-2000 թթ. հայ-ամերիկյան քաղաքական, տնտեսական, գիտակրթական ու մշակութային հարաբերությունների վերլուծության, ինչպես նաև Արցախյան հիմնախնդրի նկատմամբ ԱՄՆ-ի որդեգրած դիրքորոշման ու այդ երկրում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի վերաբերյալ կարելի է առանձնացնել Սևակ Մելիքյանի աշխատությունը[54]:

Թեմայի ուսումնասիրվածության հարցը լուսաբանելիս՝ հարկ ենք համարում առանձնացնել Արարատ Միրզոյանի՝ «Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման և դատապարտման գործընթացը Ամերիկայի Միացյալ Նահանգներում (1915-2004 թթ.)»[55] և Արեգ Գալստյանի՝ «Հայկական լոբբին ԱՄՆ-ում. ձևավորումը և գործունեության հիմնական ուղղությունները 1915-2014 թթ.»[56] թեկնածուական ատենախոսությունները: Դրանցից առաջինը նվիրված է ԱՄՆ-ի նահանգային և դաշնային իշխանությունների կողմից Հայոց

---

[51] Տե՛ս Պողոսյան Բ., Թուրք-ամերիկյան հարաբերությունները և ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 1991-2007 թթ., Եր., 2011:

[52] Տե՛ս Baghdoyan A., Armenia and Nagorno Karabakh, Problems of Security and Development, Belmont, MA, 1998.

[53] Տե՛ս Nagorno Karabakh, A White Paper, Yerevan, 1997.

[54] Տե՛ս Մելիքյան Ս., Հայաստանի Հանրապետություն-Ամերիկայի Միացյալ Նահանգներ հարաբերությունները 1991-2000 թթ., Եր., 2010:

[55] Տե՛ս Միրզոյան Ա., Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման և դատապարտման գործընթացը Ամերիկայի Միացյալ Նահանգներում (1915-2004 թթ.), Եր., 2005:

[56] Տե՛ս Галстян А., Армянское лобби в США: формирование и основные направления деятельности (1915-2014 гг.), Томск, 2015.

ցեղասպանության ճանաչման գործընթացին և լոկ ներկայացնում է Կոնգրեսի երկու պալատների ու ամերիկյան նահանգների կողմից ընդունված և Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևերը: Այլ խոսքով, դրանում ամերիկահայ լոբբիի՝ այդ ուղղությամբ ծավալած գործունեությունը չի ներկայացվում:

Ինչ վերաբերում է Արեգ Գալստյանի ատենախոսությանը, ապա հարկ է նշել, որ այն շարադրված է ժամանակագրական և բովանդակային լուրջ շեղումներով: Թեև ատենախոսության ժամանակագրական ներքին շրջանակը սահմանափակված է 1915 թվականով, այնուհանդերձ, հեղինակը աշխատանքի մի գլուխ է հատկացրել ԱՄՆ-ում հայ համայնքի ձևավորմանը և զարգացմանը: Աշխատանքում ընդգրկուն ներկայացված է լոբբինգի ինստիտուտը ԱՄՆ-ում, դրա առանձնահատկությունները և էթնիկ լոբբինգը: Ատենախոսության մեջ մանրամասնորեն ներկայացված է նաև Հայկական հարցի ծագումը և զարգացումը XIX դարի վերջից՝ սկսած Սան Ստեֆանոյի պայմանագրից և Բեռլինի վեհաժողովից, ինչը,կարծում ենք,նրա անմիջական խնդիրը չի եղել:

Դրան հակառակ, թեև ատենախոսության ժամանակագրական շրջանակը սկսվում է 1915 թվականից, աշխատանքում որևէ անդրադարձ չի կատարվել հայկական առաջին լոբբիստական կազմակերպությունների, որոնք հիմնադրվել և գործունեություն են ծավալել XX դարի արդեն երկրորդ տասնամյակից: Աշխատանքում նաև չի ներկայացվել Հայոց ցեղասպանության հարցը բարձրացնելու համար ամերիկահայ լոբբիի գործունեությունը ՄԱԿ-ում: Ատենախոսը չի անդրադարձել նաև Հայաստանին տրամադրվող

ամերիկյան օգնության համար տարվող լոբբիստական աշխատանքներին և այլն:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարծում ենք, որ մեր կողմից ատենախոսության նման թեմայի ընտրությունը անհրաժեշտ և արդիական է, քանի որ փորձ է արվել լրացնել ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների ձևավորման, նրանց բնորոշ առանձնահատկությունների, ԱՄՆ-ում, ՄԱԿ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման համար վերջիններիս իրականացրած աշխատանքների, Արցախի անկախության ճանաչման, թուրք-ադրբեջանական լոբբիի հակահայկական գործունեությանը հակազդելու, այլ կերպ, ամերիկահայ լոբբիի կողմից հայկական շահերի պաշտպանության համար ծավալած գործունեության վերաբերյալ հայ պատմագիտության մեջ առկա բացը:

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
# ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈԲԲԻԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

## 1.1 Լոբբինգի ինստիտուտը ԱՄՆ-ում

Լոբբինգը քաղաքական համակարգի ինստիտուտներից է, որն անհատներին, խմբերին, կազմակերպություններին, կուսակցություններին, արհմիություններին,

հնարավորություն է տալիս ազդեցություն ունենալ տվյալ պետության կառավարության և օրենսդիր մարմնի որոշումների ընդունման գործընթացի վրա: Ընդունված ու տարածված է այն տեսակետը, որ լոբբինգը՝ իբրև ազդեցության միջոց, ձևավորվել է ԱՄՆ-ում, XIX դարի երկրորդ կեսին:

Հայկական լոբբինգը Սփյուռքի կողմից իրականացվող քարոզչական ջանքերն են, որոնք նպատակ ունեն ազդել քաղաքականություն մշակողների վրա և առաջ մղել տարբեր բնույթի շահեր[57]:

«Լոբբինգ» եզրն առաջացել է «lobby» բառից, որն անգլերենից թարգմանաբար նշանակում է «կուլուարներ», «միջանցք»:

Անգլիացի գիտնականները պնդում են, որ խոսքը անգլիական խորհրդարանի միջանցքի մասին է, որտեղ սկսած 1707 թվականից, օրենսդիր իշխանության ներկայացուցիչները հավաքվում էին և քննարկում տարբեր վիճահարույց հարցեր:

Ամերիկացի մասնագետների մի մասը, նշում է, որ դեռևս 1820 թ. ամերիկյան թերթերից մեկը հստակորեն տալիս է «լոբբինգ» հասկացության բացատրությունը: Լոբբինգի ինստիտուտի սկզբնավորողներ են համարվում ամերիկյան սենատորները, ովքեր խորհրդակցությունների ընդմիջման ժամանակ հավաքվում էին Ներկայացուցիչների պալատի լոբբիում՝ սպասասրահում, և քննարկում այս կամ այն կարևոր հարցը[58]:

Ուսումնասիրողների մեծ մասը կողմնակից է այն տեսակետին, որ «լոբբիզմ» հասկացությունն ի հայտ է եկել XIX դարի երկրորդ կեսին ԱՄՆ-ում, երկրի

---

[57] Տե՛ս Newland K., նշվ. աշխ., էջ 7:

[58] Տե՛ս Майкл Бернстам, Музыку в США заказывают лоббисты, http://news.bbc.co.uk/hi/russian/international/newsid_7695000/7695523.stm

18-րդ նախագահ Ուլլիս Սիմփսոն Գրանտի նախագահության շրջանում (1869-1877 թթ.):

«Լոբբինգ» եզրն առաջացել է Վաշինգտոնի «Վիլլարդ» կոչվող հյուրանոցի նախասրահի (կուլուարներ) անունից, որտեղ էլ հավաքվում էին ԱՄՆ նախագահներն ու սենատորները և հանդիպում տարբեր անհատների ու խմբերի ներկայացուցիչների հետ, լսում նրանց առաջարկները, որոնք վերաբերում էին պետության որդեգրած քաղաքականությանը: Նրանք փորձում էին ազդել Միացյալ Նահանգների նախագահի` որոշումների ընդունման գործընթացի վրա և այդ կերպ ստանում որոշակի դերակատարում երկրի ներքին և արտաքին քաղաքական կյանքում[59]:

Այս շրջանից սկսած, լոբբինգը կարևոր տեղ է զբաղեցնում ոչ միայն Միացյալ Նահանգներում, այլ նաև Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Եվրոմիության մի շարք հանձնաժողովներում, իսկ վերջին տարիներին` նաև Արևելյան Եվրոպայի երկրներում: Վաշինգտոն քաղաքի փողոցներից մեկը հայտնի է «Լոբբիստական կանտորա» անունով:

Փորձագետները լոբբինգը համարում են ժողովրդավարության արդյունքներից մեկը, որը հնարավորություն է տալիս «ներքևում գտնվողներին» իրենց ցանկությունները և պահանջները հասցնել «վերևում գտնվողներին»:

Երկար տարիներ Միացյալ Նահանգներում լոբբիստի մասնագիտությունը համարվում էր ոչ հեղինակավոր, քանի որ լոբբիստների և իշխանության ներկայացուցիչների փոխհարաբերությունները կարգավորվում էին կաշառքի ու նվիրատվությունների միջոցով, հաճախ

---

59 Տե՛ս Վերանյան Կ., ԱՄՆ լոբբինգի ինստիտուտի իրավաքաղաքական հիմքերը, http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=4636

էլ լոբբիստներն իշխանության ներկայացուցիչների համար շքեղ հյուրասիրություններ էին կազմակերպում և այդ կերպ փորձում լուծել իրենց քաղաքական խնդիրները:

ԱՄՆ-ում լոբբինգն իրականացվում է դեռևս 1789 թ. ընդունված երկրի առաջին սահմանադրական փոփոխության համաձայն, որը հնարավորություն էր տալիս բնակիչներին իրենց բողոքներով դիմելու իշխանության ներկայացուցիչներին: 1876 թ. ընդունվում է օրենք, համաձայն որի լոբբիստական գործունեությամբ զբաղվող բոլոր անձինք պարտավոր էին պաշտոնապես գրանցվել Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում: Բավականին երկար ժամանակ ԱՄՆ-ում լոբբինգ ասելով նկատի էին առնվում նախ և առաջ արտաքին քաղաքականության բնագավառում իրականացվող լոբբիստական աշխատանքները և հենց այս դրույթն էր ներկայացված 1938 թ. ընդունված «Օտարերկրյա գործակալների գրանցման մասին» օրենքում: Օրենքը նպատակ ուներ կանխել ԱՄՆ-ում նացիստական և կոմունիստական քարոզչական գործունեությունը՝ միաժամանակ նրանց պարտավորեցնելով գրանցվել ու հաշվետվություն ներկայացնել կատարած գործունեության համար: 1946 թ. Միացյալ Նահանգներում ընդունվում է «Լոբբիստական գործունեության կարգավորման մասին» օրենքը, որտեղ սահմանվում է բոլոր լոբբիստների գրանցման պահանջը: Այս որոշումը տարածվում էր միայն Կոնգրեսում գործունեություն իրականացնող լոբբիստների վրա[60]:

Միացյալ Նահանգներում լոբբինգը սոցիալական, քաղաքական զարգացած համակարգ է,

[60] Տե՛ս նույնը:

ինչը հնարավորություն է տալիս լոբբիստներին դերակատարություն ունենալ երկրի ներքին ու արտաքին քաղաքական կյանքում: Լոբբինգը նաև հանդիսանում է երկրի ժողովրդավար լինելու կարևորագույն բնորոշիչներից մեկը:

Լոբբիստական գործունեություն կարող են ծավալել և՛ առանձին անհատներ, և՛ տարբեր խմբեր, կազմակերպություններ, հասարակական-քաղաքական ու պետական կառույցներ: Նրանք միմյանցից տարբերվում են իրենց առջև դրված նպատակներով, դրանց հասնելու միջոցներով ու կիրառվող մեթոդներով: Այդպիսի խմբերին անվանում են լոբբիստական, այլ ձևով՝ ազդեցության կամ շահեր ունեցող խմբեր[61]: Ըստ ամերիկյան արտգործնախարարության մամուլի 2010 թ. տվյալների՝ ԱՄՆ-ում լոբբիստական հզոր կառույցների թվին են պատկանում հայկականը, չինականը, հունականը, հնդկականը, իռլանդականը, հրեականը,թայվանականը և ուկրաինականը[62]:

ԱՄՆ-ում լոբբինգի համակարգի զարգացումը մեծապես խթանել են տարբեր տարիներին իրականացված օրենսդրական բարեփոխումները, մասնավորապես 1960-1970 թթ. ԱՄՆ-ի պետական կառույցների և, հատկապես, Կոնգրեսի բարեփոխումները, որոնց հետևանքով վերջինս դերակատարություն է ստանում արտաքին քաղաքականության մշակման գործում: Արդյունքում ուժեղանում է նաև էթնիկ խմբերի ներգրավվածությունը Վաշինգտոնի վարած քաղաքական գործընթացներում[63]:

---

61 Տե՛ս նույնը:
62 Տե'ս Gurbanzade R., The Influence of Ethnic Lobbying on US Foreign Policy, //«The Journal of Turkish Weekly», Ankara, 8 June, 2012, p. 1.
63 Տե'ս Special Interest Lobbies-Ethnic Lobbies, Encyclopedia New American Nation, http://www.americanforeignrelations.com/O-W/Special-Interest-Lobbies-Ethnic-lobbies.html

Կոնգրեսում ձևավորվում են բազմաթիվ հանձնաժողովներ, որոնք վերահսկվում էին մեծ թվով «շահերի խմբերի» կողմից, որի հետևանքով լոբբիստական կազմակերպություններն ու լոբբիստները սկսում են ներգրավվել իշխանության օրենսդիր մարմիններում որոշումների կայացման գործընթացում[64]:

XX դարի 70-ական թվականներից սկսած ԱՄՆ-ում սկսվում են կիրառվել լոբբիստական գործունեության դեմ ուղղված սահմանափակումներ, իսկ 1995 թ. ԱՄՆ նախկին նախագահ Բիլ Քլինթոնը ստորագրում է «Լոբբիստական գործունեության բացահայտման վերաբերյալ» օրենք, որտեղ նշվում էր, որ ԱՄՆ կառավարությունը պահանջում է իշխանության օրենսդիր ու գործադիր մարմինների՝ պետական որոշումների ընդունման գործընթացի վրա ազդեցություն գործելու համար վարձատրված լոբբիստների գործունեության վերաբերյալ պետական տեղեկատվության ապահովում: Այս օրենքը, ի տարբերություն նախորդների, որոնք պահանջում էին տեղեկատվության ապահովում միայն Կոնգրեսում լոբբինգ իրականացնողների վերաբերյալ, տարածվում էր նաև իշխանության գործադիր մարմիններում լոբբիստական գործունեություն ծավալողների վրա: Համաձայն դրա, լոբբիստները և լոբբիստական ընկերությունները պարտավոր են գրանցվել ԱՄՆ-ի Սենատի հասարակական արձանագրությունների գրասենյակում և յուրաքանչյուր կես տարին մեկ գրասենյակին տրամադրել իրենց գործունեության վերաբերյալ մանրամասն հաշվետվություն: Նման օրենքի ընդունումը ժամանակի հրամայականն էր և պայմանավորված էր աշխարհում տեղի ունեցող

[64] Տե՛ս Վերանյան Կ., նշվ. աշխ., //«21-րդ դար», թիվ 1, էջ 27:

հասարակական-քաղաքական գործընթացներով, որոնց հետևանքով ԱՄՆ-ում աստիճանաբար ուժեղանում և ազդեցիկ էին դառնում էթնիկ լոբբիները: Լոբբիստական գործունեության դեմ ուղղված նոր սահմանափակումներ են իրականացվում 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո: Լոբբիստական կապերի հաստատման գործում սկսում են կիրառվել ժամանակակից տեխնոլոգիաներ, ստեղծվում են հատուկ կայքեր՝ օրենսդիրների հետ հեռահար ձևով կապվելու և տարբեր հարցեր քննարկելու նպատակով[65]:

Այսպիսով, Միացյալ Նահանգների օրենսդիր համակարգում առկա են լոբբիստական գործունեության վերաբերյալ հստակ պահանջներ, որոնք հետևյալն են.

-օրենքով սահմանված կարգով պետական գրանցում, որն ունի միայն տեղեկացման բնույթ, այսինքն պետական մարմինը չունի մերժելու ոչ մի իրավասություն,

-բաց և թափանցիկ գործունեություն,

-պարբերաբար մանրամասն հաշվետվությունների ներկայացում[66]:

Լոբբիստական գործունեությամբ կարող են զբաղվել ինչպես ամերիկյան, այնպես էլ օտարերկրյա կազմակերպությունները: Մասնագետները առանձնացնում են լոբբինգի մի քանի տեսակ՝ սոցիալական, քաղաքական, տնտեսական, տարածաշրջանային, էթնիկ և այլն: Հայկական լոբբինգն էթնիկ տեսակի լավագույն դրսևորումներից է:

Ամերիկյան արտաքին քաղաքականության իրականացման գործում էթնիկ խմբերի ունեցած դերակատարությունը, հայտնի է նաև «Սփյուռքի

---

65 Տե՛ս նույնի՝ ԱՄՆ լոբբինգի ինստիտուտի իրավաքաղաքական հիմքերը, http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=4636

66 Տե՛ս Ղևոնդյան Ռ., նշվ. աշխ., //«21-րդ դար», թիվ 1, էջ 70:

քաղաքականություն», «Էթնիկ լոբբինգ» կամ «Բազմամշակութային արտաքին քաղաքականություն» անուններով: Փաստ է, որ էթնիկ լոբբիները կարողանում են հսկայական դեր ունենալ ԱՄՆ-ի ներքին և արտաքին քաղաքական կյանքում հենց երկրի քաղաքական համակարգի կառուցվածքի և առանձնահատկությունների շնորհիվ[67]: Շահեր ունեցող այլ խմբերի նման, էթնիկ խմբերը ևս, հիմնում են իրենց կազմակերպությունները, որոնք միտված են առաջ մղելու նրանց շահերն ու խնդիրները[68]:

Էթնիկ լոբբիները, որոնք մեծ ազդեցություն ունեն ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ձևավորման վրա, հատկապես Սառը պատերազմի ավարտից հետո գտնվում են ամերիկյան մամուլի և քաղաքագետների ուշադրության կենտրոնում: Նրանց գործունեությանը նվիրված բազմաթիվ հոդվածներ, ուսումնասիրություններ և գրքեր են հրատարակվել[69]: Հարց է առաջանում՝ արդյո՞ք շահեր ունեցող էթնիկ խմբերի ներգրավումը ամերիկյան քաղաքականության մեջ ձեռնտու է ամերիկյան պետությանը, թե՞ իրական փորձություն է ԱՄՆ-ի ներքին ու արտաքին քաղաքականության համար:

Այս հարցի պատասխանը որոնելիս մասնագետները եկել են այն հանգման, որ էթնիկ լոբբիները իսկապես ազդեցիկ են, մեծապես ազդում են ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ձևավորման վրա և կարող են սպառնալիք ներկայացնել ամերիկյան պետական շահերին: Մյուս կողմից, չնայած ազդեցիկ լինելուն, նրանք իրենց ծավալած

[67] Տե՛ս Dekker M., նշվ. աշխ., էջ 12:
[68] Տե՛ս Ambrosio Th., Ethnic Identity Groups and US Foreign Policy, p. 1.
[69] Տե՛ս նույն տեղում, էջ 3:

լոբբիստական գործունեությամբ նպաստում են աշխարհում ամերիկյան արժեքների տարածմանը[70]:

Էթնիկ լոբբիները կազմակերպվում ու համախմբվում են մշակութային, ազգային ու կրոնական հենքի վրա և ջանում են օգնել իրենց հայրենի երկրներին՝ ուղղակի կամ անուղղակի ձևով ազդեցություն գործելով Միացյալ Նահանգների իշխանության գործադիր և օրենսդիր մարմինների վրա:

ԱՄՆ-ում էթնիկ խմբերի ունեցած քաղաքական ազդեցությունը նոր երևույթ չէ: Այնպիսի խոշոր քաղաքներում, ինչպիսիք են Նյու Յորքը, Բոստոնը և Չիկագոն, տեղական մակարդակում ազդեցություն ունենալը քաղաքական համակարգի կարևորագույն առանձնահատկություններից էր դեռևս սկսած XIX դ. վերջերից և XX դ. սկզբներից[71]:

Միացյալ Նահանգներում էթնիկ լոբբիների գործունեությունը սկսում է ակտիվանալ Առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ նպատակ ունենալով օգնել իրենց հայրենի երկրներին: Սառը պատերազմի տարիներին, սակայն, էթնիկ լոբբիստական խմբերի դերակատարությունը որոշ չափով նվազում է, ինչը պայմանավորված էր աշխարհաքաղաքական իրավիճակով և այն հանգամանքով, որ այս շրջանում ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ վճռորոշ դերը պատկանում էր իշխանության գործադիր ճյուղին:

Էթնիկ խմբերի լոբբինգը մեծապես տարածում է գտնում 1970-1980-ական թվականներին: Հունական, հայկական, թուրքական, հունգարական, ռումինական,

---

[70] Տե՛ս Kovács H. E., Challenging the Conventional Wisdom on Ethnic Lobby Success in the United States: the Case of HHRF, p. 202, http://bgazrt.hu/_dbfiles/htmltext_files/1/0000000051/Eszter%20Herner-Kovacs%20-%20Challenging%20the%20Conventional%20Wisdom%20on%20Ethnic%20Lobby%20Success%20in%20the%20United%20States.pdf

[71] Տե՛ս Wilkinson K., նշվ. աշխ., էջ 3:

սերբական հիմնահարցերը քաղաքական ասպարեզը ամենից շատ ալեկոծողների թվում էին[72]:

Ի տարբերություն Կոնգրեսի՝ ամերիկյան իշխանության գործադիր ճյուղը կարողացավ մեկուսանալ էթնիկ լոբբինգից, ինչի հետևանքով շատ կոնգրեսականներ արդեն 1970-ական թվականների վերջերին սկսեցին անհանգստանալ «արտաքին քաղաքականության ամբողջական էթնիկացումից»: Էթնիկ լոբբիների կողմից Կոնգրեսի հաճախակի և հաջող թիրախավորումը վախեր են ստեղծում գործադիր իշխանության մոտ, որ Կոնգրեսի ամենօրյա ներգրավվածությունը արտաքին քաղաքական հարցերում՝ զուգորդված էթնիկ լոբբիների նկատմամբ Կոնգրեսի խոցելիությամբ, էթնիկական երանգ էր հաղորդում ամերիկյան դիվանագիտությանը[73]:

Միացյալ Նահանգներում էթնիկ լոբբիստական խմբերի գործունեության զարգացմանը և ընդլայնմանը նպաստել են երկրում իրականացված ժողովրդավարական բարեփոխումները, մասնավորապես Կոնգրեսում «հանձնախմբերի» (caucus) ստեղծումը:Վերջիններում որևէ հարցի ընդունման կամ մերժման գործընթացում սենատորներն ու Ներկայացուցիչների պալատի անդամները ներկայացնում ու պաշտպանում են տարբեր էթնիկական խմբերի ու նրանց շահախնդրությունները: Էթնիկ լոբբիստական խմբերի գործունեությունը ուսումնասիրող հայտնի մասնագետներից մեկի՝ Ջեյմս Լինդիի կարծիքով, առկա են մի շարք պայմաններ, որոնք ներգաղթած խմբերին վերածում են էթնիկ լոբբիստական կազմակերպությունների: Առաջին՝ Միացյալ Նահանգներ ներգաղթածները, որոնք եկել

---

72 Տե՛ս Special Interest Lobbies-Ethnic Lobbies, Encyclopedia New American Nation, http://www.americanforeignrelations.com/O-W/Special-Interest-Lobbies-Ethnic-lobbies.html

73 Տե՛ս նույնը:

են որպես քաղաքական փախստականներ (օրինակ՝ կուբացիները), առավել հաճախ են կազմակերպում էթնիկ խմբեր, քան «տնտեսական պատճառներով» ներգաղթածները: Երկրորդ՝ իրենց հարևան պետությունների հետ հակամարտող երկրներից գաղթածները (Հայաստան, Իսրայել), առավել ակտիվ լոբբիստական գործունեություն են իրականացնում ի պաշտպանություն իրենց հայրենիքի շահերի, քան առավել բարենպաստ երկրներից ներգաղթածները (Գերմանիա, Նորվեգիա): Երրորդ՝ առավել ուժեղ քաղաքականացված լոբբի ձևավորում են տնտեսապես հաջողակ էթնիկ խմբերը (հրեաներ, հայեր, հնդիկներ, հույներ): Եվ վերջապես չորրորդ՝ էթնիկ լոբբիստական գործունեությունն առավել հաջողակ է, երբ նրանց նպատակներն աջակցություն են գտնում ԱՄՆ քաղաքական վերնախավի կողմից[74]:

Գոյություն ունեն էթնիկ լոբբիների՝ ամերիկյան արտաքին քաղաքականության վրա ունեցած ազդեցության հզորությունը պայմանավորող մի քանի գործոններ. դրանք են՝ ընտրազանգված, ֆինանսական միջոցներ և կազմակերպության հզորություն և միասնություն:

ԱՄՆ-ում գործող էթնիկ լոբբիստական խմբերի գործունեությունը հիմնականում կայանում է նրանում, որ նրանք երկրի գործադիր և օրենսդիր իշխանության ներկայացուցիչներին տրամադրում են անհրաժեշտ տեղեկություններ տարբեր հիմնահարցերի մասին, մասնակցում են Կոնգրեսի օրինագծերի մշակման աշխատանքներին, իրականացնում են քարոզչական և տեղեկատվական գործունեություն՝ երկրի հասարակական կարծիքի ձևավորման նպատակով, ինչպես նաև երկրում

---

74 Տե՛ս Վերանյան Կ., ԱՄՆ լոբբինգի ինստիտուտի իրավաքաղաքական հիմքերը, http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=4636

ընթացող ընտրական գործընթացների ժամանակ ֆինանսապես ու քաղաքական առումով օգնում են իրենց թեկնածուներին[75]:

Այսպիսով, լոբբինգը, լոբբիստական գործունեությունը կարևոր տեղ են զբաղեցնում Միացյալ Նահանգներում և հանդիսանում նրա քաղաքական կյանքի անբաժանելի մասը հենց երկրի ներքին կառուցվածքի ու օրենսդրական դաշտի առանձնահատկությունների շնորհիվ, ինչն էլ հնարավորություն է ընձեռնում էթնիկ լոբբիներին և ընդհանրապես շահեր ունեցող այլ խմբերին ազդեցություն և դերակատարություն ունենալ երկրի ներքին և արտաքին քաղաքական գործընթացներում և առաջ մղել սեփական շահերն ու խնդիրները:

[75] Տե՛ս նույնը:

## 1.2 Լոբբինգի դրսևորման վաղ ձևերը ամերիկահայության մեջ

Ինչպես նշվեց, հայկական լոբբինգը էթնիկ լոբբինգի լավագույն դրսևորումներից է: «Հայկական լոբբի» տերմինն օգտագործվում է սահմանելու համար հատուկ շահեր ունեցող խմբերի կամ անհատների ամբողջությունը, որոնք ձգտում են ազդեցություն ունենալ Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության վրա՝ ի շահ Հայաստանի, հայ ժողովրդի և նրա շահախնդրությունների[76]:

Անդրադառնանք ԱՄՆ-ում հայկական լոբբիի ձևավորմանը:

Օսմանյան Թուրքիայում 1915-1918 թթ. հայերի նկատմամբ իրականացվում է ահավոր ոճիր, որը մարդկությանը հայտնի է որպես XX դարի առաջին մեծ ցեղասպանություն: Այդ ոճրագործությունը դառնում է հայ ժողովրդի ամենամեծ ողբերգությունը, որի մասին գրել ու նկարագրել են ոչ միայն հայերը, այլ և տարբեր ժողովուրդների բազմաթիվ պետական գործիչներ, դիվանագետներ, գիտության ու մշակույթի անվանի ներկայացուցիչներ: Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան

[76] Տե՛ս Sedrakyan A., The Armenian Lobby and US Foreign Policy, p. 58, http://ysu.am/files/06A_Sedrakyan.pdf

(1913-1916 թթ.) Հենրի Մորգենթաուն գրել է. «Ես հաստատապես համոզված եմ, որ սա բոլոր ժամանակների ամենասոսկալի ոճրագործությունն է ... Դժբախտաբար, քրիստոնյա մեծ տերությունները չպատժեցին հայերի նախորդ ջարդերի կազմակերպիչներին, հետևաբար, այս մարդիկ վստահ են, որ հանցագործությունները, որոնք հանդուրժվել են նախկինում, այս անգամ նույնպես կմնան անպատիժ: Նրանց համար սա բարենպաստ հնարավորություն էր ի կատար ածել հայ ժողովրդին ոչնչացնելու իրենց վաղեմի երազանքը և մեկընդմիշտ վերջ դնել հայկական բարենորոգումների հարցին, որն այդքան հաճախ պատճառ էր հանդիսանում թուրքական գործերին եվրոպացիների միջամտության համար»[77]:

XX դարի սկզբին հայ ժողովուրդը, չնայած տեղահանության ու ցեղասպանության, կարողացավ վերապրել և անգամ վերականգնել պետականությունը իր բուն հայրենիքի մի փոքր հատվածում, իսկ ցեղասպանությունից փրկվածները ցրվեցին աշխարհով մեկ՝ առաջացնելով Հայ սփյուռքը: Ամրապնդվելով և զարգանալով իրենց ապաստանած երկրներում, չկորցնելով ազգային ինքնագիտակցությունը՝ իրենց հայրենիքից վտարված հայերը շարունակեցին պայքարը հանուն ազգային գոյատևման ու կորսված հարազատ հողի վերադարձի իրավունքի՝ հանուն մեկ միասնական հայրենիքի միավորման[78]:

Այսպիսով, Մեծ եղեռնից հետո, բովանդակ հայության խնդիրն է դառնում թե՛ Հայրենիքում, և թե՛ Սփյուռքում, Հայոց ցեղասպանության

---

[77] Հայերի ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում 1915-1918 թթ.: Օտարերկրյա պետությունների դիվանագիտական փաստաթղթերի վկայությունները, հատ. I, խմբ. Լ. Բարսեղյանի, Եր., 2011, էջ 3:

[78] Տե՛ս Կիրակոսյան Ա., Ակնարկներ Հայկական հարցի և Եղեռնի միջազգային ճանաչման պատմության, Եր., 2006, էջ 17:

ճանաչման խնդիրը, որին հասնելու համար ստեղծվում են զանազան կազմակերպություններ, կառույցներ ու շարժումներ:

Գերսամ Ահարոնյանը իր՝ «Մեծ երազի ճամբուն վրայ» աշխատության մեջ գրում է. «Պատերազմի ծուխը, մուխը եւ փոշին երբ դադրեցան, 1918 թ. նոյեմբերի սկիզբները,արեւմտահայ ժողովուրդին մնացորդացը, երկար, աննախընթաց եւ անկարելի մղձաւանջէ մը ետք, խաղաղութեան առաջին շողերուն հետ, վերադարձի ու վերապրումի կարելիութիւններով յուսադրուած, վճռեց աննահանջ հետապնդել իր ազգային սրբազան դատը եւ տիրանալ իր ազգային օճախներուն՝ Հայաստան թէ Կիլիկիա: Մեր դատի հետապնդման աշխատանքներուն լծուեցան արդէն իսկ գոյութիւն ունեցող շարք մը մարմիններ՝ Եգիպտոսի մէջ կազմուած Ազգային շահերու պաշտպանութեան յանձնախումբը՝ Պողոս Նուբարի գլխավորութեամբ, Փարիզի Ազգային պատուիրակութիւնը, ամերիկահայոց Ազգային պաշտպանութեան Ամերիկայի յանձնախումբը»[79]:

Ցեղասպանությունից հետո Հայկական հարցը ստանում է Հայ դատ, Հայոց պահանջատիրություն անունները: Այն գործընթացների մի ամբողջություն է,որի նպատակը մեր ազգի համար բնական և կենսական այնպիսի պայմաններ ապահովելն է,որոնք կբացառեն ցեղասպանության կրկնությունը կամ սպառնալիքը և կապահովեն հայ ժողովրդի բնականոն կյանքն ու զարգացումը իր պատմական հայրենիքում:

Հայ դատը իրենից ներկայացնում է հայ ժողովրդի ազգային իրավունքների վերականգնման հարցը. իրավունքներ, որոնք ոտնահարվել են օտարների կողմից և դրա բացասական հետևանքներից զերծ չեն այսօր ապրող սերունդները: Այն հայ

[79] Ահարոնեան Գ.,Մեծ երազի ճամբուն վրայ,էջ 91:

ժողովրդի ճնշող մեծամասնության կողմից ընկալվել է Միացյալ, Անկախ և Ազատ Հայաստանի ստեղծման ձևակերպմամբ՝ իր բազմազան մեկնաբանություններով հանդերձ, որոնք գոյություն են ունեցել հայ քաղաքական մտածողության մեջ[80]:

Հայ դատն, այսպիսով, ընդգրկում է հայ ժողովրդի պահանջներն ու ձգտումները: Ամերիկահայ համայնքը, իր կազմավորումից ի վեր պայքարում է Հայկական հարցի լուծման, Հայոց ցեղասպանության ճանաչման և հայկական շահախնդրությունների պաշտպանության համար:

Հայ դատի իմաստավորման վերաբերյալ ստորև մեջբերենք «Սփյուռքահայութեան հոգեբանական հոլովույթը և Հայ դատը» աշխատությունից մի հատված. «Սփիւռք բառը քանի որ կայ, ինքնին կիմաստաւորուի հայ դատը: Սփիռք կը նշանակէ, որ հայրենի հողերէն դուրս եղած, ցրուած աշխարհ մը կայ: Պէտք չէր ցրուած ըլլար հայութիւնը: Եթէ ցրուած է, ցրուած ըլլալուն պատճառ կայ: Եւ եթէ այդ պատճառը քաղաքական է, եւ այդ պատճառը հայրենի հողերէն քշուած իր ըլլալն է, ապա ուրեմն ինքնին, քանի որ սփիւռք կայ, հայ դատ կայ: Սփիւռք բառը ինքնին կիմաստաւորէ հայ դատը»[81]:

Հայ դատի լուծման ուղղությամբ սփյուռքահայության կատարվելիք քայլերի տարողունակ և ծավալուն բնութագրումը ավելի քան կես դար առաջ տվել է Գերսամ Ահարոնյանը: Նկատի ունենալով նրա խոհերի և մտորումների կարևորությունը և այժմեականությունը՝ քաղվածաբար մեջբերենք մի ծավալուն հատված նրա

---

[80] Տե՛ս Բաղումեան Վ., Այժմ պետք է քարոզչութիւնը հասցեագրել թուրքերին, //«Հայ դատն այսօր», յօդուածների ժողովածու, Թեհրան, 2005, էջ 98:
[81] Սփյուռքահայութեան հոգեբանական հոլովույթը և Հայ դատը, Գահիրէ, 1980, էջ 5:

աշխատությունից. «Սփիւռքի մէջ մեր աւագ պարտականութիւններէն մէկը անշուշտ քարոզչութիւն կամ փրոփականտ ընելն է:Ճանչցնել եւ ընդունիլ տալ թրքական ցեղասպանութիւնը եւ հատուցման մեր արդար իրաւունքը,-ահա նպատակը մեր քարոզչութեան, որ պէտք է ըլլայ համոզիչ, յարատեւ ու բազմակողմանի: Համագաղութային կեդրոնական մարմինը պէտք է բծախնդրութեամբ ծրագրէ այս քարոզչութիւնը, նկատի ունենալով տարիներու աշխատանք ու մեծագումար ծախք: Նախ, անհրաժեշտ է աշխարհի մեծ ու ազդեցիկ թերթերու մէջ պարբերաբար լոյս ընծայել մեր հարցը ծանօթացնող ու պարզաբանող յօդուածներ կամ յայտարարութիւններ, Նիւ Եորքէն մինչեւ Նոր Տելհի եւ Փարիզէն ու Գահիրէէն մինչեւ Պուենոս Այրէս:Երկրորդ,պէտք է պատրաստել տպաւորիչ,բայց ամփոփ բովանդակութեամբ եւ լայնօրէն պատկերազարդ հատոր մը կամ գիրք-ալպոմ մը,որ պիտի ծանօթացնէր թուրքին ցեղասպանութիւնը եւ հայուն իրաւունքը: Յաջորդ, պէտք ենք զանազան լեզուներով պարբերաբար պատրաստել ու գրել գրքոյկներ ու թերթիկներ կամ նոյնիսկ յուշաքարթեր:Այս բոլորը բնականաբար կենթադրեն լայնածաւալ ու երկարատեւ աշխատանք:

Ասոնց զուգընթաց եւ ասոնց չափ կարեւոր են քաղաքական դիմումները, շփումները, կապերը, որոնց շնորհիւ անհրաժեշտ է ապահովել մեր դատին բարեկամներ ու պաշտպան-փաստաբաններ: Մենք պէտք ունինք ***լոպիներու***, մեծ պետութեանց խորհրդարաններուն ու վարչապետարաններուն մոտ մեզի ի նպաստ նրբանցքային աշխատանք տանող անձերու եւ սպասարկութիւններու: Մենք պէտք ունինք ազդեցիկ բարեկամներու,որոնք ի վիճակի ըլլան հարց արծարծելու եւ տեսակէտ պարտադրելու: Եւ յամառ ու ծաւալուն աշխատանք

պիտի տանինք ՄԱԿ-ի մարմիններուն մոտ, և Ուաշինկթընի մէջ յատկապէս:

Հայ Սփիւռքը ահա այսպիսի տիտանեան աշխատանքի դէմ յանդիման կը գտնուի: Աշխատանք ու գործունէութիւն, որ կը պահանջէ խելքի ու ճիգի կեդրոնացում, ուժերու համադրում ու համակարգում եւ լուրջ զոհողութեանց յանձնառում: Եւ աշխատանք ու գործ, որ անյետաձգելի է, եթէ կուզենք լրջօրէն հետապնդել մեր դատը, եթէ կը փափաքինք գէթ քիչ մը արագացնել անոր լուծումը»[82]:

Թե՛ ամերիկահայության և թե՛ ողջ սփյուռքահայության համար Հայկական հարցի լուծման համար մղվող պայքարի համատեքստում շատ կարևոր է նաև «հավաքական հիշողության» ուսուցումը, ինչը ենթադրում է, որ տարագրություն և կոտորած չտեսած սերունդները երբեք չպետք է մոռանան հայ ժողովրդի ցեղասպանությունը և չպետք է հրաժարվեն հայության դատը հետապնդելու առաքելությունից:

Հայոց ցեղասպանության ճանաչմանը հասնելու համար առկա են միջազգային իրավական բազմապիսի փաստեր, որոնք անժխտելի են դարձնում այն: Հայ դատը հիմնավորելու և նրա քարոզչությունը իրականացնելու համար պետք է առաջնորդվել համաշխարհային հանրության հայտնի պատմական փաստերով և ցեղասպանության մասին միջազգային հեղինակավոր կառույցների կողմից ընդունված որոշումներով, որոնցից ամենակարևորը, թերևս, 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Ցեղասպանության պատժի և կանխարգելման մասին» կոնվենցիան է[83]:

---

[82] Ահարոնեան Գ., Խոհեր յիսնամեակի աւարտին, էջ 257-259:
[83] Տե՛ս A Crime of Silence: The Armenian Genocide (Permanent People's Tribunal), Cambridge, 1985, p. 234, նաև՝ ՀՅԴ-ի գիտական ֆոնդեր, բաժին 41, թղթապանակ 1, փաստաթուղթ 3:

Մինչ ԱՄՆ-ում հայկական առաջին լոբբիստական կազմակերպությունների գործունեությունը ներկայացնելը, հակիրճ անդրադառնանք այս շրջանի ամերիկյան արտաքին քաղաքականությանը և ընդհանրապես Հայկական հարցի նկատմամբ ամերիկյան պետական ու քաղաքական շրջանների ունեցած դիրքորոշմանը:

ԱՄՆ-ն Առաջին համաշխարհային պատերազմի մեջ է մտնում 1917 թ. ապրիլի 6-ին՝ պատերազմ հայտարարելով նախ Գերմանիային, ապա Ավստրո-Հունգարիային, իսկ ապրիլի 20-ին խզում է դիվանագիտական հարաբերությունները Թուրքիայի հետ:

Դեռևս 1918 թ. հունվարի 8-ին ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի հռչակած «14 կետեր»-ից 12-րդը վերաբերում էր Օսմանյան կայսրության տիրապետության տակ տառապող ժողովուրդներին: Դրանում մասնավորապես նշվում էր. «Օսմանեան կայսրութեան թուրքական մասերը պետք է ունենան ինքնիշխանութիւն, իսկ մնացած ազգայնականները, ովքեր հիմա թուրքական իշխանութեան տակ են գտնվում, անկասկած, պետք է ունենան կեանքի անվտանգութիւն եւ ինքնավար զարգացման իրավունք...»[84]:

Ամերիկյան քաղաքական գործիչ Ուիլյամ Ջեննինգս Բրայնը ասում էր.«Մենք միշտ ընկերներ ենք եղել հայերի հետ, հիացել նրանց արդյունաբերությամբ, կրթության նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքով և միշտ մտածել, թե ինչպես է նման ժողովուրդը ապրում Թուրքիայի տիրապետության տակ: Հիմա մենք կարծում ենք, որ ազատության ժամը եկել է: Ոչ մի կասկած չկա՝ հայերի ազատության կարողության վերաբերյալ:

---

84 Մսըրլեան Զ., Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական հարցը (1900-2009), էջ 14-15:

Նրանք ավելի քան իվիճակի են ինքնակառավարվելու այնպես, ինչպես ոչ մի ժողովուրդ»[85]:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ն և Իտալիան ճանաչում են հայ ժողովրդի՝ սեփական պետություն ունենալու իրավունքը և որոշում ուղարկել միջազգային հանձնախումբ, որը տեղեկություններ պետք է հավաքեր Օսմանյան պետությունից անջատվելիք հողամասի վրա ապրող ժողովուրդների մասին: Հանձնախումբն այդպես էլ չի ստեղծվում և միայն 1919 թ. հունիս-հուլիս ամիսներին ամերիկյան երկու պատվիրակություններ իրականացնում են ուսումնասիրություններ, որոնց համաձայն, Օսմանյան կայսրության փոքրասիական մասը պետք է բաժանվեր երեք պետությունների, որոնցից մեկը հայկականն էր լինելու, որի հովանավորը պետք է լիներ Միացյալ Նահանգները:

Շուտով նախագահ Վուդրո Վիլսոնը նոր պատվիրակություն է ուղարկում Թուրքիայի արևելյան հայաբնակ նահանգներ և Հայաստանի Հանրապետություն՝ գեներալ Ջեյմս Հարբորդի գլխավորությամբ, որը պետք է ուսումնասիրություններ իրականացներ և քններ Հայաստանի մանդատը ստանձնելու հարցը[86]:

1920 թ. ապրիլին Հայաստանի վերաբերյալ կազմված տեղեկագիրը ներկայացվում է ամերիկյան Սենատին, որտեղ այն չի ընդունվում[87]:

1920 թ. մայիսի 11-ին ամերիկյան Սենատը ընդունում է 359-րդ բանաձևը, որտեղ ասվում էր, որ Սենատի արտաքին հարաբերությունների ենթահանձնաժողովը քննարկումներից և

---

[85] The Truth about the Massacres and Deportations of the Armenian Population of the Ottoman Empire (1915-1922), p. 28.
[86] Տե՛ս Մսըրլեան Զ., Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական հարցը (1900-2009), էջ 15:
[87] Տե՛ս Peterson M., Starving Armenians, America and the Armenian Genocide, 1915-1930 and after, Charlottesville, 2004, p. 101.

լսումներից հետո հաստատում է կոտորածների և այլ դաժանությունների հավաստի լինելը[88]:

Հայտնի է, որ 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածով Հայաստանի սահմանները պետք է անցնեին Էրզրումի, Տրապիզոնի, Վանի, Բիթլիսի վիլայեթներով՝ ելքով դեպի Սև ծով: Այս սահմանների հստակ գծումը հանձնարարվում է ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին, որն էլ 1920 նոյեմբերի 22-ին հրապարակում է Թուրքիայի և նորանկախ Հայաստանի միջև սահմանների վերաբերյալ քարտեզը[89]:

Հայերի և Հայկական հարցի վերաբերյալ ամերիկյան քաղաքականության հայտնի ուսումնասիրողներից Սիմոն Փայասլյանը գրում է. «Եթե Հայաստանի և հատկապես ԱՄՆ-ի հայ ղեկավարությունը ուշադրություն դարձներ երկրում տեղի ունեցող իրադարձություններին, կհասկանար, որ իր հույսը Վիլսոնի վարչակազմի վրա դնելը իզուր էր: Բայց ո՛չ ԱՄՆ-ի հայ համայնքը, ո՛չ էլ Երևանի կառավարությունը չունեին գիտելիք կամ փորձ՝ հասկանալու ԱՄՆ-ի ներքին քաղաքականության բարդությունները և արտաքին քաղաքականության նպատակները և նրանց ուղղակի ազդեցությունը Հայկական հարցի վրա»[90]:

1922-1923 թթ. տեղի ունեցած Լոզանի խորհրդաժողովում կրկին քննարկվում է Հայկական հարցը, որտեղ ԱՄՆ պատվիրակը հիշատակում է իր ժողովրդի և կառավարության կողմից հայ գաղթականությանը ցույց տրված օգնությունը և նշում հայերին տրված խոստումները: 1923 թ. հունվարի 6-ին բազմաթիվ դիմումնագրեր են ներկայացվում ԱՄՆ նախագահին՝ պահանջելով

[88] Տե՛ս The Armenian Genocide. Documents and Declarations 1915-1995, Complied with an Introduction by Harut Sassounian, 1995, p. 15.
[89] Տե՛ս Boyajian D., Armenia: The Case for a Forgotten Genocide, Westwood, N. J., 1972, p. 212-217.
[90] Payaslian S., նշվ. աշխ., էջ 141:

Թուրքիայի հետ հարաբերություններ չվերահաստատել, մինչև թուրքական կառավարությունը չճանաչի հայ ժողովրդի ազգային անկախգոյության իրավունքը:

1923 թ. օգոստոսի 6-ին, սակայն, կնքվում է ԱՄՆ-Թուրքիա բարեկամության և առևտրական համագործակցության դաշինքը, որը երկարատև քննարկումներից հետո Սենատը 1927 թ. հունվարի 18-ին հրաժարվում է վավերացնել[91]:

1920-ական թվականների սկզբից հայ ժողովրդի կեցության պայմանները զգալիորեն փոփոխվում են: Մի կողմից դատարկված էր Արևմտյան Հայաստանը, և տերությունները, առաջնորդվելով իրենց քաղաքական շահերով, մոռացության էին մատնել հայ ժողովրդին ու Հայկական հարցը, մյուս կողմից՝ Արևելյան Հայաստանում հաստատվել էին խորհրդային կարգեր, և երկիրը զրկվել էր ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու իրավունքից: Նման պայմաններում աշխարհասփյուռ հայության մի հոծ զանգվածի ուսերին էր ընկած Հայկական դատը հետապնդելու խնդիրը:

Միջազգային նմանատիպ հակասական ու բարդ պայմաններում է, որ ստեղծվում են հայկական առաջին լոբբիստական կազմակերպությունները ԱՄՆ-ում՝ նպատակ ունենալով հասնել Հայոց ցեղասպանության ճանաչմանը, պաշտպանել նորաստեղծ Հայաստանի Հանրապետության և, ընդհանրապես, հայ ժողովրդի շահերն ու իրավունքները:

ԱՄՆ-ում հայկական լոբբիստական կազմակերպությունների ստեղծմանը և նրանց գործունեության ծավալմանը նախորդել է այդ

---

[91] Տե՛ս Մսըրլեան Զ., Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական հարցը (1900-2009), էջ 23:

երկրում հայ համայնքի ձևավորման, վերջինիս շարքերի ստվարացման, հայության շահերի պաշտպանությանը հետամուտ ազգային տարաբնույթ կառույցների ձևավորման մի տևական ժամանակաշրջան:

Հայերը Ամերիկայի Միացյալ Նահանգներ են մեկնել անձնական, կրթական, տնտեսական, քաղաքական, կրոնական, մշակութային և այլ հանգամանքներից ելնելով: Սկզբնական փուլում հայերի ներգաղթը պայմանավորված էր հիմնականում տնտեսական, կրթական գործոններով, ինչպես նաև արդյունք էր Թուրքիայում ամերիկյան քարոզիչների գործունեության ակտիվության[92]: Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի նկատմամբ թուրքական երեք վարչակարգերի՝ համիդյան, երիտթուրքական, քեմալական կողմից շուրջ երեք տասնամյակների ընթացքում՝ 1894-1923 թթ. իրականացված կոտորածների հետևանքով հայության ներգաղթը դեպի Միացյալ Նահանգներ վեր է ածվում տնտեսական, քաղաքական, մշակութային ու կրոնական ապահով կյանքի հեռանկարից զրկված և հասարակության բոլոր շերտերը ներառող զանգվածային գաղթի՝ ընդգրկելով կայսրության հայաբնակ բոլոր շրջանները[93]:

Ինչպես գրում է Վլադիմիր Վերթսմանը իր «Հայերը Ամերիկայում 1618-1976» գրքում, «Մի այլ օտար ժողովրդի՝ այլ երկիր ներգաղթի համար միշտ էլ լինում են որոշակի պատճառներ: Հայությունը Միացյալ Նահանգներ եկավ երկու խոշոր և տարբեր ազդակների արդյունքում. մեկը Օսմանյան

---

92 Տե՛ս Կիրակոսյան Ա., ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը, (19-րդ դար -1914թ.), Եր., 2014, էջ 248:
93 Տե՛ս Ավագյան Ք., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (սկզբնավորումից մինչև 1924թ.), էջ 42:

Թուրքիայի բռնատիրական կարգերն էին, մյուսը՝ քրիստոնյա միսիոներների գործունեությունը»[94]:

Ամերիկայի հայ գաղթավայրը առաջին խոշոր զանգվածային գաղթականություն ընդունել է 1894-1896 թթ.՝ սուլթան Աբդուլ Համիդի կազմակերպած ջարդերից հետո, որին զոհ են գնում շուրջ 300 հազար հայեր, իսկ հարյուր հազարավորներ էլ ստիպված են լինում հեռանալ իրենց հայրենիքից և սփռվել աշխարհի տարբեր վայրերում[95]: Համիդյան ջարդերի հետևանքով արևմտահայերը գաղթում էին Ամերիկա, Աֆրիկա, Եվրոպա և Ռուսաստան: Արտագաղթող հայերի շուրջ 45%-ը մեկնում էր Ամերիկա: Միացյալ Նահանգներ էին մեկնում գերազանցապես Խարբերդի, Դիարբեքիրի և Սվազի վիլայեթներից, որն անկասկած, ամերիկյան քարոզիչների գործունեության և ազդեցության հետևանք էր: Սկսած 1895 թվից ԱՄՆ էին գաղթում տարեկան շուրջ 4 հազար հայեր: 1914 թ. այդ թիվը հասնում է 8 հազարի[96]:

Ընդորում հայության մեծ մասը, ով եկավ ԱՄՆ 1894-1914 թթ. ընկած ժամանակահատվածում, հիմնականում բնակություն հաստատեց Մասսաչուսեթսում կամ Նյու Յորքում: Ռոդ Այլենդը, այս իմաստով երրորդ խոշոր քաղաքն էր[97]:

Հայ գաղթականության խնդիրներին ու Հայկական հարցին էր նվիրված 1900 թ. դեկտեմբերի 22-ին Վերակազմյալ Հնչակյան կուսակցության նախաձեռնությամբ Ուստրի հայոց եկեղեցում գումարված ամերիկահայության անդրանիկ համաժողովը, որի հայտարարության մեջ ասվում էր. «Նկատելով որ Ուստր գումարված Համաժողովը իր կազմութեամբ լիովին չի ներկայացներ Ամերիկայի

---

[94] Wertsman Vl., նշվ. աշխ., էջ 53:
[95] Տե՛ս Cardashian V., The Ottoman Empire of the Twentieth Century, Albany, New York, 1908, p. 187.
[96] Տե՛ս Կիրակոսյան Ա., ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը, (19-րդ դար -1914 թ.), էջ 249:
[97] Տե՛ս Atamian S., նշվ. աշխ., էջ 53:

բոլոր հայ գաղթականութիւնը, եւ աչքի առջև ունենալով թէ Կեդրոնական Ազգային Մարմնոյ մը գոյութիւնը անհրաժեշտ է Ամերիկայի Հայոց մէջ, միեւնոյն ատեն տեսնելով, որ ժողովը ինքզինք անձեռնհաս կը գտնէ այնպիսի մարմնի մը ընտրութեան, կ'որոշէ առժամեայ յանձնախումբ մը ընտրել, որ պաշտօն ունենայ մինչեւ որոշ ժամանակ մը աշխատիլ հայ գաղթականութեան մէջ այնպիսի Կեդրոնական Մարմինի մը գոյութիւնը ապահովել:

Համաժողովը նորընտիր յանձնախումբին կը յանձնէ հետեւեալ խնդիրներ.

-Որբախնամ եւ այլ բարենպատակ ընկերութեանց միացման եւ ընդհանրացման գործը փութացնել:

-Հայկական պատուին եւ ազգային դատին ի պաշտպանութիւն յանուն Համաժողովին հրատարակութիւններ ընել տեղական թերթերում մէջ:

-Ամերիկայի հայ գաղթականութեան թուահամարը ստուգել:

-Արտասահմանի հայութեան հետ յարաբերութիւն մշակել, նմանօրինակ համաժողովներու գումարման թելադրութեամբ:

-Գումարելի յաջորդ համաժողովին վաւերացմանը ներկայացնել ընդհանուր կանոնագիր մը, իբր հիմ ազգային ապագայ գործունէութեան»[98]:

Դեպի ԱՄՆ հայության ներգաղթի հաջորդ խոշոր ալիքը պայմանավորված էր Օսմանյան կայսրությունում երիտթուրքական վարչակարգի կողմից կազմակերպված հայ ժողովրդի կոտորածով: Ընդ որում, Օսմանյան Թուրքիայում առաջին աշխարհամարտի տարիներին իրականացվող Հայոց ցեղասպանությունը, որը սկսվել էր 1914 թ. վերջերին և համընդհանուր բնույթ ստացել 1915 թ. ամռանը, չի

98 Ճիզմէճեան Մ., նշվ. աշխ., էջ 69-70:

դադարում և հաջորդ տարիներին՝ ընդգրկելով Արևմտյան Հայաստանի բոլոր հատվածներն ու Օսմանյան կայսրության բոլոր հայաբնակ շրջանները[99]: Այս ամենը տեղի էր ունենում ամերիկյան դիվանագետների, պետական ու քաղաքական գործիչների աչքի առջև, որոնք համապատասխան փաստաթղթերով, զեկուցագրերով և գրություններով այդ ամենի մասին տեղյակ էին պահում ամերիկյան կառավարությանը[100]:

Ի տարբերություն Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի՝ Առաջին աշխարհամարտի տարիներին Թուրքիայում գործում էր ԱՄՆ-ի հյուպատոսական ցանց, հատկապես, Խարբերդ, Տրապիզոն, Հալեպ, Ադանա և Կ. Պոլիս քաղաքներում: Հյուպատոսներ էին գործում Ուրֆա, Սամսոն և Էրզրում քաղաքներում: Այս ամենը հնարավորություն էր տալիս ամերիկյան կառավարությանը մոտիկից տեսնել կատարվող իրադարձությունները, մանավանդ, որ ԱՄՆ-ն մինչև 1917 թ. ապրիլ պահպանում էր չեզոքություն և չէր մասնակցում պատերազմական գործողություններին: Այս հանգամանքը, անշուշտ, կարևոր արժեք է հաղորդում ամերիկյան արխիվներին, որոնք կարևոր են հայերի կոտորածների և տեղահանության ուսումնասիրության համար[101]:

Նշենք, որ Առաջին աշխարհամարտից հետո ընկած ժամանակաշրջանում հայերի մուտքը Ամերիկա շարունակվում է գլխավորապես 1915-1916 թթ. հայկական

---

99 Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ.՝ Մ.Գ.Ներսիսյանի, Եր., 1991, էջ 15:

100 Տե՛ս Ամերիկայի Միացյալ Նահանգների պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին, կազմ.՝ Սարաֆյան Ա., Եր., 2004:

101 Տե՛ս Տատրյան Վ., Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական հիմնական փաստարկները. աղավաղման և կեղծարարության ուսումնասիրություն, Եր., 2005, էջ 44:

կոտորածներից հետո Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում ապաստան գտած հայերի հաշվին[102]:

Առաջին համաշխարհային պատերազմը և հայությանը սպառնացող վտանգը իրենց վրա են բևեռում ամերիկահայության ուշադրությունը՝ նրանց մտահոգության առարկա դարձնելով հայրենիքի և հայրենակիցների վիճակը:

1914 թ. նոյեմբերի 12-ին ամերիկահայ չորս քաղաքական կուսակցություններ՝ հնչակյանները, ռամկավարները, վերակազմյալ հնչակյանները և դաշնակցականները, համաձայնության են գալիս և ստեղծում «Միջկուսակցական հանձնախումբ (խորհրդաժողով)» անունով մի մարմին՝ խնդիր ունենալով, ինչպես ասված է նրանց համաձայնագրում՝ «ա) օգնել այժմ իսկ երկրների մեջ կռվող խմբերու, բ) զինյալ շարժում առաջ բերել, երբ կարելի լինի դաշնակից պետությունների հավանությունն ու աջակցությունը ստանալ, գ) դիվանագիտական հետապնդումներ կատարել»[103]:

Միջկուսակցական հանձնախմբի ձևավորման գործում, թերևս կարևոր նշանակություն ուներ դեռևս 1914 թ. հուլիսի 18-ին Փրովիդենսում տեղի ունեցած վերոնշյալ չորս քաղաքական կուսակցությունների տեղական ներկայացուցիչների ժողովը, որոնք հանդես էին գալիս միասնության և համերաշխության կոչերով: Նրանք կոչ էին անում իրենց կուսակցությունների կենտրոնական ղեկավար մարմիններին, որպեսզի համախմբվեն հայկական շահերի շուրջ, իսկ կուսակցական թերթերին էլ, որպեսզի դադարեցնեն անպատշաճ պայքարը միմյանց դեմ և սահմանափակեն իրենց պայքարը միայն սկզբունքային հարցերի շուրջ: Միաժամանակ կոչի մեջ նշվում էր, որ խիստ

[102] Տե՛ս Գասպարյան Ս., նշվ. աշխ., էջ 11:
[103] Ճիզմէճեան Մ., նշվ. աշխ., էջ 198-199:

անհրաժեշտ է համերաշխությունը հայ քաղաքական կյանքում, որ հայությանը սպառնացող ներկա պայմանները ստիպում են, մի կողմ դնել կուսակցական տարբերությունները և հայության դժվար պայքարը միասնաբար ծավալել[104]:

Ավելի ուշ, հանձնախմբի մեջ ներգրավվում են նաև Հայ առաքելական եկեղեցու երկու ներկայացուցիչներ ևս և այս մարմինը վերանվանվում է՝ ստանալով «Ազգային պաշտպանության Ամերիկայի հանձնախումբ» անունը[105]:

Ամերիկայի հայ քաղաքական կուսակցությունների միասնությունը շատ անկայուն է եղել, բավական է նշել, որ կազմակերպումից անմիջապես հետո Ազգային պաշտպանության Ամերիկայի հանձնախմբի վարչությունը 1915 թ. փետրվարի 5-ի գրությամբ Էջմիածնին հայտնում է Ամերիկայի հայ քաղաքական կուսակցությունների համախմբման և հանձնախմբի կազմակերպման մասին, իսկ շատ չանցած, նոր գրությամբ հաղորդում հանձնախմբի պառակտման մասին: Ամերիկահայ շրջաններն, այնուամենայնիվ, կատարում են հանգանակություն. նրանց հաջողվում է հավաքել 160000 դոլար[106]:

Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը (1914-1918 թթ.) ԱՄՆ-ում բնակվում էր 60 հազար հայ, 1915 թ. Մեծ եղեռնից հետո (1920-1924 թթ.) ԱՄՆ է գաղթել շուրջ 21 հազար հայ[107]:

Հայերի հոսքը ԱՄՆ նոր թափ է ստանում 1950-ական թթ.: 1965 թ. ԱՄՆ-ում ընդունված «Գաղթականական օրենք»-ով վերացվում են ներգաղթի նկատմամբ

---

104 Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 408, ց. 1, գ. 120, թ. 1:
105 Տե՛ս Լազեան Գ., Հայաստան եւ հայ դատը (վաւերագրեր), Գահիրէ, 1946, էջ 201:
106 Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., հատ. Բ, էջ 366-367:
107 Տե՛ս Վերանյան Կ., Նահապետյան Հ., Սիմավորյան Ա., Ղանալանյան Տ., նշվ. աշխ., էջ 7:

նախկինում գործող սահմանափակումները՝ խթանելով աշխարհի տարբեր կողմերից, մասնավորապես Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներից և Խորհրդային Հայաստանից շուրջ 2 հազար հայերի ամենամյա հոսքը Միացյալ Նահանգներ[108]:

1970-ական թթ. Խորհրդային Հայաստանից քաղաքական և տնտեսական պատճառներով սկսված արտագաղթի հետևանքով Միացյալ Նահանգների հայ համայնքը համալրում է հայության մի մեծ զանգված ևս[109], որի արդյունքում արդեն 1970-1972 թթ. ԱՄՆ-ում բնակվում էր շուրջ 450-500 հազար հայ:

1990-ական թթ. սկզբներին՝ պայմանավորված 1988 թ. Սպիտակի երկրաշարժով, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ու քաղաքական մի շարք գործոններով մեծ չափերի է հասնում հայերի արտագաղթը դեպի Միացյալ Նահանգներ[110]:

2003 թ. տվյալներով ԱՄՆ-ում հայերի թիվը հասնում էր շուրջ 1 մլն 200 հազարի[111], որոնք բնակվում են հիմնականում Կալիֆորնիա, Նյու Յորք, Նյու Ջերսի, Ռոդ Այլենդ, Միչիգան, Մասսաչուսեթս, Իլինոյս, Կոնեկտիկուտ և Ֆլորիդա նահանգներում:

Միացյալ Նահանգներում հայերի թվաքանակի աճին զուգընթաց, օտարության մեջ ազգային նկարագիրը, լեզուն, սովորույթները, մշակույթը պահելու, զարգացնելու, ինչպես նաև հայրենիքի հետ կապը պահպանելու և ամրապնդելու նպատակով ամերիկահայության ջանքերով դեռևս XIX դարի 80-ական թվականների երկրորդ կեսից նախ ԱՄՆ-ի

---

108 Տե՛ս Ավագյան Ք., Հայերի արտահոսքը ԱՄՆ և կապը բնօրրանի հետ (սկզբնավորումից մինչև 1985 թ.), //«Հայ գաղթականության և Հայրենիք-Սփյուռք կապերը 1918-1985 թթ.», Միջազգային գիտական զեկուցումներ, Եր., 2011, 8-10 հոկտեմբերի, էջ 26-27:

109 Տե՛ս Դալլաքյան Կ., Հայ Սփյուռքի պատմություն, Եր., 2004, էջ 11:
110 Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, Եր., 2002, էջ 7:
111 Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 37:

արևելյան, ապա արևմտյան ափին աստիճանաբար ստեղծվել են բազմաբնույթ միություններ, կազմակերպություններ, ընկերություններ ու ակումբներ, միաժամանակ իրենց մասնաճյուղերն են ստեղծել հայ քաղաքական կուսակցությունները[112]. 1890 թ. հիմնադրվում է Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության տեղի կառույցը, իսկ 1895 թ. իր գործունեությունն է սկսում Հայ հեղափոխական դաշնակցության ԱՄՆ-ի տեղական կազմակերպությունը, որի մասին Սիմոն Վրացյանը գրում էր. «Հ. Յ. Դաշնակցութեան կեանքի հենց առաջին տարիներից նրա գաղափարները մուտք գործեցին եւ Ամերիկա, իսկ 1895 թ. Դաշնակցութիւնը արդեն կազմակերպված ուժ էր նոր աշխարհում»[113]:

1919 թ. ստեղծվում է Ազգային ռամկավարական միությունը՝ 1921 թ. դառնալով Ռամկավար ազատական կուսակցություն:

1890-ական թթ. սկսած Հայկական հարցը պահվում էր Միացյալ Նահանգների ուշադրության կենտրոնում հենց հայ քաղաքական կուսակցությունների շնորհիվ[114]: Նրանք այստեղ հիմնում են մի շարք սոցիալական և քաղաքական ինստիտուտներ՝ ակումբներ, գրադարաններ, որտեղ հավաքվում էին համայնքի ներկայացուցիչները և մտքեր փոխանակում: Սկզբնական շրջանում թերթերի հրատարակության գրասենյակները ևս ծառայում էին որպես հավաքատեղիներ:

Այս շրջանում է, որ առաջանում են «Դաշնակ», «Հնչակ» և «Ռամկավար» ակումբները: Նրանք վարձակալում էին սենյակներ՝ գրադարանների կամ ընթերցասրահների համար, որոնք լուրջ

---

112 Տե՛ս Ավագյան Ք., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (սկզբնավորումից մինչև 1924 թ.), էջ 89:
113 Տօնապետեան Գ., Հ. Յ. Դաշնակցութիւնը Հիւսիսային Ամերիկայի մէջ, հատ. Ա, (1895-1909), Պոսթոն, 1993, էջ 1:
114 Տե՛ս Mirak R., նշվ. աշխ., էջ 241:

աշխատանքներ էին պարունակում Հայկական հարցի, հայոց պատմության և հայ գրականության վերաբերյալ[115]:

Կազմակերպությունները, միությունները, ընկերություններն ու ակումբները և նրանց իրականացրած գործունեությունը շատ կարևոր տեղ են զբաղեցնում ամերիկահայության կյանքում: Հայկական կազմակերպությունները իրենց բնույթով տարբեր էին, դրանք ունեին սոցիալական, մշակութային և քաղաքական բնույթ[116]:

Ամերիկահայ համայնքին այսպիսի բնորոշում է տալիս Ա. Անդրեասյանը. «Ամերիկահայ գաղութը կը բովանդակէ ազգութեան գաղափարով եւ հայրենիքի իտէալով խորապէս տոգորուած համայնքներ, իրենց հիմնական նպատակներուն իրագործման համար աշխատանքի անսպառ եռանդով եւ զոհողութեան գերագոյն չափանիշով: Եւ ան տակաւին կը մնայ ոգիով ու նիւթական միջոցներով, համահայկական նշանակութեամբ խոշոր ձեռնարկներու, որքան ատեն որ յաջողի երկարաձգել իր կազմակերպուած գոյութիւնը»[117]:

Դեռևս 1917թ. մարտի 16-26-ը Բոստոնում անցկացվում են հայ քաղաքական չորս կուսակցությունների միջև համերաշխության բանակցությունների յոթ նիստեր, որոնց արդյունքում ձևավորվում է Ամերիկայի հայ ազգային միությունը («Armenian National Union of America»): Այն կազմված էր Հ.Յ.Դաշնակցություն, Ս.Դ.Հնչակյան, Հ.Ս.Ռամկավար և Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունների, Հայ առաքելական և Հայ ավետարանական եկեղեցիների և Հ.Բ.Ը.Միության ներկայացուցիչներից: Ընտրվում է միության 18 անդամներից բաղկացած կենտրոնական մարմին, որը

---

115 Տե՛ս նույն տեղում էջ 252:
116 Տե՛ս Avakian A., նշվ. աշխ., էջ 71:
117 Անդրէասեան Ա., Սփիւռքը եւ հայրենիքը, էջ 15:

մինչև միության լուծարումը (1922 թ.) ղեկավարում է Միհրան Սվազլին (Սվազլյան)[118]:

Ամերիկայի հայ ազգային միությունը հանդիսանում է ԱՄՆ-ում ստեղծված առաջին հայ լոբբիստական կազմակերպությունը[119], որի նպատակը ձևակերպված էր այսպես. «Միութեան նպատակն է Ամերիկայի հայ գաղութին նիւթական եւ բարոյական ուժերը համադրել եւ զանոնք ի սպաս դնել հետեւեալ երեք հիմնական նպատակներու իրագործման.

-Հայկական ազատագրութիւն,

- Երկրի կարօտելոց նպաստ և Հայաստանի վերաշինութիւն,

-Դիւանագիտական ձեռնարկ և հայանպաստ փրոփականտ»[120]:

Ազգային Միությունը ձեռնարկում է մեծ հանգանակություն, որի շնորհիվ երկու տարվա մեջ գոյացած գումարը տրամադրվում է վերոնշյալ նպատակների իրագործմանը: Հրատարակվում են անգլերեն լեզվով բազմաթիվ գրքեր՝ Հայ դատի քարոզչության համար:

Միության նախագահ Միհրան Սվազլին կազմակերպական աշխատանքներն ավարտելուց հետո Էջմիածնին տեղյակ է պահում, որ «Ամերիկայի մեջ ազգային ամբողջական միութիւնը կատարված իրողութիւն մըն է: Այն առաջ բերած է մեծ խանդավառութիւն ամբողջ Միացյալ Նահանգաց մեջ: Միութիւնը սկսել է իր տենդոտ գործունէութիւնը այն բոլոր ձեռնարկումների համար, որոնց շուրջ համաձայն են չորս քաղաքական կուսակցութիւնները, հայ եւ ավետարանական

---

[118] Տե՛ս Ավագյան Ք., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (սկզբնավորումից մինչև 1924թ.), էջ 116:
[119] Տե՛ս նույնի՝ Միհրան Սվազլյան. Մարդը, Հայրենասերը, //«Գիտությունն աշխարհում», գիտահանրամատչելի հանդես, Եր., թիվ 1, 2010, էջ 14:
[120] Լազեան Գ., նշվ. աշխ., էջ 202-203:

եկեղեցիները եւ Հայ բարեգործական միությունը»[121]:

Միությունը առաջին հերթին հրապարակում է կոչ՝ կամավորական խմբեր կազմելու նպատակով. ցուցակագրվում են 15000 հոգի: Ֆրանսիական կառավարությունը, սակայն, շուտով սահմանափակում է Ամերիկայից հայ կամավորների ընդունումը, ուստի հազիվ հնարավոր է լինում ուղարկել միայն 1172 հոգի[122]:

Կարճ ժամանակում ԱՄՆ-ում ստեղծվել էր Միության 187 մասնաճյուղ: Ամերիկայի հայ ազգային միությունը իր գործունեությունը համաձայնեցնում էր Փարիզի ազգային պատվիրակության հետ՝ հանդիսանալով նրա լիազոր ներկայացուցչական մարմինը Միացյալ Նահանգներում:

Ամերիկայի հայ ազգային միությունը Բոստոնում Միհրան Սվազլյանի խմբագրությամբ լույս էր ընծայում «The Armenian Herald» (1917-1919 թթ.) հանդեսը[123]:

Չնայած Միության ներսում եղած քաղաքական տարաձայնություններին և հակասություններին, նրա ստեղծումը դրական ու կարևոր իրադարձություն էր ամերիկահայ համայնքի կյանքում, քանի որ այն համախմբել էր քաղաքական, եկեղեցական և բարեգործական կառույցները՝ խնդիր ունենալով հայկական շահերի և Հայ դատի պաշտպանության հիմնահարցերը:

ԱՄՆ-ի ղեկավարության և կոնգրեսականների շրջանում Ամերիկայի հայ ազգային միության ծավալած հայանպաստ գործունեությունը շուտով տալիս է իր արդյունքները: Մասնավորապես, ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը գեներալ Ջեյմս

---

121 Աբրահամյան Ա., նշվ. աշխ., հատ. Բ, էջ 368:
122 Տե՛ս նույնը:
123 Տե՛ս Սվազլյան Ք., Միհրան Սվազլյան. Մարդը, Հայրենասերը, //«Գիտություն աշխարհում» գիտահանրամատչելի հանդես, էջ 15:

Յարբորդի գլխավորությամբ քննիչ հանձնախումբ է ուղարկում Յայաստանի Յանրապետություն, որպեսզի վերջինս տեղում ուսումնասիրի հայ ժողովրդի տեղահանություններն ու կոտորածները, նորաստեղծ հանրապետության տնտեսական օգնություն ցույց տալու հարցերը[124]:

Յենց Միության ջանքերով էր, որ ամերիկյան Կոնգրեսի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովը 1918թ. սեպտեմբերի 29-ին, հոկտեմբերի 2-ին և 10-ին ունկնդրության էր դրել հայ ներկայացուցիչների և հայասեր ամերիկացիների՝ Յայկական հարցին առնչվող հաղորդումները:

Ազգային միության ծավալած աշխատանքների շնորհիվ 1919 թ. մարտին ամերիկյան առաջադեմ հասարակայնության ներկայացուցիչները խնդրագիր են ներկայացնում ԱՄՆ-ի նախագահին՝ արագացնելու Ազատ Յայաստան ստեղծելու ուղղությամբ Փարիզի խաղաղության վեհաժողովում ձեռնարկվելիք ջանքերը:

Առաջին աշխարհամարտից հետո Ազգային միությունը Միացյալ Նահանգների և Եվրոպայի պաշտոնատար անձանց կողմից ճանաչված անցագիր-վկայականներ է տրամադրում դեպի Յայրենիք մեկնող հայերին:

Ամերիկահայ ազգային միությունը կարևոր դերակատարում է ունեցել նաև Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի կողմից Մեծ եղեռնից փրկված հայ որբերին օգնություն ցույց տալու, ինչպես նաև Յայաստանի առաջին հանրապետության վարչապետ Յովհաննես Քաջազնունու կողմից ԱՄՆ-ում հայկական բանակի համար կատարված հանգանակության իրականացման գործում:

---

[124] Տե՛ս նույնի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (սկզբնավորումից մինչև 1924թ.), էջ 119:

ժամանակակիցներից մեկի բնորոշմամբ «յառաջադիմող իմաստութեան կատարեալ մարմանցում» Միհրան Սվազլյանի ղեկավարած Ամերիկայի հայ ազգային միությունն իր հետամտած հայանպաստ լուրջ խնդիրների իրականացումը համագաղութային, մինչև անգամ միջազգային և հատկապես ամերիկյան կառավարական ու հասարակական մակարդակներով կազմակերպելու կարողությունների համար ամերիկյան պաշտոնական շրջանների կողմից ճանաչվել է որպես ամերիկահայ գաղութը ներկայացնող մարմին՝ դառնալով հայկական առաջին լոբբիստական կազմակերպությունը Միացյալ Նահանգներում[125]:

Միացյալ Նահանգների՝ Առաջին համաշխարհային պատերազմ մտնելուց հետո, Ազգային միությունը Նյու Յորքում հիմնում է «Փրէս Պիւրօ» («Մամուլի հայկական գրասենյակ»), որի գործադիր տնօրեն ու թողարկվող հիմնական նյութերի հեղինակ է դառնում Վահան Քարտաշյանը (1918 թ. նոյեմբեր)[126]: Նա ամեն շաբաթ մեկնում էր Վաշինգտոն և հանդիպումներ ունենում ազդեցիկ անձանց հետ: Մամուլի հայկական գրասենյակը, ըստ որոշման, պետք է գործեր Ազգային միության նախագծով և ամերիկյան մամուլի միջոցով պետք է իրականացներ անհրաժեշտ քարոզչություն:

Շուտով, սակայն, հակասություններ են սկսվում Ազգային միության և Վահան Քարտաշյանի միջև: Միությունը, որն առաջնորդվում էր Փարիզի Ազգային պատվիրակության գծած քաղաքականությամբ, մեղադրում էր Վահան Քարտաշյանին, որ նա շեղվել է նախագծված ուղուց, գործում է Ազգային միությանը և Ազգային

---

125 Տե՛ս նույնի՝ Միհրան Սվազլյան. Մարդը, Հայրենասերը, //«Գիտությունն աշխարհում» գիտահանրամատչելի հանդես, էջ 15-16:

126 Տե՛ս Ճիզմէճեան Մ., նշվ. աշխ., էջ 496:

պատվիրակության հակառակ՝ մխրճվելով ինքնագլուխ դիվանագիտական գործերի մեջ:

Ստորև մեջբերենք Ազգային միության տեղեկագրից հետևյալ հատվածը «Փրէս Պիւրօ»-ի մասին.«Այնպէս կը կարծուէր թէ Նիւ Եորքի մէջ լաւ ոյժերէ կազմուած մարմին մը կարող պիտի ըլլար Ամերիկեան մամուլը ձեռք առնել եւ նպաստել մեր ազգային դատի յաջող լուծման: Բայց Վահան Քարտաշեան իր առջի քայլերուն մէջ իսկ սկսաւ շեղիլ գծուած ուղեգիծէն եւ հակառակ գործէց Ազգային պատվիրակութեան և Ազգային միութեան դէմ՝ մամլոյ գործերէն աւելի մխրճուելով դիւանագիտական գործերու մէջ եւ քիչ ետքը՝ բացէ ի բաց բռնելով Երևանի Դաշնակցական կառավարութեան դիւանագիտական ներկայացուցիչ Գ.Փաստրմաճեանի»[127]:

Այսպիսով,Ազգային միությունը մեղադրում էր Վահան Քարտաշյանին այն բանի համար, որ վերջինս իբր շեղվել է Ազգային Պատվիրակության գծած ուղուց, և ինքնուրույն փորձում է մտնել դիվանագիտական բանակցությունների մեջ:

1920 թ., երբ Փարիզի Ազգային պատվիրակության անդամ Աբրահամ Տեր-Հակոբյանը, իբրև լիազոր ներկայացուցիչ ժամանում է ԱՄՆ, Նյու Յորքի ազգային շրջանակները առաջարկում են վերջինիս՝ օգտագործելով իր հեղինակությունը, հաշտեցնել «Փրէս Պիւրօ»-ի ղեկավարներին: Նրա ջանքերը, սակայն, այս ուղղությամբ ոչ մի արդյունք չեն տալիս:

Նման պայմաններում Ազգային միությունը Նյու Յորքում ստեղծում է մի նոր մարմին՝ «Հրապարակային կոմիտե» («Publicity Committee») անունով: Կոմիտեի անդամներ են ընտրվում Միհրան Գալաճյանը, Ռաֆայել Կոստանյանը, Վարդան

[127]Նույն տեղում, էջ 497-498:

Մալքոմը, Արշակ Մահտեսյանը, որը հենց նույն օրը հրաժարական է տալիս, Մովսես Հովսեփյանը, Խաչատուր Պեննեյանը և Վահան Քյուրքչյանը:

Նորաստեղծ մարմինը 1920 թ. մարտի 16-ի իր առաջին իսկ նիստում որոշում է կազմել ազդեցիկ և հայասեր ամերիկացիների մարմին, որի նպատակը պետք է լիներ Հայաստանի անկախության ճանաչումը իր սահմանների մեջ՝ խորհրդակցելով Ազգային պատվիրակության լիազորի ու Ազգային միության հետ և առաջնորդվելով Ազգային պատվիրակության քաղաքական ծրագրով:

Շուտով այս մարմինը փոխում է իր անունը և կոչվում «Հայ-ամերիկյան ընկերություն» («Armenia-America Society»), որի նախագահն է դառնում ֆիլադելֆիացի իրավագետ և հայասեր Ուոլթեր Ջորջ Սմիթը:

Ազգային միության տեղեկագրից իմանում ենք, որ Ընկերության տարեկան ծախսերի կեսը հոգում էր Ազգային միությունը, իսկ մյուս կեսը տրամադրում էին Ընկերության անդամ ամերիկացիները:

1922-1923 թթ., երբ գումարվում է Լոզանի կոնֆերանսը, Հայ-ամերիկյան միության քարտուղար Մոնտգոմերին Ամերիկյան պատվիրակության հետ մեկնում է Լոզան՝ պաշտպանելու Հայոց «Ազգային Օջախի» հարցը[128]: Թե՛ամերիկյան պատվիրակության, և թե՛ Մոնտգոմերիի ծրագրերը խտանում էին մի Տեղեկագրում, որը ներկայացվում է Փոքրամասնությունների հանձնախմբում: Տեղեկագրի վերջում նշվում էր, որ Ամերիկան ակնկալում է, որ Արևմտյան Հայաստանը պետք է լինի ինքնավար:

1918 թ. դեկտեմբերին Վահան Քարտաշյանը Միացյալ Նահանգներում հիմնում է հայկական նոր լոբբիստական կազմակերպություն՝ Հայաստանի

[128] Տե՛ս նույն տեղում, էջ 502:

անկախության ամերիկյան կոմիտեն («Armenian Committee for the Independence of Armenia»):

Վահան Քարտաշյանը ծնվել է 1883 թ. Կեսարիայում: Կրթությունը ստացել է նախ տեղի ֆրանսիական ճեմարանում, ապա անգլիական դպրոցում: 1902 թ. հաստատվել է Միացյալ Նահանգներում: 1904-1908 թթ. սովորել է իրավաբանություն՝ Յելի համալսարանում: 1911 թ. ընդունել է թուրքական դեսպանորդի առաջարկը՝ ստանձնել դեսպանության խորհրդականի և Նյու Յորքի թուրքական հյուպատոսության իրավախորհրդատուի պաշտոնը[129]:

Երբ 1915 թ. կեսերին Ամերիկա են հասնում հայոց ջարդերի և աքսորների մասին առաջին լուրերը, Վ. Քարտաշյանը թողնում է դեսպանատան աշխատանքը և ամբողջությամբ նվիրվում Հայկական հարցին ու հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության գործին: Ահա թե ինչպես է հիմնավորում իր կազմակերպության ստեղծումը Վահան Քարտաշյանը. «Այդ ժամանակ էր, որ ես տեսա, որ հայկական մարմինը, ընդունակ չի լինելու առաջ մղել Հայկական հարցը Միացյալ Նահանգներում: Ես միաժամանակ, հասկացա, որ հայկական քարոզչությունը պետք է լինի ուժեղ և ուղղակի, որը պետք է այնքան հզոր լինի, որ կարողանա ազդեցություն ունենալ ԱՄՆ-ի կառավարության վրա: Ուստի, 1918 թ. դեկտեմբերին ես կազմակերպեցի Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն, որի գործադիր ղեկավար դարձավ նախկին դեսպան Ջերարդը»[130]:

Կոմիտեն ուներ 72 հոգիանոց ընդհանուր խորհուրդ և ղեկավարվում էր 9 հոգուց բաղկացած գործադիր մարմնի կողմից, որի ղեկավարն էր Գերմանիայում ԱՄՆ-ի նախկին դեսպան Ջեյմս

---

129 Տե՛ս Yeghiayan V., նշվ. աշխ., էջ 2:
130 Aftandilian G., նշվ. աշխ., էջ 26:

Ջերարդը: Ընդհանուր խորհրդի պատվո նախագահն էր Միացյալ Նահանգների Գերագույն դատարանի նախկին անդամ և ապագա պետքարտուղար Չարլզ Էվանս Հյուզը: Կազմակերպության առանձնահատկությունը նրանում էր, որ նրա բոլոր անդամները, բացի Վ. Քարտաշյանից, ամերիկացիներ էին. օրենսդիրներ, նախարարներ, դեսպաններ, ռեկտորներ և քսանմեկ նահանգապետեր: Այս առումով Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն չի կարող համարվել էթնիկ լոբբինգի դրսևորում, քանի որ նրա բոլոր անդամները, բացի Վահան Քարտաշյանից, ոչ թե հայեր էին, այլ ազդեցիկ ամերիկացիներ[131]: Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն 13 նահանգներում ուներ 23 մասնաճյուղ, իսկ կենտրոնական գրասենյակը գտնվում էր Նյու Յորքում: Կոմիտեն աջակցություն էր ստանում այնպիսի նշանավոր անձանցից, ինչպիսիք էին սենատոր Հենրի Քեբոտ Լոդջը, Չարլզ Հյուզը, և պետքարտուղար Ջեննինգս Բրայնը: Կոմիտեի կարևորագույն խնդիրն էր ապահովել Միացյալ Նահանգների անմիջական օգնությունը Հայաստանին, ինչպես նաև հասնել նրան, որ ԱՄՆ-ն ստանձնի Հայաստանի մանդատը[132]:

Հենց Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեի ջանքերի շնորհիվ էր, որ ԱՄՆ-ն 1920 թ. ապրիլի 23-ին ճանաչում է Հայաստանի Հանրապետությունը[133] և դա այն դեպքում, երբ Միացյալ Նահանգները այդպես էլ չի ճանաչում Վրաստանի և Ադրբեջանի անկախությունը:

Միաժամանակ Հայաստանի նորաստեղծ հանրապետությանը տրամադրվում է 17 մլն 202 հազար

---

131 Տե՛ս Պապյան Ա., Հայրենատիրության միակ խաչակիրը, //«Հայրենատիրություն. հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր» հոդվածների ժողովածու, Եր., 2012, էջ 122-123:

132 Տե՛ս Waldstreicher D., նշվ. աշխ., էջ 77:

133 Տե՛ս Aftandilian G., նշվ. աշխ., էջ 46:

դոլարի մարդասիրական օգնություն և 11 մլն դոլար արժողությամբ արտոնյալ վարկ: Այս շրջանում է, որ Վահան Քարտաշյանը ամերիկյան սենատորներին, պետական ու քաղաքական գործիչներին ուղղված հարյուրավոր նամակներով, գրություններով, ելույթներով ու հրապարակումներով փորձում է հայկական խնդիրները պահել ամերիկյան քաղաքական ուշադրության կենտրոնում[134]:

Վահան Քարտաշյանի ազգանպաստ գործունեության թերևս ամենամեծ նվաճումը կարելի է համարել այն, որ նրա ջանքերով հաջողվում է կանխել 1923 թ. օգոստոսի 6-ին Միացյալ Նահանգների ու Թուրքիայի միջև կնքված պայմանագրի ընդունումը և հաստատումը Սենատում[135]: Նշված պայմանագիրը մտնում է Սենատ 1924 թ. մայիսի 3-ին: Հենց այդ ժամանակ էլ Վ. Քարտաշյանը ձևավորում է «Ընդդեմ Լոզանի պայմանագրի հանձնախումբ»-ը («American Committee opposed to the Lausanne Treaty»), որի ջանքերով էլ 1927 թ. հունվարի 18-ին Սենատը մերժում է հավանություն տալ նշված պայմանագրին:

Վ. Քարտաշյանի ծավալած հայրենանվեր գործունեության վերջին դրսևորումը 1933 թ. ամերիկյան պետքարտուղարության ներկայացված 39 էջից կազմված Հուշագիրն էր, որտեղ անդրադառնում է հայ ժողովրդի դրության, Հայկական հարցին՝ սկսած Առաջին աշխարհամարտից մինչև 1933 թ. և արձանագրում, որ քանի որ ԱՄՆ-ն ճանաչել է Հայաստանի հանրապետությունը, նախագահ Վիլսոնը հանդես է եկել իր իրավարար վճռով՝ գծելով Հայաստանի և Թուրքիայի միջև

---

134 Տե՛ս Պապյան Ա., Հայրենատիրության միակ խաչակիրը, //«Հայրենատիրություն. հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր» հոդվածների ժողովածու, էջ 123, 124:

135 Տե՛ս Cardashian V., A Brief: In Support of an Application for a Hearing by the Senate Upon the Lausanne Treaty: The Lausanne Treaty-Mosul Oil and Armenia, New York, 1928, p. 21.

սահմանները, ուստի Միացյալ Նահանգները պետք է պաշտպանեն հայության իրավունքները և շահերը՝ Թուրքիայի ու Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերություններում[136]:

Վահան Քարտաշյանը շարունակում է պայքարը հայկական շահախնդրությունների համար մինչև իր մահը՝ 1934 թվականը: Նա իր ողջ կյանքը և անձնական հարստությունը նվիրում է Հայկական հարցի լուծմանը: Նրա մահվան կապակցությամբ Ջեյմս Ջերարդը գրել է. «Վահան Քարտաշյանը Հայկական հարցի կազմակերպման հզոր գործիչ էր: Ամերիկահայերը պետք է նրան հիշեն երախտագիտությամբ»[137]:

«Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտե»-ի իրավահաջորդն է «Ամերիկայի հայ ազգային կոմիտե»-ն («Armenian National Committee of America») կամ Հայ դատի ամերիկյան հանձնախումբը, որը Դաշնակցություն կուսակցության հասարակական աշխատանքների և կառավարական հարաբերությունների ազգային հանձնախումբն է,և հիմնվել է 1941թ.՝ Նյու Յորքում:

Սիմոն Վրացյանը Ժիրայր Միսաքյանին ուղղված 1945 թ. ապրիլի 6-ի նամակում հայտնում էր, որ Ամերիկայում ստեղծվել է ազգային հիմքով մի մարմին՝ Հայ ազգային կոմիտե անունով, և որ միաժամանակ ստեղծվել է հակադիր կուսակցությունների կողմից Ամերիկահայ ազգային խորհուրդ անունով մի կառույց[138]: Ս. Վրացյանը միաժամանակ հայտնում էր, որ միացյալ ճակատ կազմելու բոլոր փորձերն ապարդյուն են անցել և ամերիկահայությունը սկսել է անջատ

136 Տե՛ս Yeghiayan V., նշվ. աշխ., էջ 10:
137 Aftandilian G., նշվ. աշխ., էջ 63:
138 Տե՛ս Մսըրլեան Զ., Համաշխարհային Երկրորդ պատերազմին վախճանը եւ հայերը, //«Հայկազեան հայագիտական հանդէս», հատ. ԺԳ, էջ 183:

հանդես գալ Հայկական դատը ներկայացնելու ճանապարհին:

Հայ դատի ամերիկյան հանձնախմբի հիմնադիրները նշում էին. «Հետապնդելու համար հայոց պատմական իրավունքները, մենք անհրաժեշտ գտանք կազմել Հայ դատի ամերիկահայ յանձնախումբը: Մենք հաւատում ենք, որ Հայ դատի լուծման հարցում կարեւոր է Միացեալ Նահանգների համակիր վերաբերմունքը, կամ գոնե նրա բարեացակամ չեզոքութիւնը: Այս իմաստով, կարեւոր է նաեւ Միացեալ ազգերի կազմակերպութիւնը, որը եւս գտնվում է ամերիկեան հողի վրա...»[139]:

Իր առաջին իսկ նիստում հանձնախումբը հետևյալ կերպ է ձևակերպում իր նպատակը և գործունեության ուղղվածությունը.

«Հայ դատի յանձնախմբի նպատակն է կազմակերպել եւ իրականացնել Հայ դատի պաշտպանութեան գործը Ամերիկայում: Այս խնդիրը իրականացնելու համար անհրաժեշտ է.

1. ունենալ գրասենեակ Նիւ Յորքում,
2. ԱՄՆ կարեւոր վայրերում հիմնել յանձնախմբեր,
3. հրատարակել Հայ դատը հիմնաւորող և հայկական քարոզչութեանը ծառայող գրականութիւն,
4. հայանպաստ քարոզչութիւն իրականացնել նաեւ այլ միջոցներով՝ դասախոսութիւններ, ռադիո, մամուլ եւ այլն»[140]:

1944 թ. սկզբներին, Հ.Յ.Դ. Ամերիկայի կենտրոնական կոմիտեի կոչով սկսվում են «Հայ դատի պաշտպանության ֆոնդ»-ի հանգանակության

---

139 Ահարոնեան Գ., Խոհեր յիսնամեակի աւարտին, էջ 123:
140 Հաղորդագրութիւն Հայ դատի յանձնախումբի, թիւ 1, օգոստոս, 1945, էջ 7-8:

աշխատանքները: Կոչի մեջ հստակ ձևակերպված էին «Հայ դատի պաշտպանության ֆոնդ»-ի նպատակները, այն է՝ Հայաստանի սահմանների ընդարձակում՝ բռնի կերպով խլված հողերը վերադարձնելով իր իրական տերերին և տարագիր ու բազմահազար հայ բնակչության վերաբնակեցում իր պատմական հողերի վրա:

Ստորև մեջբերենք Կոմիտեի կոչից մի հատված.«Ան մեծ պարտականութիւն կիյնայ Ամերիկայի բարգաւաճ,նիւթական եւ մտաւոր ուժերով հարուստ հայութեան վրայ, այս ազատ եւ ազատասէր երկրին մէջ, որու ժողովուրդն ու կառաւարութիւնը այնքա՜ն սրտաբուխ համակրանք եւ աջակցութիւն ցոյց տուին Հայաստանին ու հայ ժողովուրդին մտաւոր անցեալին եւ որոնք այսօր ալ չեն կրնար տարբեր վերաբերում ունենալ:Ամերիկեան ազգը իր լուսաւոր գաղափարներով, իր նիւթական ու բարոյական զօրութեամբ վճռական դեր պիտի կատարէ պատերազմի հաշուեյարդարի, աշխարհի նոր կարգերու հաստատման եւ ազգային ճնշումներու վերացման մէջ: Ամերիկեան ազատութենէն եւ արդարադատութենէն բաժին պիտի հասնի նաեւ հայ ժողովուրդին: Մեր պարտականութիւնն է տեղեակ պահել ամերիկեան ազգն ու կառավարութիւնը հայ ժողովուրդի վիճակին ու բաղձանքներուն, ներկայացնել անոնց Հայ դատը իր բոլոր կողմերով, միջոցներ պատրաստել Հայ դատի պաշտպանութեան համար:

Մենք երջանիկ պիտի լինէինք, եթէ Հայ դատի հետապնդումը ստանձնէր Հայաստանի ժողովուրդը ինքը՝ իր կառավարութեան միջոցով.արտասահմանի հայութիւնը բերկրանքով պիտի աջակցէր անոր: Բայց քանի դեռ այդ չկայ ,մեր պարտականութիւնը կը նկատենք,այս բախտորոշ օրերուն,լսելի դարձնել

հայութեան ձայնը եւ Հայ դատի պաշտպան հանդիսանալ բոլոր հնարաւոր միջոցներով»[141]:

Հանգանակության գաղափարը մեծ ոգևորությամբ է ընդունվում ամերիկահայ համայնքի կողմից, ինչի շնորհիվ հնարավոր է դառնում չորս ամսվա ընթացքում հավաքել 165 հազար դոլար:

Դեռևս 1933 թ. հուլիսի 1-ին Փրովիդենսում գումարվում է Հ. Յ. Դաշնակցության ԱՄՆ-ի 40-րդ պատգամավորական ժողովը, որտեղ որոշվում է լիազորել Կենտրոնական կոմիտեին՝ նշանակելու մի մարմին, որը ԱՄՆ-ում կզբաղվի հայանպաստ և հակաթուրք քարոզչությամբ: Միաժամանակ ժողովը հանձնարարում է Կենտրոնական կոմիտեին, որ այն իր վրա վերցնի հայանպաստ քարոզչության դիվանագիտական բաժնի ղեկավարությունը: Այս նպատակների իրագործման համար ժողովը որոշում է բյուջեի մեջ մտցնել հատուկ գումար[142]:

Միաժամանակ 1930-ական թթ. վերջին և 1940-ական թթ. սկզբին Միացյալ Նահանգներում սկսվում է Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության խնդրի լայն ուսումնասիրություն, որն արդյունք էր ԱՄՆ-ի հասարակական-քաղաքական կյանքում տեղի հայ համայնքի դերի ուժեղացման, Հայոց ցեղասպանության փաստերի միջազգային ճանաչման և Թուրքիայի կողմից զավթած հայկական տարածքների վերադարձի համար Հայկական սփյուռքի մղած պայքարի[143]:

Երկրորդ համաշխարհային պատերազմը դեռ չավարտված, հայ համայնքներում սկսվում է մի շարժում, որը դաշնակից երկրներից պահանջում էր Արևմտյան Հայաստանի միացումը Խորհրդային

141 Նույն տեղում, էջ 5-7:
142 Տե՛ս Քաղուածք Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի 40-րդ պատգամավորական ժողովի արձանագրութիւններէն, էջ 14:
143 Տե՛ս Կիրակոսյան Ա., Ակնարկներ Հայկական հարցի և Եղեռնի միջազգային ճանաչման պատմության, էջ 17:

Հայաստանին: Այս ուղղությամբ առաջին դիմումը 1944 թ. սեպտեմբերի 23-ին կատարում է Ֆիլադելֆիայում գումարված Ազգային Երեսփոխանական ժողովը, որը դիմում է Միացյալ Նահանգների նախագահին՝ հայտնելով իր հույսերը մարդու իրավունքների և ժողովրդավարության դատի համար մղված պատերազմի և նրա հաղթանակի նկատմամբ և ավելացնում. «Երեսփոխանական ժողովը կ'ողջունէ Ձեր հռչակաւոր անձին մէջ ախոյեանը փոքր եւ հալածական ազգերու նուիրական իրաւանց եւ կը յուսայ թէ որպէս յաջորդը բազմիցս ողբացեալ Ուոտրըօ Ուիլսընի,-որ կը գուրգուրար Հայաստանի դատին վրայ եւ գծեց անոր սահմանները վերջին համաշխարհային պատերազմի վախճանին՝ համաձայն արդարութեան եւ ժողովուրդներու ինքնորոշման սկզբունքներուն,-եւ որպէս ավանդապահը Ուիլսընեան եւ ամերիկեան աւանդութեանց, արդարութիւն պիտի ընէր մեր մարտիրոսացեալ ժողովրդեան՝ ընդլայնելով Խորհրդային Հայաստանի սահմանները Ուիլսընի որոշման համեմատ եւ դիւրութիւն ընծայելով, որ իրենց դարաւոր հայրենիքը վերադառնան ցիրուցան հայերը.զոհերը 1915-ի աննկարագրելի ջարդերուն:

ՆՇԱՆ ՔՀՆՅ.ՓԱՓԱԶԵԱՆ

Նախագահ

Երեսփ.ժողովոյ»[144]:

Հայ դատի հանձնախումբը հանդես է գալիս հետևյալ հայտարարությամբ. «Եթէ ապագային Խորհրդային իշխանութիւնը ստանձնէ Հայ Դատի պաշտպանութիւնը, Հայ Դատի յանձնախմբի գործը պէտք է լինի աջակցիլ անոր»[145]:

[144] Լազեան Գ., նշվ.աշխ., էջ 351:
[145] Նույն տեղում, էջ 352:

1945 թ. մարտի 20-ին Խորհրդային Միությունը դադարեցնում է Թուրքիայի հետ 1925 թ. կնքված բարեկամության դաշինքը: Հայ դատի հանձնախումբը, նույն թվականի մարտի 29-ին Վաշինգտոնի իր ներկայացուցչի միջոցով հատուկ հուշագիր է հանձնում ԽՍՀՄ կառավարությանը, որտեղ ներկայացվում էին հայկական կողմի ցանկությունները՝ խնդրելով, որ Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրով Խորհրդային Հայաստանին միացվեն այն հողերը, որոնք նախագահ Վիլսոնի սահմանագծումով պետք է միացվեին Հայաստանի հանրապետությանը: Նույն բովանդակությամբ հուշագիր է ներկայացվում նաև ԱՄՆ-ի արտաքին գործերի քարտուղարությանը և անգլիական կառավարությանը: Այս հուշագրերը, սակայն, ոչ մի արդյունք չեն տալիս:

Ամերիկայի հայ համայնքը Հայ Դատի հետապնդման համար ուներ այլ մարմին ևս՝ «Ազգային Խորհուրդ» անունով, որը հիմնադրվել է 1944 թ. մարտի 19-ին, Նյու Յորքի Փենսիլվանիա հյուրանոցում գումարված ժողովում[146]: Խորհրդի մեջ մտնում էին Ամերիկայի հայ առաջադիմական միությունը, Ռամկավար ազատական, Սոցիալ դեմոկրատական հնչակյան կուսակցությունները[147] և 20 հայրենակցական միություններ. ատենապետն էր ռամկավար գործիչ Պետրոս Թերզյանը: Այն իր մասնաճյուղերն է հիմնում Միացյալ Նահանգների՝ ստվար հայ բնակչություն ունեցող գրեթե բոլոր քաղաքներում:

Ամերիկայի ազգային խորհրդի հիմնական նպատակն էր՝ օժանդակել Միացյալ Նահանգների պատերազմական ջանքերին, կազմակերպել ու հովանավորել ձեռնարկներ՝ ի նպաստ Հայաստանի և

146 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 426, ց. 1, գ. 5, թ. 1:
147 Տե՛ս նույնը, գ. 7, թ. 1-2:

Խորհրդային Միության, պաշտպան կանգնել Սփյուռքի հայության իրավունքներին և հետապնդել հայ ժողովրդի հողային պահանջները: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո առաջին երկու նպատակները դուրս են գալիս օրակարգից[148]: Ամերիկայի ազգային խորհուրդը հայկական իրավունքների տեր էր ճանաչում Խորհրդային Հայաստանի կառավարությանը:

Ամերիկահայ ազգային խորհուրդը եռանդուն գործունեություն է ծավալում և կարճ ժամանակում դառնում համայնքի առաջադիմական, գործունյա և հեղինակավոր ղեկավար մարմինը: Այն իրականացնում է քարոզչության և քաղաքական շփումների լայնածավալ գործունեություն:

Խորհուրդը կազմակերպում է մի շարք ձեռնարկներ՝ հօգուտ Հայաստանի, նյութական աջակցություն ցույց տալիս Հայրենիք մեկնող, բայց տարատեսակ խնդիրներ ունեցող հայերին և այլն:

Խորհրդի նախաձեռնությամբ 1945 թ. ստեղծվում է Խորհրդային Հայաստանի հետ մշտական կապեր պահպանող ամերիկահայ կոմիտե, որն իր շուրջն է համախմբում մոտ 100 ամերիկահայ գիտնականների, գրողների, արվեստագետների և հասարակական աչքի ընկնող գործիչների: Խորհուրդը ստեղծում է նաև «Հայության իրավունքների պաշտպանության ամերիկյան հանձնախումբ» անունով մի մարմին[149]:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո աշխարհի ժողովուրդները հույսեր էին փայփայում, թե վրա է հասել կայունության և

---

[148] Տե՛ս նույնը, գ. 5, թ. 1, նաև՝ Մսըրլեան Զ., Համաշխարհային Երկրորդ պատերազմին վախճանը եւ հայերը, //«Հայկազեան հայագիտական հանդէս», հատ. ԺԳ, էջ 183:

[149] Տե՛ս Ահարոնեան Գ., Մեծ երազի ճամբուն վրայ, էջ 196:

խաղաղության ժամանակաշրջանը[150]: Ամերիկահայությունը, ևս ոգևորված պատերազմի հաղթական ավարտով, կրկին բարձրացնում է Հայ դատի և պահանջատիրության հիմնահարցերը:

Հակառակ դաշնակից պետությունների այն հայտարարությունների, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի հիմնական նպատակը նախորդ պատերազմից ժառանգություն մնացած չարիքների վերացումը և նոր պատերազմների արգելումն էր՝ աշխարհում ստեղծելով արդար կարգեր և վերականգնելով ազգերի իրավունքները, այնուամենայնիվ, պատերազմի ընթացքում Հայկական հարցը, որ նախորդ պատերազմից անլուծելի մնացած մեծագույն անարդարություն էր՝ ծանրացած մարդկության խղճի վրա, մնում էր բոլորովին անտեսված:

Ո՛չ մեծ պետությունները, ո՛չ ՄԱԿ-ը, իրենց ծրագրերի մեջ չէին ներառում Հայկական հարցը: Սփյուռքահայության մի զգալի մասն էլ, կարծես հաշտվել էր այն մտքի հետ, որ իրենք անելիք չունեն հայկական իրավունքների հետապնդման գործում, և այդ խնդրի իրականացումը վերապահված էր Խորհրդային Միությանը՝ հատկապես Խորհրդային Հայաստանին: Վերջինս, թեև անտարբեր չէր դեպի Հայկական հարցը և ձգտում էր Թուրքիայի կողմից բռնագրավված հայկական հողերը միացնել Խորհրդային Հայաստանին, բայց հասկանալի պատճառներով, չէր կարող հանդես գալ և գործել ազատ[151]:

Նման պայմաններում, միանգամայն բնական էր, որ սփյուռքահայությունը պետք է տեր կանգներ Հայ դատի հետապնդման գործին:

---

150 Տե՛ս Սիմոնյան Հր., Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում, Եր., 1968, էջ 39:
151 Տե՛ս Հաղորդագրութիւն Հայ դատի յանձնախումբի, թիւ 1, օգոստոս, 1945, էջ 3-4:

1945 թ. ապրիլի 25-ից հունիսի 26-ը Սան Ֆրանցիսկոյում ընթանում էին Ազգերի լիգային փոխարինած Միավորված ազգերի կազմակերպության առաջին վեհաժողովի աշխատանքները, որին մասնակցում էին 50 երկրների պատվիրակություններ:

Վեհաժողովի աշխատանքներին մասնակցելու նպատակով Ամերիկահայ ազգային խորհուրդը ուղարկում է մի պատվիրակություն[152]: Վեհաժողովի կողմից Ամերիկահայ ազգային խորհուրդը ճանաչվում է որպես «ամերիկյան ազգային կազմակերպություն» և նրա պատվիրակությունը կարողանում է դիտորդի կարգավիճակով մասնակցել վեհաժողովի շրջանակներում կայացած հանդիպումներին:

Ամերիկահայ ազգային խորհուրդը ԱՄՆ-ի հայ համայնքի անունից ՄԱԿ-ին է ներկայացնում «Հայ ժողովրդի գործը» («The Case of the Armenian People») խորագրով մի հուշագիր[153]: Այդ փաստաթղթում Ամերիկահայ ազգային խորհուրդը ներկայացնում էր հայ ժողովրդի պատմական անցյալը, անդրադառնում թուրքական իշխանությունների իրականացրած հալածանքներին և կոտորածներին, տերությունների տված խոստումներին, մասնավորապես Սևրի դաշնագրին և Վուդրո Վիլսոնի իրավարար վճռին: Մատնանշվում էր, որ թեև գոյություն ունի Խորհրդային Հայաստան, բայց հայությունը սփռված է աշխարհի տարբեր երկրներում և իր հայրենքի մեծ մասի տերը չէ[154]:

Հուշագրով Ամերիկահայ ազգային խորհուրդը պահանջում էր Արևմտյան Հայաստանի հողերի

---

[152] Տե՛ս Մելքոնյան Ք., Սփյուռքահայությունը և Հայկական հարցի լուծման խնդիրը (1945-1947 թթ.), // «Պատմաբանասիրական հանդես», թիվ 2, Եր., 2010, էջ 44:

[153] Տե՛ս Vertanes Ch., The Armenian Question Today: In Its Historical Perspective, New York, 1946, p. 21:

[154] Տե՛ս The Case of the Armenian People, Memorandum to the United Nations Conference on International Organization in San Francisco, Submitted by the Armenian National Council of America.

կցումը Խորհրդային Հայաստանին և մեկուկես միլիոն հայերի ներգաղթը դեպի իրենց հայրենիք[155]: Խորհուրդը, միաժամանակ, ստեղծում է «Հայկական պահանջների իրագործման ֆոնդ»՝ առաջարկելով գոյացնել 100 հազար դոլար՝ Հայ դատի աշխատանքների իրականացման համար[156]:

Հայ դատի հանձնախումբը ևս պատվիրակություն է ուղարկում Սան Ֆրանցիսկո, որը 1945 թ. մայիսի 7-ին, ներկայացնում է մի հուշագիր՝ «Հայկական հարցի առթիվ» («A Memorandum Relating to the Armenian Question 1945») վերտառությամբ: Այն ստորագրված էր Սիմոն Վրացյանի կողմից: Նշենք, որ Դաշնակցությունը այդ հուշագիրը ներկայացնում է Հայ դատի հանձնախումբ անունով: Հայ դատի հանձնախմբի ներկայացրած հուշագրում անդրադարձ էր կատարվում Հայկական հարցի միջազգայնացմանը, թուրքական երեք վարչակարգերի կողմից իրականացված հայերի կոտորածներին, Հայաստանի առաջին հանրապետության հռչակմանը, Սևրի, Լոզանի պայմանագրերին և Խորհրդային Հայաստանի դրությանը:

Վերը նշված երկու հուշագրերի բովանդակությունը գրեթե նույնն էր: Թերևս միակ բացառությունն այն էր, որ Հայ դատի հանձնախումբը առաջարկում էր հայկական տարածքներից ստեղծել նոր «Հայկական հանրապետություն»[157]: Բայց ավելի ուշ նա փոխում է իր մոտեցումը՝ առաջարկելով Արևմտյան Հայաստանի տարածքները միացնել Խորհրդային Հայաստանին:

1945 թ. հունիսի 13-ին Հայ դատի հանձնախումբը խորհրդաժողովին և 50 պատվիրակությունների ներկայացուցիչներին ներկայացնում է իր

---

[155] Տե՛ս նույն տեղում, էջ 6:
[156] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 426, ց. 1, գ. 49, թ. 52:
[157] Տե՛ս A Memorandum Relating to the Armenian Question, p. 12.

երկրորդ Հուշագիրը, որտեղ Թուրքիան ներկայացվում էր որպես ագրեսոր, որը պետք է պատասխանատվություն կրի հայ ժողովրդի նկատմամբ իրականացված կոտորածների համար: Հուշագրում նաև հույս էր հայտնվում, որ Խորհրդային Հայաստանը ևս շուտով կընդգրկվի ՄԱԿ-ի մեջ:

Միացյալ ազգերի կազմակերպությանը նման հուշագրեր ներկայացնելու նպատակը Հայ դատի իրավական հիմքերի միջազգային ճանաչումն էր, որի համար անհրաժեշտ էր բոլոր մեծ պետություններին հիշեցնել ժամանակին իրենց կողմից տրված խոստումները և վավերացված դաշնագրերը[158]:

Սան Ֆրանցիսկոյի խորհրդաժողովից շատ չանցած հրավիրվում է Պոտսդամի կոնֆերանսը, որտեղ Հայ դատի հանձնախումբը մինչ կոնֆերանսի աշխատանքների սկսվելը՝ 1945 թ. հուլիսի 5-ին, հուշագիր է ներկայացնում ԱՄՆ-ի նախագահ Հ. Թրումենին, իսկ Վաշինգտոնի իր ներկայացուցիչների միջոցով նաև Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. Չերչիլին և ԽՍՀՄ-ի առաջնորդ Ի.Ստալինին՝ խնդրելով,որ կոնֆերանսի ընթացքում հաշվի առնվեն նաև հայ ժողովրդի պահանջները և թուրքահայ հողերը կցվեն Խորհրդային Հայաստանին: Հուշագրում մասնավորապես ասվում էր, որ հանձնախումբը հավատում է և նրանցից խնդրում է Հայկական հարցի արդար լուծում, այն է, Խորհրդային Հայաստանին կցել ոչ միայն Կարսի և Արդահանի շրջանները, այլ նաև Թրքահայաստանը, որը սահմանված է նախագահ Վիլսոնի գծած սահմաններով[159]:

---

[158] Տե՛ս Անդրէասեան Ա.,Հայկական դատին նոր հանգրուանը, էջ 35:
[159] Տե՛ս Մսըրլեան Զ.,Հայկական հարցի մասին, էջ 33-34:

Նույն թվականին հուլիսի 16-ին նմանատիպ հուշագրով Պոտսդամի կոնֆերանսին է դիմում նաև Ամերիկահայ ազգային խորհուրդը:

Ամերիկահայ ազգային խորհրդի գործունեության կարևոր նվաճումներից մեկը, թերևս 1947 թ. ապրիլի 30-ից մայիսի 4-ը Նյու Յորքում Համաշխարհային հայկական կոնգրեսի կամ համագումարի հրավիրումն էր, որի կազմակերպիչ հանձնախումբը ղեկավարում էր Պետրոս Թերզյանը: Վերջինիս հաջողվել էր կոնգրեսի նկատմամբ մեծ հետաքրքրություն և ոգևորություն առաջացնել ամերիկահայ համայնքի ներսում:

Ամերիկահայ ազգային խորհրդի 1947 թ. փետրվարի 10-ի շրջաբերականից տեղեկանում ենք, որ Համաշխարհային հայկական կոնգրեսի հրավիրումը պայմանավորված էր գաղութահայության խնդիրներով ու պահանջներով: Կոնգրեսի աշխատանքներին մասնակցելու համար Խորհուրդը հրավեր էր ուղարկել 26 տարբեր երկրներում գտնվող Ազգային Խորհուրդների և այլևայլ կազմակերպությունների:

Ուղարկված շրջաբերականում կոնգրեսի նպատակներ էին սահմանվում հետևյալ խնդիրները.

1. Միություն և համագործակցություն ստեղծել բոլոր հայ գաղութների մեջ՝ ներգաղթի և վերաշինության շուրջ:
2. Հայկական պահանջների շուրջ ստեղծել հասարակական նպաստավոր կարծիք և դրանց լուծումը հետապնդել Միացյալ ազգերի կազմակերպության միջոցով:
3. Հզորացնել մշակութային ու կրոնական կապերը գաղութների և մայր հայրենիքի միջև:
4. Վերագնահատել հայ գաղութների ծառայությունները և նվիրումը իրենց բնակեցրած երկրների կառավարություններին:

5. Միջոցներ ստեղծել Կոնգրեսի ընդունած որոշումները գործադրելու համար[160]:

Միաժամանակ ընդգծվում էր, որ որքան հեռավոր վայրերից և մեծ թվով հայեր ներկա լինեն Կոնգրեսին, այնքան այն ավելի մեծ տպավորություն կթողնի ամերիկյան մամուլի ու հանրության շրջանում և իր վրա կհրավիրի ամերիկյան կառավարության ու ՄԱԿ-ի ուշադրությունը:

Յամաշխարհային հայկական կոնգրեսը (համագումար) տեղի է ունենում Ուոլդորֆ Աստորիա պանդոկի սրահներում: Դրան մասնակցում էին 22 երկրներից 715 պատգամավորներ, որոնք ներկայացնում էին 70 կենտրոնական կազմակերպություններ, 275 մասնաճյուղեր և 31 եկեղեցիներ[161]: Յամագումարին մասնակցում էին Յ.Բ.Ը. Միության և հայրենակցական բոլոր միությունների ղեկավար ներկայացուցիչները. միակ կառույցը, որ չէր մասնակցում համագումարին, Դաշնակցություն կուսակցությունն էր: Կոնգրեսին ողջույնի հեռագիր է հղում նաև Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Զ-ն:

Յամաշխարհային հայկական կոնգրեսը, հաշվի առնելով հայ հասարակական ու քաղաքական տարբեր ուժերի և հայության բոլոր շրջանակների ցանկությունները, հայկական հողային պահանջների նկատմամբ որդեգրում է համապատասխան դիրքորոշում: Այդ առթիվ ընդունված բանաձևում մասնավորապես ասվում էր, որ աշխարհի շատ երկրներից և Միացյալ Նահանգների բոլոր մասերից հայ ժողովրդի շուրջ 700 ներկայացուցիչներ հրավիրում են

---

160 Տե՛ս ՅԱԱ, ֆ. 426, ց. 1, գ. 39, թ. 1:

161 Տե՛ս Ահարոնեան Գ., Մեծ երազի ճամբուն վրայ, էջ 197:

Համաշխարհային հայկական համագումար, որտեղ միաձայն որոշում են դիմել Միացյալ Ազգերի դատարանին՝ հայկական հողային պահանջների վերջնական և արդար լուծման համար. պահանջներ, որոնք հիմնավորված են պատմական իրավունքներով և համապատասխան դաշնագրերով[162]:

Ընդունված բանաձևը պետք է հանձնվեր Միացյալ ազգերի կազմակերպության Ընդհանուր քարտուղարությանը, բայց, մինչ այդ, հատուկ հուշագրի հետ մեկտեղ այն ներկայացվում է ԱՄՆ պետքարտուղարությանը:

Համաշխարհային հայկական կոնգրեսի հրավիրումը կարևոր իրադարձություն էր բովանդակ հայության կյանքում: Այն ամերիկահայ համայնքի և, ընդհանրապես, Հայկական սփյուռքի կարևոր հաջողություններից ու համախմբման լավագույն դրսևորումներից մեկն էր: Կոնգրեսի հրավիրումը պատմական և եզակի դեպք էր. առաջին անգամ էր, որ այսքան մեծ և ներկայացուցչական ժողով էր տեղի ունենում հայության շրջանում: Եթե հաշվի առնենք արտասահմանի հայ գաղութների տնտեսական աննպաստ պայմանները, ապա Ամերիկայի ազգային խորհուրդը իսկապես խիզախ գործ էր ձեռնարկել[163]:

Այս ամենով հանդերձ, Կոնգրեսը չի կարողանում հասնել իր առջև դրված խնդիրների իրականացմանը՝ հանդիպելով «Թրումենյան վարդապետության» պատվարին, որը թուրք-խորհրդային սահմանագիծը համարում էր ամերիկյան-խորհրդային սահմանագիծ[164]: 1947 թ. մայիսի 12-ին հայկական պատվիրակություն է մեկնում Վաշինգտոն և հանդիպում պետքարտուղարի

162 Տե՛ս նույն տեղում, էջ 198:
163 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 426, ց. 1, գ. 38, թ. 1:
164 Տե՛ս «Վասն Համասփիւռքահայ Քոնկրէսի» յայտարարութիւն-կոչին առիթով, Պէյրութ, 1996, էջ 6:

տեղական Դին Աչիսոնի հետ՝ հայկական տարածքների հատուցման հարցում ԱՄՆ-ի բարյացակամ վերաբերմունքը հայցելու համար, բայց այն չի կարողանում որևէ արդյունքի հասնել: Աչիսոնը հետևյալ պատասխանն է տալիս հայկական պատվիրակությանը. «... այն չափով, որ մեծանա և հզորանա Հայաստանը, նույն չափով կաճի մեր գլխավոր թշնամու՝ Սովետական Միության ուժը»[165]:

Ամերիկահայ ազգային խորհրդի նախաձեռնությամբ էր, որ 1942-1947 թվականներին Հայկական սփյուռքի տարբեր շրջաններում Հայոց ցեղասպանությանը և Հայ դատին միջազգային հանրությանը ծանոթացնելու նպատակով ստեղծվում են տարբեր կառույցներ: Սփյուռքում գործող հայկական բոլոր կուսակցությունները, կազմակերպությունները և միությունները նույն նպատակին, այն է՝ Արևմտյան Հայաստանը հայ ժողովրդին վերադարձնելու և Խորհրդային Հայաստանին միացնելու միջոցով հայ ժողովրդի պատմական հայրենիքի կերտմանը հասնելու համար փորձում են համախմբվել և հանդես գալ միասնական ձևով:

Բավական է միայն նշել, որ այս կառույցների գործունեության շնորհիվ, շուրջ 20 հազար ամերիկացի եկեղեցականներ պատրաստակամություն են հայտնում Միացյալ Նահանգների Սենատին ներկայացնել հայկական հողային իրավունքների հատուցման վերաբերյալ հավաքական դիմումագիր[166]:

1947 թ. ԱՄՆ-ի հայրենակցական և վերաշինական միություններից ստեղծված ամերիկահայ Միջհայրենակցական միությունը, որը իր գործունեությունը դադարեցրեց 1953 թ., բայց կրկին

[165] Անդրէասեան Ա., Հայկական դատին նոր հանգրուանը, էջ 24:
[166] Տե՛ս նույն տեղում, էջ 17:

վերսկսեց 1960 թ., իր առջև նպատակ էր դրել «Օգնել Ամերիկահայ ազգային խորհրդին, օժանդակել դեպի Խորհրդային Հայաստան ներգաղթին և ընդհանրապես օգնել ընդհանուր հայրենաշեն գործին»[167]:

1947 թ. գարնանը ստեղծվում է «Հայաստանի օգտին ամերիկյան եկեղեցական հանձնախումբ»-ը, որի առաջնորդներն էին Հենրի Ջորջը (ատենապետ), Հարբր Սիպլին, Հենրի Սմիթ Լիբբրը և ուրիշներ Այն ԱՄՆ-ում կրոնական առումով ամենաներկայացուցչական մարմինն էր, որի անդամների թիվը հասնում էր 333 եկեղեցական առաջնորդի[168]:

Հանձնախումբը ամերիկյան պետքարտուղարի հետ հանդիպման ժամանակ ներկայացնում է մի դիմումագիր և անդրադառնում երկու հարցերի՝ 1920 թ. նոյեմբերի 22-ի Վուդրո Վիլսոնի իրավարար վճռին և «Համառոտ գրություն Հայկական հարցի մասին» դրույթին: Հանձնախմբի քարտուղար Զ. Ազնակյանը նշում է, որ դեռևս ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը հանդես է եկել արդարության պաշտպանությամբ, իսկ Հայկական հարցի հետ կապված համառոտագրությունում ներկայացվում էր հայ ժողովրդի անցյալը, ներկադրությունը, նշվում, որ հայությունն, ապրելով իր հայրենիքի սահմաններից դուրս, տարիներ շարունակ դիմել է աշխարհի կառավարություններին՝ իր նկատմամբ կատարված անարդարությունները վերացնելու համար: ՄԱԿ-ի ստեղծումը, Զ. Ազնակյանի կարծիքով, կրկին հույս է արթնացրել հայության մեջ, քանզի ձևավորվել էր արդարության սկզբունքներին նվիրված համաշխարհային մի ատյան, որտեղ հայությունը կարող էր պաշտպանել իր դատը: Հայկական հարցի լուծումը դարձել է նաև

167 Խուրշուդյան Լ., Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Եր., 1964, էջ 26:
168 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 426, ց. 1, գ. 41, թ. 10:

քրիստոնեական եկեղեցու մասնավոր և գերակա մտահոգության խնդիրը[169]:

1959 թ. հուլիսի 17-ին ԱՄՆ Կոնգրեսը հաստատում է մի օրինագիծ, ըստ որի յուրաքանչյուր տարվա հուլիս ամսվա երրորդ շաբաթը նվիրվում էր «Գերյալ ազգերի» դատին: Այս որոշումը, սակայն, տարածվում էր Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների և մերձբալթյան երեք սոցիալիստական հանրապետությունների վրա: Ամերիկահայ համայնքի ջանքերը Հայաստանը ևս ներառելու այս ցանկում, ոչ մի արդյունք չեն տալիս:

Դեռևս 1959 թ. իր 17-րդ ընդհանուր ժողովում Հ. Յ. Դաշնակցությունը, ուսումնասիրելով ազգային, քաղաքական ու տնտեսական այն պայմանները, որոնց մեջ ապրում է աշխարհասփյուռ հայությունը, և իր հիմնական նպատակ հռչակելով Հայ դատի հետապնդումը, անհրաժեշտ է համարում իրականացնել «Հ. Յ. Դաշնակցության հիմնադրամ»-ի հանգանակությունը, որը պետք է հզոր կռվան դառնար ներկայի և ապագայի այն բոլոր աշխատանքների համար, որոնք պետք է տանեին դեպի հայ ժողովրդի հողային և քաղաքական իրավունքների ու պահանջների իրականացում:

Հայ դատի և ազգային գոյատևման հարցերը հնարավոր կլիներ հետապնդել միայն այն դեպքում, երբ ստեղծվեին տնտեսական և նյութական լծակներ: Ուստի «Հ. Յ. Դ. Հիմնադրամ»-ի հանգանակությունը կոչված էր նպաստելու հայության նպատակների և պահանջների իրականացմանը: Հիմնադրամը, փաստորեն տնտեսական և նյութական ուժ էր ամբարելու, որը թույլ կտար լուծելու հայության հողային, ազգային և քաղաքական խնդիրները:

---

169 Տե՛ս նույն տեղում, թ. 11-12:

ՀՅԴ Ամերիկայի Կենտրոնական կոմիտեն հանգանակության առթիվ իր կոչ-հայտարարության մեջ նշում էր, որ միջազգային ներկա պայմաններում ազգային և քաղաքական դատերի հետապնդումը չի կարող արդյունք տալ, եթե տնտեսական ամուր կռվաններ և նյութական միջոցներ չլինեն:Ամերիկայում արդեն անհատական նվիրատվություններով գոյացել է 200 հազար դոլար[170]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք դեռևս մինչև Մեծ եղեռնի 50-ամյակը, որից հետո սկսվում է զարթոնք ոչ միայն ԱՄՆ-ի, այլ նաև Հայկական սփյուռքի տարբեր համայնքներում՝ ցեղասպանության ճանաչման և դատապարտման համար, Միացյալ Նահանգներում ձևավորվել էին առաջին լոբբիստական կազմակերպությունները, որոնք փորձում էին ԱՄՆ-ի օրենսդիր և գործադիր շրջանակներին ներկայացնել հայկական պահանջները՝ փորձելով հասնել դրանց իրականացմանը:

170 Տե՛ս Հ.Յ.Դ. Ամերիկայի Կեդրոնական կոմիտեի կոչ-յայտարարութիւնը Հիմնադրամի հանգանակութեան առթիւ՝ ամերիկահայութեան, էջ 1-5:

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՄԱՐ (1965-1991 ԹԹ.)

## 2.1 Հայկական լոբբիի պայքարը ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման համար

Մեծ եղեռնի 50-ամյակը, թե՛ Հայրենիքում, և թե՛ հատկապես Սփյուռքում նշանավորվում է Հայկական հարցի արծարծման և Հայոց ցեղասպանության ճանաչման համար մղվող պայքարի ուժեղացմամբ:

Հայոց ցեղասպանությունը ոչ միայն պատմականորեն անժխտելի և բացարձակ իրողություն է, այլ նաև իրավական առումով անժամանցելի է: Թուրքիայի կողմից ցեղասպանության փաստի ժխտումը մի կողմից խոցում է հայ ժողովրդի զգացումները և ազգային արժանապատվությունը, մյուս կողմից՝ ավելի

խթանում իր պատմական իրավունքների ու ազգային ինքնության համար նրա մղած պայքարը[171]:

Նման պայմաններում թուրքական ցեղասպանությունից վերապրողների և նրանց հաջորդ սերունդների խնդիրը դառնում է հստակ. աշխարհին ճանաչել տալ հայության դատը, դիմել միջազգային ատյաններին ու տերություններին և պահանջել ցեղասպանության ճանաչում ու դատապարտում:

Հայ դատի խորագիտակներից Հրանտ Սիմոնյանը այսպես է բնութագրել հայության համար ստեղծված նոր իրավիճակը. «1965 թվականին՝ Մեծ Եղեռնի 50-ամյակին, ուժգին թափով մը, հայ ժողովուրդի բոլոր հատուածները մէկ մարդու պէս ձայն բարձրացուցին եւ իրենց մեռելները, նահատակները արժանավայել շուքով յարգեցին ու մեր իրաւունքները պահանջեցին»[172]:

Սփյուռքի բոլոր համայնքներում նշվում է Մեծ եղեռնի հիսունամյակը: Սփյուռքահայ գրեթե բոլոր, ինչպես նաև օտար բազմաթիվ թերթեր անդրադառնում են 1915-1923 թթ. տեղի ունեցած հայ ժողովրդի կոտորածներին: Սփյուռքում գործող հայկական կազմակերպությունների, հայ անհատների կողմից լույս են ընծայվում Մեծ եղեռնին նվիրված հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, արաբերեն գրքեր և գրքույկներ, թռուցիկներ ու հայտարարություններ:

Մեծ եղեռնի հիսունամյա տարելիցին սփյուռքյան մամուլը կրկին արծարծում է հայության պահանջների և Հայ դատի հարցերը: Ինչ վերաբերում է կուսակցություններին, կազմակերպություններին, ապա նրանք, առանց

---

171 Տե՛ս Տատրեան Վ., Ակնարկներ Հայոց ցեղասպանութեան մասին, Պուէնոս Այրէս, 2004, էջ 48:
172 Սիմոնեան Հ., նշվ. աշխ., էջ 52:

բացառության, համոզված էին, որ հայությունը ունի իր լուծումը չստացած արդար դատն այն պետք է հետապնդել:

1965 թ. սփյուռքահայ համայնքներում և Հայրենիքում Հայոց ցեղասպանության հիսունամյակի լայնամասշտաբ նշումը նպաստում է հետագա տարիներին XX դարի առաջին ցեղասպանության դատապարտման ու ճանաչման համար աշխարհի առաջավոր ուժերի համախմբմանը[173]:

Թե՛ ամերիկահայության և թե՛ բովանդակ սփյուռքահայության խնդիրն է դառնում ձևավորել միջազգային հանրության նպաստավոր կարծիքը՝ հօգուտ Հայ դատի: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր ծավալել մեծ ու ազդու քարոզչություն՝ օտար լեզուներով գրված գրքերով, գրքույկներով, հոդվածներով, թերթերով և այլ միջոցներով, որպեսզի միջազգային առաջադեմ հանրությունը կարողանար ազդեցություն ունենալ պետական շրջանակների վրա և դյուրացնել Հայկական հարցի լուծումը: Միաժամանակ անհրաժեշտ էր ունենալ Հայ դատի տարբեր ազգության պաշտպաններ, որոնք իրենց խոսքով և գործով կկարողանային նպաստել հայության խնդիրների լուծմանը: Նաև անհրաժեշտ էր առանձին դիմումներով, հուշագրերով հայության հողային դատը դարձնել Միացյալ Ազգերի Կազմակերպության հետաքրքրության և քննարկման նյութ:

Հարկ էր գտնել նաև այն արտաքին ազդակներն ու օտար շահերը, որոնք կհամընկնեին հայ ժողովրդի շահերի հետ, և կապահովեին նրանց աջակցությունը

---

173 Տե՛ս Բարսեղյան Լ., Տարեգրություն Հայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման, Եր., 2004, էջ 10:

Հայկական դատը հետապնդելու պայքարի ընթացքում[174]:

Սփյուռքահայությունն այդ պատմական առաքելությունն իրականացնում է մեծ նվիրումով, համազգային ուժերի ներդրումով և համակարգված աշխատանքով:

Սփյուռքի առջև կանգնած այդ նոր և ընդգրկուն խնդիրների լուծման գործում հատկապես մեծ դեր էր վերապահված ամենահոծ հայ բնակչություն ունեցող ԱՄՆ-ի համայնքին և այնտեղ գործող լոբբիստական կազմակերպություններին:

Հայկական հարցի լուծման և համաշխարհային հանրության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման համար ամերիկահայության պայքարը առավել գործուն է դառնում 1960-ական թթ.կեսից՝ Մեծ եղեռնի 50-ամյակի նախօրեին:

1960-1980-ական թթ.նկատելի որեն ուժեղանում է նաև համաշխարհային հասարակական մտքի հետաքրքրությունը Հայկական հարցի նկատմամբ՝ դառնալով քննարկման նյութ միջազգային տարբեր կազմակերպություններում, գիտական և հասարակական համաժողովներում, կոնֆերանսներում և գիտաժողովներում[175]:

Ամերիկահայության խնդիրն է դառնում մեծ պետություններին և միջազգային ատյաններին հասկացնել,որ հայության դատը արդար է,հիմնավոր և ճանաչված է միջազգային պայմանագրերով[176]:

Ամերիկահայ լոբբին իրենից ներկայացնում է տարբեր խմբերի կամ անհատների միություն, որը նպատակ ունի ազդելու ամերիկյան արտաքին քաղաքականության վրա՝ ի նպաստ հայության և նրա շահերի: Ամերիկյան նշանավոր քաղաքագետ Զբիգնև

---

174 Տե՛ս Անդրէասեան Ա.,Հայկական դատի նոր հանգրուանը,էջ 13:

175 Տե'ս Կիրակոսյան Ա., Ակնարկներ Հայկական հարցի և Եղեռնի միջազգային ճանաչման պատմության,էջ 18-19:

176 Տե՛ս Յուշամատեան Մեծ Եղեռնի 1915-1965,էջ 1107:

Բժեզինսկին իր «Արտաքին քաղաքականություն» հոդվածում հայկական լոբբին համարում է ազդեցիկությամբ երրորդը ԱՄՆ էթնիկ լոբբիների մեջ՝ իրեականից և հունականից հետո[177]:

Միացյալ Նահանգներում հայ համայնքը համախմբված է երկու հիմնական և գլխավոր լոբբիստական կազմակերպությունների շուրջ՝ Հայ դատի ամերիկյան հանձնախումբ և Ամերիկայի Հայկական համագումար (ԱՀՀ): Երկու կազմակերպություններն էլ ակտիվ և ուժեղ են այնպիսի նահանգներում, ինչպիսիք են Կալիֆորնիան, Միչիգանը և Մասսաչուսեթսը: Ջոն Հոփկինսի անվան Կենտրոնական Ասիա-Կովկաս ինստիտուտի հետազոտությունների տնօրեն Սվանտե Կոռնելը նշում է,որ հայկական լոբբին ԱՄՆ-ում ուժեղ է շնորհիվ իր կազմակերպվածության ու վճռականության և այն միաժամանակ շատ ազդեցիկ է տեղական ընտրությունների ժամանակ[178]:

Հայ դատի հանձնախումբը կամ Ամերիկայի հայ ազգային կոմիտեն Հ. Յ. Դաշնակցության կողմից ստեղծված ամերիկահայ ամենից խոշոր և ազդեցիկ լոբբիստական կառույցն է,որը,ինչպես վերը նշվել է, հանդիսանում է Վահան Քարտաշյանի ստեղծած Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեի իրավահաջորդը: Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը ունի Արևելյան (գրասենյակը՝ Ուոթերթաուն (Մասսաչուսեթս), 31 տեղական գրասենյակ) և Արևմտյան (գրասենյակը՝ Գլենդել (Կալիֆորնիա), 12 տեղական գրասենյակ)խորհուրդներ: Հանձնախումբը, միաժամանակ, ունի գրասենյակներ Վաշինգտոն, Բոստոն, Լոս Անջելես, Սան Ֆրանցիսկո, Ֆրեզնո և ամերիկյան այլ հայաշատ քաղաքներում[179],

---

[177] Տե՛ս Armenian Lobby in the United States, http://www.wikiwand.com/en/Armenian_lobby_in_the_United_States

[178] Տե՛ս The Armenian Job: The Role of the Armenian Lobby in the Pattern of Enmity in South Caucasus, p. 14.

[179] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 30:

իսկ 1983թ. Վաշինգտոնում բացվում է Ամերիկայի Հայ դատի գրասենյակը, որի գործադիր տնօրենը Արամ Համբարյանն է:

1971 թ. Ջորջ Վաշինգտոն համալսարանի երկու աշխատակիցներ՝ Ջոն Հանեսյանը և Հայկազ Գրիգորյանը, հաճախ հանդիպում և քննարկում էին ամերիկահայ համայնքին վերաբերող հարցեր: Հերթական հանդիպումներից մեկի ժամանակ էլ առաջանում է մի նոր հայկական կազմակերպություն ստեղծելու գաղափարը, որտեղ հնարավոր կլիներ համախմբել տարբեր կազմակերպությունների առաջնորդների՝ ի շահ ամերիկահայ համայնքի: Այս գաղափարը նրանք կիսում են Բոստոնի երկու նշանավոր հայրենակիցների՝ Ռոբերտ Գալուստյանի և Հայկ Տեր-Մանուելյանի հետ, որոնց հետ ունեցած հանդիպումների ընթացքում էլ որոշվում է ստեղծել արդեն իսկ գոյություն ունեցող կազմակերպությունները համախմբող համագումար[180]:

Մեկ տարի անց՝ 1972 թվականին, ստեղծվում է Ամերիկայի Հայկական համագումարը, որին միանում և հիմնադիր անդամներ են դառնում Ստեփան Մուգարն ու Հրայր Հովնանյանը, ճարտարագետ Լինել Գալստյանը, իրավաբաններ Ռոբերտ-Արամ Գալստյանը ու Հայկ Տեր-Մանուելյանը, գիտնականներ Ջոն Հանեսյան Կրտսերը, Հայկազ Գրիգորյանը և Ռիչարդ Հովհաննիսյանը[181]:

ԱՀՀ-ի նպատակն էր միավորել ԱՄՆ-ում գործող բոլոր հայկական կազմակերպությունները, համախմբել ամերիկահայությանը, պաշտպանել նրա շահերն ու իրավունքները, նպաստել ԱՄՆ-ի հայության ազգային ինքնագիտակցության զարգացմանը, հայկական հուշարձանների ու

[180] Տե՛ս Armenian Assembly of America, Aims and Purposes, Annual Report, 1995, p. 31.
[181] Տե՛ս Սիմոնեան Հ., նշվ. աշխ., էջ 165:

մշակութային արժեքների պահպանմանը, օժանդակել և խրախուսել հայ ժողովրդի պատմության, կրթական, կրոնական ու մշակութային կյանքի վերաբերյալ հավաստի տեղեկությունների տարածմանը, ապահովել ամերիկահայերի մասնակցությունը երկրի ժողովրդավարական գործընթացներին: ԱՀՀ-ն ղեկավարում է տնօրենների խորհուրդը, իսկ դրամական միջոցները գոյանում են ամերիկահայ համայնքի նվիրատվությունների հաշվին: ԱՀՀ-ի ուշադրության կենտրոնում է Միացյալ Նահանգների վարած քաղաքականությունը և մասնավորապես, դրա հնարավոր հետևանքները հայության համար: Այդ է պատճառը, որ Համագումարի կառավարական և իրավագիտական կառույցը ամերիկահայության շահերին առնչվող հարցերի շուրջ աշխատում է Կոնգրեսի և ամերիկյան վարչակազմի անդամների հետ: Ամերիկայի Հայկական համագումարը լույս է ընծայում «Համագումարի միջոցառումներ» ամենամսյա լրագիրը և եռամսյա «Համագումարի հանդեսը»[182]:

Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը կարևոր տեղ է զբաղեցնում ամերիկահայ վերոնշյալ լոբբիստական կազմակերպությունների գործունեության մեջ: ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը հասնելու համար կարևորվում է ազդեցությունը կոնգրեսականների վրա՝ թե՛ Սենատում, և թե՛ Ներկայացուցիչների պալատում: Օրինակ, Հայ դատի հանձնախումբը վայելում է սենատորներ Ռոբերտ Մենենդեզի և Մարկ Քիրքի աջակցությունը, որոնք փորձում են հասնել ամերիկյան կառավարության կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի ընդունմանը:

[182] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 10-11:

Ինչպես նշում է Դեյվիդ Վալդսթրեյչերը իր «Ամերիկահայերը» աշխատության մեջ. «Ամերիկահայության համար Ցեղասպանությունը ավելին է, քան պատմական ողբերգություն: Այն նրանց կյանքի ամենացավոտ իրադարձությունն է և պատճառը, թե ինչու նրանք եկան Նոր աշխարհ: Նրանց խնդրել, որ մոռանան այդ իրադարձությունները, կնշանակի նրանց խնդրել մոռանալ իրենց ով լինելը»[183]:

Ե՛վ Հայ դատի ամերիկյան հանձնախումբը, և՛ Ամերիկայի Հայկական համագումարը հետևողականորեն պայքարում են, որպեսզի Միացյալ Նահանգները օրենսդրորեն ճանաչի 1915-1922 թթ. իրականացված Հայոց ցեղասպանությունը և ապրիլի 24-ը սահմանեն որպես զոհերի հիշատակի օր[184]:

Ինչպես աշխարհի այլ երկրներում, ԱՄՆ-ում ևս Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի հիմնական՝ երկրորդ փուլը սկսվել է 1965 թվականին:

Միացյալ Նահանգներում Մեծ եղեռնի 50-ամյակի միջոցառումների մասին խոսելիս, պետք է արձանագրենք, որ կազմակերպվում են բազմաթիվ ցույցեր մի կողմից Նյու Յորքում, իսկ մյուս կողմից՝ ՄԱԿ-ի գլխավոր շենքի մուտքի առջև:

Դեռևս 1964 թ. հոկտեմբերի 25-ին ԱՄՆ-ի նախագահի հանրապետական թեկնածու Բարի Գոլդուոթերը գրություն է ուղարկում ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախմբին, որտեղ մասնավորապես նշում էր. «ԱՄՆ-ի նախագահի պաշտոնը ստանձնելու պարագային, կցանկանայի, որ Հայաստանի անկախութեան եւ ինքնորոշման հարցը արծարծուի Միավորուած ազգերի կազմակերպութիւնում: Հայ ժողովրդի վիճակը մեծապես մտահոգում է ինձ ...»[185]:

---

183 Waldstreicher D., նշվ. աշխ., էջ 105:
184 Տե՛ս Gregg H. S., նշվ. աշխ., էջ 13:
185 Ահարոնեան Գ., Խոհեր յիսնամեակի աւարտին, էջ 121:

1965 թ. ապրիլի 26-29-ը թե՛ Սենատում, և թե՛ Ներկայացուցիչների պալատում ի նպաստ հայության և Հայ դատի հանդես են գալիս բազմաթիվ գործիչներ, որոնք կարճ մեկնաբանություններով անդրադառնում են հայության կոտորածին և դատապարտում այն:

Ներկայացուցիչների պալատի՝ ապրիլի 24-ին նվիրված նստաշրջանը բացվում է Հրանտ արքեպիսկոպոս Խաչատրյանի քարոզով. հիշարժան տեսարան՝ ամերիկյան Կոնգրեսի առջև աղոթող հայ հոգևորական[186]:

Սենատում ելույթով հանդես է գալիս Մասսաչուսեթս նահանգից ընտրված սենատոր Էդվարդ Քենեդին, ով անդրադառնալով հայերի ջարդերին, նշում է. «Այս երկրի և ամբողջ աշխարհի հայ ժողովրդին ուղղելով խոսքս՝ ուզում եմ վերահաստատել համակրելի նվիրումս իրենց պայքարի նկատմամբ, որ նրանք մղում են հանուն արդարութեան եւ շնչող ամեն էակի ազատութեան»[187]: Շարունակելով ելույթը՝ նա ասում է. «1965 թ. ապրիլի 24-ը հայ ժողովրդի կոտորածի 50-ամյակն է. կոտորածներ, որի արդյունքում սպանվեց մեկուկես միլիոն հայ: Հայկական հարցը, սակայն, շատ արդիական ու կենդանի է նաև այսօր: Միացյալ Նահանգներում, որտեղ հարգվում են արդարությունը, մարդու իրավունքները, անշուշտ ռասսայի կամ ազգի ոչնչացումը առաջացնում է մեր սարսափը: Մենք պարտավոր ենք համախմբել մեր ջանքերը լավագույն ձևով, որպեսզի ապագայում խուսափենք նմանատիպ ամոթալի գործողությունների կրկնությունից: Ես վերահաստատում եմ ազատության և արդարության

---

186 Տե՛ս Տերտերյան Հ., Հայրենիք-Սփյուռք հարաբերություններ. քաղաքական ասպարեզ, //«Հայաստանը և Սփյուռքը XXI դարի շեմին», գիտաժողովի նյութեր, Եր., 1998, էջ 147:

187 Ահարոնեան Գ., Խոհեր յիսնամեակի աւարտին, էջ 114:

համար ողջ աշխարհի հայության մղած պայքարի նկատմամբ իմ համակրանքը»[188]:

1965թ. ապրիլի 29-ին ապագա նախագահ Ջերալդ Ֆորդը, ով այդ ժամանակ Ներկայացուցիչների պալատի անդամ էր, իր ելույթում ասում է. «Խառը զգացմունքներով մենք նշում ենք Օսմանյան Թուրքիայում հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանության 50-ամյակը: Յատուկ ուշադրություն դարձնելով 1915 թ. ցնցող դեպքերին՝ մենք այս տարելիցը նկատում ենք ցավալի՝ վկայակոչելով հայերի կոտորածները, միժամանակ հպարտությամբ ողջունելով այն քաջ հայրենասերներին, ովքեր Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին փրկվեցին այս գործողություններից՝ պայքարելով իրենց անկախության համար: Խիզախ հայերը, ովքեր փրկվեցին սպանություններից ու կոտորածից, աշխարհի համար դարձան օրինակ՝ ազատության հանդեպ իրենց ունեցած նվիրումով և իրենց անձնական մեծ զոհաբերություններով: Ես միանում եմ իմ գործընկերներին և արտահայտում խոր համակրանք այն ամերիկահայերին, որոնց նախահայրերը մեր դաշնակիցների հետ միասին պայքարում էին ազատության համար և ովքեր այնքան շատ բան են արել Ամերիկան ավելի լավ և ուժեղ երկիր դարձնելու համար»[189]:

Իլինոյս նահանգից ընտրված ներկայացուցիչ Ֆրենկ Անունզիոն իր ելույթում նշում է, որ կես դար առաջ՝ 1915 թ. ապրիլի 24-ին, թուրքական կայսրության կառավարությունը՝ Գերմանիայի և Ավստրո-Յունգարիայի զինակիցը, սիստեմատիկ ջարդի իր ծրագրի գործադրությամբ խլեց մեկուկես միլիոն հայերի կյանքը, և տարագիր դարձրեց ավելի

188 The Truth about the Massacres and Deportations of the Armenian Population of the Ottoman Empire (1915-1922), p. 25.
189 Նույն տեղում, էջ 24:

քան մեկ միլիոն հայերի՝ աքսորական ու հալածյալ այրեր, կանայք և մանուկներ, որոնք դարձան ժամանակակից առաջին ցեղասպանության զոհերը[190]:

Ներկայացուցիչների պալատի 1965 թ. ապրիլի 29-ի նիստը հիմնականում նվիրված էր Հայոց ցեղասպանության հիսունամյակին, ինչը արդյունք էր Հայ դատի հանձնախմբի ծավալած քարոզչության և աշխատանքի:

1965 թ.՝ Հայոց ցեղասպանության 50-ամյա տարելիցին, Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը հանդես է գալիս հետևյալ հայտարարությամբ: Ստորև մեջբերենք մի հատված հայտարարության տեքստից. «Հայ դատը մշտապես արթուն պահելու եւ մեծ տերութիւնների օժանդակութիւնը ստանալու համար, անհրաժեշտ է, որ հայութիւնը մշտապես ծավալի և իրականացնի հարատեւ աշխատանք: Հայ դատը ընդգրկում է հայ ժողովրդի ընդհանրական պահանջը, դարավոր ձգտումը եւ հավերժական տեսիլքը:

Ամերիկահայ համայնքը իր կազմավորման առաջին իսկ օրերից մեծ կորովով աշխատել է, որ իրականութիւն դառնա հայոց ազգային ազատութիւնը եւ Հայաստանը փրկվի թուրքական տիրապետութիւնից: Այն կրել է նիւթական հսկայական պարտավորութիւններ, ամերիկեան պետական ու քաղաքական գործիչների շրջանում իրականացրել քարոզչական աշխատանք: Եվ ահա հետապնդելու համար հայոց պատմական իրավունքները եւ հողային դատը, մենք ստեղծեցինք Հայկական դատի ամերիկեան յանձնախումբը: Անհրաժեշտ է, որ յանձնախումբը ստանա ամերիկահայ մեր բոլոր հայրենակիցների

[190] Տե՛ս Ահարոնեան Գ., Խոհեր յիսնամեակի աւարտին, էջ 115:

աջակցությունն ու օժանդակությունը» (18 դեկտեմբեր, 1965 թ.)[191]:

Հիսունամյա տարելիցի միջոցառումների համար ստեղծված Եղեռնի հիսունամյակի կենտրոնական հանձնախումբը Մեծի Տանն Կիլիկիոյ Ամերիկայի և Կանադայի թեմի առաջնորդ Հրանտ արքեպիսկոպոս Խաչատրյանի գլխավորությամբ հանդիպում է ամերիկյան սենատորների հետ: Հոգևոր առաջնորդը ներկայացնում է հայության պահանջներն ու զգացումները և դատապարտում 1915-1918 թթ. թուրքերի կողմից իրականացված և մեկուկես միլիոն հայերի կյանք խլած ցեղասպանությունը: Սենատորներ Սալթնսթոլը և Ջևիդսը իրենց ելույթներում ևս անդրադառնում եմ Հայոց ցեղասպանությանը, նշում, որ հայությունը դարավոր մշակույթի տեր, ստեղծագործ ժողովուրդ է, միաժամանակ օրինավոր քաղաքացիներ բոլոր երկրներում: Նրանք առաջարկում են, որպեսզի ամերիկյան Կոնգրեսը վավերացնի ցեղասպանությունը դատապարտող բանաձև[192]:

Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի ջանքերով Հայոց ցեղասպանության 50-ամյա տարելիցին Կալիֆորնիա նահանգի Օրենսդիր ժողովն ընդունում է Ասամբլեայի թիվ 274 բանաձևը, որտեղ ասվում էր. «Հիսուն տարի առաջ՝ 1915 թ. ապրիլի 24-ին, թուրքական կայսրության կառավարությունը, որպես Կենտրոնական դաշինքի անդամ, իրականացրեց հայ ազգի կոտորածի սիստեմատիկ ծրագիր: 1915-1918 թթ. կես միլիոն հայեր քշվեցին Սիրիայի անապատները՝ ենթարկվելով աննկարագրելի սարսափների: Մարդկության պատմության մեջ, թերևս չկա ավելի սարսափելի իրադարձություն, քան հայ ժողովրդի կոտորածը Օսմանյան Թուրքիայում: Նրանք, ովքեր

[191] Նույն տեղում, էջ 323-327:
[192] Տե՛ս «Հայրենիք» օրաթերթ, 1 մայիսի, 1965:

կարողացան փրկվել այդ սարսափներից սփռվեցին տարբեր երկրներում, այդ թվում նաև Միացյալ Նահանգներում: Այսօր ԱՄՆ հայության թիվը կազմում է 400 հազար, որից 140 հազարը Կալիֆորնիա նահանգի բնակիչներ են, որոնք իրենց ներդրումն ունեն տնտեսության, գիտության, կրթության, գրականության, արվեստի և կառավարման ոլորտներում: Որպես Հայոց զոհերի հիշատակի օր հայության կողմից սահմանվել է ապրիլի 24-ը, և հիմա Կալիֆորնիա նահանգը իր հարգանքի տուրքն է ուզում մատուցել այն անմեղ ու քաջ մարդկանց, ովքեր հինգ տասնամյակ առաջ կորցրեցին իրենց կյանքը թուրքական իշխանությունների կողմից կազմակերպված ցեղասպանության հետևանքով»[193]:

Ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների ջանքերով 1966-1973 թթ. ամերիկյան Կոնգրեսում կազմակերպվում են քննարկումներ՝ նվիրված Հայկական հարցին և Հայոց ցեղասպանությանը:

Ամերիկահայ լոբբիի ծավալած գործունեության արդյունք էր 1975 թ. ապրիլի 8-ին ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի համատեղ թիվ 148 բանաձևը, որը պահանջում էր 1975 թ. ապրիլի 24-ը հռչակել «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր»: Բանաձևը Ներկայացուցիչների պալատ ներկայացրել էր կոնգրեսական Հենրի Հելստոսկին: Բանաձևի օգտին նրա ելույթն ուներ հետևյալ բովանդակությունը.

«Սիրելի գործընկերներ.

Հունվարի 28-ին մենք ներկայացրել ենք 148 բանաձևը՝ սահմանելու 1975 թ. ապրիլի 24-ը որպես «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային

193 Armenian Martyrs Day-April 24, 1965, in Commemoration of the Massacres of the Armenian people 50 Years Ago-1915-1918, New York, 1965, p. 7.

վերաբերմունքի հիշատակման ազգային օր»՝ ի հիշատակ 1915 թ. Օսմանյան Թուրքիայում իրականացված ցեղասպանության զոհերի, հատկապես նրանց, ովքեր ունեն հայկական ծագում: Այս դարի առաջին կոտորածը սկսվեց 1915 թ. ապրիլի 24-ի երեկոյան, երբ ավելի քան 300 հայ գրողներ, մտավորականներ, ուսուցիչներ և պաշտոնյաներ առանց պատճառի ձերբակալվեցին Կ. Պոլսում և սպանվեցին: Արդեն 1918 թ. ամենուր մոտ 1.5-2 միլիոն հայ տղամարդիկ, կանայք և երեխաներ ոչնչացվել էին թուրքերի կողմից:

Այս բանաձևը հատկապես կարևոր է այն լույսի ներքո, թե ինչ տեղի ունեցավ 1974 թ. մարտի 6-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի նիստի ընթացքում: Թուրքիայի ներկայացուցչի միջնորդությամբ 30-րդ պարագրաֆը, որը վերաբերում էր 1915 թ. հայկական ցեղասպանությանը հանվեց զեկույցից:

Մենք չպետք է թույլ տանք, որ 1915 թ. դաժանությունները մոռացության մատնվեն, քանզի ՄԱԿ-ում հայ ներկայացուցիչ չկա, որ պաշտպանի հայ ժողովրդի շահերը: Հայ ժողովրդի ոչնչացման վերաբերյալ կան հստակ պատմական փաստեր, որոնք չպետք է անտեսվեն: Մենք հրավիրում ենք Ձեզ միանալու մեզ, երբ կրկին ներկայացնելու լինենք այս բանաձևը Նախագահին, որով հայ ժողովրդի կոտորածը կհռչակվի որպես XX դարի առաջին ցեղասպանություն»[194]:

Բանաձևը 377 կողմ և 19 դեմ ձայներով ընդունվելուց հետո ուղարկվում է Սենատի Իրավաբանական հանձնաժողով, որտեղ սակայն, հավանություն չստանալով, քննարկման չի դրվում Սենատում:

---

[194] The Truth about the Massacres and Deportations of the Armenian Population of the Ottoman Empire (1915-1922), 34-35, նաև՝ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 10, փաստաթուղթ 1:

Ներկայացուցիչների պալատի կողմից թիվ 148 բանաձևի ընդունումը պայմանավորված էր նաև 1974 թ. հուլիսին թուրքական զորքերի՝ Կիպրոս ներխուժմամբ, որի հետ կապված ամերիկյան Կոնգրեսն արգելել էր զենքի և զինամթերքի տրամադրումը Թուրքիային:

1975 թ.՝ Հայոց ցեղասպանության 60-ամյակին, ապրիլի 24-ը «Հայոց զոհերի հիշատակի օր» սահմանելու որոշումներ են ընդունում նաև Նյու Յորք նահանգն ու քաղաքը և Նյու Ջերսի նահանգի Գլխավոր Ասամբլեան: Ստորև մեջբերենք Նյու Յորքի նահանգապետի ելույթի տեքստից մի հատված. «60 տարի առաջ միլիոնավոր հայեր ենթարկվեցին ահաբեկչության իրենց հնագույն հայրենիքում: Աշխարհը ցնցված էր հայկական ռասսան վերացնելու այդ փորձից: Աշխարհի բոլոր երկրներում հայությունը ապրիլի 24-ը նշում է, որպես Նահատակների օր: Դա այն օրն է, երբ օսմանյան թուրքերը ձերբակալեցին և սպանեցին հայ մտավորականությանը, որին հաջորդեցին սարսափելի իրադարձությունները: Նյու Յորք նահանգի բնակչությունը այսօր միանում է ողջ հայությանը և նրանց հետ միասին ոգեկոչում հայոց զոհերի հիշատակը:

Որպես Նյու Յորքի նահանգապետ՝ հռչակում եմ 1975 թ. ապրիլի 24-ը որպես «Հայոց զոհերի հիշատակի օր»[195]:

1976 թ. մայիսի 11-ին Ամերիկայի Հայկական համագումարի պատվիրակությունը, որի կազմի մեջ մտնում էին Վահագն Դադրյանը, Դենիս Փափազյանը, Լևոն Սարգսյանը, Տիգրան Սմսարյանը, Ռիչարդ Հովհաննիսյանը, Ավետիս Սանջյանը և Ճավարշ Թորիկյանը, հանդիպում են ամերիկյան Կոնգրեսի ենթահանձնախմբի հետ, ներկայացնում Հայոց

---

[195] Wertsman Vl., նշվ. աշխ., էջ 79-82:

ցեղասպանության խնդիրը և նրա առնչությունները ԱՄՆ արտաքին քաղաքականության հետ: Թեև ենթահանձնախմբի նախագահ Ուոլ Ֆըլ և անդամների մի մասը որդեգրում են հայանպաստ դիրքորոշում, անդամների հակահայ հատվածի ջանքերով շուտով հաջորդ հանդիպումներն ու Հայկական հարցի շուրջ լսումները ճախողվում են[196]:

1976 թ. ԱՄՆ-ում ընթացող նախագահական ընտրարշավի շրջանում Ամերիկայի Հայկական համագումարի և Հայ դատի ամերիկյան հանձնախմբի ներկայացուցիչները փորձում էին միաժամանակ կապ պահպանել գործող նախագահ Ջերալդ Ֆորդի և նախագահի դեմոկրատական թեկնածու Ջիմի Քարտերի հետ՝ հայանպաստ արտահայտություններ կամ առանձին հանդիպումներ խնդրելով: Եթե Ջերալդ Ֆորդը չի ընդառաջում հայության դիմումներից և ոչ մեկին, մինչդեռ Ջիմի Քարթերը ոչ միայն ընդունում է հայ լոբբիստներին, այլև նրանց տալիս որոշակի հայանպաստ խոստումներ:

Այսպես, նախագահական ընտրապայքարի շրջանակներում Ջիմի Քարթերը հոկտեմբերի 23-ին Նյու Ջերսիի օդանավակայանում հանդիպում է ունենում Ամերիկայի Հայկական համագումարի և Հայ դատի ամերիկյան հանձնախմբի ներկայացուցիչների հետ, ընդ որում Հայ դատի հանձնախումբը ներկայացնում էր Հարրի Տերտերյանը, իսկ Համագումարը՝ Լևոն Սարգսյանը: Իր ելույթում Հ. Տերտերյանը շնորհակալություն է հայտնում ամերիկահայ համայնքի նկատմամբ Ջ. Քարթերի ցուցաբերած վերաբերմունքի համար, իսկ Լևոն Սարգսյանը ներկայացնում է Հայկական հարցի ամփոփ պատմականը, անդրադառնում Հայոց ցեղասպանության ճանաչմանը և ամերիկյան ներքին ու արտաքին քաղաքական կյանքում հայ համայնքի

---

[196] Տե՛ս «Ազդակ» օրաթերթ, 1 յունուարի, 1977:

դերի և մասնակցության հարցերին: Հանդիպումից երկու օր հետո Ջիմի Քարթերը իր պատգամն է ուղղում հայ համայնքին, որտեղ ասվում էր, որ մոտավորապես մեկուկես միլիոն մարդ սպանվեց XX դարի առաջին ցեղասպանության ընթացքում, և չնայած նման պատմական ողբերգությունը դեռևս չի սրբագրվել, հայերը, որտեղ էլ, որ գտնվեն, շարունակում են պահել իրենց մշակույթն ու ազատության ձգտումը: Այսօր պատմական Հայաստանի մի փոքր մասը ենթակա է Խորհրդային Միությանը` իբրև Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն, մինչդեռ մնացած հատվածը մաս է կազմում Թուրքիայի:

Ջ. Քարթերը նշում էր, որ ինքը համակրում է հայ ժողովրդի ձգտումներին և կողմնակից է Ցեղասպանության Միջազգային Դաշնագիրը բարեփոխելու պահանջին:

Իբրև դեմոկրատական կուսակցության ղեկավար, որը նաև Վուդրո Վիլսոնի կուսակցությունն էր, մարդ, որ այդքան խոր գուրգուրանք ցուցաբերեց հայության հանդեպ այն ժամանակներում, երբ նրանք ենթարկվում էին ծայրագույն անարդարությունների, ինքը պետք է աշխատի, որ հայ ժողովրդի ձայնը լսելի դառնա[197]:

1980 թ. Միացյալ Նահանգներում ընթացող նախագահական նոր ընտրարշավում, նախագահի հանրապետական թեկնածու Ռոնալդ Ռեյգանը ապրիլի 15-ին հատուկ ուղերձով դիմում է ամերիկահայությանը, որտեղ ասվում էր, որ 65 տարի առաջ պատմության տարեգրություններում արձանագրվեց մեծագույն ողբերգություններից մեկը, երբ մեկուկես միլիոն հայեր` տղամարդիկ, կանայք ու երեխաներ կոտորվեցին Արարատի շուքի ներքո: Նրանց միակ հանցանքն իրենց բազմադարյա

[197] Տե´ս նույնը, 14 դեկտեմբերի, 1976:

նվիրումն էր իրենց հայրենիքին և քրիստոնեական կրոնին: 1980 թ. պետք է լինի այն ժամանակաշրջանը, երբ ամերիկացիներն ու իրենց դաշնակիցները կորոշեն, որ 1915 թ. ողբերգությունը չպիտի կրկնվի: Նա ասում էր, որ միանում է ամերիկահայ համայնքին՝ նշելու 1915 թ. նահատակների հիշատակը[198]:

Նախագահ ընտրվելուց հետո՝ արդեն 1981 թ. ապրիլի 22-ին Ռեյգանը հրեական հոլոքոստի հետ կապված 4838 հայտարարության մեջ նշում էր հետևյալը.«Ինչպես մինչ այդ տեղի ունեցած հայերի ցեղասպանությունը, այնպես էլ կամբոջացիների ցեղասպանությունը, որը հաջորդեց դրան, նաև շատ ժողովուրդների նմանատիպ հալածանքները, Յոլոքոստի դասերը չպետք է երբեք մոռացության մատնվեն»[199]:

Այսպիսով նախագահ Ռեյգանը թեև կապված հրեաների ցեղասպանության հետ,այնուհանդերձ իր պաշտոնական հայտարարության մեջ հայերի կոտորածները որակում է որպես ցեղասպանություն:

Յայկական լոբբիստական կազմակերպությունների ծավալած քարոզչության շնորհիվ 1981 թ. ապրիլի 23-ին ամերիկյան Կոլորադո նահանգը ճանաչում է Յայոց ցեղասպանությունը: Նահանգապետ Ռիչարդ Լեմը հանդես է գալիս հետևյալ հայտարարությամբ. «Մեկուկես միլիոն հայերի ոչնչացումը և միլիոնավորների վտարումը հանդիսանում է մի ամբողջ ժողովրդի բնաջնջման կանխամտածված փորձ,որը ցնցել է ողջ աշխարհը:Այդ սարսափելի իրադարձությունների սկիզբն է 1915 թ. ապրիլի 24-ը, երբ երիտթուրքերը սպանեցին հայ

---

198 Տե՛ս Մաըրլեան Զ., Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը եւ Յայկական հարցը (1900-2009), էջ 55-56:

199 Ronald Reagan, U. S. Presidential Statements, http://www.armenian-genocide.org/Affirmation.63/current_category.4/affirmation_detail.html

մտավորականության ներկայացուցիչներին: Ես՝ իբրև Կոլորադոյի նահանգապետ, 1981 թ. ապրիլի 24-ը նահանգում հռչակում եմ Հայ նահատակների օր»[200]:

Սենատոր Կարլ Լևինը և Ներկայացուցիչների պալատի անդամ Չարլզ Փաշայանը 1983 թ. հունիսի 14-ին իրենց հրապարակած կոչում նշում էին, որ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության վերաբերյալ կային չորս բանաձևեր, որոնք պարզապես սպասում էին քննարկման և վավերացման: Այդ բանաձևերը հետևյալներն էին՝ 124, 171, 87 և 241: Առաջին երկու բանաձևերը կոչ էին անում ամերիկյան արտաքին քաղաքականության ռազմավարությունը մշակելիս և իրականացնելիս հաշվի առնել Հայոց ցեղասպանության իրողությունը, իսկ վերջին երկուսը առաջարկում էին 1984 թ. ապրիլի 24-ը հռչակել Ցեղասպանության, հատկապես Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի ազգային օր:

Միչիգանից դեմոկրատ սենատոր Կարլ Լևինի և Կալիֆորնիայից սենատոր Փիթ Ուիլսոնի ջանքերով և նախաձեռնությամբ 1984 թ. Ամերիկյան Սենատ ներկայացված թիվ 241 բանաձևը կոչ էր անում պետության արտաքին քաղաքականության ռազմավարությունը մշակելիս և իրականացնելիս հաշվի առնել Հայոց ցեղասպանության փաստը: Կարլ Լևինը բանաձևի հետ կապված նշում էր. «Ոչ մի երկրի հետ ունեցած յարաբերութիւն չի կարող երբեւէ ստիպել ուրանալ այն, ինչ ճանաչված է իբրեւ պատմական փաստ, այն է, թուրքական կառավարութեան ձեռքով մեկուկես միլիոն հայերի կոտորածը»[201]:

Բանաձևը, թեև միաձայն վավերացվում է Սենատի արտաքին հարաբերությունների հանձնախմբի կողմից, սակայն, չի մտցվում լիագումար նիստի օրակարգ՝ «ժամանակի սղության պատճառով», այլ

200 ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 65, փաստաթուղթ 1:

201 «Զարթոնք» օրաթերթ, 21 փետրուարի, 1985:

կերպ ասած, կասեցվում է ամերիկյան կառավարության ճնշմամբ՝ չցանկանալով վատթարացնել հարաբերությունները Թուրքիայի հետ:

Ամերիկահայ համայնքի կարևոր ձեռքբերումներից էր 1982 թ. Քեմբրիջ քաղաքում (Մասսաչուսեթս) հիմնադրված Զորյան գիտահետազոտական կենտրոնը, որը հիմնականում կենտրոնանում է Հայոց ցեղասպանության, Սփյուռքի և Հայաստանի վերաբերող հիմնահարցերի վրա՝ միաժամանակ կազմակերպելով հայկական հիմնահարցերին վերաբերող սեմինարներ և արխիվային նյութեր հավաքելով[202]:

Ողջ 1983-1984 թթ. ընթացքում Հայ դատի հանձնախումբը և Ամերիկայի Հայկական համագումարը հսկայական աշխատանք են ծավալում, որպեսզի ընդունվեն վերոնշյալ բանաձևերը, մասնավորապես, նրանք փորձում էին օգտագործել այն հանգամանքը, որ ԱՄՆ-ում նախագահական հերթական ընտրարշավն էր ընթանում: Բայց հիշատակված բանաձևերն այդպես էլ չեն վավերացվում ամերիկյան Կոնգրեսի կողմից: Այդ կապակցությամբ 1984 թ. օգոստոսի 2-ին Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը նամակներ է ուղարկում նախագահ Ռ.Ռեյգանին ու պետքարտուղար Շուլցին և քննադատում ամերիկյան պետքարտուղարության որդեգրած դիրքորոշումը Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևերի ընդունման հարցում: Միաժամանակ, Հանձնախումբը քննադատում էր Պետքարտուղարությանը, որ վերջինս փորձում էր ամերիկահայ լոբբիստական կառույցներին ստիպել իրենց քաղաքական

202 Տե´ս The Zoryan Institute, Our Story, http://zoryaninstitute.org/about-us/#our-story

գործունեության մեջ դադարեցնելու Ցեղասպանության հարցի հետապնդումը[203]:

1984 թ. ԱՄՆ-ում ընթացող նախագահական ընտրապայքարում դեմոկրատական թեկնածուներ Վոլտեր Մոնդեյլը և Ջեսի Ջեքսոնը հանդես էին գալիս Հայոց ցեղասպանությունը ճանաչող և հայանպաստ արտահայտություններով:

Վոլտեր Մոնդեյլը, ով նույն թվականի ամռանը ընտրվում է նախագահի դեմոկրատական թեկնածու, նշում էր. «հայութիւնը պետք է յիշատակի Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանեան կայսրութիւնում իրականացված մեկուկես միլիոն հայերի ցեղասպանութեան 69-րդ տարելիցը»[204]:

Հայ դատի ամերիկյան հանձնախումբը 100 հազար դոլար է հանգանակում ի նպաստ Մոնդեյլի՝ հույս ունենալով, որ նա օգտակար կլինի Հայ դատի և հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության գործին[205]:

Հայ դատի հանձնախմբի նշանակալի ձեռքբերումներից էր այն, որ 1984թ. սեպտեմբերի 10-ին Ներկայացուցիչների պալատը, ձայների 2/3 մեծամասնությամբ ընդունում է թիվ 247 համատեղ բանաձևը, որը 1985թ. ապրիլի 24-ը սահմանում էր որպես «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր»[206]: Բանաձևում, մասնավորապես նշվում էր. «1985 թ. ապրիլի 24-ը, անշուշտ, սահմանվում է «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր», որի կապակցությամբ ԱՄՆ նախագահին խնդրում ենք հանդես գալ հայտարարությամբ՝ ուղղված Միացյալ

---

203 Տե՛ս «Ազդակ» օրաթերթ, 30 օգոստոսի, 1984:
204 «Զարթօնք» օրաթերթ, 26 յունիսի, 1984:
205 Տե՛ս նույնը, 10 ապրիլի, 1984:
206 Տե՛ս ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 11, փաստաթուղթ 2:

Նահանգների բնակչությանը, և այս օրը հռչակել ցեղասպանության բոլոր զոհերի հիշատակի օր, հատկապես այն մեկուկես միլիոն հայերի, որոնք դաժան 1915-1923 թթ. Օսմանյան Թուրքիայում կազմակերպված ցեղասպանության զոհեր»[207]:

Ներկայացուցիչների պալատի բազմաթիվ անդամներ քվեարկությունից առաջ հանդես են գալիս ելույթներով, իսկ Պալատի նախագահ Թոմաս Օ’Նիլը նշում էր, որ բանաձևի ընդունումը շատ կարևոր է, քանզի Հայկական ցեղասպանության հետ առնչվող իրողությունները երբեք չպետք է մոռացվեն: Շարունակելով, նա ավելացնում է. «Ինչպես ասել էի Ներկայացուցիչների պալատի 1975 թ. 148 համատեղ բանաձևի առիթով, այս ցեղասպանությունը ծրագրված փորձ էր բնաջնջելու հայ ժողովուրդը, որը չի կարելի երբեք մոռացութեան մատնել»[208]:

Բանաձևի ընդունման կապակցությամբ Հայ դատի հանձնախումբը հանդես է գալիս հայտարարությամբ, որ հանրապետական ու դեմոկրատ կոնգրեսականների մի մասը դեռևս փետրվարին իրենց հետ ունեցած հանդիպման ժամանակ խոստացել էին քվեարկել բանաձևի օգտին:

Հանձնախումբը շարունական հանդիպումներ է ունենում սենատորների և Ներկայացուցիչների պալատի անդամների հետ և նշում, որ 1985 թվականը՝ Հայոց ցեղասպանության 70-ամյակը, բացառիկ առիթ է, որպեսզի Հայ դատի նկատմամբ կոնգրեսական ու հանրային աջակցությունը մեծանա: Առիթը նաև հարմար էր, որպեսզի մարդկության դեմ գործված այս ոճիրի զոհերին հիշատակող բանաձևը ընդունվի[209]:

---

[207] The Armenian Genocide: The World Speaks Out (1915-2015), Documents and Declarations with an Introduction by Harut Sassounian, p. 69.

[208] «Զարթոնք» օրաթերթ, 13 ապրիլի, 1984:

[209] Տե՛ս «Ասպարեզ» օրաթերթ, 16 փետրուարի, 1985:

Կոնգրեսական Թոնի Քոելհոն բանաձևի ընդունումից հետո նշում է.«Թուրք դեսպանի հետ հանդիպման ժամանակ ես նրան յիշեցրի, որ մենք՝ ամերիկացիներս, պետք է վաւերացնենք Հայկական բանաձեւը եւ ձեզ՝ թուրքերիդ, մնում է այն ընդունել կամ չընդունել»[210]:

1985 թ.՝ Հայոց ցեղասպանության 70-ամյա տարելիցին, Հայ դատի հանձնախումբը հանդես է գալիս հայտարարությամբ, որտեղ նշվում էր հետևյալը.«Հայ ժողովուրդը արտասահմանի եւ մայր հայրենիք Հայաստանի մեջ 1985 թ. արժանավայել հանդիսավորութեամբ պետք է ոգեկոչի մեկուկես միլիոն հայ նահատակների յիշատակը, որոնք զոհ գնացին 1915-1923 թթ. թուրք կառավարութեան կողմից գործադրված Հայկական ցեղասպանութեան, որը հանդիսացավ XX դարի պատմութեան մէջ առաջին ցեղասպանութիւնը: Հայ ժողովուրդն այսօր ամբողջովին գիտակից է իր իրավունքներին եւ Դատին, որոնք արդեն յոթ տասնամեակ է անտեսվում են եւ ոտնակոխ արվում մի կողմից թուրք կառավարութիւնների, իսկ միւս կողմից էլ աշխարհի մեծ եւ քաղաքակիրթ կոչվող պետութիւնների կողմից: Հայ ժողովուրդը, որպես պահանջատեր պնդում է, որպեսզի վերականգնվեն ոտնակոխ արված իրավունքները, վերադարձվեն Ցեղասպանութեան հետեւանքով հասցված նիւթական վնասները, պատմական Հայաստանի հողերը, եւ որ ներկա թուրքական կառավարութիւնը ընդունի իր նախորդների գործած յանցանքը: Հայ ժողովուրդը պետք է հասնի Ցեղասպանութեան ճանաչմանը ԱՄՆ Կոնգրեսի և նախագահի կողմից՝ միաժամանակ ցոյց տալով, որ Ցեղասպանութիւնն անժամանցելի ոճիր է՝ գործված մարդկութեան դեմ»[211]:

---

210 «Հայրենիք» օրաթերթ, 1 յունուարի, 1985:
211 «Զարթօնք» օրաթերթ, 1 մարտի, 1985:

1985 թ. ապրիլի 24-28-ին՝ Հայոց ցեղասպանության 70-ամյա տարելիցը հիշատակելու համար Վաշինգտոնում հավաքվում է շուրջ 6 հազար մարդ, որոնք եկել էին Միացյալ Նահանգների յուրաքանչյուր անկյունից: Հինգ օր շարունակ տևած արարողությունը, որ կազմակերպվել էր Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի կողմից, անցկացվում էր Ամերիկայի հայ առաքելական եկեղեցու հովանու ներքո: Այս միջոցառման ժամանակ ելույթով հանդես է գալիս Կալիֆորնիայի նահանգապետ Ջորջ Դոքմեջյանը՝ կոչ անելով ամերիկյան իշխանություններին ճանաչել Հայոց ցեղասպանությունը[212]:

Հայոց ցեղասպանության 70-ամյակին նվիրված այս միջոցառումը, որը համախմբում է հազարավոր ամերիկահայերի, մեկ անգամ ևս վերահաստատում է հայության՝ իրենց ապագայի և Հայկական հարցի լուծման շուրջ ունեցած պարտավորությունները:

1985 թ. հունիսի 4-ին Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի անդամների մեծամասնությունը՝ 233 կողմ և 180 դեմ, քվեարկում է 192 բանաձևի օգտին՝ պահանջելով 1986 թ. ապրիլի 24-ը հռչակել «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր»[213]: Սակայն, պակասում էր 42 քվե, որը թույլ կտար, ըստ Ներկայացուցիչների պալատի կանոնադրության, բանաձևը վավերացնել առանց փոփոխությունների:

Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը իր ուղարկած 67 նամակների մեջ շնորհակալություն էր հայտնում Ներկայացուցիչների պալատի այն անդամներին, որոնք քվեարկել էին 192 բանաձևի օգտին: Այդ նամակների մեջ ասվում էր. «Ձեր

212 Տե՛ս «Հայ դատ» ամսագիր, 1985, յուլիս, էջ 18:
213 Տե՛ս նույն տեղում, էջ 4:

պաշտոնակիցներից 233 հոգի մեզ հետ համաձայն են, ինչը նշանակում է, որ Միացեալ Նահանգները մարդու իրավունքների առնչութեամբ իր բարի համբավը պահելու պատասխանատվութիւնը ունի եւ, զորավիգ կանգնելով ցեղասպանութեան զոհերի հիշատակը հարգելուն եւ ցեղասպանութիւնը ճանաչելուն, արձանագրում են հարցի առարկայականութիւնը: Ձեր դիրքորոշումը շատ կարեւոր է մեզ համար եւ ավելի մեծ ուժ է տալիս՝ բանաձեւի ընդունման համար տարվող աշխատանքների գործում»[214]:

Բանաձևի վերջնական չընդունվելը պայմանավորված էր ամերիկյան գործադիր իշխանության այն մտահոգությամբ, որ այն կվնասի ամերիկաթուրքական հարաբերությունները: Այդ առիթով թուրքական «Միլլիյեթ» թերթը գրում էր, որ թուրք կառավարությունը պաշտոնապես զգուշացրել է Ռեյգանի կառավարությանը, որ «իբր թե պատահած հայկական ջարդի» վերաբերյալ որևէ օրինագծի ընդունման պարագայում երկու երկրների հարաբերությունները լուրջ հարված կստանան և առաջ կբերեն անցանկալի հետևանքներ[215]:

Բանաձևի չընդունվելուց հետո, Ներկայացուցիչների պալատի 60 անդամներ նամակ են ուղարկում «Կանոնների կոմիտե»-ին՝ («Rules Committee») կոչ անելով բանաձևը նորից դնել Պալատի լիագումար նիստերի օրակարգում:

Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Պերճ Կարապետյանը նշում էր. «Այս նամակը, ստորագրված 63 կոնգրեսմենների կողմից, հստակորեն ցույց կտա կոմիտեի նախագահին, որ Ներկայացուցիչների Պալատի անդամների

[214] «Ասպարեզ» օրաթերթ, 12 յուլիսի, 1985:
[215] Տե՛ս «Հայ դատ» ամսագիր, 1985, յուլիս, էջ 4:

նշանակալից թիվ մեծապես հետաքրքրված է, որ այս բանաձեւը երկրորդ անգամ դրվի քվեարկութեան»[216]:

ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպանը անձամբ հանդիպում է կոմիտեի նախագահ Քլոտ Փեփրի հետև նրան համոզում, որ բանաձևը շատ քիչ կարևորություն է ներկայացնում:

Նույն բովանդակությունն էր կրում նաև Սենատ ներկայացված 102-րդ բանաձևը, որը ևս մերժվում է:

1985 թ. ապրիլի 1-ին թուրքական «Հյուրիեթ» թերթին ուղղված իր պատասխանում Ռեյգանը գրում էր. «Ես չեմ աջակցել Հիշատակի օր սահմանելու բանաձեւին, քանի որ այն կարող է վնասել մեր յարաբերութիւնները կարեւոր դաշնակցի հետ»[217]: Ռ. Ռեյգանի նամակից հասկանում ենք, որ Թուրքիան, որպես ՆԱՏՕ-ի անդամ երկիր, ռազմավարական կարևոր նշանակություն ուներ Միացյալ Նահանգների համար:

Նախագահ Ռոնալդ Ռեյգանի այս դիրքորոշումը չէր կարող չառաջացնել հայկական լոբբիստական կազմակերպությունների դժգոհությունը: Մասսաչուսեթսի Հայ դատի հանձնախմբի ղեկավար Վիգեն Բաբայանը հետևյալ գնահատականն է տվել այդ դիրքորոշմանը, որ Ռեյգանի վարչակարգը օգնում և դրդում է Թուրքիային վերաձևելու և վերաշարադրելու պատմությունը:

Ամերիկայի Հայկական համագումարի հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար Կարլինը նշում էր, որ հայերը չեն ցանկանում թուրքերի հետ բանավիճել, թե արդյո՞ք ցեղասպանություն տեղի է ունեցել: Ուղղակի ասեք, այն տեղի է ունեցել, բոլոր հայերը դա են

---

216 «Ասպարեզ» օրաթերթ, 29 յուլիսի, 1985:
217 «Հայ դատ» ամսագիր, 1985, յուլիս, էջ 3:

ցանկանում: Միայն դա կարող է գոհացնել շատ ամերիկահայերի[218]:

Հայազգի կոնգրեսական Չարլզ Փաշայանն էլ թուրքական «Միլլիյեթ» օրաթերթին տված հարցազրույցի ժամանակ հայտարարել էր. «Չնայած այս տարի օրինագիծը չընդունուեց, սակայն հաջորդ տարիներին եւս պետք է այն օրակարգ բերենք:Պետք է շարունակենք մինչեւ վերջ»[219]:

Այսպիսով,չնայած ապրիլի 24-ը «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր»հռչակող բանաձևը երկու անգամ հասնում է Ներկայացուցիչների պալատ և հավաքում ձայների մեծամասնություն, այնուամենայնիվ, Ռեյգանի կառավարությունը ամեն ինչ անում է այն ձախողելու համար՝ նշելով,որ այն կվնասի կարևոր դաշնակցի՝ Թուրքիայի հետ ունեցած հարաբերությունները:

ՄԱԿ-ի Փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության կանխարգելման ենթահանձնաժողովի կողմից հայերի կոտորածները, որպես ցեղասպանության օրինակ սահմանելը,առիթ է հանդիսանում,որպեսզի հայկական լոբբին կրկին բարձրացնի 192-րդ բանաձևը: Հայ դատի ամերիկյան հանձնախումբը անմիջապես այս լուրը տարածում է բոլոր սենատորների և կոնգրեսականների շրջանում:Սենատոր Կարլ Լևինը,Սենատին ուղղված իր խոսքում ասում է. «Անցած ամիս ՄԱԿ-ի Փոքրամասնութիւնների պաշտպանութեան և խտրականութեան կանխարգելման ենթայանձնաժողովը հաստատեց պատմական իրականութիւնը, որը չնայած շատ-շատերի ջանքերին, երբեք չի կարող մերժվել եւ ուրացութեան մատնվել: Այն 14 կողմ և 1 դեմ

[218] Տե՛ս նույնը:
[219] «Ջարթոնք» օրաթերթ, 11 յունիսի, 1985:

ձայներով ընդունվեց յանձնախմբի կողմից, որով 1915 թ. Թուրքիայում իրականացված հայկական կոտորածները անվանվեցին «ցեղասպանութիւն»: Այս զեկոյցի հաստատումը հաղթանակ է նշանակում արդարութեան և մարդկութեան համար: Այն ներկայացնում է հայութեան հաղթանակը ամենուր եւ խոչընդոտում ներկայիս թուրքական իշխանութիւնների փորձերը պնդելու, թե ցեղասպանութիւն երբեք տեղի չի ունեցել: Կարծում եմ, որ այժմ սա խթան կհանդիսանա Սենատի եւ Ներկայացուցիչների պալատի համար, որպեսզի հաստատեն 1986 թ. ապրիլի 24-ը որպես ցեղասպանութեան զոհերի հիշատակի օր եւ հատկապես հայ զոհերի»[220]:

Հայ դատի հանձնախմբի Լոս Անջելեսի գրասենյակի և Կալիֆորնիայի հայազգի նահանգապետ Ջորջ Դոքմեջյանի ջանքերով 1985 թ. Կալիֆորնիայի նահանգային խորհրդարանը վավերացնում է «Մարդու իրավունքներ» և «Ցեղասպանություն» առարկաների դասավանդման վերաբերյալ օրինագիծը:

Ամերիկայի Հայկական համագումարի ծավալած գործունեության արդյունք էր 1986 թ. մայիսի 6-ին Նյու Յորք նահանգի Սենատի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող 810-րդ բանաձևի ընդունումը, որտեղ ասվում էր, որ հայ ժողովուրդը 1896-1923 թթ. Օսմանյան Թուրքիայում ենթարկվել է մասսայական կոտորածի: Միաժամանակ նշվում էր, որ Կոնգրեսի միակ հայազգի անդամ Չարլզ Փաշայանը ներկայացրել է ապացույցներ, որոնք վկայում են, որ ամերիկյան ութ նախագահներ տեղյակ են եղել հայության դրության մասին և իրենց

[220] «Հայ դատ» ամսագիր, 1985, նոյեմբեր, էջ 14:

մտահոգությունը հայտնել հայ ժողովրդի ճակատագրի հարցում[221]:

Ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների ծավալած գործունեության արդյունքում 1986-1987 թթ. Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչում են Մասսաչուսեթս (1986 թ. փետրվարի 19), Միչիգան (1986 թ. ապրիլի 13) և Մերիլենդ (1987 թ. ապրիլի 24) նահանգները, որոնց նահանգապետերը հանդես են գալիս հայտարարություններով՝ 1915-1923 թթ. Թուրքիայում հայերի կոտորածները որակելով որպես XX դարի առաջին ցեղասպանություն, իսկ Մերիլենդ նահանգի դեպքում՝ ապրիլի 24-ը հռչակելով, որպես Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր:

1987 թ. կրկին Սենատ է ներկայացվում թիվ 241 բանաձևը, որը պահանջում էր պետության արտաքին քաղաքականության ռազմավարությունը մշակելիս և իրականացնելիս հաշվի առնել Հայոց ցեղասպանության փաստը: Նույն բովանդակությամբ 247 բանաձևը, որը ներկայացվել էր Ներկայացուցիչների պալատ մերժվում է: Թուրքական կառավարությունը, գործի դնելով հակահայկական քարոզչությունը, փորձում է ամեն կերպ հերքել Հայոց ցեղասպանության փաստը՝ պնդելով, որ հայերը պարզապես պատերազմի զոհեր են:

1987 թ. օգոստոսի 7-ին Ներկայացուցիչների պալատում քննարկվում է թիվ 132 բանաձևը, որով 1988 թ. ապրիլի 24-ը պետք է հռչակվեր «Հայոց ցեղասպանության հիշատակման ազգային օր»: Մինչ այդ 1987 թ. հուլիսի 2-ին ՀԲԸՄ-ի նախագահ Ալեք Մանուկյանը ամերիկյան պետքարտուղար Շուլցի հետ ունեցած հանդիպման ժամանակ խնդրում է

[221] Տե՛ս Барсегов Ю., Геноцид армян: Ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий, т. 2, ч. 1, стр. 671-672.

բարյացակամ դիրքորոշում որդեգրել հայկական բանաձևի նկատմամբ և նրան հանձնում մի հուշագիր: Հուշագրին ի պատասխան՝ Շուլցը հուլիսի 10-ին ուղարկում է մի պատասխան, որտեղ ասվում էր. «Պետական պաշտոնակիցներս եւ ես նպատակ չունենք նսեմացնելու հայ ժողովրդի կրած տառապանքները: Կասկած չկա, որ Օսմանեան կայսրության մայրամուտին վրեժխնդրութիւնները, ջարդերը և բռնի տեղահանութիւնները պատճառ են հանդիսացել տեղի խառը ազգաբնակչութեան տառապանքների համար: Կասկած չկա, որ 132-րդ բանաձեւի ընդունումը լրջորեն կվնասին թուրք-ամերիկեան յարաբերութիւնները, իսկ մենք ցանկանում ենք ընդլայնել այդ յարաբերութիւնները»[222]:

Ելնելով վերը նշված հանգամանքից՝ ամերիկյան կառավարական շրջանակները, խուսափելով ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների վատթարացումից, դիմում են Կոնգրեսին՝ կոչ անելով ձեռնպահ մնալ այնպիսի բանաձևերի ընդունումից, որոնք կարող են ապակայունացնել ամերիկաթուրքական հարաբերությունները:

Նման պայմաններում, սակայն, ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունները շարունակում են պայքարը ամերիկյան գործադիր և օրենսդիր իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման համար:

1988 թ. Ամերիկայի Հայկական համագումարը դիմում է Սենատին և ԱՄՆ նախագահի երկու թեկնածուներին՝ Բուշին և Դուկակիսին: Նախագահի թեկնածու և ապագանախագահ Ջորջ Բուշը Ամերիկայի Հայկական համագումարին ուղղված իր պատասխանում գրում է. «Հիմնվելով գիտնականների, վերապրողների և ամերիկյան այդ օրերի

---

222 Մսրլեան Զ., Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական հարցը (1900-2009), էջ 77-78:

ականատեսների տեղեկությունների և վկայությունների վրա՝ պետք է ընդունել Օսմանյան կայսրության վերջին օրերին հայ ժողովրդի դեմ կատարված ցեղասպանության փորձը: Մենք՝ ամերիկացիներս, մեր երկրի կառավարությունը և Բուշի վարչակարգը, երբեք թույլ չենք տա, որպեսզի քաղաքական ճնշումները դառնան պատճառ՝ չդատապարտելու մարդկության հանդեպ գործված ոճիրները: Ես միանում եմ Կոնգրեսին՝ հիշելու այդ ժամանակի զոհերի հիշատակը»[223]:

Նախագահի թեկնածու Բուշին հայկական լոբբիստական կազմակերպությունների կողմից արվում են մի շարք հարցադրումներ, մասնավորապես արդյո՞ք նրան՝ որպես ԱՄՆ-ի նախագահի, ձեռնտու կլինի Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր սահմանող կոնգրեսական բանաձևը և արդյո՞ք նա կստորագրի և կվավերացնի այն՝ չնայած Թուրքիայի Հանրապետության ուժեղ դիմադրությանը:

Ջորջ Բուշի պատասխանը հետևյալն էր. «ԱՄՆ-ն պետք է ճանաչի հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանության փորձը: Բուշի վարչակազմը երբեք չի հանդուրժի քաղաքական ճնշումները, որոնք կկանխեն Միացյալ Նահանգների կողմից մարդկության նկատմամբ իրականացված ցեղասպանության դատապարտումը և ես կմիանամ Կոնգրեսին՝ այդ շրջանի զոհերի հիշատակի արարողությանը մասնակցելով»[224]:

Ամերիկայի Հայկական համագումարի՝ Կանզաս նահանգից սենատոր Ռոբերտ Դոուլի հետ ունեցած համագործակցության արդյունք էր վերջինիս

---

223 Բարսեղյան Լ., Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը, էջ 10:

224 The Armenian Genocide: History, Politics, Ethics, edited by Hovhannisyan R., New York, 1992, p. 333.

կողմից 1989 թ. սեպտեմբերի 29-ին Հայոց ցեղասպանության հետ կապված 212 բանաձևի նախագծի ներկայացումը ամերիկյան Կոնգրես: Վերջինս այս բանաձևը կազմել էր 1988 թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած երկրաշարժի առիթով Հայաստան այցելելուց հետո:

212 բանաձևը Սենատի և Ներկայացուցիչների պալատի համատեղ բանաձևն էր, որը պահանջում էր 1990 թ. ապրիլի 24-ը սահմանել որպես «1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության 75-ամյակի հիշատակման ազգային օր»: Միաժամանակ, դիմելով ԱՄՆ նախագահին, խնդրում էին, որպեսզի նա հանդես գա երկրի բնակչությանը ուղղված կոչով՝ հարգելու Օսմանյան Թուրքիայում 1915-1923 թթ. իրականացված ցեղասպանության հետևանքով զոհ դարձած մեկուկես միլիոն անմեղ հայ զոհերի հիշատակը[225]:

Սենատոր Կարլ Լևինը, ով կարևոր դերակատարություն էր ունեցել բանաձևի ներկայացման գործում, ասում էր, որ Սենատի վավերացմանը առաջարկված թիվ 212 բանաձևը ստեղծել է լուրջ հակամարտություն, քանի որ թուրքական կառավարությունը իրականացնում է ուժեղ լոբբինգ՝ ընդդեմ դրա ընդունման: Ծարունակելով, սենատորը նշում էր. «Թէ ինչու՞ են նրանք լոբբինգ անում 75 տարի առաջ Օսմանեան կայսրութիւնում պատահած դեպքերի համար, իրենց գործն է: Մեր խնդիրն է Հայոց ցեղասպանութեան յիշատակման գործում միանալ ամերիկահայ համայնքին եւ աշխարհին: Եթէ մենք եւ աշխարհը 1920 և 1930 թթ. Հայկական ցեղասպանութիւնը հիշեինք, Երկրորդ աշխարհամարտի տարիներին Հիտլերը չէր կարող ասել, թե ո՞վ է, որ այսօր հիշում է հայերին:

[225] Տե՛ս S.J.Res.212 - A Joint Resolution Designating April 24, 1990, as «National Day of Remembrance of the Seventy-Fifth Anniversary of the Armenian Genocide of 1915-1923», https://www.congress.gov/congressional-record, նաև՝ ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 51, փաստաթուղթ 3:

Յուսով եմ, որ ավելի նպատակահարմար է, եթե դուք լավ հիշեք այս ամենը՝ ցեղասպանութիւն բառը գործածելով: Այս կերպ դուք պետք է տայիք մեր աջակցութիւնը մի ժողովրդի, որ պատմականորեն այսքան մոտ էր մեզ, երբ նրանք հիշատակում էին ցեղասպանութիւնը եւ փնտրում նրա ճանաչումը աշխարհի մեջ»[226]:

1990 թ. փետրվարի 20-ին և 27-ին Կոնգրեսում բուռն քննարկումներ են ընթանում, որոնց ընթացքում ամերիկյան մի խումբ սենատորներ Ռոբերտ Դոուլի գլխավորությամբ պահանջում էին բանաձևում պահպանել «ցեղասպանություն» եզրը՝ իրենց ելույթներում 1915 թ. Օսմանյան Թուրքիայում տեղի ունեցած դեպքերը հստակ բնութագրելով որպես ցեղասպանություն: Այս քննարկումներին ակտիվ մասնակցություն են ունենում ոչ միայն Ամերիկայի Հայկական համագումարի ներկայացուցիչները, այլև Կալիֆորնիայի հայազգի նահանգապետ Ջորջ Դոքմեջյանը և հայ կոնգրեսական Չարլզ Փաշայանը: Ի վերջո, որոշվում է բանաձևի մեջ պահպանել «ցեղասպանություն» բառը, սակայն այն չէր պահանջում ԱՄՆ նախագահի ստորագրությունը և, հետևաբար, չուներ օրենքի ուժ[227]:

1990 թ. յուրահատուկ էր ամերիկյան նահանգների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման առումով: Այս թվականին էր, որ ամերիկյան 13 նահանգներ՝ Վիսկոնսինը, Օկլահոման, Իլինոյսը, Ռոդ Այլենդը, Փենսիլվանիան, Ալյասկան, Վաշինգտոնը, Արիզոնան, Օրիգոնը, Վիրջինիան, Կոնեկտիկուտը, Նյու Հեմփշիրը և Ֆլորիդան ճանաչում են Հայոց ցեղասպանությունը:

[226] «Զարթոնք» օրաթերթ, 7 դեկտեմբերի, 1989:
[227] Տե՛ս Բարսեղյան Լ., Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը, էջ 12:

Հայոց ցեղասպանության յուրաքանչյուր տարելիցի ամերիկահայությունը սպասում է արդյո՞ք Միացյալ Նահանգների նախագահը կօգտագործի՞ «ցեղասպանություն» տերմինը թե՞ ոչ: «Ցեղասպանություն» բառի չօգտագործումը մեծ ոգևորություն է առաջացնում թուրքերի շրջանում՝ միաժամանակ հուսախաբ անելով հայկական լոբբիստական կառույցներին:

Իրականության մեջ, Միացյալ Նահանգների նախագահները օգտագործել են ցեղասպանություն հանցագործությունը բնորոշող եզրույթներ: Մեջբերենք մի քանիսը[228]: Դեռևս 1918 թ. մայիսի 11-ին ԱՄՆ նախագահ Թեոդոր Ռուզվելտը Հայոց ցեղասպանությունը բնութագրում է հետևյալ կերպ. «Հայկական կոտորածը պատերազմի ամենամեծ հանցագործությունն էր»:

1978 թ. մայիսի 11-ին նախագահ Ջիմի Քարտերը (1977-1981) նշում էր. «Պլանավորված ջանք գործադրվեց՝ վերացնելու ողջ հայ բնակչությանը»:

1990 թ. ապրիլի 20-ին նախագահ Ջորջ Բուշը (1989-1993) կիրառում է «Հանցագործություն մարդկության դեմ» արտահայտությունը: Ստորև մեջբերենք նրա ուղերձից մի հատված.«Հայոց պատմությունը լի է մի շարք ողբերգություններով, որոնցից է 1988 թ. երկրաշարժը, բայց ամենից մեծը այն ահավոր կոտորածներն են, որոնց ենթարկվեց հայ ժողովուրդը 1915-1923 թթ.՝ Օսմանյան կայսրության կառավարիչների ձեռքով: Այդ կոտորածների 75-րդ տարելիցի առիթով ես ցանկանում եմ մասնակից դառնալ հայերի և բոլոր ժողովուրդների

---

228 Տե՛ս Տէրտէրեան Մ., 2015 Թուի Մեծ Ստուգատեսին: Մեր հողային պահանջատիրութիւնը միջազգային հանրային իրաւունքին մէջ (Տարագիր Արեւմտահայութեան Համաշխարհային Քոնկրէսին՝ ՏԱՀՔ-ի հրամայականը), Պէյրութ, 2015, էջ 32-33:

ոգեկոչումին՝ որպես Հիշատակի օր մեկ միլիոնից ավելի հայերի, որոնք զոհվեցին»[229]:

ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնը 1996, 1997, 1998 և 1999 թվականների ապրիլի 24-ին օգտագործում է «Մեկ ու կես միլիոն հայերի տեղահանություն և կոտորած» անվանումը:

2001 թ. ապրիլի 24-ին Հայոց եղեռնի հերթական տարելիցին նախագահ Ջորջ Բուշ Կրտսերը (2001-2009) գործածում է «Մոտ մեկ ու կես միլիոն հայերի բռնի աքսոր և ոչնչացում» անվանումը:

Այսպիսով, ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ ամերիկահայ լոբբիի ծավալած գործունեությունը նոր թափ է ստանում սկսած 1965 թվականից՝ Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցից: Այս շրջանում ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունները հասնում են մեծ հաջողությունների: ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը 1975 թ. և 1984 թ. ընդունում է համապատասխանաբար թիվ 148 և թիվ 247 բանաձևերը, որով ապրիլի 24-ը հռչակվում էր «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր»: Բացի այդ, ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների նահանգային կառույցների ու գրասենյակների ջանքերով շուրջ երկու տասնյակ նահանգներ ընդունում են Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևեր:

[229] Bobelian M., Children of Armenia: A Forgotten Genocide and the Century-Long Struggle for Justice, New York, 2009, p. 206.

## 2.2 Հայոց ցեղասպանության ճանաչման համար տարվող պայքարը Միավորված ազգերի կազմակերպությունում

Ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների գործունեության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում նաև Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձևերի ընդունումը Միավորված ազգերի կազմակերպությունում:

Դեռևս 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան ընդունում է «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի մասին»

կոնվենցիան, որը ուժի մեջ է մտնում 1961 թ. հունվարի 12-ից[230]: Այս կոնվենցիայով հստակ սահմանվում էին այն հինգ կետերը, որոնցից անգամ մեկը բավարար էր, որպեսզի տվյալ երևույթը որակվեր որպես ցեղասպանություն: Հայոց ցեղասպանությունը այն եզակիներից է, որ համապատասխանում է ՄԱԿ-ի կոնվենցիայի բոլոր հինգ կետերին:

Հիշյալ կոնվենցիայի հետ կապված՝ 1951 թ. մայիսի 28-ին ԱՄՆ-ն Արդարադատության միջազգային ատյան է ներկայացնում մի հայտարարություն, որտեղ նշվում էր, որ Ցեղասպանության վերաբերյալ կոնվենցիան արդյունք էր անմարդկային և դաժան վերաբերմունքի, որն իրականացվել է դարեր շարունակ, այդ թվում Երկրորդ աշխարհամարտի և դրան նախորդած տարիների ընթացքում: Հայտարարության մեջ ընդգծվում էր, որ ցեղասպանություններ իրականացվել են մարդկության պատմության ողջ ընթացքում. հայերի կոտորածները թուրքերի կողմից, միլիոնավոր հրեաների և լեհերի բռնի տեղահանությունը նացիստական վարչակարգի կողմից ցեղասպանության հանցագործության խոշորագույն օրինակներն են[231]:

Նշենք, որ Միացյալ Նահանգները այս բանաձևը վավերացնում է 40 տարի անց՝ 1988 թ., նախագահ Ռ. Ռեյգանի օրոք՝ դառնալով 98-րդ երկիրը, որը ճանաչում էր ՄԱԿ-ի կողմից տրված «ցեղասպանություն» եզրույթի սահմանումը:

Նախագահ Ռոնալդ Ռեյգանը իր խոսքում նշում էր. «Ուրախ եմ, որ գոհունակութիւն կը տրուի աշխարհի բոլոր ժողովուրդներուն, մանաւանդ

---

230 Տե՛ս Геноцид армян: Ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий, ред. и сост. Ю. Г. Барсегов, т. 1, Москва, 2002, стр. 29.

231 Տե՛ս International Court of Justice, Written Statement of the Government of the United States of America, http://www.armenian-genocide.org/Affirmation.388/current_category.6/affirmation_detail.html, նաև՝ ՀՅԴԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 80, փաստաթուղթ 26:

հրեաներուն: Ավելի ուրախ կլինեի, եթէ ցեղասպանական ոճիրներու հեղինակներ ԱՄՆ-ում մահապատիժ ստանային: Կարծում եմ, որ այս օրինագիծը բավականին զօրաւոր է եւ յստակորեն կը նշէ, որ Ամերիկայի տարածքին ցեղասպանութիւն իրագործած ոճրագործները խստորեն պետք է պատժուին»[232]:

Հայոց ցեղասպանության հիսունամյա տարելիցին իրականացվող միջոցառումները, ցույցերը չէին կարող տեսադաշտից դուրս թողնել մարդու իրավունքների ու ժողովրդավարության կառույց հանդիսացող Միավորված ազգերի կազմակերպությունը: 1965 թ. ապրիլի 24-ին Հայ դատի հանձնախումբը ձևավորում է «Նյու Յորքի հիսունամյակի հանձնախումբ», որը իբրև վշտի և բողոքի արտահայտություն,ցույց է կազմակերպում ՄԱԿ-ի գլխավոր գրասենյակի առջև: Հանձնախումբն իր հայտարարության մեջ նշում էր. «ՄԱԿ-ի մէջ է,որ աշխարհի մեծերու կողքին վերջին տարիներուն նստած են նաեւ յիսունի մոտ երկիրներու ներկայացուցիչներ, երկիրներ, որոնք մեզ նման օտար տիրապետութեան տակ կը գտնուէին տակաւին կարճ ժամանակ առաջ, եւ այսօր իրենց անկախութիւնը կը վայելեն հպարտօրէն: Ամենէն աւելի ՄԱԿ-ի մէջ եւ անոր շուրջ կը տեսնենք, թէ «վերացական» երազ չէ անհամեմատ փոքր ուժերով ազատագրական պայքարի լծուելը, քանի որ չկա աւելի անպարտելի ուժ, քան արդարութիւնը: Նիւ Եորքի յիսունամեակի յանձնախումբը ապրիլեան այս օրերին իր կազմակերպած ցոյցերով ներկայացնում է ողջ հայութեան զգացումները՝ ցանկանալով միջազգային այս ատեանի մեջ հիշեցնել մեր մեկուկես միլիոնից ավելի զոհերի

[232] «Ասպարեզ» օրաթերթ, 8նոյեմբերի, 1988:

նահատակութեան մասին, թուրքերի գործած աննկարագրելի ոճիրի մասին»[233]:

1967 թ. հունվարին գումարվում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության կանխարգելման ենթահանձնաժողովի նիստը, որի օրակարգը Ցեղասպանության դեմ արգելք սահմանող միջազգային համաձայնագրի քննարկումն էր: Միաժամանակ նախատեսվում էր ստեղծել հատուկ Դատական ատյան, որպեսզի նմանատիպ գործողությունները դառնան քննարկման առարկա և անհրաժեշտ միջոցառումներ իրականացվեն մեղավորներին պատժելու համար:

Դաշնակցություն կուսակցության կողմից ստեղծված «Հայաստանի հանրապետության պատվիրակություն»-ը կոչ է հղում ՄԱԿ-ի ենթահանձնաժողովին, որտեղ ասվում էր. «1965 թ., աշխարհի բոլոր շրջաններում ապրող հայերը նշեցին Հայոց ցեղասպանութեան 50-ամեակը. ցեղասպանութիւն, որ իրագործուեց 1915 թ. Թուրքիայում: Անկասկած է, որ այս արարքը կը կազմէ մարդկութեան պատմութեան ամենից սեւ էջը եւ մեր ժամանակների առաջին ցեղասպանութիւնը»[234]:

Այս կոչ-հայտարարությունը լայն արձագանք է ստանում ՄԱԿ-ի շրջանակներում և առիթ տալիս ամերիկյան և օտար թերթերի բազմաթիվ մեկնաբանությունների: Բազմաթիվ երկրներ ու ժողովուրդներ միանում են հայության պահանջին՝ անհրաժեշտ համարելով ցեղասպանության դեմ արգելքի միջազգային համաձայնագրի ստորագրումը և ՄԱԿ-ի հովանու ներքո Միջազգային դատական ատյանի ստեղծումը:

233 «Հայրենիք» օրաթերթ, 15 ապրիլի, 1965:
234 Հայ դատի աշխատանքներ եւ անոց արձագանքը Թուրքիոյ մէջ, էջ 2:

Վերոնշյալ պատվիրակությունը 1967 թվականի հունվարի 16-ին Փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության կանխարգելման ենթահանձնաժողովին է ներկայացնում մի հուշագիր, որտեղ նշվում էր, որ XX դարի առաջին ցեղասպանության զոհը եղել է հայ ժողովուրդը, ինչի հետևանքով մեծաթիվ հայեր ապրում են աշխարհի տարբեր երկրներում: Աշխարհասփյուռ հայությունը ենթակա է ձուլման, ինչը ցեղասպան արարքի շարունակությունն է: Յուշագրի վերջում նշվում էր, որ հայ ժողովուրդը ենթահանձնաժողովից պահանջում է ավելի վճռական և արմատական քայլեր իրականացնել՝ համաձայնագրի ստորագրման և միջազգային ատյանի իրագործման համար:

Յուշագրի օրինակներ են հանձնվում ենթահանձնաժողովի անդամ երկրների՝ Միացյալ Նահանգների, Լեհաստանի, Սուդանի, Իսրայելի, Քենիայի, Մեքսիկայի, Անգլիայի, Իտալիայի, Միացյալ Արաբական Էմիրությունների, Կանադայի, Յնդկաստանի, Ֆինլանդիայի, Չիլիի, Ավստրիայի, պատվիրակներին: Յուշագիրը հանձնելուց բացի, Յայ դատի հանձնախմբի նախաձեռնությամբ հունվարի 18-22-ը ցույցեր են իրականացվում Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի կենտրոնական գրասենյակի առջև: Յայության պահանջը հետևյալն էր. «Պատժել ցեղասպանութեան հեղինակներին, վավերացնել համաձայնագիրը եւ ստեղծել դատական ատեանը, զոհացում տալ հայերի պահանջներին» և այլն[235]:

ՄԱԿ-ի ենթահանձնաժողովին Յուշագրի հանձնումը, ցույցերի անցկացումը և Մեծ եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան-կոթողի կառուցման վերաբերյալ Մոնթեբելլոյի (Կալիֆորնիա) հայության նախաձեռնությունը,

[235] Տե՛ս նույն տեղում, էջ 5:

բնական է, որ իրենց արձագանքը պետք է ստանային թուրքական մամուլում և պետական շրջանակներում: Թուրքական թերթերը նշում էին, որ այս գործողություններով հայկական լոբբին ատելություն է սերմանում կամ հայերը համաշխարհային մասշտաբով պայքար են սկսել Թուրքիայի դեմ և այլն[236]:

1967 թ. ապրիլին Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը, իր հերթին, Հուշագիր է ներկայացնում ՄԱԿ-ի Փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության կանխարգելման ենթահանձնաժողովին, հրատարակում բաց նամակ «Նյու Յորք Թայմս» թերթի ապրիլի 3-ի հերթական համարում և խաղաղ ցույց կազմակերպում Նյու Յորքում՝ պահանջելով արագացնել ցեղասպանությունը դատապարտող միջազգային համաձայնագրի ստորագրումը:

Նույն թվականին ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհուրդը՝ իր ենթակայությամբ գործող Մարդու իրավունքների հանձնաժողովից պահանջում է ցեղասպանության հիմնախնդրի հետ կապված իրականացնել նոր ուսումնասիրություններ՝ նշելով, որ 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված կոնվենցիայի որոշ դրույթներ վերափոխելու կարիք ունեն:

Մարդու իրավունքների հանձնաժողովի՝ 1967 թ. հոկտեմբերի 10-ին գումարված նիստը քննարկում է ցեղասպանություն հանցագործությունը պատժելու և արգելելու հարցը, որոշում Փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության կանխարգելման ենթահանձնաժողովի անդամներից ընտրել այս հարցի շուրջ հատուկ զեկուցող, որը կներկայացներ խնդիրը: ՄԱԿ-ի այս

[236] Տե՛ս նույն տեղում, էջ 6-7:

ենթահանձնաժողովի բոլոր անդամները փորձագետներ էին և չէին ներկայացնում իրենց երկրները, ուստի զեկույցը պետք է քննվեր Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից, որի անդամները փորձագետներ չէին և ներգրավված չէին ուսումնասիրության մեջ:

1971 թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը հաստատում է Փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության կանխարգելման ենթահանձնաժողովի առաջարկը՝ իրականացնելու նոր ուսումնասիրություն ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և պատժի վերաբերյալ[237]: Որպես զեկուցող է ընտրվում Ռուանդայի ներկայացուցիչ Նիկոդեմ Ռուհաշիանկիկոն, որը 1972 թ. մայիսի 23-ին ներկայացրած նախնական տեղեկագրում չէր հիշատակում 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանությունը: Դա այն դեպքում, երբ տեղեկագիրը կազմված էր 27 էջից և մի ամբողջ գլուխ վերաբերում էր Ցեղասպանություն երևույթին[238]:

Երբ ՄԱԿ-ում Իրաքի և Եգիպտոսի ներկայացուցիչները քննադատում են այս տեղեկագիրը և նշում, որ դրանում Հայոց ցեղասպանության վերաբերյալ որևէ տեղեկություն չկա, տեղեկագիրը պատրաստողները հայտնում են, որ ՄԱԿ-ի գրադարաններում Հայոց ցեղասպանության վերաբերյալ նյութեր գոյություն չունեն: Նման պատասխանը իրականում չհիմնավորված էր, քանի որ դեռևս 1945 թվականից՝ ՄԱԿ-ի ստեղծումից սկսած, Հայ դատի ամերիկյան հանձնախումբն ու ամերիկահայ այլ լոբբիստական կազմակերպությունները Հայկական հարցի և Հայոց

237 Տե՛ս A Crime of Silence: The Armenian Genocide (Permanent People's Tribunal), p.168.

238 Տե՛ս Մսըրլեան Զ., ՄԱԿ-ի 30-րդ պարբերութեան ծննդոցը, //«Հայկազեան հայագիտական հանդէս», հատ. ԺԱ, էջ 11-12:

ցեղասպանության վերաբերյալ հազարավոր հուշագրեր, գրքույկներ ու աշխատություններ են ներկայացրել միջազգային այս կառույցին:

Հայ դատի հանձնախումբը և Ամերիկայի Հայկական համագումարը խստորեն քննադատում են այս թերի ուսումնասիրությունը և բողոքներ ներկայացնում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կուրտ Վալդհայմին՝ հայ ժողովրդի զգացումները վիրավորելու հարցադրմամբ:

Հայկական լոբբիստական կազմակերպությունների և հայ համայնքի ջանքերի շնորհիվ, Ռուանդայի ներկայացուցչին հանձնարարվում է ներկայացնել նոր տեղեկագիր, որը վերջինս իրականացնում է 1973 թ. հունիսի 25-ին: Տեղեկագիրն ուներ «Ցեղասպանության կանխարգելման և պատժի մասին» խորագիրը: Դրա 30-րդ պարբերությունը վերաբերում էր Հայոց ցեղասպանությանը, վերնագրված էր որպես «XX դարի առաջին ցեղասպանություն» և ուներ հետևյալ ձևակերպումը. «Անցնելով արդի ժամանակաշրջանին՝ կը տեսնուի յարաբերաբար ամբողջական փաստերու թղթածրար մը՝ Հայկական Ջարդերուն վերաբերեալ, որոնք նկարագրուած են որպէս «20-րդ դարու առաջին ցեղասպանութիւնը»[239]:

1973 թ. սեպտեմբերի 19-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության կանխարգելման ենթահանձնաժողովը վավերացնում է այս նոր տեղեկագիրը: 1974 թ. մարտի 6-ին զեկույցը ներկայացվում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 30-րդ նստաշրջանի քննարկմանը, որտեղ Թուրքիայի ներկայացուցիչ Օսման Օլչայը 30-րդ պարագրաֆը որակում է որպես «միֆ» և

---
[239] Նույն տեղում, էջ 23:

«պատմության աղավաղում»՝ առաջարկելով այն հանել զեկույցի վերջնական տարբերակից[240]: Քաղաքական նկատառումներից ելնելով՝ հանձնաժողովի անդամ մի շարք երկրների ներկայացուցիչներ պաշտպանում են Օլչայի առաջարկը և բանաձևը հետ է ուղարկվում խմբագրման:

ՆԱՏՕ-ի գծով իր դաշնակցին՝ Թուրքիային, պաշտպանող ամերիկյան այս դիրքորոշումը առաջացնում է ամերիկահայության բուռն դժգոհությունը: 1974 թ. հունիսի 5-ին Դաշնակցության ԱՄՆ-ի 81-րդ պատգամավորական ժողովի անունից 50 հոգուց կազմված պատվիրակությունը Վաշինգտոնում հանդիպում է ԱՄՆ-ի պետքարտուղարության ներկայացուցիչների հետ և բարձրացնում Հայոց ցեղասպանության հետ կապված հիմնահարցեր: Նրանք, մասնավորապես, բարձրացնում են այն հարցը, թե ինչպես է ստացվում, որ ցեղասպանությունների վերաբերյալ տեղեկագրից ջնջվում է Հայոց ցեղասպանության վերաբերյալ 30-րդ պարբերությունը: Ամերիկյան պաշտոնյաների պատասխանները խուսափողական և անորոշ էին: Նրանք պարզապես նշում էին, որ տվյալ պահին ամերիկյան շահերը չեն ներդաշնակում հայկական շահերի հետ և իրենք չեն ցանկանում խառնվել այլ երկրների ներքին գործերին:

1975 թ. սեպտեմբերին ենթահանձնաժողովի 28-րդ նստաշրջանում կրկին քննարկվում է ցեղասպանության հանցագործության և պատժի հարցը: Մի քանի ներկայացուցիչներ արտահայտում են այն տեսակետը, որ տեղեկագրում պատմական հատվածը պետք է պահպանվի՝ միաժամանակ նշելով, որ իրենք ՄԱԿ-ի անկախ փորձագետներ են, այլ ոչ թե

[240] Տե՛ս The Truth about the Massacres and Deportations of the Armenian Population of the Ottoman Empire (1915-1922), p. 18.

տարբեր կառավարությունների ներկայացուցիչներ: 1978 թ. սեպտեմբերին իր 31-րդ նստաշրջանում ՄԱԿ-ի ենթահանձնաժողովը որոշում է տեղեկագրից ամբողջությամբ հանել Հայոց ցեղասպանության վերաբերյալ հիշատակող հատվածը: 1979 թ. մարտին նույն բանաձևը քննարկվում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 35-րդ նստաշրջանում, որտեղ որոշվում է վերականգնել 30-րդ ենթակետը[241]:

1968 թ. նոյեմբերի 26-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան ընդունում է «Պատերազմի հանցագործությունների և մարդկության դեմ գործած աճիրների անժամանցելիության» վերաբերյալ կոնվենցիան[242]: Ըստ դրա՝ պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործությունները չունեն վաղեմության ժամկետ և անընդունելի է, որ ոճիր իրականացվի միջազգային հանրության անդամ ազգերից մեկի նկատմամբ և առավել անընդունելի, որ այն ուրացվի[243]:

1985 թ. օգոստոսի 5-30-ը Ժնևում կայացած ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության կանխարգելման ենթահանձնաժողովի 38-րդ նստաշրջանը, որին մասնակցում էին 26 երկրների ներկայացուցիչներ, քննարկման է դնում ցեղասպանության վերաբերյալ Բենջամին Վիթաքերի պատրաստած տեղեկագիրը: Բուռն քննարկումները և տեղեկագիրն ընդունել կամ մերժելը կապված էին Հայոց ցեղասպանությունն արտացոլող 9-րդ գլխի 24-րդ

[241] Տե՛ս Բարսեղյան Լ., Միջազգային հանրությունը դատապարտում է հայոց ցեղասպանությունը, Եր., 1998, էջ 6:
[242] Տե՛ս A Crime of Silence, The Armenian Genocide (Permanent People's Tribunal), p. 234, նաև՝ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թղթապանակ 1, փաստաթուղթ 4:
[243] Տե՛ս Հայոց ցեղասպանության դատապարտումը միջազգային կազմակերպությունների կողմից (1984-1987), փաստաթղթեր, կազմ.՝ Լ. Բարսեղյան, Եր., 1999, էջ 42:

պարագրաֆի հետ[244]: Չնայած թուրքական կողմի գործադրած ջանքերին՝ օգոստոսի 29-ին ՄԱԿ-ի ենթահանձնաժողովի կողմից Վիթաքերի տեղեկագիրը ընդունվում է: Դրանում արձանագրվում է Հայոց ցեղասպանության փաստը և XX դարի սկզբին հայ ժողովրդի նկատմամբ Օսմանյան կայսրությունում իրականացված կոտորածները համարվում են ցեղասպանության օրինակ:

Դիվանագիտական և քարոզչական ճակատում տարած այս հաղթանակը արդյունք էր Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի երկարատև ու հարատև աշխատանքի: Նույն օրերին, հայազգի պրոֆեսոր Ծավարշ Թորիկյանը ՄԱԿ-ում Թուրքիայի դեսպան Յավուզալփի հետ ունեցած զրույցի ժամանակ նշել է, որ 1974 թվականից ի վեր Մարդու իրավունքների հանձնաժողովի ենթահանձնաժողովում քննարկվում է Հայոց ցեղասպանության փաստը արձանագրելու հարցը: Դրան խոչընդոտելու համար Թուրքիան գործի էր դրել իր ողջ պետական ու քարոզչական մեքենան: Ինչպես վկայում է Ծավարշ Թորիկյանը, թուրքական այս հակազդեցությանը հաջորդել էր հայկական հակազդեցությունը, որ իրականացվել էր հայկական լոբբիստական կազմակերպությունների ջանքերով[245]:

Մասնավորապես արձանագրենք, որ ենթահանձնաժողովի նիստերին ներկա է եղել և ելույթով հանդես եկել նաև «Կալիֆորնիա-Կուրիեր» թերթի խմբագիր, ամերիկահայ հասարակական-քաղաքական գործիչ Հարութ Սասունյանը: Իր ելույթում Հ. Սասունյանը ամերիկահայության անունից գոհունակություն էր հայտնել, որ ընդունվում է հենց հատուկ զեկուցող Բենջամին Վիթաքերի պատրաստած զեկույցը, որի շնորհիվ

244 Տե՛ս «Հայ դատ» ամսագիր, 1985, սեպտեմբեր, էջ 1-2:
245 Տե՛ս նույն տեղում, էջ 2:

պատմական փաստերը և արդարությունը վերջապես վեր են դասվում քաղաքական շահերից: Նա հակիրճ անդրադարձել է մինչ այդ ՄԱԿ-ի ենթահանձնաժողովում Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ իրականացված քննարկումներին և ընդունված որոշումներին, մատնանշել երիտթուրքական իշխանությունների կողմից գործադրված Հայոց ցեղասպանության փաստի անհերքելի լինելը: Եզրափակելով իր ելույթը՝ Հարութ Սասունյանը հայտարարել է. «Պատմական ճշմարտութիւնը երբէք հնարավոր չէ թաղել, անգամ շատ կառավարութիւնների վերաբերմունք է փոխվել և Միացեալ ազգերի կազմակերպութիւնում այժմ բացվում են նոր ուղիներ, որոնք միշտ կենդանի կպահեն ճշմարտութիւնն ու արդարութիւնը:Ես կցանկանայի եզրափակել իմ ելույթը պնդելով, որ ճշմարտութիւնը ցեղասպանութեան վերջին զոհն է: Եկեք պաշտպանենք այս թանկագին ճշմարտութիւնը գոնէ ՄԱԿ-ի Մարդու իրավունքերի կառոյցներում»[246]:

1985 թ. օգոստոսի 30-ի երեկոյան Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի արևմտյան բաժանմունքը Լոս Անջելեսում կազմակերպում է մամուլի ասուլիս, որի ընթացքում լրագրողներին բաժանվում են թղթածրարներ, ինչպես նաև մի հայտարարություն, որտեղ ասվում էր, որ Հայ դատի հանձնախումբը իր գոհունակությունն է հայտնում, որ ՄԱԿ-ը հայերի կոտորածները որակեց, որպես ցեղասպանություն և ապարդյուն անցան Հայոց ցեղասպանության վերաբերյալ ենթակետը տեղեկագրից ջնջելու թուրքական կառավարության ջանքերը:Միաժամանակ, Հայ դատի հանձնախումբը հայտարարության մեջ հույս էր հայտնում, որ ԱՄՆ Ներկայացուցիչների

[246] Նույն տեղում, էջ 3-4:

պալատը ևս կհաղթահարի ճշմարտությունը թաղելու թուրքական փորձերը[247]:

Այսպիսով, ԱՄՆ-ում գործող հայկական լոբբիստական կազմակերպությունների գործունեության առանցքում էր գտնվում Միավորված ազգերի կազմակերպության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը: Այս նպատակին հասնելու համար նրանք բազմաթիվ հուշագրեր և աշխատասիրություններ են ներկայացնում՝ հիմնավորելով հայ ժողովրդի ցեղասպանության փաստը՝ ձգտելով հասնել մարդու իրավունքների և ժողովրդավարության խորհրդանիշ հանդիսացող միջազգային այդ կառույցի կողմից Ցեղասպանության փաստի ճանաչմանը:

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻՑ ՀԵՏՈ (1991-2015 ԹԹ.)

## 3.1 Արցախյան հիմնախնդրի կարգավորումը և Հայաստանին տրամադրվող աջակցությունը ամերիկահայ լոբբիստական

[247] Տե´ս նույնը, 1985, նոյեմբեր, էջ 13:

**կազմակերպությունների գործունեության առանցքում**

1988 թ. փետրվարին արցախահայությունը, ոգևորված ԽՍՀՄ-ում հռչակված վերակառուցման, ժողովրդավարության և հրապարակայնության քաղաքականությամբ, ոտքի է կանգնում և պահանջում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ) դուրս բերել Ադրբեջանական ԽՍՀ կազմից և միացնել Խորհրդային Հայաստանին: Արցախահայության այս արդարացի պահանջին Խորհրդային Ադրբեջանը և ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները, ավելի ուշ՝ նաև անկախացած Ադրբեջանի հանրապետությունը հակադրում են ուժն ու բռնի քաղաքականությունը:

Արցախում և Հայաստանում կատարվող իրադարձությունները իրենց վրա են հրավիրում ամերիկահայ լոբբիստական կառույցների ուշադրությունը:

Ամերիկայի Հայկական համագումարը բազմաթիվ դիմումներ է հղում Միացյալ Նահանգների կառավարությանը՝ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ծանր վիճակի, Ադրբեջանի կողմից Հայաստանին պարտադրված շրջափակման վերաբերյալ՝ նպատակ ունենալով հօգուտ Հայաստանի և Արցախի ապահովել ԱՄՆ-ի կառավարության ուշադրությունն ու օժանդակությունը:

Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի ջանքերի շնորհիվ 1989 թ. նոյեմբերին ամերիկյան Սենատը ընդունում է թիվ 178 բանաձևը, որն ազդարարում էր Միացյալ Նահանգների աջակցությունը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի՝ խաղաղության և

արդարության հաստատելու հիմնարար իրավունքներին և ձգտումներին[248]:

Նույն թվականի նոյեմբերի 9-ին Ուոթերթաունում ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների ջանքերով կազմակերպված երեկոն նպատակ ուներ հանրությանը տեղյակ պահել Հայաստանում և Արցախում ծավալվող իրադարձությունների մասին: Ելույթ ունեցողները, մասնավորապես, անդրադառնում են Հայաստանի ու Արցախի վիճակին և ընդգծում միասնական ճակատով պայքարելու անհրաժեշտությունը՝ Հայ դատի հաղթանակին հասնելու համար[249]:

Անկախ պետականության վերականգնման գործընթացի սկիզբը հռչակած Հայաստանի համար ստեղծված ծանր պայմաններում, 1991 թ. հունվարի 15-ին, Հայ դատի հանձնախմբի և Ամերիկյան-բալթյան լիգայի մամուլի միացյալ ասուլիսում Հայ դատի հանձնախմբի ներկայացուցիչ Նորա Հովսեփյանը հանդես է գալիս հետևյալ հայտարարությամբ. «Խորհրդային Միութեան նպատակը հստակ է՝ կասեցնել հանրապետութիւնների անկախութեան ձգտումը: Մենք պահանջում ենք Միացեալ Նահանգների կառավարութիւնից, որ մարդկային իրավունքների սկզբունքների եւ արդարութեան համաձայն՝ հստակ դիրքորոշում որդեգրեն խորհրդային կառավարութեան այս քաղաքականութեան դեմ: ԱՄՆ-ն երբեք չպետք է թույլ տա խորհրդային այս քաղաքականութեան յաջողութիւնը: Այս առիթով մենք կոչ ենք ուղղել նախագահ Բուշին, որպեսզի կանխի ԽՍՀՄ-ի հետ բոլոր տնտեսական համաձայնագրերը»[250]:

---

248 Տե՛ս The U.S. Government Has Consistently Taken Steps in Support of Nagorno Karabakh, https://anca.org/nagorno-karabakh-overview-2/

249 Տե՛ս «Զարթոնք» օրաթերթ, 6 դեկտեմբերի, 1989:

250 «Հայրենիք» օրաթերթ, 17 հունվարի, 1991:

Արցախյան շարժումը 1991 թվականից վերածվում է լայնամասշտաբ պատերազմի և շարունակվում մինչև 1994 թվականը: Դա ստիպում է ԱՄՆ-ի հայկական լոբբիստական կազմակերպություններին հստակ միջոցառումներ ձեռնարկել և ամերիկյան կառավարության ուշադրությունը հրավիրել հիմնահարցի վրա:

Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի ջանքերի շնորհիվ 1991 թ. մայիսին, երեք օրվա ընթացքում, 30 կոնգրեսականներ ստորագրում են հատուկ նամակներ, որոնցում դատապարտում էին խորհրդային և ադրբեջանական զինյալ ուժերի կողմից Գետաշենի և Մարտունաշենի գրավումը: Կոնգրեսականներ Դեյվիդ Դրայրի և Մրվին Դայմլի կողմից կազմված այդ նամակներն ուղղված էին ԱՄՆ և ԽՍՀՄ նախագահներին:

ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովին ուղղված նամակում կոնգրեսականները պահանջում էին վերջ տալ վայրագություններին և զգուշացնում, որ պետական հովանավորությամբ իրականացվող նման քայլերը կարող են վտանգել Խորհրդային Միության համար նախատեսվող տնտեսական աջակցության ծրագրերը:

Նախագահ Ջորջ Բուշին ուղղված նամակով, կոնգրեսականները խնդրում էին դատապարտել Հայաստանում գործադրված վայրագությունները, նաև առաջարկում, որ ԱՄՆ նախագահը հրաժարվի խորհրդային իր պաշտոնակցի հետ խորհրդաժողով գումարելուց, մինչև Միխայիլ Գորբաչովը վերջ չդնի այդ գործունեությանը և խորհրդային բանակն ու ազերի զինյալներին չհեռացնի նշված շրջաններից:

Այս նամակներին զուգահեռ, կոնգրեսականներ Դ. Դրայրը և Մ. Դայմլը Ներկայացուցիչների պալատում աշխատանք են տանում, որպեսզի

ընդունվի բանաձև, ըստ որի Խորհրդային Միության համար սահմանված օժանդակությունը ուղղակի հատկացվի հանրապետություններին, այնքան ժամանակ, քանի դեռ Մոսկվան հակադարձում է ժողովրդավարության և անկախության ձգտող երկրների ջանքերին[251]:

Նույն 1991 թ. մայիսին, դարձյալ Հայ դատի հանձնախմբի ջանքերով, ԱՄՆ Սենատն ընդունում է թիվ 128 բանաձևը, որտեղ նշվում էր. «Խորհրդային և ադրբեջանական զինված ուժերն ավերել են հայկական գյուղերը և ամայացրել Լեռնային Ղարաբաղում ու նրա շուրջ գտնվող հայկական տարածքները՝ խախտելով միջազգայնորեն ընդունված և ճանաչված մարդու իրավունքների դրույթները»[252]: Բանաձևը միաժամանակ կոչ էր անում դադարեցնել շրջափակումը և ռազմական տարաբնույթ գործողությունները Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ:

Այսպիսով, հայկական լոբբիստական կառույցներն իրենց գործունեության կարևոր առաջնահերթություններից մեկն են դարձնում նաև Արցախյան հիմնահարցը՝ իբրև Հայ դատի բաղադրիչներից մեկը:

Կարող ենք արձանագրել, որ 1991 թ. ԽՍՀՄ փլուզումը, Հայաստանի անկախության վերականգնումը և Արցախյան հիմնահարցի բարձրացումը նոր փուլ են սկզբնավորում ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների գործունեության մեջ: Եթե մինչ այդ ամերիկահայ լոբբին իր գործունեությամբ ձգտում էր հասնել ամերիկյան

---

[251] Տե՛ս նույնը, 15 մայիսի, 1991:

[252] The U.S. Government Has Consistently Taken Steps in Support of Nagorno Karabakh, https://anca.org/nagorno-karabakh-overview-2/

իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը, ապա Հայաստանի անկախության հռչակումից հետո, Կովկասյան տարածաշրջանում ձևավորված աշխարհաքաղաքական նոր իրադրության պայմաններում ընդլայնում է իր գործունեության շրջանակը՝ ներառելով հայկական շահերին առնչվող այլ հիմնահարցեր ևս: Դրանք են՝ Արցախյան հիմնախնդրի կարգավորման գործում Ամերիկայի հայանպաստ դիրքորոշման որդեգրում, Հայաստանին ու Արցախին տրամադրվող ամերիկյան օժանդակության ապահովում, ինչպես նաև ԱՄՆ-Հայաստան,ԱՄՆ-Արցախ կապերի ընդլայնում:

Այսպես, մինչև Արցախյան շարժման սկզբնավորումը, Հայ դատի ամերիկյան հանձնախումբն իր գործունեությունը կենտրոնացրել էր երկու՝ ներքին և արտաքին ուղղություններով. ներքին ուղղությունը հայ համայնքի ազգապահպանումն էր Միացյալ Նահանգներում, արտաքին ուղղությունը՝ Թուրքիայի կողմից իրականացված ցեղասպանության ճանաչման խնդիրը:

Հայաստանի անկախության վերականգնումից հետո Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի գործունեության մեջ Հայոց ցեղասպանության ճանաչման, Արցախյան հիմնահարցի արդարացի կարգավորման,Հայաստանին և Արցախին տրամադրվող օգնության և հայ-ամերիկյան հարաբերությունների զարգացման խնդիրների հետ մեկտեղ սկսեց կարևորվել նաև անկախ պետականության կողքին ամերիկահայ համայնքի հզորացման անհրաժեշտությունը՝ առաջ քաշելով «Մեկ ազգ,մեկ հայրենիք,մեկ պայքար»կարգախոսը[253]:

[253] Տե՛ս Արիսեան Ն.,Դաշնակցութեան գործունէութիւնը Սփիւռքի մէջ, //«Հայ Յեղափոխական Դաշնակցության հիմնադրման 115և 120-

Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի նպատակները շարադրված են հետևյալ կերպ.

-բարձրացնել հասարակության իրազեկվածության մակարդակը հօգուտ ազատ, միավորված և անկախ Հայաստանի,

-ազդել ԱՄՆ-ի քաղաքականության վրա և ուղղորդել այն հօգուտ ամերիկահայ համայնքի շահերի,

-ներկայացնել ամերիկահայության կարծիքը պետական քաղաքականության հարցերի վերաբերյալ՝ դառնալով կապող միջոց ամերիկահայ համայնքի և նրա կողմից ընտրված իշխանությունների միջև:

Ամերիկայի Հայկական համագումարը ևս Հայաստանի անկախության հռչակումից հետո ընդլայնում է իր գործունեության շրջանակները՝ հիմնականում հետապնդելով հետևյալ նպատակները՝ ամերիկյան Կոնգրեսում հայանպաստ բանաձևերի ընդունում, տնտեսական օգնության ապահովում Հայաստանին և Արցախին, Արցախյան հիմնախնդրի կարգավորման շուրջ հայանպաստ դիրքորոշման ապահովում և Հայոց ցեղասպանության ճանաչում:

Այսպես, ԱՀՀ-ի հիմնական առաքելությունը ձևակերպված է հետևյալ կերպ.

-պահպանել և ամրապնդել կազմակերպությունը՝ որպես հայ համայնքի առաջատար անկուսակցական մարմին, որը ներկայացնում է ամերիկահայության շահերը ԱՄՆ-ի պետական և քաղաքականաստեղծ հանրությանը,

-ընդլայնել իր կազմում ընդգրկված կառույցների նորարարական, հետազոտական, կրթական ու քարոզչական արշավները Հայոց

---

ամյակներին նվիրված գիտաժողովների նյութեր», Եր., 2011, էջ 165-166:

ցեղասպանության համընդհանուր ճանաչման համար և ապահովել Սփյուռքի համընդհանուր աջակցությունը ՀՀ կառավարությանը, որպեսզի վերջինս կարողանա հաղթահարել ցեղասպանության հետևանքները,

-նպաստել ԱՄՆ-Հայաստան և ԱՄՆ-Արցախ հարաբերություններին՝ հիմնված ժողովրդավարության, օրենքի գերակայության, ազատ շուկաների տարածաշրջանային անվտանգության ու ազատ առևտրի ընդհանուր տեսլականի վրա և խորացնել այդ հարաբերությունները[254]:

Հայաստանի անկախության հռչակումից հետո և՛ Հայ դատի հանձնախմբի, և՛ Ամերիկայի Հայկական համագումարի գործունեության առաջնահերթություններից է դառնում նաև նորանկախ հանրապետության համար Միացյալ Նահանգների ֆինանսական և տեխնիկական օգնության ապահովումը:Այդ գործընթացը սկսվում է դեռևս 1988թ.դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժից հետո:

Երկրաշարժից տուժած Հայաստանին սատար կանգնելու նպատակով,միաժամանակ ԱՀՀ-ն հիմնում է օգնության հիմնադրամ, որը մինչև 1989 թ. դեկտեմբերի 31-ը հանգանակում է 4 միլիոն դոլար: Մեծ դժվարություններ հաղթահարելով՝ Ամերիկայի Հայկական համագումարին հաջողվում է 1989թ.փետրվարին Երևանում բացել գրասենյակ[255]:

1989 թ. նոյեմբերի 9-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատը և Սենատը համատեղ ժողով են գումարում՝

---

[254] Տե՛ս Քոչիկյան Ա., Հայկական լոբբինգային խմբերի ծագումն ու զարգացումը Ամերիկայի Միացյալ Նահանգներում.քննական ակնարկ, //«ԱՄՆ-ի հայկական լոբբինգային կառույցների գործունեությունը ՀՀ ազգային անվտանգության ռազմավարական շահերի տեսանկյունից, Աշխատանքային տետրեր»,Եր., 2010, թիվ 1-2, էջ 19-20:

[255] Տե՛ս Պետրոսյան Ք., Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1988-2001թթ., Եր., 2011, էջ 30:

քննարկելու օտարերկրյա օգնության օրինագծի վերջնական տարբերակը, որի համաձայն Հայաստանին պետք է տրամադրվեր 5 միլիոն դոլար՝ վերաշինության ծրագրերի համար:

Նախագահ Ջորջ Բուշի վարչակազմը նեցուկ է կանգնում այս որոշմանը և համաձայնվում մինչև 1990 թվականի սեպտեմբերի 30-ը 5 միլիոն դոլար տրամադրել վերականգնման աշխատանքների համար: Օրինագծի համաձայն, գումարը հատկացվելու էր ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ղեկավարվող Տնտեսական աջակցության հիմնադրամին, որը պետք է օգտագործվեր բնակարանաշինության, մարդասիրական, բժշկական և կրթական ծրագրերի համար[256]:

Բացի երկրաշարժից տուժածներին օգնություն տրամադրելու հարցից, ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունները իրականացնում էին մեծ աշխատանք նաև նահանգային մակարդակով, որպեսզի նորանկախ հանրապետության համար ապահովեն օգնություն, մանավանդ, որ վերջինս շրջափակման մեջ էր գտնվում Թուրքիայի և Ադրբեջանի կողմից:

Ամերիկայի Հայկական համագումարի հրավերով և ջանքերով 1991 թ. նոյեմբերի 14-ին Վաշինգտոնում նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի և Ջորջ Բուշի միջև կայացած հանդիպման ընթացքում Բուշը հավաստիացնում է, որ Միացյալ Նահանգները կօժանդակեն Հայաստանում անցկացվող քաղաքական ու տնտեսական բարեփոխումներին: Միաժամանակ քննարկվում են նաև Հայաստանին տրամադրվող օգնության և ամերիկյան հնարավոր ներդրումների հարցերը[257]:

Ընդ որում, եթե ԱՄՆ-ի կողմից տրամադրվող մարդասիրական օգնությունը 1992-1995 թթ. նպատակ

---

256 Տե՛ս «Զարթոնք» օրաթերթ, 15 դեկտեմբերի, 1989:

257 Տե՛ս Մսըրլեան Զ., Ամերիկայի Միացյալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական հարցը (1900-2009), էջ 90:

ուներ բնակչությանը ապահովել պարենով, նավթով, դեղորայքով և հագուստով, ապա հետագա տարիներին ավելի շատ միջոցներ հատկացվել են զարգացման ծրագրերին, ժողովրդավարական ու տնտեսական բարեփոխումներին և մասնավոր հատվածի զարգացմանը[258]:

1991 թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցած պատգամավորների մարզային և Շահումյանի շրջանային խորհրդի համատեղ նստաշրջանը ընդունում է «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին»: Նույն թվականի դեկտեմբերի 10-ին տեղի ունեցած հանրաքվեով հաստատվում է Արցախի անկախությունը, իսկ 1992 թ. հունվարի 6-ին Արցախի նորընտիր Գերագույն խորհուրդը, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, պաշտոնապես հայտարարում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության մասին:

Արցախյան հիմնախնդրի միջազգայնացումը, այսպիսով, սկսվում է միայն 1991 թվականի վերջից՝ ԽՍՀՄ փլուզումով՝ ներգրավելով տարբեր երկրների և միջազգային կառույցների: Այս հարցում ԱՄՆ-ն ևս կրավորական դիտորդի դերում չի եղել: Հիմնախնդրի կարգավորման գործում նման գերտերության դերակատարությունը, անշուշտ, շատ կարևոր է: ԱՄՆ-ն ունի հսկայական հեղինակություն՝ հիմնախնդրի լուծման վրա ազդելու ուղղակիորեն կամ միջնորդավորված՝ 1992 թ. ստեղծված ԵԱՀԿ Մինսկի խմբի միջոցով, որտեղ Ռուսաստանի և Ֆրանսիայի հետ մեկտեղ նա հանդիսանում է համանախագահ երկիր: ԱՄՆ-ն պնդում է, որ ինքը կողմնակից է խնդրի քաղաքական, առանց ռազմական ուժի կիրառման ճանապարհով լուծմանը՝

258 Տե՛ս Ամերիկայի Միացյալ Նահանգների օգնությունը Հայաստանին, էջ 15:

միաժամանակ հաշվի առնելով նաև ազգային շահերը[259]:

Հետևաբար և՛ Հայ դատի ամերիկյան հանձնախմբի, և՛ Ամերիկայի Հայկական համագումարի լոբբիստական գործունեության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում Միացյալ Նահանգների կողմից Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչման և Հայաստանին ու Արցախին տրամադրվող օգնության ծավալների ընդլայնման հարցերը:

Հայ դատի ամերիկյան հանձնախումբը, թերևս ավելի ակտիվ է ներգրավված Արցախյան հիմնահարցը ամերիկյան քաղաքական շրջանակներում ներկայացնելու գործում: Հանձնախմբի անդամներից Ծարիստան Արդհալչյանը նշում էր. «Ցանկացած ուժ, որը կմերժի արցախահայության ինքնորոշման իրավունքը, որևէ մեկը, որ կցանկանա տեսնել Արցախը որպես Ադրբեջանի մաս, չի կարող համարվել ազնիվ, քանզի դա կնշանակի պատմության անտեսում, ագրեսիայի և մարդու իրավունքների ոտնահարման խրախուսում, անհատների և խմբերի ազատ լինելու իրավունքի մերժում»[260]:

1992 թ. հուլիսի 1-ին Հայ դատի ամերիկյան հանձնախմբի, Ամերիկայի Հայկական համագումարի, Հայ բարեգործական ընդհանուր միության և Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցության ներկայացուցիչները Սպիտակ Տանը հանդիպում են նախագահ Ջորջ Բուշի վարչակարգի բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Հանդիպման առիթ էր դարձել ամերիկյան պետքարտուղարության նախկին պաշտոնյա Պոլ Գոբլի այն ծրագիրը, ըստ որի Զանգեզուրը պետք է հանձնվեր Ադրբեջանին, իսկ Արցախը՝ Հայաստանին:

---

[259] Տե՛ս Hovhannisyan N., The Karabakh Problem: The Thorny Road to Freedom and Independence, Yerevan, 2004, p. 75-76.
[260] Gregg H. S., նշվ. աշխ., էջ 14:

Հանդիպման ընթացքում ամերիկացի պաշտոնյաները հավաստիացնում են, որ քանի որ Գոբլը այլևս պետական պաշտոնյա չէ, նրա առաջարկած ծրագիրը լոկ նրա անձնական տեսակետն է: Նրանք միաժամանակ հայտնում էին, որ ԱՄՆ-ն ամեն ինչ անում է, որպեսզի Թուրքիան Կովկասում ունենա կարգավորող ուժի դերակատարություն՝ նշելով, որ իրենց ուղղակի ազդեցությունը Ադրբեջանի վրա թույլ է և դաիրականացվում է հենց Թուրքիայի միջոցով: Ամերիկյան պաշտոնյաները նաև նշում էին, որ ԱՄՆ-ն միշտ հիշեցնում է Թուրքիային և հավաստիքներ է ստացել վերջինից, որ նա Հայաստանի նկատմամբ ծավալապաշտական քայլեր չպետք է իրականացնի:

Ամերիկահայ կազմակերպությունների ներկայացուցիչները, միաժամանակ, դժգոհություն էին հայտնում, որ ԱՄՆ-ն Արցախյան հիմնախնդրում առաջնորդվում է տարածքային ամբողջականության, և ոչ թե ազգերի ինքնորոշման սկզբունքով[261]:

Ինչո՞վ էր բացատրվում նախագահ Ջորջ Բուշի վարչակազմի՝ հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներին ընդունելու և Արցախյան հիմնախնդրի շուրջ նրանց հարցադրումները քննարկելու պատրաստակամությունը: Բանն այն է, որ Միացյալ Նահանգներում շուտով պետք է մեկնարկեր նախագահական հերթական ընտրարշավը, որի թեկնածուներից մեկը հենց հանրապետական կուսակցության ներկայացուցիչ Ջորջ Բուշն էր: Թերևս գաղտնիք չէ, որ հայության թիվը նշանակալից է ԱՄՆ-ում, իսկ հայկական լոբբին էլ՝ բավականին ազդեցիկ ընտրությունների ժամանակ: Հետևաբար, նախագահի յուրաքանչյուր թեկնածու ցանկանում էր ստանալ հայության համակրանքը և

---

[261] Տե՛ս «Ազդակ» օրաթերթ, 16 յուլիսի, 1992:

աջակցությունն ընտրությունների ժամանակ: Այս իմաստով Ջորջ Բուշը ևս բացառություն չէր:

Հայ համայնքի աջակցությունը փորձում էր ստանալ նաև մյուս թեկնածուն՝ դեմոկրատ Բիլ Քլինթոնը: Վերջինս 1992 թ. օգոստոսի 13-ի իր նախընտրական ելույթում արեց հետևյալ հայտարարությունը. «1915 թ. Ցեղասպանութիւնը, 1988 թ. ավերիչ երկրաշարժը մեծ տանջանքներ բերեց Հայաստանին: Հայ ժողովուրդը, սակայն, ոչ միայն հերոսաբար դիմադրեց այս ամենին, այլ նաեւ վերականգնեց իր ազատ եւ անկախ պետականութիւնը: Միացեալ Նահանգներում ապրող մեկ միլիոնից ավելի հայերը այստեղ են բերել հարուստ մշակոյթ, որը շատ օգտակար է եղել մեր երկրի համար:

Խորապես մտահոգ եմ Հայաստանի տարածքում շարունակուող բռնութեամբ: Ադրբեջանական զինված ուժերը վերջին մարտերի ընթացքում մեծ առաջխաղացում են ունեցել: Կոչ եմ անում ԱՄՆ-ի կառավարութեանը՝ դատապարտելու այս վերջին յարձակումը եւ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի ժողովրդի համար կատարուող մարդասիրական օգնութեան դէմ շարունակուող շրջափակումը»[262]:

Ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների հաջողության ակնառու և հզոր ապացույց է «Ազատության աջակցության օրենք»-ի 907-րդ բանաձևի ընդունումը և պահպանումը:

«Ազատության աջակցության օրենք»-ը, որը նպատակ ուներ ապահովել Միացյալ Նահանգների ֆինանսական և հումանիտար աջակցությունը նախկին խորհրդային հանրապետություններին, Ներկայացուցիչների պալատում ընդունվելուց հետո վերջնական հաստատման է ուղարկվում Սենատ, որտեղ էլ անցկացվող լսումների շրջանակում, 1992 թ. հուլիսի 2-ին սենատորներ Ռոբերտ Դոուլը և Ջոն

[262] Նույնը, 27 օգոստոսի, 1992:

Քերրին առաջարկում են «Ազատության աջակցության օրենք»-ում մտցնել 907-րդ բանաձևը, որը կարգելեր ԱՄՆ-ի կողմից Ադրբեջանին տրամադրվող ֆինանսական և հումանիտար օգնությունը, քանի դեռ վերջինս շարունակում է շրջափակել Հայաստանը և իրականացնում է ռազմական գործողություններ Հայաստանի և Արցախի նկատմամբ:

Բանաձևը հաջողությամբ ընդունվում է ոչ միայն Ներկայացուցիչների պալատում, այլ նաև Սենատում, որից հետո նախագահ Ջորջ Բուշը 1992 թ. հոկտեմբերի 24-ին ստորագրում է «Ազատության աջակցության օրենք»-ը: Ջ. Բուշը նշում էր, որ օրենքը նպատակ ունի աջակցել Ռուսաստանում, Ուկրաինայում, Հայաստանում և նախկին խորհրդային հանրապետություններում ազատ շուկայական հարաբերությունների ձևավորմանը և ժողովրդավարական բարեփոխումների իրականացմանը[263]:

907-րդ բանաձևը ամերիկահայ լոբբիի փայլուն հաղթանակն էր, որը Ադրբեջանին զրկեց ԱՄՆ-ի կողմից տրամադրվող օժանդակությունից նրա անկախության առաջին տասնամյակի ընթացքում (1992-2002), այն դեպքում, երբ այդ տարիներին «Ազատության աջակցության ակտ»-ով Հայաստանին տրամադրվող օժանդակությունը կազմեց շուրջ 773 մլն ամերիկյան դոլար[264]:

Բանաձևը, փաստորեն Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից իրականացվող ՀՀ տնտեսական և քաղաքական շրջափակմանը հակազդելու քաղաքական ուղեգիծ էր:

1993 թ. դեկտեմբերի 17-ին Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի ներկայացուցիչները հանդիպում են նորընտիր նախագահ Բիլ Քլինթոնի վարչակարգի մի

263 Տե՛ս The Armenian Job: The Role of the Armenian Lobby in the Pattern of Enmity in South Caucasus, p. 24.
264 Տե՛ս Միացյալ Նահանգների օգնությունը Հայաստանին. նվիրումի և համագործակցության տասնամյակ, էջ 14:

քանի անդամների հետ և պահանջում նրանց միջնորդությունը, որպեսզի Թուրքիան չխոչընդոտի դեպի Հայաստան ու Արցախ մարդասիրական օգնության ուղարկումը[265]։

Հայկական լոբբիստական կազմակերպությունները ամբողջ 1993 թ. ընթացքում պարբերաբար հանդիպումներ են ունենում ամերիկյան պետքարտուղարության ներկայացուցիչների, տարբեր սենատորների ու քաղաքական գործիչների հետ։ Այս հանդիպումների արդյունքում էր, որ 1994 թ. մարտի 31-ին, երբ դեռևս շարունակվում էին ռազմական գործողությունները Արցախում և զինադադարը չէր կնքվել, 29 սենատորներ կոչով դիմում են նախագահ Բիլ Քլինթոնին, որպեսզի նա քայլեր ձեռնարկի Լեռնային Ղարաբաղի հակամարտության՝ խաղաղ ճանապարհով լուծման համար։

Սենատոր Էդվարդ Քենեդին, ով նախագահին կոչ-նամակով դիմելու նախաձեռնողն էր, նշում էր, որ Միացյալ Նահանգների անմիջական նպատակը պետք է լինի Հայաստանի նկատմամբ իրականացվող շրջափակման վերացումը և մարդասիրական օգնության առաքման հեշտացումը[266]։

1994 թ. օգոստոսի 8-ին ամերիկահայ համայնքը ներկայացնող տարբեր կազմակերպությունների 18 ներկայացուցիչներ հանդիպում են նախագահ Բիլ Քլինթոնի հետ, որի ընթացքում մի շարք հարցերի հետ մեկտեղ քննարկվում է նաև Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակման և Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցը։ Հայ ներկայացուցիչները խնդրում են, որպեսզի նախագահը հրապարակայնորեն դատապարտի Հայաստանի շրջափակումը և ճնշում գործադրի

---

[265] Տե՛ս «Ազդակ» օրաթերթ, 22 դեկտեմբերի, 1992։
[266] Տե՛ս «Զարթոնք» օրաթերթ, 2 ապրիլի, 1994։

Թուրքիայի վրա՝ առաջնորդվելով կոնգրեսական Ռիչարդ Լիմնի՝ Ներկայացուցիչների պալատում ներկայացրած այն օրինագծով, ըստ որի այն երկրները, որոնք ստանում են ամերիկյան օժանդակություն, պետք է իրենց տարածքով թույլ տան երրորդ երկրի համար նախատեսված ամերիկյան օգնության առաքումը[267]:

Ամերիկահայ լոբբիի լուրջ ձեռքբերումներից էր «Հումանիտար օգնության միջանցք ակտ»-ի ընդունումը թե՛ Ներկայացուցիչների պալատի, և թե՛ Սենատի կողմից, որով դադարեցվում է ԱՄՆ-ի կողմից Թուրքիային տրամադրվող օժանդակությունը, քանի որ վերջինս շարունակում էր շրջափակման մեջ պահել Հայաստանը:

1995 թ. հունվարի 13-ին մի խումբ սենատորներ՝ Ռոբերտ Դոուլի գլխավորությամբ, Սենատ են ներկայացնում թիվ 230 բանաձևը, որով արգելվում էր Միացյալ Նահանգների օգնությունը այն երկրներին, որոնք արգելում կամ սահմանափակում են ԱՄՆ-ի հումանիտար օժանդակության փոխադրումը կամ մատակարարումը[268]:

Նույն բովանդակությունն ուներ 1995 թ. փետրվարի 14-ին Ներկայացուցիչների պալատի անդամ Սմիթի կողմից ներկայացված թիվ 942 բանաձևը[269]: Իր ելույթում Սմիթը նշում էր, որ այս օրինագծերի ընդունումը կարևոր ազդանշան է լինելու պաշտոնական Անկարային, որպեսզի նա հասկանա, որ ցամաքային և օդային սահմանները պետք է բաց լինեն Միացյալ Նահանգների հումանիտար օժանդակության առաքման համար[270]:

---

[267] Տե՛ս «Ազդակ» օրաթերթ, 5 սեպտեմբերի, 1994:
[268] Տե՛ս S. 230, To Prohibit United States Assistance to Countries that Prohibit or Restrict the Transport or Delivery of United States Humanitarian Assistance, https://www.congress.gov/104/bills/s230/BILLS-104s230is.pdf
[269] Տե՛ս H. R. 942, To Prohibit United States Assistance to Countries that Prohibit or Restrict the Transport or Delivery of United States Humanitarian Assistance, https://www.congress.gov/104/bills/hr942/BILLS-104hr942ih.pdf
[270] Տե՛ս «Asbarez» Daily, May 16, 1995.

1995 թ. փետրվարի 14-ին նույն հարցի քննարկման ժամանակ Կանզաս նահանգից սենատոր, Սենատում հանրապետական խմբակցության ղեկավար Ռոբերտ Դոուլը իր ելույթում նշում էր. «Միացյալ Նահանգների կողմից Հայաստանին տրամադրվող օգնությունը քիչ արդյունավետ և թանկ է Թուրքիայի կողմից իրականացվող շրջափակման պատճառով:Ավելին,հայերի սովը և քաղցը արդյունք են թուրքական կառավարության կողմից իրականացվող գործողությունների»[271]:

Ներկայացված բանաձևը Ներկայացուցիչների պալատում հաստատվում է 1995 թ. հունիսի 29-ին, իսկ Սենատում՝ նույն թվականի սեպտեմբերի 21-ին: Նախագահ Բիլ Քլինթոնը օրենքը ստորագրում է 1996 թ. հունվարի 26-ին:

Թեև ընդունված բանաձևում չէր նշվում Թուրքիա բառը, և չէր ակնարկվում վերջինիս կողմից Հայաստանի շրջափակումը, այնուհանդերձ, պարզ էր, որ այն վերաբերում էր հենց Թուրքիային: Դրանով կասեցվում է ամերիկյան օժանդակության առաքումը Թուրքիա:

Ներկայացուցիչների պալատը, հաղթահարելով թուրքական լոբբիի և պաշտոնական Վաշինգտոնի ճնշումները, կարողանում է ոչ միայն ընդունել Թուրքիային տրամադրվող օգնության չափերը նվազեցնող բանաձև, այլև հաջողության է հասնում 907-րդ բանաձևը պահպանելու հարցում:

Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի Վաշինգտոնի գրասենյակը այս կապակցությամբ նշում էր, որ բանաձևերը կարևոր նշանակություն ունեին ամերիկահայ համայնքի համար և որ այդ ամենին հասնելու համար հսկայական աշխատանք էր իրականացվել: Հանձնախումբը, մասնավորապես

[271] Humanitarian Aid Corridor Act, Statement of Senate Majority Leader Bob Dole, February 14, 1995, http://dolearchivecollections.ku.edu/collections/press_releases/s-press_038_008_010.pdf

դիմել էր հայկական բոլոր կազմակերպություններին, եկեղեցիներին, քաղաքական գործիչներին ու համակիրներին, որպեսզի օժանդակեն իրենց ջանքերին: Հայ դատի հանձնախումբը միաժամանակ դիմել է կոնգրեսականներին՝ խնդրելով աջակցել և քվեարկել բանաձևերի ընդունման օգտին:

Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը բանաձևերի ընդունման կապակցությամբ նշում էր.«Ուրախենք,որ Կոնգրեսը հավատարիմ մնաց 1992 թ. ընդունված որոշմանը,որը պարտադրում է Ադրբեջանին հրաժարվել Արցախի հարցի ռազմական ճանապարհով լուծումից:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա Ներկայացուցիչների պալատը արդարորեն վերահաստատեց, որ պետք չէ օժանդակություն տրամադրել մի երկրի,որը բացահայտորեն խախտում է Կոնգրեսի կողմից հաստատված պայմանները եւ շարունակում է ոտնահարել մարդկային իրավունքները: Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը հպարտ է, որ կարողացել է իր ներդրումը ունենալ այս կենսական բանաձեւերի ընդունման գործում»[272]:

Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի ներկայացուցիչները նույն թվականի մարտի 26-ին հանդիպում են Ռոբերտ Դոուլի հետ և շնորհակալություն հայտնում նրա ունեցած հայանպաստ դիրքորոշման ու Թուրքիային տրամադրվող օգնության կասեցման գործում նրա ունեցած հսկայական դերակատարության և մեծ ավանդի համար[273]:

1996 թ. դեկտեմբերի 3-ին Լիսաբոնում տեղի է ունենում ԵԱՀԿ-ի գագաթնաժողով,որի նպատակն էր

---

272 «Ասպարեզ» օրաթերթ, 1 յուլիսի, 1995:
273 Տե՛ս «Ազդակ» օրաթերթ, 30 մարտի, 1996:

Ղարաբաղյան բանակցությունները դուրս բերել փակուղուց: Բայց գագաթնաժողովի գործող նախագահի հայտարարությունը, որով վերահաստատվում էր Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը և նախատեսվում ԼՂ-ին ամենաբարձր կարգավիճակի շնորհում Ադրբեջանի սահմաններում, ավելի է խորացնում բանակցային գործընթացում առկա ճգնաժամը: Գագաթնաժողովից հետո ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունները, ԵԱՀԿ դիրքորոշման հետ կապված, բողոքագիր են ուղարկում վերընտրված նախագահ Բիլ Քլինթոնին՝ քննադատելով, որ գագաթնաժողովի մասնակից երկրները, այդ թվում ԱՄՆ-ն, ճանաչում էին Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքը, անտեսում ԼՂ ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքը՝ առաջարկելով վերջինիս տրամադրել ինքնավարության բարձր մակարդակ Ադրբեջանի կազմում[274]:

Ամերիկահայությանն ուղղված իր պատասխան նամակում Քլինթոնը հայտնում էր, որ ԱՄՆ-ն զորավիգ է Լիսաբոնի գագաթնաժողովի նախագահի հայտարարած հետևյալ երեք սկզբունքներին, այն է Հայաստանի և Ադրբեջանի տարածքային ամբողջականության հարգում, ԼՂ-ին ամենաբարձր ինքնավարության տրամադրում և նրա բնակչության անվտանգության ապահովում[275]:

1997 թ. նոյեմբերի 12-ին Ամերիկայի Հայկական համագումարի ջանքերով հնարավոր է դառնում Վաշինգտոնում հիմնել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչություն Ամերիկայի Միացյալ

---

274 Տե՛ս Nagorno Karabakh, A White Paper, p. 21.

275 Տե՛ս Մսըրլեան Զ., Ամերիկայի Միացյալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական հարցը (1900-2009), էջ 109:

Նահանգներում», որը ներկայացնում և պաշտպանում է ԼՂՀ կառավարության և ժողովրդի շահերը քաղաքական, տնտեսական, հումանիտար և մշակութային ոլորտներում[276]:

Ներկայացուցչությունը ակտիվորեն ներգրավվում է ամերիկյան պետական կառույցների, այդ թվում Կոնգրեսի և պետքարտուղարության հետ կառուցողական հարաբերություններում: Նրա առկայությունը հնարավորություն է տալիս բարձրացնել ԼՂ հակամարտության վերաբերյալ հանրային տեղեկացվածությունը ԱՄՆ-ում, ինչպես նաև հասնել ԼՂ անկախության ճանաչմանը:

Գրասենյակը կամ Ներկայացուցչությունը հրատարակում է նաև «Արցախյան Տեղեկագիր»-ը, որը ամերիկյան կառավարական շրջաններին, Վաշինգտոնում գտնվող այլ երկրների դեսպանատներին, միջազգային կառույցներին և ընդհանրապես ամերիկյան հանրությանը իրազեկում է Արցախում տեղի ունեցող քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացումներին: Այն միաժամանակ օժանդակում է ամերիկյան և արցախյան կազմակերպությունների ու անհատների միջև կապերի հաստատմանը, խրախուսում Արցախում կատարվող օտարերկրյա ներդրումները:

Հաշվի առնելով միջազգային ասպարեզում Միացյալ Նահանգների ունեցած առաջատար դերակատարությունը` Արցախի Հանրապետությունն ու ամերիկահայ լոբբին մեծապես կարևորում են Արցախի պաշտոնական ներկայության ապահովումը և ակտիվ գործունեությանը այս երկրում:

Գրասենյակը ներկայացնում է Արցախի կառուցողական դիրքորոշումը հակամարտության

276 Տե՛ս Introduction to the Office of the Nagorno Karabakh Republic in the United States of America, http://www.nkrusa.org/nkr_office/nkr_office.shtml

շուրջ ընթացող բանակցային գործընթացում՝ ձգտելով ընդլայնել հանրային տեղեկացվածության աստիճանը հայկական կողմի որդեգրած՝ հարցը խաղաղ ճանապարհով լուծելու դիրքորոշման վերաբերյալ:

Նախկին սենատոր Աբրահամ Սպենսերը, ով հետագայում զբաղեցնում էր նախագահ Բուշ Կրտսերի՝ էներգետիկ հարցերով քարտուղարի պաշտոնը, 1999 թ. Սենատում ունեցած ելույթի ժամանակ հանդես է գալիս 907-րդ բանաձևի պաշտպանությամբ և նշում հետևյալը. «Սա այս դարաշրջանում առաջին անգամը չէ, երբ հայ ժողովուրդը դառնում է ռազմական գործողությունների զոհ, ինչը ուղղակիորեն անընդունելի է: Միացյալ Նահանգների կառավարությունը իրականացրեց շատ ճիշտ քայլ՝ ընդունելով 907-րդ բանաձևը, որով մենք արտահայտեցինք մեր համակրանքն ու աջակցությունը հայ ժողովրդին: Թերևս մեր կողմից կոպիտ սխալ կլինի, եթե մենք փոխենք մեր դիրքորոշումը և ուժը կորցրած ճանաչենք 907-րդ բանաձևը»[277]:

Աբրահամ Սպենսերի հայանպաստ դիրքորոշումը, անշուշտ, պայմանավորված էր նրա՝ Միչիգան նահանգից լինելու հանգամանքով: Այդ նահանգը հայության թվաքանակով ԱՄՆ-ում զբաղեցնում էր չորրորդ տեղը՝ Կալիֆորնիայից, Ռոդ Այլենդից և Մասսաչուսեթսից հետո:

Ե՛վ Հայ դատի ամերիկյան հանձնախումբը, և՛ Ամերիկայի Հայկական համագումարը հսկայական դերակատարություն են ունեցել թե՛ 907-րդ բանաձևի ընդունման, և՛ թե այն պահպանելու գործում: Երկու կառույցներն էլ կիրառում էին գրեթե նույն ռազմավարությունը և մեթոդները, այն է՝

---

[277] King D., Pomper M., նշվ. աշխ., էջ 11:

կոնգրեսական աջակցության ապահովում, ինչպես նաև բանաձևը պաշտպանող նամակների և գրությունների ուղարկում ամերիկյան պետական ու քաղաքական գործիչներին:

Ուշագրավ է, որ նախագահ Բուշ Ավագին հաջորդող Բիլ Քլինթոնը և նրա վարչակարգը մի քանի անգամ փորձ են կատարում վերանայել 907-րդ բանաձևը, բայց ոչ մի արդյունքի չեն հասնում:

Այսպես, 1994 թ. փետրվարի 13-ին Սենատի «Արտաքին հատկացումների» ենթահանձնաժողովում հերթական լսումների ժամանակ «Ազատության աջակցության օրենք»-ով ԱՄՆ կողմից տրամադրվող օգնության հարցերը համակարգողը նշում է, որ Միացյալ Նահանգները 907-րդ բանաձևով ինքն իրեն զրկել է Ադրբեջանի վրա ազդեցություն ունենալու հնարավորությունից: Երկու օր անց՝ փետրվարի 15-ին, տեղի ունեցած լսումների ընթացքում, առաջին փորձն է կատարվում վերացնել բանաձևը, բայց չի հաջողվում: Ամերիկյան սենատորների բացարձակ մեծամասնությունը հանդես է գալիս այն դիրքորոշման պաշտպանությամբ, որ Կոնգրեսը չի կարող հրաժարվել 907-րդ բանաձևից այնքան ժամանակ, մինչև Ադրբեջանը գործնական քայլեր չանի հարցի՝ խաղաղ ճանապարհով կարգավորման համար:

Վաշինգտոնի քաղաքական դիրքորոշումը 907-րդ բանաձևի նկատմամբ սկսում է փոփոխվել, երբ 1994 թ. սեպտեմբերի 20-ին Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը ամերիկյան մի շարք նավթային ընկերությունների հետ ստորագրում է այսպես կոչված «Դարի պայմանագիր»-ը: Ամերիկյան այդ ընկերություններին, որոնց մեջ էին Ամոկոն, Յունոկալը և Փենզոիլը, պատկանում էր պայմանագրով նախատեսված ամենամեծ հատվածը՝ 40%

մասնաբաժինը, որով նրանք պետք է զարգացնեին իրենց երկրի գազային և նավթային ռեսուրսները[278]:

Այս կերպ Ալիևը ցանկանում էր, օգտագործելով նավթային գործոնը, առավելություն ձեռք բերել Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ ընթացող բանակցային գործընթացում[279]:

Վերոնշյալ ընկերությունների նախաձեռնություններից մեկը «Ադրբեջանա-ամերիկյան առևտրական պալատ»-ի ստեղծումն էր, որը միաժամանակ ի շահ Ադրբեջանի պիտի ծավալեր լոբբիստական գործունեություն:

Պայքարը նավթային ընկերությունների և ամերիկահայ լոբբիի միջև ավելի է սրվում 1994 թ. մայիսի 12-ին Ադրբեջանի և Հայաստանի միջև կնքված հրադադարից հետո: Ամերիկահայ լոբբիի ջանքերով տիրապետող է դառնում այն տեսակետը, որ թեև Հայաստանը հաղթող է դուրս եկել Արցախյան պատերազմում, 907-րդ բանաձևի պահպանումը անհրաժեշտ է նաև զինադադարից հետո, քանզի Ադրբեջանը դեռևս շարունակում է Հայաստանի նկատմամբ իրականացվող տնտեսական շրջափակումը:

Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի և Ամերիկայի Հայկական համագումարի միացյալ ջանքերով 1995 թ. հունվարին Նյու Ջերսիից ընտրված դեմոկրատ կոնգրեսական Ֆրենկ Փալոնեի և Իլինոյս նահանգից ընտրված հանրապետական կոնգրեսական Էդվարդ Փորթերի կողմից ստեղծվում է Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախումբը[280]: Հանձնախումբը ակտիվորեն աշխատում է Ներկայացուցիչների պալատի հետ՝ հայկական շահախնդրությունները պաշտպանելու համար: Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախումբը Կոնգրեսի մեծագույն հանձնախմբերից է, որի

278 Տե՛ս նույն տեղում, էջ 10:
279 Տե՛ս Baghdoyan A., նշվ. աշխ., էջ 24:
280 Տե՛ս Gregg H. S., նշվ. աշխ., էջ 13:

համանախագահներն են Ջո Նոլենբերգը (այժմ Մարկ Քիրքը)և Ֆրենկ Փալոնեն:

Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախումբը օրենսդիրներից բաղկացած երկկուսակցական խումբ է, որի անդամների թիվը 2010 թ.տվյալներով հասնում էր 150-ի:

Վերջին տարիներին հանձնախումբը կենտրոնանում է ԱՄՆ-Հայաստան և ԱՄՆ-Արցախ կապերի սերտացման, ԼՂ խնդրի խաղաղ լուծման, Հայաստանի դեմ թուրքական և ադրբեջանական շրջափակման վերացման, 907-րդ բանաձևի պահպանման և Հայոց ցեղասպանության ճանաչման աշխատանքների վրա[281]:

907-րդ բանաձևը վերացնելու հարցը երկրորդ անգամ բարձրացվում է 1995 թ. հունվարի 7-ին: Այս անգամ ևս սենատորների մեծ մասը հանդես է գալիս բանաձևի պաշտպանությամբ:Իր ելույթում սենատոր Ռոբերտ Դոուլը նշում էր, որ Ադրբեջանի հետ նավթային գործարքների մեջ գտնվող առանձին ընկերությունների շահերը, չեն կարող վեր դասվել ԱՄՆ-ի շահերից,որը միշտ ամենից ինչից վեր է դասում մարդու իրավունքները:Դոուլի կարծիքով, 907-րդ բանաձևի նպատակը հենց այնպիսի անպատասխանատու քայլերի կանխումն էր,ինչպիսին Ադրբեջանի ագրեսիան էր Հայաստանի և Արցախի նկատմամբ:

Իր հերթին սենատոր Ջոն Քերրին նշում էր. «Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած կռիվների կամ Ադրբեջանի տիրապետության տակ գտնվելու շրջանի պատմության օբյեկտիվ վերլուծությունը ցույց է տալիս, որ այստեղ իրականացված բռնությունների ողջ մեղքն ու պատասխանատվությունը պատկանում է հենց Ադրբեջանին, ինչը ենթադրում է, որ վերջինս չի

[281] Տե՛ս «Հայրենիք» օրաթերթ, 17 օգոստոսի, 2001:

կարող ստանալ ամերիկյան դոլլարներ, քանի դեռ շարունակում է իրականացնել ռազմական ագրեսիա»[282]:

Սենատում տեղի ունեցող լսումների ավարտին Ջոն Քերրին ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ մի ժամանակագրություն, որը պատրաստվել էր Ամերիկայի Հայկական համագումարի կողմից: Փաստաթուղթը ներկայացնում էր Ադրբեջանի կողմից Արցախի նկատմամբ իրականացված ռազմական հարձակումները: Ներկայացուցիչների պալատի անդամ Ուայնե Օուենսը փաստաթղթի ուսումնասիրությունից հետո նշում էր հետևյալը. «Սա քաղաքացիական պատերազմ չէ, այլ բռնություն և ագրեսիա: Այն ինչին մենք ականատես եղանք իրենից ներկայացնում է էթնիկ զտում»[283]:

Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի՝ 1997 թ. հուլիսի 26-ին Վաշինգտոն կատարած այցը նոր փուլ է սկզբնավորում ադրբեջանա-ամերիկյան հարաբերություններում: Մինչ ԱՄՆ մեկնելը, Ադրբեջանի նախագահը խոստացել էր օժանդակել ամերիկյան ջանքերին՝ կառուցելու նավթային ու գազային ուղիներ, որոնք անցնելով Վրաստանով, կընդգրկեին նաև Թուրքիան և այլընտրանք կհանդիսանային խորհրդային տարիներին կառուցված ուղիներին: Ամերիկյան քաղաքական գործիչները խիստ կարևորում էին այս նոր ծրագիրը, որը անհրաժեշտ էր համարվում Կովկասյան տարածաշրջանում իրենց ազդեցության ամրապնդման և Ռուսատանի դերի թուլացման տեսանկյունից:

Միացյալ Նահանգների նախագահ Բիլ Քլինթոնը և Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը 1997 թ. օգոստոսի

---
282 Ambrosio Th., Irretendism: Ethnic Conflict and International Politics, p. 156.
283 Նույնը:

1-ին ստորագրում են «Ամերիկա-ադրբեջանական հարաբերությունների մասին համատեղ հայտարարություն»-ը, որտեղ հիշատակություն կար նաև 907-րդ բանաձևի մասին, որը սահմանափակում էր երկկողմ համագործակցության ընդլայնումը և զարգացումը[284]:

Երկկողմ բանակցությունների ընթացքում քննարկվում է նաև Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի շինարարությունը սկսելու հարցը:

Ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունները իրենց բողոքի ձայնն են բարձրացնում և խստորեն քննադատում Հայաստանը շրջանցող նշված գազատարների կառուցման հարցում Միացյալ Նահանգների որդեգրած դիրքորոշումը:

Դեռևս 2000 թվականից հայկական լոբբին իր բողոքի ձայնն է բարձրացնում Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցման դեմ, որը շրջանցում էր Հայաստանը: Հայկական լոբբիստական կազմակերպությունները նշում էին, որ այդ կերպ Ադրբեջանը և Թուրքիան ցանկանում են Հայաստանը դուրս մղել տարածաշրջանային զարգացումներից, ուստի նրանց այս նպատակի իրագործման համար տրամադրվող միջոցները խստորեն հակասում են ժողովրդավարության սկզբունքներին:

Հայ դատի հանձնախումբը առաջարկում էր ամերիկյան գործիչներին ստորագրել Միացյալ Նահանգների գանձապետարանի քարտուղար Ջոն Սնոուին ուղղված կոչին ներքոև ճնշում գործադրել

[284] Տե՛ս General Historical Background on Economic Aspects of the Visit of the President of the Republic of Azerbaijan Heydar Aliyev to the United States of America, http://lib.aliyev-heritage.org/en/3262064.html

Համաշխարհային դրամատան վրա, որպեսզի վերջինս վարկ չտրամադրի նավթամուղը կառուցելու համար[285]:

Ամերիկայի Հայկական համագումարի ջանքերով Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախմբի համանախագահներ Փրենկ Փալոնեն, Ջո Նոլենբերգը և հանձնախմբի անդամ Ջորջ Ռադանովիչը, ի պատասխան Հայաստանը շրջանցող այս նախաձեռնության, Ներկայացուցիչների պալատ են ներկայացնում «Հարավային Կովկասի ինտեգրման և բաց երկաթուղիների մասին» օրինագիծը, որով կոչ էր արվում չֆինանսավորել այն երկաթուղիների կառուցման ծրագրերը, որոնք պետք է կապեին Ադրբեջանը, Վրաստանը և Թուրքիան ու բացառեին Հայաստանը:

Ներկայացուցիչների պալատի ֆինանսական ծառայությունների հանձնաժողովի անդամ և օրինագծի համահեղինակ Բարնի Ֆրենկը նշում էր, որ նման երկաթուղու կառուցման ծրագիրը բարոյապես սխալ և ֆինանսապես ոչ ճիշտ քայլ է, քանզի այն ավելի հսկայական միջոցներ կպահանջի, քան արդեն իսկ գոյություն ունեցող և Հայաստանը ներառող Կարս-Գյումրի երկաթուղու վերականգնումը[286]:

Այնուամենայնիվ, ամերիկյան կառավարությունը չէր կարող անտեսել իր քաղաքական և տնտեսական շահերը: Ամենևին պատահական չէր դեսպան Ռիչարդ Մորնինգսթարի հետևյալ հայտարարությունը. «ԱՄՆ-ի կառավարության համար Բաքու-Թբիլիսի-Ջեյհան գազատարի կառուցումը ունի երեք նպատակ՝ նպաստել միջազգային էներգետիկ անվտանգության, տարածաշրջանային ռազմավարական անվտանգության ապահովմանը և վստահեցնել, որ

[285] Տե՛ս Մուրադյան Ի., Թուրք-ամերիկյան հարաբերությունների տարածաշրջանային հիմնախնդիրները, Եր., 2004, էջ 19:

[286] Տե՛ս The Armenian Assembly of America, Annual Report, 2005, p. 5.

էներգետիկ ծրագրերի իրականացումը նպաստել է քաղաքացիական հասարակության ձևավորմանը Ադրբեջանում, Վրաստանում և Թուրքիայում»[287]:

Նման պայմաններում, երբ գնալով ընդլայնվում էին Միացյալ Նահանգների՝ Ադրբեջանի հետ ունեցած տնտեսական, էներգետիկ կապերը, ամերիկահայ լոբբին շարունակում էր պայքարը ոչ միայն 907-րդ բանաձևի պահպանման, այլև ԼՂ հիմնախնդրում ԱՄՆ-ի կողմից հայանպաստ դիրքորոշման համար:

1997 թ. հոկտեմբերի 29-ին, երբ Ներկայացուցիչների պալատի «Արտաքին հատկացումների» հանձնաժողովը քննարկում էր արտաքին տնտեսական օգնության հետ կապված խնդիրները, Յայկական հարցերով կոնգրեսական հանձնախմբի անդամ Ջորջ Ռադանովիչը պնդում է, որպեսզի Լեռնային Ղարաբաղը ևս ընդգրկվի Միացյալ Նահանգների կողմից ֆինանսական օժանդակություն ստացող երկրների շարքում: Ի պատասխան այդ առաջարկության՝ ԱՄՆ-ում Ադրբեջանի դեսպանը հայտարարում է, որ Լեռնային Ղարաբաղը նշված ցանկի մեջ ներառելը լրջորեն կվնասի Ադրեջանի և Միացյալ Նահանգների հարաբերությունները:

Ջորջ Ռադանովիչը, իր հերթին, հիմնավորելով Լեռնային Ղարաբաղը ԱՄՆ-ի կողմից տնտեսական օժանդակություն ստացող երկրների շարքում ներառելու նախաձեռնությունը, նշում էր, որ Արցախը լրջորեն տուժել է Ադրբեջանի կողմից 1991 թ. սանձազերծված պատերազմի արդյունքում.ավերվել են ճանապարհները, դպրոցներն ու հիվանդանոցները: Այս իմաստով Միացյալ

[287] The Armenian Job: The Role of the Armenian Lobby in the Pattern of Enmity in South Caucasus, p. 33.

Նահանգները պետք է օժանդակեն օգնության կարիք ունեցող Լեռնային Ղարաբաղին:

Ի վերջո, Ջորջ Ռադանովիչի կողմից առաջարկված նախագիծը, քվեարկության է դրվում և ստանում ձայների բացարձակ մեծամասնությունը թե՛ Ներկայացուցիչների պալատում, և թե՛ Սենատում: Ամերիկյան Սենատը ձայների 65/35 հարաբերակցությամբ հաստատում է օգնության տրամադրումը Արցախին, այն դեպքում, երբ դեռևս Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում հարցը քննարկելուց առաջ նախագահ Բիլ Քլինթոնը նամակ էր ուղարկել հանրապետականների խմբակցության առաջնորդին, նշելով, որ Լեռնային Ղարաբաղը ֆինանսական օժանդակություն ստացող երկրների շարքում ներառելը լրջորեն կվնասի ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունները:

Այսպիսով, Արցախը՝ Միացյալ Նահանգների կողմից ֆինանսական օգնություն ստացող երկրների ցանկում ներառելը, 907-րդ բանաձևից հետո հանդիսացավ ամերիկահայ լոբբիի երկրորդ խոշոր ձեռքբերումը՝ ԼՂ խնդրի արդարացի կարգավորման համար մղվող պայքարի համատեքստում: Արդյունքում, սկսած 1998 թվականից Արցախը կանոնավոր կերպով ստանում է ամերիկյան ֆինանսական օժանդակությունը[288]:

907-րդ բանաձևը վերացնելու Քլինթոնյան վարչակարգի հաջորդ փորձը իրականացվում է 1998 թ. սեպտեմբերի 17-ին, ապա 1999 թ. հունվարի 21-ին, երբ Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում կոնգրեսական Միլլերը ներկայացնում է ԱՄՆ-ի

---

[288] Տե՛ս Legislative History of U.S. Assistance to Nagorno Karabakh, Armenian National Committee of America, http://www.anca.org/assets/pdf/misc/US_assistance_to_NKR.pdf

պետքարտուղար Մադլեն Օլբրայթի նամակը, որտեղ նշվում էր, որ նախագահի վարչակազմը անընդունելի է համարում 907-րդ բանաձևի պահպանումը: Միլլերը ամերիկյան գործադիր իշխանության այս դիրքորոշումը հիմնավորում էր նրանով, որ 907-րդ բանաձևը լրջորեն վնասում է ամերիկա-ադրբեջանական տնտեսական հարաբերությունները: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ նախագահի վարչակարգը խնդրում էր վերանայել այդ բանաձևը և Ադրբեջանը ներառել Միացյալ Նահանգների կողմից ֆինանսական օժանդակություն ստացող երկրների շարքում:

Չնայած ամերիկյան գործադիր իշխանության ջանքերին, Ադրբեջանի հետ Միացյալ Նահանգների ունեցած տնտեսական ու էներգետիկ ընդհանուր շահերին, ամերիկյան կոնգրեսականների բացարձակ մեծամասնությունը, այնուամենայնիվ, հանդես է գալիս 907-րդ բանաձևի պահպանման օգտին, որը ևս մեկ անգամ փաստում է ամերիկյան օրենսդիր իշխանության ներկայացուցիչների վրա հայկական լոբբիի ունեցած ազդեցության մասին:

Ե՛վ Հայ դատի հանձնախումբը, և՛ Ամերիկայի Հայկական համագումարը հսկայական աշխատանք էին տանում, որպեսզի յուրաքանչյուր տարի Հայաստանին տրամադրվող ամերիկյան օժանդակությունը պահպանվի 90 միլիոն դոլարի չափով՝ արդյունքում Հայաստանի համար վաստակելով «Կովկասի Իսրայել» մականունը[289]: Երբ 1999 թ. Կոնգրեսը փորձում է Հայաստանին տրամադրվող օգնությունը 90 միլիոնից նվազեցնել և հասցնել 75 միլիոնի, հայկական լոբբիի և Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախմբի ջանքերով հնարավոր էլ լինում կասեցնել որոշումը

289 Տե՛ս Gregg H. S., նշվ. աշխ., էջ 16:

և պահպանել տրամադրվող օգնության նախկին չափաքանակը:

Հայկական լոբբին մեծ հաղթանակ է տանում, երբ Սենատի Արտաքին հատկացումների ենթահանձնաժողովը 2001 թ. հուլիսի 26-ին որոշում է 2002 թ. ֆինանսական տարվա համար Հայաստանին տրամադրվող օժանդակությունը պահպանել 90 միլիոն դոլարի չափով: Որոշման մեջ մասնավորապես նշվում էր. «Կոմիտեն Հայաստանի տնտեսական բարեփոխումների համար տրամադրում է 90 միլիոն դոլարի աջակցություն և ակնկալում, որ այս հատկացումներից 5 միլիոնից ոչ պակաս կտրամադրվի կրթական ոլորտի նախաձեռնություններին»[290]:

Ավելին, 90 միլիոն դոլարը պահպանվում է նաև 2003 թվականին՝ առաջին անգամ ավելացնելով նաև 4 միլիոն դոլարի հասնող ռազմական օգնություն:

2001 թ. մարտի 28-ին Հայ դատի ամերիկյան հանձնախմբի ներկայացուցիչը Սենատի Արտաքին հատկացումների ենթահանձնաժողովում ունեցած ելույթի ժամանակ նշում էր. «Հայ դատի հանձնախումբը խրախուսում է Հայաստանին ամենաքիչը 90 միլիոն դոլար տրամադրվող օգնության պահպանումը: Այս հատկացումների շնորհիվ հնարավոր կլինի հաղթահարել այն ավերիչ հետևանքները, որ ի հայտ են եկել Թուրքիայի և Ադրբեջանի իրականացրած շրջափակման հետևանքով և կօգնի Հայաստանին շարունակել քաղաքական ու տնտեսական վերափոխումները: Ամերիկյան օգնությունը կնպաստի տնտեսության և ենթակառուցվածքների զարգացմանը, կխթանի

[290] Key Senate Panel approves 90 million dollar for Armenia, Maintains Section 907 and Arges Allocation of aid Appropriated for Karabagh, https://anca.org/press-release/key-senate-panel-approves-90-million-for-armenia-maintains-section-907-and-urges-allocation-of-aid-appropriated-for-karabagh/

երկրում իրականացվող ժողովրդավարական գործընթացները»[291]:

ԱՄՆ-ի դիրքորոշումը 907-րդ բանաձևի հարցում փոխվում է 2001 թվականից, երբ Սենատը հաստատում է մի օրենք, որը թույլ էր տալիս նախագահին հրաժարվել այդ բանաձևի առաջադրած սահմանափակումներից, եթե ԱՄՆ-ի պետական շահը դա կպահանջեր:

Օրենքի համաձայն, նախագահը իրավունք ուներ ֆինանսավորում տրամադրել Ադրբեջանին, եթե.

- ԱՄՆ-ին դա անհրաժեշտ էր միջազգային ահաբեկչության դեմ մղվող պայքարում,
- անհրաժեշտություն կար աջակցելու Միացյալ Նահանգների կամ կոալիցիայի անդամ երկրների զինված ուժերի պատրաստվածությանը՝ միջազգային ահաբեկչության դեմ մղվող պայքարում,
- կարևոր էր Ադրբեջանի սահմանի անվտանգության համար,
- չէր խոչընդոտելու Հայաստանի ու Ադրբեջանի միջև խաղաղության հաստատմանն ուղղված բանակցային գործընթացին կամ չէր օգտագործվելու Հայաստանի դեմ[292]:

Ամերիկայի Հայկական համագումարը ևս ուշի-ուշով հետևում էր 907-րդ բանաձևի պահպանմանը և կիրառմանը՝ նկատի ունենալով, որ այն հիմնավոր կերպով արգելում էր Միացյալ Նահանգների օգնության տրամադրումը Ադրբեջանի կառավարությանը, քանի դեռ վերջինս շարունակում է շրջափակել Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը: ԱՀՀ-ի ներկայացուցիչները նշում էին. «Չնայած 907-րդ բանաձևի հետագա թուլացմանն ուղղված քայլերին՝ Համագումարը և Կոնգրեսում մեր

---

[291] Gregg H. S., նշվ. աշխ., էջ 16:
[292] The Armenian Job: The Role of the Armenian Lobby in the Pattern of Enmity in South Caucasus, p. 24-25.

դաշնակիցները ի վիճակի եղան պահպանելու բանաձևն իր ընթացիկ ձևով»[293]:

Հայ դատի հանձնախմբի նախագահ Քեն Խաչիկյանը 2001թ. հոկտեմբերի 1-ին նամակ է ուղարկում նախագահ Բուշ Կրտսերին, որտեղ կոչ էր անում աջակցել 907-րդ բանաձևի պահպանմանը, ճնշել Ադրբեջանին, որպեսզի վերջինս դադարեցնի Հայաստանի և Արցախի նկատմամբ իրականացվող շրջափակումը[294]:

Դրան հակառակ, Միացյալ Նահանգներում գործող ադրբեջանական լոբբին և Ադրբեջանի հարցերով կոնգրեսական հանձնախումբը իրենց առաջնահերթ խնդիրների շարքում էին դասում Ադրբեջանին տրամադրվող կառավարական օգնությունը արգելափակող թիվ 907 բանաձևին դիմագրավելը*:

2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո, Վաշինգտոնը աստիճանաբար հրաժարվում է 907-րդ բանաձևից, քանզի Բաքուն սկսում է դիտարկվել որպես Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում ահաբեկչության ու կրոնական ծայրահեղականության դեմ մղվող պայքարում ռազմավարական կարևոր դաշնակից: ԱՄՆ-ի նախագահ Բուշ Կրտսերը, կարևորելով ահաբեկչության դեմ մղվող համաշխարհային պայքարում Ադրբեջանի դերակատարությունը, առանց Կոնգրեսի կողմից լուրջ դիմադրության, հետ է կանչում 907-րդ

---

293 Gregg H. S., նշվ. աշխ., էջ 15:

*ԱՄՆ-ում գործում են ադրբեջանական 16 համայնքային կազմակերպություններ: Դրանցից աչքի է ընկնում «ԱՄՆ-ի ադրբեջանական համայնք» լոբբիստական կազմակերպությունը (1957 թ.): Ադրբեջանն իր առջև խնդիր է դրել ապահովել ադրբեջանանպաստ տեղեկատվություն Արցախյան հակամարտության վերաբերյալ, մասնավորապես, առաջին հերթին, կրած պարտությունը ներկայացնել իբրև Ադրբեջանի տարածքային ամբողջականության կորուստ: Ադրբեջանական լոբբին պայքարում է նաև Ադրբեջանի համար ամերիկյան օգնությունը ապահովելու և հայկական շահախնդրությունների դեմ:

294 Տե՛ս ANCA Calls on President Bush to Defend Section 907; Press Azerbaijan to Lift Blockades on Armenia and Karabagh, https://anca.org/press-release/anca-calls-on-president-bush-to-defend-section-907-press-azerbaijan-to-lift-blockades-on-armenia-and-karabagh/

բանաձևը[295] և սկսած 2002 թ. հունվարի 25-ից մեկ տարով դադարեցվում են այդ բանաձևի առաջադրած սահմանափակումները Ադրբեջանի համար:

Չնայած նրան, որ ԱՄՆ-ի կողմից Ադրբեջանին տրամադրող ֆինանսավորումը ավելի քան երկու անգամ քիչ էր Հայաստանին տրամադրվող օգնությունից, ամերիկահայ լոբբին յուրաքանչյուր տարի ակտիվորեն ընդդիմանում է 907-րդ բանաձևի դադարեցմանը: Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի՝ 2006 թվականի պաշտոնական հաղորդագրության մեջ, որն ուղղված էր 2007 թ. ֆինանսական տարում 907-րդ բանաձևից հրաժարվելու դեմ, ասվում էր. «Բանաձևից հրաժարվելու լիազորությունը, որ ընձեռնվել է նախագահին, թուլացնում է Միացյալ Նահանգների դիրքերը տարածաշրջանում՝ Ադրբեջանին խրախուսելով շարունակել շրջափակումը և անհաշտ դիրքորոշում որդեգրել բանակցային գործընթացում: Բանաձևի վերացումը, միաժամանակ, ազդանշան կարող է դառնալ Ադրբեջանի համար, որ ԱՄՆ-ն վճռականորեն չի արձագանքի Հայաստանի և Արցախի դեմ նոր ագրեսիայի սանձազերծմանը»[296]:

Հաղորդագրության մեջ Հայ դատի հանձնախումբը հանդես էր գալիս մի հարցադրմամբ, ըստ որի Կոնգրեսը պետք է հաստատի օրենք, որը նախագահին իրավունք կտար 907-րդ բանաձևը դադարեցնել լոկ տարեկան հիմքով՝ այն էլ Կոնգրեսի կողմից հաստատվելու դեպքում: Այն փաստը, որ Հայ դատի հանձնախումբը պահանջում էր, որպեսզի բանաձևը դադարեցնելու կամ պահպանելու հետ կապված վերջին խոսքը պատկաներ Կոնգրեսին, մեկ անգամ ևս վկայում է կոնգրեսականների շրջանում հայկական լոբբիի ունեցած

---

[295] Տե՛ս Zarifian J., նշվ. աշխ., էջ 511:

[296] The Armenian Job: The Role of the Armenian Lobby in the Pattern of Enmity in South Caucasus, p. 26.

ազդեցության և նրանց միջոցով հայկական շահերը պաշտպանելու մասին:

Չնայած 2002 թվականից դադարեցվեցին 907-րդ բանաձևի առաջադրած սահմանափակումները Ադրբեջանի նկատմամբ, այնուամենայնիվ, հայկական լոբբիի ջանքերի շնորհիվ այսօր էլ Բաքուն Միացյալ Նահանգների կողմից ստանում է երկու անգամ ավելի քիչ օգնություն, քան Երևանը: Բերենք մի օրինակ: 2012 թվականի ֆինանսական տարում Հայաստանը Միացյալ Նահանգներից ստացել է 42 միլիոն դոլար, Արցախը՝ 2 միլիոն դոլար, իսկ Ադրբեջանը՝ ընդամենը 20.9 միլիոն դոլար[297]:

907-րդ բանաձևի կասեցմամբ պայմանավորված՝ 2002 թ. մայիսի 13-ին կոնգրեսական Ադամ Շիֆը Ներկայացուցիչների պալատի Արտաքին հատկացումների հանձնաժողովին ներկայացնում է մի ծրագիր, որով առաջարկվում էր 30 միլիոն դոլարով ավելացնել Լեռնային Ղարաբաղին տրամադրվող ֆինանսական օժանդակության ծավալները: Շիֆի ներկայացրած նախագիծը ընդունվում է, ինչի շնորհիվ ավելանում է Արցախին տրամադրվող ֆինանսական օժանդակության չափաբաժինը[298]:

Արդյունքում, 2002 թ. հուլիսի 26-ին բյուջեի քննարկման ժամանակ ԱՄՆ Սենատի հատկացումների հանձնաժողովը որոշում է Հայաստանին տրամադրվող օգնությունը պահել 90 միլիոն դոլար, միաժամանակ պահանջելով, որ Արցախին հատկացված գումարները փոխանցվեն ժամանակին: Ի դեպ, մինչ այդ Ներկայացուցիչների պալատն առաջարկել էր

---

[297] Տե՛ս Nichol J., Armenia, Azerbaijan, and Georgia: Political Developments and Implications for U.S. Interests, Congressional Research Service, Washington, 2014, p. 62.

[298] Տե'ս Legislative History of U.S. Assistance to Nagorno Karabakh, Armenian National Committee of America, http://www.anca.org/assets/pdf/misc/US_assistance_to_NKR.pdf

Հայաստանին տրամադրվող օգնությունը դարձնել 82.5 միլիոն դոլար[299]:

Հայկական լոբբիի և Հայկական հարցերով Կոնգրեսական հանձնախմբի ջանքերով 2004 թ. նոյեմբերին ամերիկյան Սենատը Հայաստանին տրամադրվող տնտեսական և հումանիտար օգնությունը սահմանում է 75, ռազմական օգնությունը՝ 8.75, իսկ Արցախին՝ 3 միլիոն դոլարի չափով[300]: Արտաքին հատկացումների ենթահանձնաժողովի անդամ Սթիվ Ռոդմանը այս առիթով նշել է. «Հայաստանը, իր զարգացող տնտեսությամբ ունի ԱՄՆ-ի շարունակական օժանդակության կարիքը, որպեսզի իրականացնի իր նպատակները, այն է՝ տարածաշրջանային խաղաղություն և կայունություն, ազատ շուկայական տնտեսության անցում և ժողովրդավարության զարգացում»[301]:

Հատկանշական է, որ յուրաքանչյուր տարի հաջորդ ֆինանսական տարվա համար տարբեր երկրներին տրամադրվող ֆինանսական և հումանիտար աջակցության չափաքանակը սահմանելիս, հայկական լոբբին և հայամետ կոնգրեսականները բարձրացնում են 907-րդ բանաձևը պահպանելու հարցը՝ նշելով, որ Ադրբեջանը կոպտորեն խախտում է հրադադարի ռեժիմը և անընդհատ իրականացնում ռազմական գործողություններ Հայաստանի ու Արցախի նկատմամբ:

ԱՄՆ-ՀՀ, ԱՄՆ-ԼՂՀ հարաբերությունների սերտացման, Միացյալ Նահանգների կողմից հայկական երկու հանրապետություններին

---

[299] Տե՛ս «Հայրենիք» օրաթերթ, 17 օգոստոսի, 2001:

[300] Տե՛ս Armenian Assembly of America, Annual Report, 2004, p. 5.

[301] Congress Finalizes FY 2005 Foreign Aid Bill, https://anca.org/press-release/congress-finalizes-fy2005-foreign-aid-bill/

տրամադրվող ամերիկյան օգնության ապահովման գործում կարևոր դերակատարում ունի նաև 2006 թ. դեկտեմբերին ամերիկահայության ջանքերով ստեղծված ևս մեկ լոբբիստական կառույց՝ ԱՄՆ-Հայաստան հասարակական հարցերով հանձնաժողովը: Հայկական շահերը Վաշինգտոնում պաշտպանելու համար ստեղծված այս նոր կառույցի հիմնադիրը հայտնի բարերար Ջերարդ Գաֆեսճյանն է, իսկ տնօրենը՝ հայտնի լոբբիստ Ռոս Վարթյանը: Նրանք երկուսն էլ Ամերիկայի Հայկական համագումարի խորհրդի անդամներ են, իսկ Ռոս Վարթյանը երկար ժամանակ եղել է ԱՀՀ-ի գործադիր տնօրենը:

Ռոս Վարթյանի խոսքերով, մինչև կառույցի ստեղծման վերաբերյալ հայտարարություն անելը, իրենք խորհրդակցել են և՛ ԱՀՀ-ի հետ և՛ Հայ դատի հանձնախմբի հետ՝ պատրաստակամություն հայտնելով համագործակցել վերջիններիս հետ:

ԱՄՆ-Հայաստան հասարակական հարցերով հանձնախումբն իր առջև դնում է հետևյալ մարտահրավերները՝ ԱՄՆ-ում Ադրբեջանի ունեցած՝ էներգետիկ գործոնով պայմանավորված ազդեցության թուլացում, Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ ճանապարհով կարգավորում, Հայաստանի մեկուսացվածության վերացում և հայ-ամերիկյան տնտեսական կապերի ընդլայնում[302]:

Հայկական լոբբիի հաջողություններից կարելի համարել այն, որ 2007 թ. հունիսին Արտաքին հատկացումների ենթահանձնաժողովը Հայաստանին տրամադրվող օգնությունը 2008 թ. համար սահմանում է 68 միլիոն դոլար, այն դեպքում, երբ Ադրբեջանին տրամադրվող օժանդակությունը, չնայած

302 Տե՛ս «ԱՄՆ-ում ստեղծվել է նոր լոբբիստական խումբ», Ազատություն ռադիոկայան, 13 դեկտեմբերի, 2006, https://www.azatutyun.am/a/1585633.html

ադրբեջանական լոբբիի ջանքերին, կազմում էր ընդամենը 18միլիոն դոլար[303]:

2009 թ. մարտի 25-ին Ամերիկայի Հայկական համագումարը դիմում է Ներկայացուցիչների պալատի Արտաքին հատկացումների հանձնաժողովին՝ խնդրելով 2010 թ. ֆինանսական տարում Հայաստանին տրամադրել 70միլիոն դոլարից ոչ պակաս օգնություն, իսկ Արցախին՝ 10 միլիոն դոլար հումանիտար աջակցություն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն գտնվում է Թուրքիայի և Ադրբեջանի կողմից շրջափակման պայմաններում[304]:

Հայաստանին ու Արցախին տրամադրվող ամերիկյան օժանդակության ավելացման կոչերով հանդես են գալիս նաև Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախմբի նախագահներ Ֆրենկ Փալոնեն և Մարկ Քիրքը, ովքեր առաջարկում էին նախապես ծրագրված 48միլիոն դոլարից այն հասցնել 70 միլիոն դոլարի, իսկ տրամադրվող ռազմական օգնությունը՝ 3.3 միլիոնից՝ 5 միլիոնի: Միաժամանակ առաջարկվում էր Արցախի համար նախատեսված 8միլիոնը հասցնել 10միլիոն դոլարի:

Երկրորդական հանգամանք չէր նաև այն, որ ամերիկահայ լոբբին Կոնգրեսում ակտիվորեն մասնակցում է Ադրբեջանում ամերիկյան այս կամ այն դիվանագետի թեկնածության առաջադրման և նշանակման գործընթացին: Ասվածի վկայությունն է հանդիսանում Մեթյու Բրայզայի՝ Ադրբեջանում ԱՄՆ-ի դեսպանի պաշտոնում կարճատև պաշտոնավարումը՝ 2011 թ. հունվարից մինչև 2012 թ. փետրվարը:

---

303 Տե՛ս House Foreign Aid Panel Proposes 68 Million for Armenia; $6 Million in Direct aid to Nagorno Karabagh, https://anca.org/press-release/house-foreign-aid-panel-proposes-68-million-for-armenia-6-million-in-direct-aid-to-nagorno-karabagh/

304 Տե՛ս Armenian Assembly of America, Recommendations for Fiscal Year (FY) 2010, 25 March, 2009, http://www.aaainc.org/fileadmin/aaainc/pdf_1/Q2_2009/Foreign_Ops_Testimony_FY_2010_VAN.pdf

2010 թ. մայիսի 26-ին նախագահ Բարաք Օբաման Մեթյու Բրայզային նշանակում է Ադրբեջանում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան, ինչն առաջացնում է ամերիկահայ լոբբիի դիմադրությունը:Վերջինս իր հետ համագործակցող ամերիկյան սենատորների միջոցով իր դժգոհությունն է հայտնում և ջանքեր գործադրում, որպեսզի նրա թեկնածությունը չհաստատվի Կոնգրեսում: Արդյունքում, Բրայզայի թեկնածությանը ընդդիմանում են սենատորներ Ռոբերտ Մենենդեզը և Բարբարա Բոքսերը, որոնք իրենց դիրքորոշումը հիմնավորում էին հետևյալ փաստարկներով՝ Հայոց ցեղասպանության փաստի ճանաչմանը նրա դեմ լինելը, Հայաստանի նկատմամբ ադրբեջանական ագրեսիան չդատապարտելը և մտերիմ կապերը Թուրքիայի հետ՝ նկատի ունենալով Բրայզայի կնոջ թուրք լինելու հանգամանքը[305]:

Ուշագրավ է, որ Մ. Բրայզայի հանդեպ հայկական լոբբիի այս ընդդիմությունը առաջացնում է ամերիկյան հասարակական շրջանակների և մամուլի բուռն դժգոհությունը: Այս կապակցությամբ որոշ լրատվամիջոցներ ուղղակի գրում էին. «Որպես ամերիկյան դիվանագետ՝ Բրայզան ունի ավելի քան 25 տարվա փորձ և Ջորջ Բուշի կառավարման շրջանի ամենաակնառու ամերիկյան քաղաքական գործիչներից էր Կովկասյան տարածաշրջանում՝ աշխատելով որպես պետքարտուղարության՝ եվրոպական և ասիական հարցերով փոխօգնական: Նա միաժամանակ, Մինսկի խմբի ԱՄՆ նախկին համանախագահն է, ով ջանում էր միջնորդ լինել Լեռնային Ղարաբաղի հարցով Հայաստանի և Ադրբեջանի միջև եղած հակամարտության գործում»: Ավելին, Կոնգրեսի հետազոտության ծառայության զեկույցում նշվում էր, որ ամերիկաադրբեջանական

[305] Տե՛ս The Armenian Job: The Role of the Armenian Lobby in the Pattern of Enmity in South Caucasus, p. 28.

հարաբերությունները սկսեցին բարելավվել հենց Բրայզայի դեսպան նշանակվելով[306]:

Հայկական լոբբիի դժգոհությունը պայմանավորված էր Մեթյու Բրայզայի ադրբեջանամետ դիրքորոշմամբ, ինչի կապակցությամբ դեռևս 2009 թ. Հայ դատի ամերիկյան հանձնախումբը դիմել էր ամերիկյան կոնգրեսականներին՝ կոչ անելով ուշադրություն դարձնել նրա գործունեությանը: Նույն թվականի օգոստոսի 20-ին Հայ դատի ամերիկյան հանձնախմբի նախագահ Քեն Խաչիկյանը նամակ է ուղարկում պետքարտուղար Հիլարի Քլինթոնին, որտեղ ամերիկահայ համայնքի անունից իր դժգոհությունն էր հայտնում կապված Բրայզայի՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հարցում որդեգրած ոչ բարենպաստ և բացահայտ ադրբեջանամետ դիրքորոշման համար[307]:

Պաշտոնական Վաշինգտոնը ամեն անգամ հանդիպում է դժվարությունների Ադրբեջանում դեսպան նշանակելիս: Բրայզայի դեպքում էլ շուրջ մեկ տարի հայկական լոբբին ակտիվորեն դիմադրում էր նրա թեկնածությանը, իսկ նրա պաշտոնավարումն էլ տևում է բավականին կարճ: Կոնգրեսում մի քանի անգամ քննարկվում է Բրայզայի թեկնածության հարցը, բայց հանդիպելով կոնգրեսականների մի մասի դիմադրությանը, այդպես էլ չի հաստատվում: Նախագահ Բարաք Օբաման ստիպված է լինում Բրայզային նշանակել որպես դեսպանի պաշտոնակատար, բայց այդպես էլ չստանալով Կոնգրեսի կողմից հաստատում, ստիպված է լինում 2012 թ. հունվարին նրան հետկանչել:

[306] Տե՛ս նույն տեղում, էջ 29:
[307] Տե՛ս ANCA Chairman Ken Hachikian Today Sent a Letter to Secretary of State Hillary Clinton, http://www.panorama.am/en/news/2009/08/21/brayza/1216569

Բրայզայի թեկնածությանն ընդդիմանալը և հաջողության հասնելը, իրոք, Արցախի շահերի պաշտպանության հարցում ամերիկահայ լոբբիի ունեցած խոշոր հաջողություններից մեկն է:

2012 թ. հունիսին ամերիկյան Սենատը առաջարկում է Ռիչարդ Մորնինգսթարի թեկնածությունը Ադրբեջանում ԱՄՆ-ի դեսպանի պաշտոնում: Դա չէր կարող աննկատ մնալ Կոնգրեսի հայանպաստ գործիչների ուշադրությունից: 2012 թ. հունիսի 13-ին Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի եզրափակիչ լսումների ժամանակ սենատորներ Մենենդեզը և Բոքսերը կոչ են անում Բաքվի հետ հարաբերություններում առաջնորդվել ոչ միայն էներգետիկ շահերով, այլև ճնշում գործադրել վերջինիս վրա՝ հասնելու Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ ճանապարհով լուծմանը:

2012 թ. հունիսի 4-ին ադրբեջանական զինված ուժերը, հերթական անգամ խախտելով հրադադարի ռեժիմը, դիվերսիա են իրականացնում՝ փորձելով ներթափանցել Տավուշի մարզի տարածք: Նույն օրը Հայ դատի ամերիկյան հանձնախումբը նամակ է ուղարկում պետքարտուղար Հիլարի Քլինթոնին՝ կոչ անելով խստորեն դատապարտել ադրբեջանական ագրեսիան և Հայաստան ներխուժման փորձը, որը պատճառ էր դարձել երեք հայ զինվորների մահվան և հինգ զինվորների վիրավորման: Հայ դատի հանձնախումբը շեշտում էր այն հանգամանքը, որ ադրբեջանական ռազմական ագրեսիան իրականացվել է հենց Հիլարի Քլինթոնի՝ տարածաշրջան կատարած եռօրյա այցի ընթացքում[308]:

Ադրբեջանական ագրեսիան դատապարտող ելույթներով հանդես եկան նաև ամերիկյան

---

308 Տե՛ս ANCA Calls on Clinton to Condemn Azerbaijan's Fatal Attacks into Armenia, https://anca.org/press-release/anca-calls-on-clinton-to-condemn-azerbaijans-fatal-attacks-into-armenia/

բազմաթիվ սենատորներ և կոնգրեսականներ: Ներկայացուցիչների պալատի անդամներ Ադամ Շիֆը, Բրեդ Շերմանը, Ներկայացուցիչների Պալատի Արտաքին հարաբերությունների կոմիտեի անդամ, հայտնի դեմոկրատ գործիչ Հովարդ Բերմանը և Հայկական հարցերով Կոնգրեսական հանձնախմբի համանախագահ Ֆրենկ Փալոնեն հանդես են գալիս ադրբեջանական ագրեսիան խստորեն դատապարտող ելույթներով:

Ադամ Շիֆը նշում էր. «Շատ կարևոր է, որ Հիլարի Քլինթոնը խստորեն դատապարտի Ադրբեջանի իրականացրած ռազմական ագրեսիան Բաքվում Հեյդար Ալիևի հետ ունեցած հանդիպման ժամանակ: Մենք պետք է ամբողջությամբ վերականգնենք 907-րդ բանաձևը և խստորեն արգելենք, ցանկացած զինատեսակի տրամադրումը Ադրբեջանին»:

Ներկայացուցիչների պալատի անդամ Շերմանը, ով աչքի էր ընկնում Արցախահայության իրավունքների պաշտպանության գործում իր ակտիվ մասնակցությամբ, իր ելույթում նշում էր. «Ես խստորեն դատապարտում եմ հայ-ադրբեջանական սահմանին Ադրբեջանի կողմից իրականացրած այս վերջին հարձակումը, որը պատճառ դարձավ երեք հայ զինվորի մահվան: Այն, որ այս հարձակումը իրականացվեց պետքարտուղար Քլինթոնի՝ Հայաստան կատարած այցի օրը, վկայում է իր հարևանների նկատմամբ Բաքվի անհանդուրժողական վերաբերմունքի, ինչպես նաև այն մասին, որ նա շահագրգռված չէ Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև խաղաղության հաստատման հարցում:

Ես կոչ եմ անում ամերիկյան կառավարությանը ոչ միայն խստորեն դատապարտել այս ագրեսիան, այլ նաև կիրառել 907-րդ բանաձևը: Մենք չենք կարող Բաքվին տրամադրել որևէ տեսակի օժանդակություն,

քանի դեռ նա շրջափակման մեջ է պահում Լեռնային Ղարաբաղն ու Հայաստանը: Մենք պետք է նաև դադարեցնենք զենքի վաճառքը Ադրբեջանին,որը նա կարող է օգտագործել ԼՂ-ի և Հայաստանի դեմ»:

Ֆրենկ Փալոնեն ևս իր ելույթում խստորեն դատապարտում էր ադրբեջանական ագրեսիան և նշում.«Ես հույս ունեմ,որ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը,ով այժմ գտնվում է Կովկասում,և պետք է Բաքվում հանդիպի Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևին, կնշի, որ Միացյալ Նահանգները ոչ մի դեպքում չեն հանդուրժի այս տեսակի բռնությունը և Ադրբեջանը կենթարկեն պատասխանատվության»[309]:

Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ Բերմանը, իր հերթին նամակ է ուղարկում Հիլարի Քլինթոնին՝ կոչ անելով դադարեցնել բոլոր տեսակի զենքերի վաճառքը Ադրբեջանին, քանզի դա կարող է օգտագործվել Հայաստանի և Արցախի դեմ[310]:

Նույն օրերին Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը գրություններ է ուղարկում Կոնգրեսին և Սպիտակ տանը՝ կոչ անելով կասեցնել Ադրբեջանին տրամադրող ռազմական օժանդակությունը, ինչպես նաև դադարեցնել ռազմական սարքավորումների վաճառքը վերջինիս:

Ինչ վերաբերում է Հայաստանին ու Արցախին տրամադրվող ամերիկյան օգնությանը, նշենք, որ Հայ դատի հանձնախումբը կոչ էր անում ամերիկահայությանը էլեկտրոնային նամակների միջոցով դիմել սենատորներին և Ներկայացուցիչների պալատի անդամներին, որպեսզի նրանք մեծացնեն Հայաստանին ու Արցախին տրամադրվող օգնության ծավալները և դադարեցնեն

---

309 Members of Congress Condemn Latest Azerbaijani Attack Leaving Three Armenian Soldiers Dead, https://anca.org/press-release/members-of-congress-condemn-latest-azerbaijani-attack-leaving-three-armenian-soldiers-dead/

310 Տե՛ս ANCA Welcomes Beman Efforts to Stop Proposed Military Equipment Sale to Baku, https://anca.org/press-release/anca-welcomes-berman-efforts-to-stop-proposed-military-equipment-sale-to-baku/

օգնություն տրամադրել Ադրբեջանին[311]: Չնայած առաջարկվող 40 միլիոն դոլարին, Արտաքին հատկացումների հանձնաժողովը, այնուամենայնիվ, Հայաստանի համար 2015 թ. ֆինանսական տարվա համար սահմանել է ընդամենը 24.7 միլիոն դոլար օգնություն:

Հայաստանին տրամադրվող ամերիկյան օգնության հարցում Հայ դատի հանձնախումբը 2015 թ. իր առջև դրել էր հետևյալ առաջնահերթությունները՝ 40 միլիոն դոլարի օգնություն Հայաստանին, 5 միլիոն դոլարի օգնություն Արցախին, Ադրբեջանի նկատմամբ 907-րդ բանաձևի առաջադրած սահմանափակումների խստացում, ռազմական օժանդակության դադարեցում Ադրբեջանին[312]:

Ամերիկահայ լոբբիի գործունեության առաջնահերթություններից է նաև Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչումը Միացյալ Նահանգների կողմից: Արցախի անկախության ճանաչման գործընթացի հետ կապված դեռևս 2000 թ. հունիսին հետաքրքիր դիրքորոշմամբ է հանդես եկել ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի անդամ Ադամ Շիֆը: «Արցախի բնակչությունը արդեն հռչակել է անկախ լինելու իր իրավունքը,-հայտարարել է նա,-և անընդունելի է, որ երրորդ կողմը թելադրի իր պայմանները»[313]:

Այսպես, 2012 թ. մայիսի 17-ին Ռոդ Այլենդ նահանգի Ներկայացուցիչների պալատը ընդունում է Լեռնային Ղարաբաղի անկախությունը ճանաչող 8180 բանաձևը և կոչ անում Միացյալ Նահանգների նախագահին և Կոնգրեսին պաշտոնապես ճանաչել

---

311 Տե՛ս Մեծացնել ԱՄՆ-ի օգնությունը Հայաստանին և Ղարաբաղին և դադարեցնել օգնություն տրամադրել Ադրբեջանին, http://www.arfd.info/hy/?p=15953

312 Տե՛ս Armenian Americans and U. S. Foreign Aid Policy, https://anca.org/issue/armenian-americans-us-foreign-aid-policy/

313 Nagorno Karabakh Peace Process, Office of the Nagorno Karabakh Republic in the United States of America, Position Paper, 2002, June, http://www.nkrusa.org/position_papers/peace_process.shtml

Արցախի անկախությունը[314]: Բանաձևը միաժամանակ խրախուսում էր արցախահայության՝ որպես ազատ և անկախ ժողովուրդ զարգանալու ջանքերը:

Վաշինգտոնում ԼՂՀ ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանը շնորհակալություն է հայտնում Ռոդ Այլենդի Ներկայացուցիչների պալատին՝ Արցախի անկախության ձգտումներին աջակցելու համար և հույս հայտնում, որ այն օրինակ կծառայի ամերիկյան մյուս օրենսդիր մարմինների համար:

2012 թ. օգոստոսի 6-ին Մասսաչուսեթս նահանգի Ներկայացուցիչների պալատը ընդունում է Ջոնաթան Հետչի ներկայացրած բանաձևը, որը կոչ էր անում ԱՄՆ նախագահին և Կոնգրեսին աջակցել Լեռնային Ղարաբաղի ինքնորոշմանը և ժողովրդավարական անկախությանը: Բանաձևը նաև դատապարտում էր Սումգայիթում, Բաքվում և Կիրովաբադում իրականացված հայ բնակչության կոտորածը և Լեռնային Ղարաբաղի ազատ ինքնորոշման խաղաղ ձգտումների նկատմամբ Ադրբեջանի դրսևորած բռնարարքները: Բանաձևում նաև արձանագրվում էր. «Այսօր ևս Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իրականացնում է հարձակումներ և թշնամական գործողություններ, չնայած այն հանգամանքին, որ ԼՂ-ն 1991 թ. դեկտեմբերի 10-ին քվեարկել է հօգուտ անկախության, ազատության և ժողովրդավարության»[315]:

Արձագանքելով ընդունված բանաձևին՝ Հայ դատի ամերիկյան հանձնախմբի Արևելյան շրջանի ղեկավար Ջորջ Աղջայանը շնորհակալություն է հայտնել Մասսաչուսեթսի օրենսդիր իշխանությանը՝ Լեռնային Ղարաբաղում կայացած ժողովրդավարական ընտրությունների և

---

314 Տե՛ս The Rhode Island House of Representatives Resolution on Supporting the Nagorno-Karabakh Republic's Efforts to Develop as a Free and Independent Nation, http://www.nkrusa.org/hot_topic/hot_topics.php?id=16

315 Massachusetts Legislature Supports Artsakh Independence, http://armenianweekly.com/2012/08/07/breaking-news-massachusetts-legislature-supports-freedom-of-artsakh/

հայության ինքնորոշման իրավունքը ճանաչելու համար[316]:

Մեյն նահանգի Սենատը և Ներկայացուցիչների պալատը նույնպես 2013թ.ապրիլի 10-ին ընդունում են Լեռնային Ղարաբաղի անկախությունը ճանաչող համատեղ թիվ 987 բանաձևը և կոչ անում ԱՄՆ-ի նախագահին ու Կոնգրեսին աջակցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդավարական անկախությանը:Ընդունված բանաձևի նախաձեռնողը Ներկայացուցիչների պալատի անդամ Սքոթ Համանն էր, ով սերտ կապեր ուներ Հայ դատի ամերիկյան հանձնախմբի ներկայացուցիչների հետ:

Հայ դատի հանձնախմբի ներկայացուցիչներից Թ. Աստվածատուրյանը բանաձևի ընդունման կապակցությամբ ասել է. «Հպարտ եմ, որ Մեյն նահանգը աջակցում է Լեռնային Ղարաբաղի բնակչության ազատ ինքնորոշման իրավունքին:Ես հույս ունեմ,որ մնացած նահանգները ևս կհետևեն Ռոդ Այլենդի,Մասսաչուսեթսի ու Մեյնի օրինակին և կճանաչեն ԼՂ անկախությունը»[317]:

987-րդ համատեղ բանաձևում մասնավորապես նշվում էր.

-Լեռնային Ղարաբաղը պատմականորեն հայկական տարածք է և 1921 թ. բռնի կերպով խորհրդային իշխանության առաջնորդ Ստալինի կողմից տրվել է Խորհրդային Ադրբեջանին,

- 1988 թ. փետրվարի 20-ը սկզբնավորեց ԼՂ բնակչության ազատագրական շարժման սկիզբը և ազդակ հանդիսացավ խորհրդային մյուս ժողովուրդների համար՝ պայքարելու բռնատիրական համակարգի դեմ,

---

[316] Տե՛ս նույնը:

[317] Maine Recgnizes Independence of Nagorno Karabakh Republic, https://anca.org/press-release/maine-recognizes-independence-of-nagorno-karabakh-republic/

- 1991 թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղը հռչակեց իր անկախությունը, որը հաստատվեց 1991 թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեով,

- Ադրբեջանը 1991 թվականից սկսեց ռազմական գործողություններ, որոնք շարունակվեցին մինչև 1994 թ.-ը:

- ԱՄՆ-ն, Ռուսաստանի և Ֆրանսիայի հետ հանդիսանալով Մինսկի խմբի համանախագահ երկիր, աջակցում է Կովկասում խաղաղության և կայունության հաստատմանը և տրամադրում ուղիղ օգնություն ԼՂ-ին, որը խիստ անհրաժեշտ է հետպատերազմյան շրջանում նոր վերականգնվող հանրապետության համար:

- ԱՄՆ-ն աջակցում և խրախուսում է որպես ազատ և անկախ երկիր զարգանալու համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ծավալած շարունակական ջանքերը[318]:

Արցախի հանրապետության անկախությունը ճանաչող ամերիկյան հաջորդ նահանգը Լուիզիանան էր, որի Սենատը 2013 թ. մայիսի 31-ին ընդունում է սենատոր Էդվին Մուրրայի ներկայացրած թիվ 151 բանաձևը: Այն ճանաչում էր ԼՂՀ անկախությունը, և կոչ անում ԱՄՆ նախագահին և կոնգրեսին՝ աջակցելու ԼՂ ինքնորոշմանը և անկախությանը[319]:

Ամերիկյան նահանգների կողմից Արցախի անկախությունը ճանաչելու գործընթացն առաջին հերթին, պայմանավորված էր առանձին նահանգներում հայկական լոբբիստական կազմակերպությունների ծավալած գործունեությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ շատ հայեր բարձր պաշտոններ էին զբաղեցնում

---

318 Joint Resolution Memorializing the President of the United States and the United States Congress to Support the Independence of the Nagorno-Karabakh Republic, http://www.legislature.maine.gov/legis/bills/bills_126th/billdocs/HP098701.rtf

319 Տե՛ս Louisiana State Senate Passes Resolution Recognizing the Independence of Nagorno Karabakh, http://www.armradio.am/en/2013/05/31/louisiana-state-senate-passes-resolution-recognizing-the-independence-of-nagorno-karabakh/

տարբեր նահանգներում: Մյուս կողմից, ճանաչման գործընթացը պայմանավորված էր ամերիկա-ադրբեջանական հարաբերություններում որոշակի խնդիրների առաջացմամբ, մասնավորապես ԱՄՆ-ն անընդհատ կոչ էր անում Ադրբեջանին չխախտել հրադադարի ռեժիմը և չսանձազերծել ռազմական գործողություններ Հայաստանի ու Արցախի նկատմամբ:

2014 թ. մայիսի 8-ին Կալիֆորնիա նահանգի Խորհրդարանը ընդունում է Լեռնային Ղարաբաղի անկախությունը ճանաչող AJR 32 բանաձևը: Վերջինիս հեղինակներից էր Խորհրդարանի անդամ Մայք Գատոն: Իր ելույթում նա շեշտում է Արցախի անկախության և ինքնորոշման իրավունքին սատարելու կարևորությունը, նաև մատնանշում, որ «Կալիֆորնիան տասնյակ հազարավոր ամերիկահայերի տունն է, հայեր, ովքեր դարձել են գաղթականներ Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի և Ադրբեջանի հայ բնակչության էթնիկ զտումների հետևանքով»[320]:

Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը Կալիֆորնիայի խորհրդարանի կողմից բանաձևի ընդունման հետ կապված հանդես է գալիս հետևյալ հայտարարությամբ. «Որքան Ադրբեջանը խոչընդոտում է Հայաստանի և ԵԱՀԿ Մինսկի խմբի՝ Ղարաբաղյան հարցի կարգավորմանն ուղղված ջանքերը, այնքան ավելի շատ մենք կարող ենք ակնկալել նման բանաձևեր, որոնք ճանապարհ են հարթում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության միջազգային ճանաչման համար»[321]:

---

[320] California State Assembly Recognizes Artsakh's Independence, http://asbarez.com/122870/california-state-assembly-recognizes-artsakhs-independence/., և` California Senate Passage of AJR 32 – Recognizing Artsakh's Independence, https://anca.org/press-release/watch-california-senate-passage-of-ajr-32-recognizing-artsakhs-independence/

[321] California Senate recognizes Nagorno Karabakh Republic, Armenia Welcomes This, http://www.mirrorspectator.com/2014/09/05/california-senate-recognizes-nagorno-karabakh-republic-armenia-welcomes-this/.

Հայ դատի ամերիկյան հանձնախմբի Արևմտյան շրջանի ներկայացուցիչները ակտիվորեն օգնում են բանաձևի հեղինակներին, որպեսզի այն ստանա Խորհրդարանի անդամների հավանությունը՝ բազմաթիվ նամակներ ու գրություններ ուղարկելով վերջիններիս և խնդրելով աջակցել բանաձևի ընդունմանը:

2014 թ. հուլիսի վերջին և օգոստոսի սկզբին հայ-ադրբեջանական և արցախա-ադրբեջանական սահմանին կրկին տեղի են ունենում ռազմական բախումներ՝ կորուստներ պատճառելով երկու կողմերին: Այս կապակցությամբ, օգոստոսի 8-ին Հայ դատի ամերիկյան հանձնախմբի անդամներ Արամ Համբարյանը և Քեյթ Նահապետյանը հանդիպում են Մինսկի խմբի ամերիկյան համանախագահ Ջեյմս Ուորլիքի հետ և նրան փոխանցում Հանձնախմբի նախագահ Քեն Խաչիկյանի նամակը: Դրանում մասնավորապես արձանագրվում էր, որ նախագահ Ալիևի կողմից սանձազերծված հարձակումները Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ճակատագրական էին ու տասնյակ մարդկանց կյանք խլեցին՝ միաժամանակ բացասաբար անդրադառնալով ԵԱՀԿ Մինսկի Խմբի աշխատանքների վրա[322]:

Ադրբեջանական նշված ագրեսիան դատապարտող ելույթներով հանդես են գալիս Ներկայացուցիչների պալատի անդամ Բրեդ Շերմանը, Դեյվիդ Սիսիլինին, Ջուդի Չուն, Ադամ Շիֆը, Ֆրենկ Փալոնեն, Ջեքի Սպիերը, Ջիմ Կոստան և Թոնի Կարդենասը՝ նշելով, որ Լեռնային Ղարաբաղի խնդիրը պետք է լուծվի միայն խաղաղ ճանապարհով:

Արցախի անկախությունը ճանաչելու շքերթը շարունակվում է նաև վերջին տարիներին: 2016 թ. մարտի 3-ին ամերիկյան Ջորջիա նահանգի

---

[322] Տե՛ս Congressional Pressure Grows to Stop Aliyev's Aggression, ANCA Presses State Department to Avert War by Challenging Azerbaijan's Military Escalation, https://anca.org/press-release/congressional-pressure-grows-to-stop-aliyevs-aggression/

Ներկայացուցիչների պալատը ընդունում է թիվ 1580 բանաձևը, որով ճանաչում էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը[323], իսկ նույն թվականի մարտի 29-ին Հավայի նահանգի Ներկայացուցիչների պալատը ընդունում է ԼՂ Հանրապետությունը ճանաչող թիվ 167 բանաձևը[324]:

Ամերիկահայ լոբբիստական կառույցների ջանքերով, 2017թ. սեպտեմբերի 28-ին Միչիգան նահանգի Սենատը, ձայների ճնշող մեծամասնությամբ, ընդունում է սենատոր Դեյվիդ Քնիզեկի կողմից ներկայացված Արցախի անկախությունը ճանաչող թիվ 99 բանաձևը: Այն, միաժամանակ, կոչ էր անում ԱՄՆ-ի նախագահին և Կոնգրեսին ևս ճանաչել Արցախի անկախությունը, տնտեսական ու մշակութային կապեր հաստատել Արցախի հետ և աջակցել Հարավային Կովկասում խաղաղության և կայունության պահպանմանը[325]: Փաստորեն, Միչիգանը դառնում է Արցախի անկախությունը ճանաչող ամերիկյան 8-րդ նահանգը, ինչը անշուշտ, Միչիգանի Հայ դատի հանձնախմբի, ամերիկահայ կառույցների ու տեղի հայ համայնքի ներկայացուցիչների ջանքերի արդյունքն էր:

Չնայած այն հանգամանքին, որ առանձին նահանգների կողմից ընդունված այս բանաձևերը չեն փոխում Արցախի փաստացի (դե ֆակտո) կարգավիճակը, այնուամենայնիվ, դրանց քաղաքական նշանակությունը չպետք է թերագնահատել: Նախ, դրանք յուրահատուկ զգուշացում են ուղղված Ադրբեջանին, որ Արցախի անկախության վերջնական ճանաչումը ժամանակի հարց է:

---

[323] Տե՛ս U. S. State of Georgia Adopted Resolution Recognizing the NKR, http://www.nkr.am/en/news/2016-03-04/793/
[324] Տե՛ս U. S. State of Hawaii Adopted Resolution Recognizing the NKR, http://www.nkr.am/en/news/2016-03-30/799/
[325] Տե՛ս Michigan Recognizes Artsakh Independence, https://armenianweekly.com/2017/09/28/michigan-recognizes-artsakh-independence/

Երկրորդ, նման բանաձևերի ընդունումը Բաքվի ռազմական սպառազինման պատասխանն է, ինչի վրա էլ վերջինս դնում է իր երկարաժամկետ հույսը:

Երրորդ, Արցախի անկախության ճանաչման համար տարվող պայքարը, միաժամանակ բարձրացնում է խնդրի վերաբերյալ միջազգային հանրության տեղեկացվածության աստիճանը:

Այսպիսով, ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունները Արցախյան հարցի ուղղությամբ ևս կարողանում են արձանագրել կարևոր ձեռքբերումներ, որոնցից կարող ենք առանձնացնել ամերիկյան ութ նահանգների կողմից Արցախի անկախության ճանաչումը, Արցախը ամերիկյան օգնություն ստացող երկրների շարքում ներառելը և Ադրբեջանին տրամադրվող ամերիկյան օգնությունը կասեցնող 907-րդ բանաձևի ընդունումը: Ամերիկահայ լոբբին, միաժամանակ, իր գործունեության մեջ կարևոր տեղ է հատկացնում Հայաստանին տրվող ամերիկյան տնտեսական օգնության չափերի պահպանման և մեծացման ուղղությամբ տարվող աշխատանքներին:


ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 1992-2015ԹԹ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐՆԵՐՈՎ
2015
21
2014
24.7
2013
36.6
2012
40
2011
44.7
2010
41
2009
48
2008
68
2007
50
2006
75
2005
74.4
2004
83.75
2003
90
2002
84.3
2001
90
2000
102.4
1999
79.8
1998
87.5
1997
95
1996
85
1995
59
1994
98
1993
60
1992
16
1

## 3.2 Հայոց ցեղասպանության ճանաչման համար մղվող պայքարը նոր պայմաններում

1991 թ. Հայաստանի անկախության հռչակումից հետո Հայոց ցեղասպանության ճանաչմանը հասնելու խնդիրը սկսում է կարևոր տեղ զբաղեցնել նաև նորանկախ հանրապետության արտաքին քաղաքական օրակարգում: Հայ դատի հետապնդումը, որ նախկինում սփյուռքահայության միայն մի հատվածի առաքելությունն էր, դառնում է նաև Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության խնդիրներից մեկը: Ինչ վերաբերում է Սփյուռքին, ապա, վերջինս կանգնում է Հայրենիքի հետ իր քայլերը համընթաց իրականացնելու հրամայականի առջև[326]:

Դրանով հանդերձ, ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունները պաշտոնապես ոչ մի կապ չունեն Հայաստանի Հանրապետության կառավարության հետ[327] և չեն ստանում որևէ ֆինանսավորում, այն դեպքում, երբ թուրք-ադրբեջանական լոբբին ստանում է այդ պետությունների ֆինանսական աջակցությունը և ուղղորդվում նրանց կողմից:

Ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունները արդեն նոր պայմաններում Արցախյան հիմնախնդրի խաղաղ ճանապարհով կարգավորման, Հայաստանին վերաբերող շահախնդրությունների պաշտպանության, Ադրբեջանին և Թուրքիային տրամադրվող ամերիկյան տնտեսական ու ռազմական օգնության սահմանափակման և այլ խնդիրների հետ մեկտեղ շարունակում են հսկայական աշխատանք

---

326 Տե՛ս «Հայ դատ» (1915-1988), ամսագիր, Հայ դատի պաշտպանության ընկերություն, Եր., 1988, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 51:

327 Տե՛ս Goshgarian R., Breaking the Stalemate: Turkish-Armenian Relations in the 21-st Century, Cambridge, 2006, p. 5.

տանել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը Վաշինգտոնի քաղաքական ուշադրության կենտրոնում պահելու համար:

1995 թ. մարտի 23-ին Ներկայացուցիչների պալատի անդամներ Դեյվիդ Բոնիորը և Փիթեր Բլութը նույն պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողով են ներկայացնում «Հարգելով Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը» խորագրով թիվ 47 բանաձևը, որտեղ ասվում էր, որ Ներկայացուցիչների պալատը (Սենատի համաձայնությամբ) որոշում է հետևյալը.

1.Կոնգրեսը միանում է ամերիկահայ համայնքին՝ հարգելու Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը,

2. Միացյալ Նահանգները պետք է հորդորեն Թուրքիայի Հանրապետությանը, որպեսզի վերջինս ձեռնարկի 1915-1923 թթ. Օսմանյան կայսրությունում հայ բնակչության նկատմամբ իրականացված դաժանությունները ճանաչող և դատապարտող բոլոր անհրաժեշտ քայլերը»[328]:

Նույն բովանդակությունն ուներ նաև 1997 թ. մարտի 21-ին կոնգրեսականներ Ջորջ Ռադանովիչի և Դեյվիդ Բոնիորի կողմից Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողով ներկայացված թիվ 55 բանաձևը[329]:

1995 թ. հայկական լոբբիի և Միացյալ Նահանգներում ՀՀ դեսպանության համատեղ ջանքերով ամերիկյան Կոնգրեսում նշվում է Մեծ եղեռնի 80-ամյակը, որին մասնակցում էին ցեղասպանությունից հետո հայությանը ապաստան տված 11 երկրների դեսպաններ ու դիվանագիտական

---

[328] H. Con. Res. 47, Honoring the Memory of the Victims of the Armenian Genocide, https://www.congress.gov/104/bills/hconres47/BILLS-104hconres47ih.pdf, նաև՝ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 52, փաստաթուղթ 4:

[329] Տե՛ս H. Con. Res. 55, Honoring the Memory of the Victims of the Armenian Genocide, https://www.congress.gov/105/bills/hconres55/BILLS-105hconres55ih.pdf

ներկայացուցիչներ, ԱՄՆ պետքարտուղարի՝ ժողովրդավարության հարցերով օգնականը, ինչպես նաև սենատոր Էդվարդ Քենեդին, կոնգրեսականներ Բենջամին Կիլմանը, Ջոն Փորթերը, Ֆրենկ Փալոնեն և ուրիշներ[330]:

Ինչ վերաբերում է նախագահ Բիլ Քլինթոնին, ապանաապրիլի 24-ի իր հերթական ուղերձում այդպես էլ չի գործածում «ցեղասպանություն» եզրը, փոխարենը օգտագործելով «կոտորած» տերմինը[331], որը խիստ քննադատության է արժանանում ամերիկյան մի շարք սենատորների, հատկապես Ռոբերտ Դոուլի կողմից:

1996 թ. մայիսի 15-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախաձեռնությամբ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի շուրջ կազմակերպվում են լսումներ: Դրանց ընթացքում ներկայացվում է Թուրքիայի կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև, որը սակայն, այդպես էլ չի ընդունվում, քանզի ամերիկյան վարչակարգը կարծում էր, որ բանաձևի ընդունումը կարող է բացասական ազդեցություն ունենալ հայ-թուրքական հարաբերությունների հետագա բարելավման, ինչպես նաև ԱՄՆ-Թուրքիա համագործակցության վրա[332]:

ԱՄՆ-ի 1996 թ. սկսված նախագահական ընտրությունների ժամանակ ամերիկահայ համայնքը դարձյալ պետք է կողմնորոշվեր դեպի նախագահի այն թեկնածուն, ով պաշտպան կկանգներ հայկական շահախնդրություններին: Գործող նախագահ Բիլ Քլինթոնն այլևս չէր վայելում հայ

[330] Տե՛ս «Զարթոնք» օրաթերթ, 9 մայիսի, 1995:
[331] Տե՛ս Геноцид армян: Ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий, т. 2, ч. 1, стр. 727.
[332] Տե՛ս The History of Armenian Genocide: Hearing before the Committee on International Relations, House of Representatives, One Hundred Fourth Congress, Second Session, May 15, 1996.

համայնքի վստահությունը, քանզի իր պաշտոնավարման ընթացքում, ապրիլի 24-ին արված ուղերձներում այդպես էլ չի հիշատակում «ցեղասպանություն» եզրը: Բացի այդ, Քլինթոնը հանդես էր գալիս որպես թուրք-ամերիկյան և ադրբեջանա-ամերիկյան հարաբերությունների խորացման ջատագով և կողմ էր 907-րդ բանաձևի վերացմանը:

Ամերիկահայ կազմակերպությունների առաջնորդները հայ համայնքի անունից միաձայն հայտարարում են, որ պաշտպանում են Ռոբերտ Դոուլի թեկնածությունը: Վերջինս շոշափելի գործունեություն էր ծավալել Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևերի ընդունման համար, նաև 907-րդ բանաձևի նախաձեռնողն էր և, ընդհանրապես, աչքի էր ընկնում հայկական շահախնդրությունները պաշտպանելու գործում իր ունեցած մեծ ավանդով:

1996 թ. ապրիլի 24-ին Լոս Անջելեսի հայ համայնքի հետ ունեցած հանդիպման ժամանակ Ռ. Դոուլը հայտարարել է, որ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում իր դիրքորոշումն անփոփոխ է:

Հայ դատի ամերիկյան հանձնախմբի և Ամերիկայի Հայկական համագումարի ջանքերով կազմակերպված դրամահավաքի միջոցով ամերիկահայությունը շոշափելի ֆինանսական աջակցություն է տրամադրում նախագահի թեկնածու Ռոբերտ Դոուլին: Նրան ցուցաբերած օգնությունը չէր սահմանափակվում միայն ֆինանսական միջոցներով: Բավական է նշել, որ Հայ դատի հանձնախմբի նախագահ Քեն Խաչիկյանը աշխատում էր Դոուլի կենտրոնական շտաբում:

Հայանպաստ դիրքորոշում ունեցող հայտնի սենատորի նախագահի թեկնածու լինելու հանգամանքը մեծ անհանգստություն է առաջացնում

Թուրքիայում, իսկ նախագահ Սուլեյման Դեմիրելը անձամբ շտապում է Վաշինգտոն՝ հանդիպելու թուրքական լոբբիստական կառույցների հետ և քննարկելու հետագա ռազմավարական ծրագրերը: Թուրքիայի նախագահի հետ հանդիպումից հրաժարվում է ոչ միայն Ռոբերտ Դոուլը, այլ նաև Բիլ Քլինթոնը, ով հասկանում էր հայ համայնքի դերակատարությունը և ազդեցությունը երկրի համար կարևորագույն հարցերում:

Նախագահական պայքարում հաղթանակում է Բիլ Քլինթոնը, ինչը մեծ ոգևորությամբ է ընդունվում Անկարայում:

1997 թ. ապրիլի 22-ին ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնը Մեծ եղեռնի տարելիցի նախօրեին անում է հետևյալ հայտարարությունը. «Ամեն տարի Հիշատակի օրը մենք միանում ենք ամերիկահայ համայնքին և աշխարհի տարբեր երկրներում ապրող հայությանը՝ նշելու XX դարի պատմության ամենամութ էջերից մեկը՝ հազարավոր հայերի կոտորածը Օսմանյան կայսրությունում 1915-1923 թթ.: Մենք հիշում ենք այդ սարսափելի ժամանակի զոհերին՝ մեկուկես միլիոն անմեղ զոհերին:

Հայ ժողովուրդը արժանապատվորեն դիմակայեց այդ ողբերգությանը: Չկորցնելով իր ավանդույթներն ու հավատը, հայերը հիմնեցին ծաղկուն համայնքներ աշխարհի տարբեր երկրներում: Միացյալ Նահանգները մեծապես շահել են շատ ամերիկահայերի ունեցած ներդրումներից, ովքեր առաջնային դեր են ունեցել մեր ազգային կյանքի յուրաքանչյուր ոլորտում:

Տասնամյակների ընթացքում հայերը կարողացան կենդանի պահել անկախ Հայաստանի տեսիլքը և 1991 թ. այդ երազանքը դարձավ իրականություն: Այսօր Հայաստանը ազատ և ինքնիշխան երկիր է, որը կենդանի հուշարձանն է

նրանց հիշատակի, ովքեր սպանվեցին 82 տարի առաջ, և շարունակական գրավականը, որ այսպիսի ողբերգություն այլևս չի կրկնվի: Հիշատակի օրվա կապակցությամբ ամենաջերմ մաղթանքներս եմ հղում բոլոր հայերին»[333]:

Ամերիկահայ համայնքը և լոբբիստական կազմակերպությունները կրկին հիասթափություն ապրեցին. նախագահ Բիլ Քլինթոնը դարձյալ չօգտագործեց «ցեղասպանություն» բառը, այլ գործածում է «XX դարի պատմության ամենամութ էջերը» և «կոտորած» արտահայտությունները:

Ամերիկայի Հայկական համագումարի գործադիր տնօրեն Ռոս Վարթյանը այս առիթով նշել է. «Ամերիկահայութիւնը հուսախաբ է, քանի որ նախագահ Քլինթոնը այդպես էլ իր հայտարարութեան մեջ չօգտագործեց ցեղասպանութիւն բառը: Անշուշտ, պատճառը թուրքական կառավարութեան եւ նրա՝ Վաշինգտոնի գործակալների ճնշումներն էին: Նախագահի յայտարարութիւնից, սակայն, կարելի է հասկանալ, որ նա գնահատում է Հիշատակի օրվա նշանակութիւնը»[334]:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ հանրային տեղեկացվածության աստիճանը բարձրացնելուն էր միտված 1997 թ. հունվարի 1-ին Վաշինգտոնում Ամերիկայի Հայկական համագումարի ջանքերով ստեղծված Հայ ազգային ինստիտուտը[335]: Այն կազմակերպում է ցեղասպանության հիմնահարցերին նվիրված գիտաժողովներ և ֆորումներ, համագործակցում ԱՄՆ-ում Հոլոքոստի թանգարանի հետ, ինչպես նաև հրեա գիտնականների հետ համատեղ աշխատում Ցեղասպանությանը նվիրված հանրագիտարանի և

---

333 U. S. Presidential Statements, Bill Clinton, April 22, 1997, http://www.armenian-genocide.org/Affirmation.60/current_category.4/affirmation_detail.html
334 «Զարթօնք» օրաթերթ, 4 մայիսի, 1997:
335 Տե՛ս Armenian Assembly of America, Annual Report, Washington, 1997, p. 27.

ակադեմիական ծրագրերի ու աշխատությունների վրա[336]:

Միացյալ Նահանգներում 1999 թ. ընթացող նախագահական ընտրարշավի շրջանակներում նախագահի թե՛ դեմոկրատական, թե՛ հանրապետական թեկնածուները, ցանկանալով ստանալ ամերիկահայ համայնքի աջակցությունը, նորից հանդես էին գալիս հայանպաստ կոչերով, խոստանում ճանաչել Հայոց ցեղասպանության փաստը: Հայ համայնքի համար առավել նախընտրելի էր Տեխասի կառավարիչ, հանրապետական կուսակցությունից նախագահի թեկնածու Ջորջ Բուշ Կրտսերը: Նա 2000 թ. փետրվարի 19-ին երկու հայերի՝ Միչիգան նահանգի բնակիչ Էդգար Հակոբյանին և Նյու Յորքից ձեռներեց Վազգեն Սեդրակյանին[337] ուղղված նամակում նշում էր. «XX դարը հատկանշուեց աներեւակայելի դաժանութիւններով, զանգվածային ջարդերով ու ցեղասպանութեամբ: Պատմութիւնը արձանագրել է, որ հայերը առաջին ժողովուրդն էին, որ անցնող դարում նման անգթութեան ենթարկուեցին: Հայերը ենթարկուեցին մի ցեղասպան արշավի, որը վեր է ամեն տեսակի ըմբռնումից և պարտադրում է ողջախոհ մարդկանց յիշել և ճանաչել ահավոր ոճիրի փաստերը: Եթէ նախագահ ընտրվեմ, ամեն ջանք պետք է թափեմ, որ մեր ազգը պատշաճորեն ճանաչի հայ ժողովրդի ողբերգական տառապանքները»[338]:

Հայկական լոբբիստական կազմակերպությունների ջանքերով 1999 թ. ապրիլի 28-ին ամերիկյան 60 կոնգրեսականներ Ներկայացուցիչների պալատեն ներկայացնում թիվ 155 բանաձևը, որը կոչ էր անում նախագահին՝ Ներկայացուցիչների պալատի Արտաքին

---

336 Տե՛ս Gregg H. S., նշվ. աշխ., էջ 14:

337 Տե՛ս George W. Bush Recognizes Armenian Genocide, https://anca.org/press-release/george-w-bush-recognizes-armenian-genocide/

338 «Ազդակ» օրաթերթ, 25 փետրուարի, 2000:

հարաբերությունների հանձնաժողովին, ԱՄՆ Հոլոքոստի, Երևանի Հայոց ցեղասպանության թանգարանին տրամադրել Հայոց ցեղասպանությանն անչվող, ինչպես նաև պատասխանատու պաշտոնյաների նկատմամբ թուրքական դատարանների վճիռը չիրականացնելու վերաբերյալ Միացյալ Նահանգներում առկա բոլոր փաստաթղթերը[339]:

1999 թ. մայիսի 27-ին թուրքական կառավարությունը Վաշինգտոնի իր դեսպանի միջոցով նամակ է ուղարկում բոլոր կոնգրեսականներին, որին կցված էր 11 էջանոց մի հուշագիր, որը կրում էր «Անկողմնակալ հայացք Ներկայացուցիչների պալատի թիվ 155 բանաձևին» խորագիրը: Նամակի նպատակն էր ճախողել վերոնշյալ բանաձևի ընդունումը, որն առաջարկում էր գիտական և հետազոտական նպատակներով ուսումնասիրել ամերիկյան Պետքարտուղարության տրամադրության տակ գտնվող փաստաթղթերն ու նյութերը[340]:

Հայկական լոբբիի ջանքերով, 1999թ. նոյեմբերի 18-ին կոնգրեսականներ Ջորջ Ռադանովիչը և Դեյվիդ Բոնիորը Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողով են ներկայացնում թիվ 398 բանաձևը, որը կոչ էր անում ԱՄՆ նախագահին՝ արտաքին գործերի պաշտոնյաներին, պետքարտուղարության աշխատակիցներին և ընդհանրապես գործադիր իշխանության ներկայացուցիչներին, ովքեր ներգրավված են մարդու իրավունքների, էթնիկ զտումների և ցեղասպանության հիմնահարցերի հետ

[339] Տե՛ս H. Res. 155-United States Record on the Armenian Genocide Resolution, https://www.congress.gov/bill/106th-congress/house-resolution/155/text, նաև՝ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 53, փաստաթուղթ 2:

[340] Տե՛ս Տատրյան Վ., Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական հիմնական փաստարկները. աղավաղման և կեղծարարության ուսումնասիրություն, էջ 7:

կապված աշխատանքներում, տրամադրել համապատասխան նյութերը:

Բանաձևում, մասնավորապես, արձանագրվում էին հետևյալ իրողությունները.

-Հայոց ցեղասպանությունը ծրագրվել և իրականացվել է Օսմանյան կայսրությունում 1915-1923 թթ.՝ պատճառ դառնալով 2 միլիոն հայերի տեղահանության, որոնցից 1.5 միլիոնը՝ տղամարդիկ, կանայք ու երեխաներ սպանվեցին, իսկ կես միլիոն վերապրողներ վտարվեցին իրենց տներից, որով վերացվեց հայ ժողովրդի 2500 տարվա ներկայությունը իր պատմական հայրենիքում:

- Միացյալ Նահանգների ազգային արխիվները պարունակում են հսկայական նյութեր Հայոց ցեղասպանության վերաբերյալ,

Նախագահ Բիլ Քլինթոնը 1992 թ. օգոստոսի 13-ին իր ելույթում նշել է «1915 թ. Ցեղասպանություն» արտահայտությունը: Ելնելով վերոնշյալից՝ Ներկայացուցիչների պալատը.

-Կոչ էր անում Նախագահին արտաքին գործերի պաշտոնյաներին, պետքարտուղարության աշխատակիցներին և, ընդհանրապես, գործադիր իշխանության ներկայացուցիչներին, ովքեր ներգրավված են մարդու իրավունքների, էթնիկ զտումների և ցեղասպանության հիմնահարցերի հետ առնչվող աշխատանքներում, տրամադրել համապատասխան նյութեր, ինչպես նաև տեղյակ պահել Հայոց ցեղասպանության վերաբերյալ անցյալում ԱՄՆ-ի ունեցած դիրքորոշմանը և ցեղասպանության մեղավորներին պատժելու հարցում թուրքական դատարանի ունեցած անհաջողության մասին, այլ կերպ ասած՝ ապահովել մարդու իրավունքների հիմնահարցերով զբաղվող ամերիկյան դիվանագետների՝ կրթական ծրագրերի

շրջանակներում Հայոց ցեղասպանության վերաբերյալ ուսուցումը:

- Կոչ է անում Նախագահին յուրաքանչյուր տարվա ապրիլի 24-ի իր ուղերձում մեկուկես միլիոն հայերի բնաջնջումը որակել որպես ցեղասպանություն[341]:

Բանաձևը բուռն անհանգստություն և դժգոհություն է առաջացնում թուրքական կառավարող շրջաններում և ԱՄՆ-ում գործող թուրքական լոբբիստական կառույցների շրջանում: Նրանք նշում էին, որ դրա ընդունումը մեծապես կխաթարի Թուրքիայի և Միացյալ Նահանգների հարաբերությունները, և այն վավերացվելու դեպքում Թուրքիան չի վարանի դիմելու անհրաժեշտ միջոցների:

Թուրքական մերժողական և անհանդուրժողական այս դիրքորոշումը քննադատող ելույթներով հանդես է գալիս Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախմբի համանախագահ Ֆրենկ Փալոնեն, ով 2000թ. մայիսի 15-ին Ներկայացուցիչների պալատում ունեցած ելույթի ժամանակ նշել է. «Այսօր թուրքական կառավարությունը հրաժարվում է ճանաչել թուրք ազգայնականների կողմից մարդկության նկատմամբ իրականացված ամենամեծ հանցագործությունը: Միացյալ Նահանգները, սակայն, պետք է ճանաչեն Հայոց ցեղասպանության փաստը, ավելին, պետք է օգտագործեն իրենց ունեցած ազդեցությունը Թուրքիայի վրա, որպեսզի վերջինս ևս ճիշտ քայլ կատարի՝ ճանաչի ցեղասպանությունը և բարելավի իր հարաբերությունները հարևան Հայաստանի հանրապետության հետ»[342]:

---

[341] Տե´ս ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 53, փաստաթուղթ 1:

[342] Pallone Criticizes Turkish Government’s Campaign to Defeat the Armenian Genocide Resolution (H.Res.398), https://anca.org/press-release/pallone-criticizes-turkish-governments-campaign-to-defeat-the-armenian-genocide-resolution-h-res-398/

Ներկայացուցիչների պալատի խոսնակ Դեննիս Հասթերթը Հայ դատի հանձնախմբի ներկայացուցիչներին խոստանում է բանաձևը դնել պալատում քվեարկության: Հայ դատի ամերիկյան հանձնախմբի Արևմտյան շրջանի ներկայացուցիչներից Պերճ Կարապետյանը, Հասթերթի խոստման հետ կապված, հանձնախմբի անունից գոհունակություն է հայտնում, ինչպես նաև կոչ է անում ամերիկահայ համայնքին ողջ ջանքերը կենտրոնացնել ի պաշտպանություն բանաձևի, որպեսզի այն ընդունվի Ներկայացուցիչների պալատում:

Թիվ 398 բանաձևի պաշտպաններից կոնգրեսական Ջեյմս Ռոգանը երկու անգամ հանդիպում է Դեննիս Հասթերթի հետ և կոչ անում բանաձևն անմիջապես դնել քվեարկության:

Այդ կապակցությամբ Ջ.Ռոգանը նշում էր.«Հայոց ցեղասպանության խնդիրը շատ կարևոր հիմնահարց է ողջ համաշխարհային պատմության մեջ: Հասթերթը, որպես նախկինում պատմություն դասավանդող, կարող է ողջունել ճշմարտության որոնման մեր ջանքերը»[343]:

2000 թ. սեպտեմբերի 14-ին բանաձևի շուրջ քննարկումներ են տեղի ունենում Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում և Մարդու իրավունքների ենթահանձնաժողովում[344], իսկ արդեն սեպտեմբերի 21-ին այն ընդունվում է նշված ենթահանձնաժողովի կողմից[345]: Պետքարտուղար Մադլեն Օլբրայթը, քննադատում է բանաձևի

---

343 ANCA-WR Welcomes Hastert Pledge to Pass Genocide Resolution, https://anca.org/press-release/anca-wr-welcomes-hastert-pledge-to-pass-genocide-resolution/

344 Տե´ս H. Res. 398, The United States Training on and Commemoration of the Armenian Genocide Resolution, Heraing before the Subcommittee on International Operations and Human Rights of the Committee on International Relations, House of Representatives, 106th Congress, Second Session.

345 Տե´ս Affirmation of the United States Record on the Armenian Genocide Resolution, United States Congress House of Representatives Committee on International Relations, p. 8.

ընդունումը, նշելով, որ այն կարող է վնասել ԱՄՆ-ի շահերին, Թուրքիայի հետ ունեցած հարաբերություններին, Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորմանը և այլն:

Միացյալ Նահանգների Կոնգրեսը չի հաստատում թիվ 398 բանաձևը, բայց 2000 թ. սեպտեմբերի 27-ին Ջորջ Ռադանովիչը և Դեյվիդ Բոնիորը Ներկայացուցիչների պալատ ներկայացնում թիվ 596 բանաձևը, որը հիմնականում կրկնում էր 398-րդ բանաձևի կետերն ու դրույթները՝ կրկին կոչ անելով ԱՄՆ-ի նախագահին ապրիլի 24-ի իր ուղերձներում հայկական կոտորածները որակել որպես «ցեղասպանություն»[346]:

Թիվ 596 բանաձևի կապակցությամբ Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը հանդես է գալիս հայտարարությամբ, որ եթե այն ընդունվի, կխոչընդոտի հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը և Կովկասյան տարածաշրջանում կայունության հաստատմանը:

Ինչպես թիվ 398 բանաձևի, այնպես էլ թիվ 596-ի դեպքում, Ներկայացուցիչների պալատի խոսնակ Դեննիս Հասթերթը ձգտում էր ամեն ինչ անել այն պալատում քվեարկության դնելու համար, ինչն առաջացնում է Քլինթոնյան վարչակարգի խիստ անհանգստությունը: Պատահական չէ, որ Բիլ Քլինթոնն անձամբ է հանդիպում Դ. Հասթերթի հետ և ներկայացնում այն բացասական հետևանքները, որ կարող էր ունենալ բանաձևի ընդունումը ԱՄՆ-ի համար:

Չնայած դրան, 2000 թ. հոկտեմբերի 11-ին թիվ 596 բանաձևը ընդունվում է Ներկայացուցիչների պալատի Միջազգային հարաբերությունների

[346] Տե՛ս ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 53, փաստաթուղթ 3:

հանձնաժողովի Արտաքին գործողությունների և Մարդու իրավունքների ենթահանձնաժողովի կողմից[347]: Բայց հոկտեմբերի 20-ին, երբ բանաձևը պետք է դրվեր քվեարկության, Դ. Հասթերթը, ամերիկյան վարչակարգի ճնշման ներքո այն հանում է օրակարգից:

Ստորև մեջբերենք նախագահ Բիլ Քլինթոնի նամակը՝ ուղղված Պալատի խոսնակ Դեննիս Հասթերթին.

«Հարգելի խոսնակ,

Ձեզ եմ դիմում 1915-1923 թթ. Արևելյան Անատոլիայում Օսմանյան իշխանության օրոք տեղի ունեցած դժբախտ դեպքերին վերաբերող թիվ 596 օրինագծի շուրջ մտահոգություններս արտահայտելու նպատակով: Ամեն տարի ապրիլի 24-ը ես հիշատակում եմ որպես Հայերի հիշատակի օր՝ ոգեկոչելով այդ դարաշրջանի անմեղ հայերի տարագրությունն ու կոտորածը: Եվ ամեն տարի ես կոչ եմ ուղղում բոլոր ամերիկացիներին, որպեսզի նրանք ամեն ջանք գործադրեն, որ նման սարսափները այլևս երբեք չկրկնվեն: Այնուամենայնիվ, ես խորապես մտահոգ եմ, որ թիվ 596 բանաձևի ընդունումը հեռուն գնացող բացասական հետևանքներ պիտի ունենա Միացյալ Նահանգների համար:

Մենք նշանակալի շահեր ունենք աշխարհագրական այդ տարածաշրջանում, իսկ բանաձևի ընդունումը բացասաբար կարող է անդրադառնալ այդ շահերի, ինչպես նաև Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանն ուղղված ջանքերի վրա:

Ես խստագույնս հորդորում եմ օրինագիծը չդնել այս օրվա օրակարգում»[348]:

---

[347] Տե՛ս Մսըրլեան Զ., Հայկական հարցի հոլովոյթը 1939-2010 թթ., էջ 268:

[348] Նույնի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական հարցը (1900-2009), էջ 121-122:

Այսպիսով, ամերիկյան քաղաքական շահերից ելնելով՝ ճախողվում է թիվ 596 բանաձևի քվեարկությունը, իսկ Ներկայացուցիչների պալատի խոսնակ Դ. Հասթերթը հանդես է գալիս հայտարարությամբ, որտեղ նշում էր, որ ինքը կողմ էր բանաձևի քվեարկությանը և վստահ, որ այն կընդունվեր Ներկայացուցիչների պալատի անդամների մեծամասնության կողմից: Շարունակելով, Դեննիս Հասթերթը ավելացնում է, որ չնայած Քլինթոնյան վարչակարգի դիմադրությանը, ինքը մտադիր է շարունակել պայքարը Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի ընդունման համար:

Ամերիկայի Հայկական համագումարը, իր հրապարակած հայտարարության մեջ հիասթափություն էր հայտնում, որ Քլինթոնյան վարչակարգը ենթարկվեց Թուրքիայի ճնշումներին և ձախողեց թիվ 596բանաձևի ընդունումը:

2000 թ. ԱՄՆ-ում տեղի ունեցած նախագահական ընտրությունների ժամանակ ամերիկահայ համայնքը, հաշվի առնելով Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևերի հարցում Բիլ Քլինթոնի որդեգրած դիրքորոշումը,սատարում է Ջորջ Բուշ Կրտսերին,ով ընտրվում է ԱՄՆ նախագահ:

Դեկտեմբերի 18-ին Հայ դատի հանձնախումբը շնորհավորական նամակ է ուղարկում նորընտիր նախագահին և հիշեցնում Հայոց ցեղասպանությունը ճանաչելու և այն որպես «ցեղասպանություն» որակելու վերաբերյալ իր դեռևս 2000 թ. փետրվարի 19-ի հայտարարության մեջ տված նախընտրական խոստումները:

Ամերիկայի Հայկական համագումարի և Հայ դատի հանձնախմբի համատեղ ջանքերի արդյունք էր այն, որ Ներկայացուցիչների պալատի շուրջ 100 անդամներ գրություն են ուղարկում նախագահ

Բուշին՝ կոչ անելով պահել իր խոստումը և ապրիլի 24-ի իր ուղերձում օգտագործել «ցեղասպանություն» բառը[349]:

Չնայած հայկական լոբբիի համառ ջանքերին, նախագահ ընտրվելուց հետո Բուշ Կրտսերը չի կատարում իր խոստումը: 2001 թ. ապրիլի 24-ին հայությանն ուղղված իր պաշտոնական ուղերձում նա այդպես էլ չի օգտագործում ցեղասպանություն բառը՝ փոխարենը նշելով հետևյալը. «Այսօր նշում ենք պատմության մեծ ողբերգություններից մեկը՝ շուրջ մեկուկես միլիոն հայերի բռնի արտաքսումը և բնաջնջումը Օսմանյան կայսրության գոյության վերջին տարիներին: Այս տխրահռչակ սպանությունները սևացրին XX դարը և շարունակում են հետապնդել մեզ նաև այսօր: Այսօր ես միանում եմ ամերիկահայությանը և աշխարհի ողջ հայությանը՝ սգալու բազմաթիվ անմեղ կյանքերի կորուստը»[350]:

Այս առիթով Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը հանդես է գալիս մի հայտարարությամբ, որտեղ ասվում էր, որ Նախագահի հայտարարությունը կազմում է Քլինթոնի վարչակազմի քաղաքականության շարունակությունը, այն է՝ Հայոց ցեղասպանության ուրացման հարցում Թուրքիայի կառավարության քաղաքականության մեղսակից լինելը:

Իր հերթին, Ներկայացուցիչների պալատի անդամ Ջորջ Ռադանովիչն իր հուսախաբությունն է հայտնում նախագահ Բուշ Կրտսերի որդեգրած դիրքորոշման վերաբերյալ և հայտարարում, որ

---

349 Տե՛ս Over 100 U.S. Representatives Call on President Bush to Honor his Armenian Genocide Pledge, https://anca.org/press-release/over-100-u-s-representatives-call-on-president-bush-to-honor-his-armenian-genocide-pledge/

350 President Bush Breaks Pledge to Recognize Armenian Genocide, https://anca.org/press-release/president-bush-breaks-pledge-to-recognize-armenian-genocide/

կշարունակի Հայոց ցեղասպանության ճանաչման համար տարվող պայքարը:

Նույն՝ 2001 թ.՝ Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախմբի նախագահներ Ֆրենկ Փալոնեի և Ջո Նոլենբերգի նախաձեռնությամբ Կոնգրեսում նշվում է Մեծ եղեռնի 86-րդ ամյակը: Իր ելույթում Ֆ.Փալոնեն նշում է, որ նախագահ Բուշը, չօգտագործելով ցեղասպանություն բառը, նվազեցնում է 1915-1923 թթ. դեպքերի տարողությունը[351]: Չնայած նախագահ Բուշ Կրտսերի այս դիրքորոշմանը, այնուամենայնիվ, ամերիկահայ լոբբին շարունակում է պայքարը ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը հասնելու համար: 2001 թ. մայիսի 8-ին ԱՄՆ հայ համայնքի և Հայ դատի հանձնախմբի ներկայացուցիչները հանդիպում են Սենատի ու Ներկայացուցիչների պալատի անդամների հետ և քննարկում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: Հանդիպման ընթացքում սենատոր Ռոբերտ Դոուլը հույս է հայտնում, որ Ամերիկայի հայ համայնքի համառությունը անպատճառ կպսակվի հաղթանակով, և՛ ԱՄՆ-ն, և՛ Թուրքիան, և՛ քաղաքակիրթ ողջ աշխարհը կճանաչեն ցեղասպանության փաստը[352]:

Սկսած 2003 թվականից թուրք-ամերիկյան հարաբերությունների վատթարացումը, որը պայմանավորված էր ամերիկյան զորքերի՝ Իրաք ներթափանցմամբ, հարմար և նպաստավոր առիթ է համարվում հայկական լոբբիի ու հայության շահերը պաշտպանող կոնգրեսականների համար՝ կրկին բարձրացնելու ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը: ԱՄՆ-ն, իր հերթին, փորձում էր հայկական գործոնն

[351] Տե՛ս «Ազդակ» օրաթերթ, 26 ապրիլի, 2001:
[352] Տե՛ս «Զարթոնք» օրաթերթ, 12 յունիսի, 2001:

օգտագործել որպես ճնշման միջոց Թուրքիայի հետ հարաբերություններում:

Ընդ որում, ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների վատթարացումը հանգեցնում է ոչ միայն Միացյալ Նահանգների վարչակազմի կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման խնդրի արծարծմանը, այլև ԱՄՆ-ի բնակչության գիտակցության մեջ էական փոփոխությունների[353]: 2003 թ. ապրիլի 10-ին Ներկայացուցիչների պալատի անդամներ Ռադանովիչը, Շիֆը, Նոլենբերգը, Փալոնեն և մի խումբ այլ անդամներ պալատի Արդարադատության հանձնաժողով են ներկայացնում թիվ 193 բանաձևը, որը վերահաստատում էր իր աջակցությունը 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիային և նվիրված էր վերջինիս գործողության մեջ մտնելու 15-ամյակին[354]: Թուրքական լոբբին փորձում է ամեն կերպ կանխել այդ բանաձևի ընդունումը, բայց մայիսի 22-ին այն ընդունվում է նշված հանձնաժողովի կողմից, իսկ հունիսի 10-ին՝ ներկայացվում Սենատ, որտեղ սակայն, վերջին պահին հանվում է քվեարկությունից[355]:

Քչերն էին կասկածում, որ բանաձևը կընդունվեր, եթե չլիներ Սպիտակ տան և պետքարտուղարության ճնշումը Սենատի ղեկավարության վրա: Հայտնի է, որ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ ունեցած հեռախոսազրույցի ժամանակ ԱՄՆ-ի փոխնախագահ Դիկ Չեյնը խոստացել էր վերջինիս միջոցներ

353 Տե՛ս Մուրադյան Ի., նշվ. աշխ., էջ 62:
354 Տե՛ս H. Res. 193-Reaffirming Support of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide and Anticipating the 15th Anniversary of the Enactment of the Genocide Convention Implementation Act of 1987, https://www.congress.gov/bill/108th-congress/house-resolution/193/text
355 Տե՛ս Պողոսյան Բ., նշվ. աշխ., էջ 54:

ձեռնարկել՝ կասեցնելու Հայոց ցեղասպանության վերաբերյալ օրենքի նախագծի քննարկումը Կոնգրեսում:

2005 թվականին լրանում է Մեծ եղեռնի 90-ամյա տարելիցը: Այդ կապակցությամբ ամերիկահայությունը կրկին սպասում էր ԱՄՆ-ի նախագահի կողմից հայերի ջարդերը որպես ցեղասպանություն բնորոշելուն: ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշ Կրտսերը, սակայն, այդպես էլ իր ելույթում չարտասանեց ցեղասպանություն բառը՝ փոխարենը օգտագործելով «մասսայական կոտորած, բռնագաղթեցում և հարկադիր աքսոր» արտահայտությունները[356]:

Ամերիկայի Հայկական համագումարի և Հայ դատի հանձնախմբի ջանքերով ու ակտիվ աջակցությամբ 2005 թ. հունիսի 14-ին Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատ է ներկայացվում կոնգրեսականներ Ջորջ Ռադանովիչի, Ջո Նոլենբերգի, Ադամ Շիֆի, Ֆրենկ Փալոնեի հեղինակած օրենսդրական փաթեթը, որը պարունակում էր թիվ 316 և թիվ 195 բանաձևերը: Առաջինը ԱՄՆ-ի նախագահին կոչ էր անում արտաքին քաղաքականություն իրականացնել հաշվի առնել Հայոց ցեղասպանության փաստը:

Նույն թվականի հունիսի 29-ին թիվ 195 բանաձևը արդեն ներկայացվում է Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողով: Բանաձևը կոչ էր անում Թուրքիային ճանաչել Հայոց ցեղասպանությունը, բարելավել հարաբերությունները Հայաստանի Հանրապետության հետ՝ դրանք համարելով կարևոր նախապայման Թուրքիայի՝ եվրոինտեգրման ճանապարհին:

2005 թ. սեպտեմբերի 21-ին թիվ 316 բանաձևը ձայների մեծամասնությամբ ընդունվում է Պալատի Արտաքին

[356] Տե´ս Evans J., Truth Held Hostage: America and the Armenian Genocide-What Then? What Now?, London, 2016, p. 76.

հարաբերությունների հանձնաժողովում: Այս անգամ ևս թուրքական կառավարությունը և լոբբին ակտիվ պայքար են ծավալում, որպեսզի բանաձևը վերջնական հաստատում չստանա Պալատի լիագումար նիստում՝ հայտարարելով, որ դրա ընդունումը կունենա բացասական հետևանքներ թուրք-ամերիկյան հարաբերությունների համար:

Ամերիկահայ համայնքը և լոբբին կարևոր դերակատարություն ունեն Միացյալ Նահանգներում ընթացող թե՛ նախագահական, և՛ թե կոնգրեսի անդամների ընտրության ժամանակ: Ընդ որում ամերիկյան քաղաքական գործիչները ձգտում են ոչ միայն ստանալ հայ համայնքի ձայները ընտրությունների ժամանակ, այլ նաև նրանց նյութական աջակցությունը: Օրինակ՝ ԱՄՆ 2004 թ. նախագահական ընտրությունների ժամանակ, ըստ Հայ դատի ամերիկյան հանձնախմբի կատարած ուսումնասիրության, ամերիկահայության նյութական մասնակցությունը կազմել է 5 միլիոն դոլար, որից ավելի քան 3.9 միլիոն դոլարը պաշտոնապես արձանագրված է որպես նվիրատվություն: Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը նշում է, որ այս ամենը վկայում է ամերիկյան քաղաքական կյանքում հայության ունեցած ազդեցության ու դերակատարության և քաղաքական գործընթացներում մասնակցության աճի մասին[357]:

Ամերիկահայ լոբբիի ջանքերով 2005 թ. նոյեմբերի 18-ին սենատորներ Ջոն Էնսայնը և Ռիչարդ Դարբինը Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողով են ներկայացնում թիվ 320 բանաձևը, որը կոչ էր անում երկրի նախագահին, որպեսզի ԱՄՆ արտաքին քաղաքականությունը արտահայտի համապատասխան

[357] Տե՛ս «Հայրենիք» օրաթերթ, 14 յունուարի, 2005:

ըմբռնում այնպիսի խնդիրների նկատմամբ, ինչպիսիք են մարդու իրավունքները, էթնիկ զտումները, ցեղասպանությունը, ինչպես նաև Միացյալ Նահանգների կողմից փաստերով արձանագրված Հայոց ցեղասպանությունը: Բանաձևը միաժամանակ կոչ էր անում նախագահին, որպեսզի նա ապրիլի 24-ի իր ելույթներում մեկուկես միլիոն հայերի սիստեմատիկ և կանխամտածված ոչնչացումը բնորոշի որպես «ցեղասպանություն»[358]:

Սենատում բանաձևը ներկայացնելիս ունեցած ելույթի ժամանակ Ջոն Էնսայնը նշել է. «Հիմա, ավելի քան երբևէ, կարևոր է, որ ամերիկյան արտաքին քաղաքականությունը արտացոլի մեր ժողովրդի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը: Ես հույս ունեմ, որ նման վայրագությունները ճանաչելով, մենք ապագայում կարող ենք խուսափել դրանցից: Ես ողջունում եմ հայ ժողովրդին իր խիզախության և համառության համար, որով կարողացավ դիմակայել պատմության այս սարսափելի դարը»:

Սենատոր Ռիչարդ Դարբինը իր հերթին նշել է. «Հայոց ցեղասպանությունը XX դարի առաջին ցեղասպանությունն էր, որը կազմակերպված հանցագործություն էր մարդկության դեմ՝ ներառելով սպանություն, աքսոր, խոշտանգում և ստրկավաճառություն: Միացյալ Նահանգների հստակ դիրքորոշումը պատմական այս փաստի նկատմամբ չափազանց կարևոր է»:

Բանաձևի ներկայացման հետ կապված հայտարարությամբ հանդես է եկել նաև Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը,

---

[358] Տե՛ս S. Res. 320, Calling on the President to Ensure That the Foreign Policy of the United States Reflects Appropriate Understanding and Sensitivity Concerning Issues Related to Human Rights, Ethnic Cleansing and Genocide Documented in the United States Record Relating to the Armenian Genocide, https://www.congress.gov/bill/109th-congress/senate-resolution/320/text

ովնշել է.«Մենք միանում ենք Միացյալ Նահանգների ողջ հայության և ողջունում սենատորների կողմից Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձևի ներկայացումը Սենատում»[359]:

Չնայած Արտաքին հարաբերությունների հանձնաժողովների կողմից ընդունվելուն, այնուամենայնիվ, թուրքական հակազդեցության պայմաններում նշված բանաձևերը, այդպես էլ չեն դրվում Ներկայացուցիչների պալատի ու Սենատի լիագումար նիստերի օրակարգում:

2007 թ. հունվարի 30-ին կոնգրեսականներ Ռադանովիչը, Շիֆը, Փալոնեն, Նոլենբերգը, Շերմանը և Մքքոտրը Ներկայացուցիչների պալատ են ներկայացնում Հայոց ցեղասպանության վերաբերյալ թիվ 106 բանաձևը, որը պետք է քննարկվեր Պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում: Այն ԱՄՆ-ի նախագահին կոչ էր անում երկրի արտաքին քաղաքականությունը իրականացնել իս հաշվի առնել մարդու իրավունքների, էթնիկ զտումների և Հայոց ցեղասպանության փաստը: Բանաձևում նշվում էր, որ 1915-1923 թթ. Օսմանյան կայսրությունում իրականացվել է հայ ժողովրդի ցեղասպանություն՝ պատճառ դառնալով մեկուկես միլիոն հայերի կոտորածի և կես միլիոն հայերի տեղահանության, որի հետևանքով վերացել է հայ ժողովրդի 2500 տարվա ներկայությունը իր պատմական հայրենիքում: Միաժամանակ արձանագրվում էր, որ Միացյալ Նահանգների արխիվները փաստական հարուստ նյութեր են պարունակում Հայոց ցեղասպանության վերաբերյալ և որ Միացյալ Նահանգների իշխանության օրենսդիր մարմինը բազմաթիվ բանաձևերով դատապարտել է հայության

[359] ANCA Welcomes Introduction of Armenian Genocide Resolution in the U.S. Senate, https://anca.org/press-release/anca-welcomes-introduction-of-armenian-genocide-resolution-in-the-u-s-senat

կոտորածները, իսկ ամերիկյան մի քանի նախագահներ՛ իրենց ելույթներում դատապարտել են այդ սարսափելի իրադարձությունները[360]:

Այս անգամ ևս Թուրքիային օգնության են շտապում ԱՄՆ-ի գործադիր իշխանության ներկայացուցիչները: Միացյալ Նահանգների պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը մարտի 27-ին ամերիկաթուրքական խորհուրդի կազմակերպած ընթրիքի ժամանակ իր ելույթում նշել է, որ Վաշինգտոնը Թուրքիային համարում է իր դաշնակիցը,որը կարևոր նշանակություն ունի ԱՄՆ-ի անվտանգության սպառնացող մարտահրավերներին դիմակայելու առումով: Ռոբերտ Գեյթսը, միաժամանակ նամակներ էր ուղարկել կոնգրեսականներին՝ կոչ անելով չքվեարկել Հայոց ցեղասպանության ճանաչումը ապահովող բանաձևի օգտին՝ պնդելով, որ նման քայլերը կարող են խոչընդոտել Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը[361]:

Թիվ 106 բանաձևի շուրջ ծավալվող իրադարձությունները ուշագրավ էին նրանով, որ 2006 թ. աշնանը տեղի ունեցած Կոնգրեսի ընտրություններում Դեմոկրատական կուսակցությունը մեծամասնություն էր դարձել Ներկայացուցիչների պալատում, իսկ Պալատի խոսնակ Նենսի Փելոսին էլ պաշտպանում էր Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևի ընդունումը: Նման պայմաններում, շատ իրական էր համարվում թիվ 106 բանաձևի ընդունումը Ներկայացուցիչների պալատի կողմից:Այդ բանաձևն աջակցություն էր ստացել մարդու իրավունքների

---

[360] Տե՛ս H. Res. 106, Calling on the President to Ensure That the Foreign Policy of the United States Reflects Appropriate Understanding and Sensitivity Concerning Issues Related to Human Rights, Ethnic Cleansing and Genocide Documented in the United States Record Relating to the Armenian Genocide and for Other Purposes, https://www.congress.gov/bill/110th-congress/house-resolution/106/text

[361] Տե՛ս «Հայրենիք» օրաթերթ, 31 մարտի, 2007:

պաշտպանության, էթնիկ, կրոնական, քաղաքացիական շուրջ 50 միջազգային կազմակերպությունների կողմից:

Մինչ բանաձևի քվեարկության դրվելը ամերիկահայ լոբբիի ներկայացուցիչները, մարդու իրավունքների հիմնահարցերով զբաղվող կոնգրեսականների հետ մեկտեղ շուրջ ինը ամիս հսկայական աշխատանք են ծավալել՝ Կոնգրեսի մյուս անդամներին ծանոթացնելով Հայոց ցեղասպանությունը և մարդկության նկատմամբ իրականացված այդ հանցագործության ճանաչման կարևորությանը[362]:

2007 թ. սեպտեմբերի 21-ին 225 ներկայացուցիչ հանդես են գալիս թիվ 106 բանաձևի պաշտպանությամբ[363], որի շնորհիվ հոկտեմբերի 10-ին բանաձևը ընդունվում է Պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից: Դա կրկին առաջացնում է պաշտոնական Անկարայի դժգոհությունը. Թուրքիան նույնիսկ կանչում է Վաշինգտոնում գտնվող իր դեսպանին՝ խորհրդակցելու բանաձևի վերջնական ընդունումը կանխելու շուրջ:

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարել էր, որ եթե Կոնգրեսը ընդունի այդ բանաձևը, ապա հինքը լուրջ մտավախություն ունի, որ դա կարող է ստվեր գցել թուրք-ամերիկյան ռազմավարական գործընկերության վրա[364]:

Թուրքական լոբբին* ևս ակտիվ գործունեություն է ծավալում օրինագծի ընդունման դեմ: Բավական է միայն նշել, որ մեկ ամսվա ընթացքում նրանք բազմաթիվ հանդիպումներ

---

362 Տե՛ս Armenian Genocide Resolution (H.Res.106) to be Considered by Key Committee on October 10th, https://anca.org/press-release/breaking-news-armenian-genocide-resolution-h-res-106-to-be-considered-by-key-committee-on-october-10th/

363 Տե՛ս ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 58, փաստաթուղթ 1:

364 Տե՛ս «Հայրենիք» օրաթերթ, 23 փետրուարի, 2007:

են կազմակերպում կոնգրեսականների, ինչպես նաև հրեական լոբբինգի ներկայացուցիչների հետ և հորդորում դեմ քվեարկել բանաձևի ընդունմանը:

Բանաձևը, սակայն, այդպես էլ չի հասնում Կոնգրեսի Վերին պալատ՝ Սենատ, քանի որ օրենքի ուժ չուներ և պարտադիր չէր ամերիկյան կառավարության համար:

Փաստորեն ամերիկյան վարչակարգը կրկին, չցանկանալով վտանգել իր քաղաքական շահերը և սրել հարաբերությունները Թուրքիայի հետ, հրաժարվում է Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի ընդունումից:

ԱՄՆ-ում այս թեմայով տպագրված հոդվածներից մեկում նշվում է, որ Թուրքիան համարվում է Միջին Արևելքում միակ երկիրը, որը կարողանում է արդյունավետ հարաբերություններ հաստատել հարևան երկրների հետ: ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների սերտացումը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ վերջինս ազդեցություն ունի Բալկաններում, Սև ծովում և Կովկասյան տարածաշրջանում: Միաժամանակ, այն նաև կարևոր ուղի է Պարսից ծոցից և Իրաքից դեպի Եվրոպա գազ ու նավթ արտահանելու համար[365]:

---

365 Տե՛ս Burns N., The Future of the US-Turkey Relationship, Washington DC, 2007, p. 2.

*Վերջին տարիներին Թուրքիան և ԱՄՆ-ում բնակվող թուրքերը ուժեղացրել են ջանքերը՝ հակազդելու հայկական լոբբիստական կառույցներին: Միացյալ Նահանգներում գործում են թուրքական շուրջ 180 հասարակական կազմակերպություններ, սակայն համաամերիկյան ձևաչափով հանդես են գալիս երկու խոշոր լոբբիստական կառույցներ՝ Թուրք-ամերիկյան միությունների համագումարը (1967 թ.) և Թուրք-ամերիկյան կազմակերպությունների համադաշնությունը (1956 թ.), որոնցում մեկտեղված են տասնյակ հասարակական, մշակութային ու գիտակրթական կազմակերպություններ: Թուրքական լոբբինգը իր ջանքերը կենտրոնացնում է երկու հիմնական ուղղությունների վրա, այն է՝ խոչընդոտել Հայոց ցեղասպանության վերաբերյալ ցանկացած բանաձևի ընդունմանը, ՀՀ-ին ու Արցախին տրամադրվող ամերիկյան օգնությունը, և երկրորդ, խթանել ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների զարգացումը և ապահովել ամերիկյան օժանդակության տրամադրումը Թուրքիային:

Նույն հոդվածում նաև նշվում է, որ Հայոց ցեղասպանության խնդիրը լուրջ կնճիռ է թուրք-ամերիկյան հարաբերություններում և ըստ այդմ կոչ է արվում Կոնգրեսին չընդունել Ներկայացուցիչների պալատի կողմից առաջադրված 106-րդ բանաձևը, որը նոր խոչընդոտ կստեղծի թուրք-ամերիկյան հարաբերություններում:

2007 թ. Միացյալ Նահանգներում կրկին մեկնարկած նախագահական ընտրարշավի շրջանակներում նախագահի թեկնածուները նորից հանդես են գալիս հայ համայնքին տրված խոստումներով, որտեղ նշում էին, որ ընտրվելու դեպքում իրենք անպայման կընդունեն Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևը:

Այսպես, նախագահի թեկնածու, սենատոր Բարաք Օբաման խոստանում է ընտրվելու պարագայում ճանաչել Հայոց ցեղասպանությունը, ինչը վերահաստատում է 2008 թ. հունիսի 17-ին Հայ դատի հանձնախմբի նախագահ Քեն Խաչիկյանին ուղարկված նամակում, որտեղ նա նշել է. «Ես կիսում եմ Ձեր տեսակետը, որ Միացյալ Նահանգները պետք է 1915-1923 թթ. Օսմանյան կառավարության կողմից իրականացված գործողությունները ճանաչեն որպես ցեղասպանություն: Մենք պետք է ընդունենք այս ողբերգական իրականությունը: Բուշի վարչակազմի ժխտողական կեցվածքը այս հարցում անընդունելի է և ես ամեն ջանք կգործադրեմ, որպեսզի կառավարությունը փոխի իր դիրքորոշումը»[366]:

Դրանից առաջ՝ 2008 թ. մայիսի 28-ին Բարաք Օբաման Լոս Անջելեսում ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների ղեկավարների հետ ունեցած հանդիպման ժամանակ հայտարարել էր, որ ԱՄՆ-ն արժանի է այնպիսի առաջնորդի, ով արդարացի

[366] Sen. Obama Reaffirms Commitment to U.S. Armenian Genocide Recognition, https://anca.org/press-release/sen-obama-reaffirms-commitment-to-u-s-armenian-genocide-recognition/

դիրքորոշում ունի Հայոց ցեղասպանության հարցում և վճռականորեն դատապարտում է ցեղասպանության բոլոր դրսևորումները: Նա նաև ասվածին հավելել էր, որ ինքն աջակցել է Ներկայացուցիչների պալատի կողմից 106-րդ բանաձևի ընդունմանը, և նախագահ ընտրվելու դեպքում ամեն ինչ կանի, որ այն ընդունվի նաև Սենատի կողմից[367]: Նրա այս խոստումները, բուռն հակազդեցություն էին առաջ բերել Թուրքիայում: Վերջինիս վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը անգամ հայտարարել էր, որ Օբաման անհրաժեշտ պատկերացում չունի Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության և երկրի շահերի մասին[368]:

Թուրքիա-Իսրայել հարաբերությունների վատթարացման և ԱՄՆ-ի Կոնգրեսում հրեական լոբբիի՝ թուրքերի դեմ ծավալած քարոզչության պայմաններում, ամերիկահայ համայնքը սպասում էր, որ Օբաման կկատարի իր նախընտրական խոստումը և 2009 թվականի ապրիլի 24-ի իր ուղերձում կօգտագործի ցեղասպանություն եզրը: Բայց այդպես չեղավ: Նախագահական ընտրություններում հաղթանակ տարած Դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչ Բարաք Օբաման, իր պաշտոնը ստանձնելուց մեկ ամիս հետո՝ 2009 թ. փետրվարի կեսերին Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի և վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ ունեցած հեռախոսազրույցի ժամանակ նշում է, որ ինքը կողմ է Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանը և Հայոց ցեղասպանության հարցում կորդեգրի այնպիսի դիրքորոշում, որը չի վնասի թուրք-ամերիկյան հարաբերությունները:

---

367 Տե՛ս As President, I Will Recognize the Armenian Genocide, Obama, https://www.liveleak.com/view?i=0f1_1358686608
368 Տե՛ս Մսըրլեան Զ., Ամերիկայի Միացյալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական հարցը (1900-2009), էջ 142:

2009 թ. մարտի 17-ին մի խումբ կոնգրեսականներ Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախմբի համանախագահներ Ֆրենկ Փալոնեի և Մարկ Քիրքի գլխավորությամբ Ներկայացուցիչների պալատ են ներկայացնում Հայոց ցեղասպանության վերաբերյալ թիվ 252 բանաձևը, որը կրկին կոչ էր անում Միացյալ Նահանգների նախագահին երկրի արտաքին քաղաքականությունն իրականացնելիս հաշվի առնել մարդու իրավունքները, էթնիկ զտումները և Հայոց ցեղասպանությունը, որի վերաբերյալ ԱՄՆ-ում կան փաստագրված արձանագրություններ, ինչպես նաև հայ համայնքին ուղղված ապրիլի 24-ի ուղերձում մեկուկես միլիոն հայերի ծրագրված բնաջնջումը բնորոշել որպես «ցեղասպանություն»[369]: Կոնգրեսականները միաժամանակ դիմում են Ներկայացուցիչների պալատի խոսնակ Նանսի Փելոսիին՝ խնդրելով վերջինիս աջակցությունը բանաձևի ընդունման հարցում:

Բանաձևի մշակման գործում կարևոր դերակատարություն էր ունեցել նաև Հայ-ամերիկյան քաղաքական գործողությունների հանձնաժողովը, որը երկկուսակցական կազմակերպություն է և ակտիվ գործունեություն է ծավալում օրենսդիր այն թեկնածուներին աջակցելու ուղղությամբ, որոնք քայլեր են ձեռնարկում Կովկասում խաղաղություն և կայունություն հաստատելու, ինչպես նաև ամերիկահայության շահերը պաշտպանելու համար:

Մինչ հայկական լոբբին և հայամետ կոնգրեսականները աշխատանք էին տանում բանաձևի

---

369 Տե՛ս H. Res. 252, Calling Upon the President to Ensure That the Foreign Policy of the United States Reflects Appropriate Understanding and Sensitivity Concerning Issues Related to Human Rights, Ethnic Cleansing, and Genocide Documented in the United States Record Relating to the Armenian Genocide, and for Other Purposes, https://www.congress.gov/bill/111th-congress/house-resolution/252/text

ընդունման ուղղությամբ, 2009 թ. ապրիլին նախագահ Բարաք Օբաման այցելում է Թուրքիա: Այստեղ թուրքական կառավարող շրջանակները նրան զգուշացնում են, որ ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը լրջորեն կվնասի հայ-թուրքական հաշտեցման գործընթացին:

Անկարայում ամերիկյան լրագրողներից մեկի տված այն հարցին, թե ինչպիսի՞ն է նախագահ Օբամայի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում, վերջինս պատասխանում է, որ իր տեսակետները չեն փոխվել, բայց ինքը մեծապես կարևորում է առկա խնդիրները լուծելու համար հայ-թուրքական բանակցային գործընթացը:

Ինչ վերաբերում է Բարաք Օբամայի՝ 2009 թ. ապրիլի 24-ի ուղերձին, ապա այն հնչեց հետևյալ ձևակերպմամբ. «94 տարի առաջ տեղի ունեցավ XX դարի մեծագույն վայրագություններից մեկը: Ամեն տարի մենք հիշում ենք Օսմանյան կայսրության գոյության վերջին շրջանում տեղի ունեցած մեկուկես միլիոն հայերի կոտորածը: Մեծ եղեռնը պետք է ապրի մեր հուշերում, այնպես ինչպես ապրում է հայության սրտերում: Ոչինչ չի կարող հետ բերել Մեծ եղեռնի կորուստները, սակայն անցած 94 տարիների ընթացքում հայերի ունեցած ներդրումները վկայում են նրանց տաղանդի և քաջության մասին: Ամերիկան ավելի բարգավաճ է շնորհիվ հայերի այն նախնիների, որոնք այստեղ եկան 1915 թ. հետևանքով: Այսօր ես կանգնած եմ նրանց և ողջ հայության կողքին ընկերության, միասնության և խորը հարգանքի զգացումով»[370]:

Ամերիկայի Հայկական համագումարի և Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի ջանքերով Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի Արտաքին

---

[370] Statement of President Barack Obama on Armenian Remembrance Day, http://www.armenian-genocide.org/Affirmation.408/current_category.4/affirmation_detail.html

հարաբերությունների հանձնաժողովը 2010թ. մարտի 4-ին ընդունում է թիվ 252 բանաձևը: Բանաձևի քվեարկությանը ներկա էին նաև ցեղասպանությունը վերապրած երեք հայեր՝ 105-ամյա Սիրարփի Խոյանը, 98-ամյա Ճարլոտ Քեչեջյանը և 97-ամյա Օնորիկ Էմինյանը[371]:

Ամերիկայի Հայկական համագումարը թիվ 252 բանաձևի ընդունման կապակցությամբ հանդես է գալիս հայտարարությամբ, որտեղ նշում էր. «Հայ ժողովրդի հանդեպ Ամերիկայի որդեգրած դիրքորոշումը հզոր ազդանշան կհանդիսանա, որ ցեղասպանությունը և էթնիկական զտումները երբեք չանտեսվեն»[372]:

Հայ դատի ամերիկյան հանձնախմբի մամլո քարտուղար Էլիզաբեթ Չուլջյանը, 252-րդ բանաձևի կապակցությամբ ներկայացնելով հանձնախմբի դիրքորոշումը, նշում էր. «Մենք հպարտ ենք, որ կոմիտեն հանդես եկավ թուրքական կառավարության կողմից Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականության դեմ: Մենք կշարունակենք կոնգրեսականների և ԱՄՆ-ի հայ համայնքի հետ մեր աշխատանքը՝ ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատում բանաձևի լիարժեք ընդունման համար»[373]:

Թիվ 252 բանաձևին դեմ քվեարկածները իրենց մոտեցումը պայմանավորում էին ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններով և այն խնդրով, որ բանաձևի ընդունումը կվնասի այդ հարաբերությունները, ինչպես նաև կարող է վտանգել Աֆղանստանում գտնվող ամերիկյան զորքերը:

---

[371] Տե´ս Genocide Survivors; Armenian Community Leaders to Attend House Foreign Affairs Committee Mark-up of Armenian Genocide Resolution, https://anca.org/press-release/genocide-survivors-armenian-community-leaders-to-attend-house-foreign-affairs-committee-mark-up-of-armenian-genocide-resolution/

[372] Armenian-American Community United in Support of U. S. Affirmation of the Armenian Genocide, http://www.aaainc.org/index.php?id=804

[373] Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը բավարարված է Հայոց ցեղասպանության մասին 252 բանաձևի ընդունմամբ, http://www.panarmenian.net/arm/news/45065/

Վերոնշյալ բանաձևի ընդունումն առաջացնում է պաշտոնական Անկարայի բուռն դժգոհությունը: Վերջինս հենց նույն օրը հետ է կանչում ԱՄՆ-ում իր դեսպան Նամիկ Թանին՝ սպառնալով անգամ դիվանագիտական ճգնաժամ առաջ բերել Վաշինգտոնի և Անկարայի միջև: ԱՄՆ-ի պետքարտուղար Հիլարի Քլինթոնը շտապում է ներկայացնել Սպիտակ տան պաշտոնական դիրքորոշումը՝ հայտարարելով հետևյալը. «Օբամայի վարչակարգը խստորեն ընդդիմանում է Ներկայացուցիչների պալատի հանձնաժողովում միայն մեկ ձայնի առավելությամբ անցած բանաձևին և ամեն ջանք կգործադրի, որ այն չդրվի Պալատի լիագումարի նիստի օրակարգում»[374]:

Բանաձևի ընդունման հետ կապված ակտիվանում է նաև թուրքական լոբբինգը: Մասնավորապես կենտրոնացվում են թուրքական շահերը ներկայացնող և պաշտպանող ամերիկյան խոշոր ընկերությունների ջանքերը: Միացյալ Նահանգների ավիացիոն և պաշտպանական ոլորտի մի շարք կառույցներ, դեռևս բանաձևի քվեարկության նախօրեին՝ փետրվարի 26-ին, նամակով դիմում են Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հովարդ Բերմանին և հանձնաժողովի անդամներին՝ հորդորելով չընդունել ցեղասպանությունը ճանաչող օրինագիծը, որը, ըստ նրանց, կարող է վտանգել դեպի Թուրքիա իրականացվող ամերիկյան արտահանումները: Նրանք միաժամանակ նշում էին, որ բանաձևի ընդունումը կարող է վատթարացնել ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունները, իսկ ՆԱՏՕ-ի նշանակալից դաշնակցին ու առևտրային գործընկերոջն օտարելը բացասական հետևանքներ կունենա ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական շահերի,

[374] The Armenian Job: The Role of the Armenian Lobby in the Pattern of Enmity in South Caucasus, p. 16.

արտահանումն ու աշխատատեղերի ստեղծումը խթանելու ջանքերի վրա[375]:

Ինչպես նշում է ամերիկյան «Guardian» թերթը, բանաձևը ամերիկահայ ակտիվ լոբբինգի արդյունք էր: Թերթը միաժամանակ հայտնում էր, որ 2009 թ. Հայ դատի ամերիկյան հանձնախումբը 50 հազար դոլար է ծախսել, որպեսզի բանաձևի օգտին Կոնգրեսում լոբբինգ իրականացնելու համար, որը նաև պետք է ստիպեր նախագահ Օբամային ապրիլի 24-ի իր հերթական ուղերձում հայկական ջարդերը բնորոշել որպես «ցեղասպանություն»:

2011 թ. փետրվարի 19-ին Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախմբի համանախագահ Մարկ Քիրքին իր պաշտոնում փոխարինում է Էդ Ռոյսը, ով նույն թվականի դեկտեմբերի 13-ին Ներկայացուցիչների պալատ է ներկայացնում թիվ 306 բանաձևը: Այն Թուրքիային կոչ էր անում դադարեցնել կրոնական խտրականությունը, ինչպես նաև հետ վերադարձնել հայերից, հույներից, ասորիներից և մյուս քրիստոնյաներից բռնագրավված եկեղեցական գույքը[376]: Բանաձևի պաշտպանությամբ հանդես են գալիս Ներկայացուցիչների պալատի անդամների մեծամասնությունը: Երկժամյա քննարկումներից հետո այն ընդունվում է: Բանաձևի դրական արդյունքներից էր այն, որ արդեն 2012 թ. ապրիլին Թուրքիան ավարտին է հասցնում Դիարբեքիրի սուրբ Կիրակոս եկեղեցու վերանորոգման աշխատանքները:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ հերթական՝ թիվ 399 բանաձևը, 2012 թ. մարտի 20-ին Սենատի քննարկմանն են ներկայացնում Ռոբերտ Մենենդեզը

---

375 Տե՛ս ԱՄՆ ավիացիոն և ռազմական արդյունաբերության հսկաները կոչ են անում մերժել ցեղասպանության բանաձևը, https://www.azatutyun.am/a/1973398.html

376 Տե՛ս H. Res. 306, https://www.congress.gov/bill/112th-congress/house-resolution/306/text

և Մարկ Քիրքը: Այն Միացյալ Նահանգների կառավարությանը կոչ էր անում ճանաչել Հայոց ցեղասպանությունը, դասեր քաղել այդ դաժանությունից և դրանով կանխել ապագայում մարդկության դեմ իրականացվելիք նոր հանցագործությունները: Բանաձևը ստանում է բազմաթիվ սենատորների, այդ թվում Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի և Մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահ Բարբարա Բոքսերի, Ռազմական հանձնաժողովի նախագահ Կարլ Լևինի, Անվտանգության և կառավարական հարցերով հանձնաժողովի նախագահ Ջո Լիբերմանի և այլոց աջակցությունը:

«Ժամանակն է, որպեսզի Միացյալ Նահանգները միանան այն 19 երկրներին, որոնք 1915-1923 թթ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած իրադարձությունները պաշտոնապես ճանաչել են որպես ցեղասպանություն: Հայոց ցեղասպանությունը պատմական փաստ է և միայն անցյալի հանցագործությունները ճանաչելով կարող ենք երբևէ հույս ունենալ ,որ կկարողանանք կանխել մարդու իրավունքների դեմ ապագայում ուղղված նմանատիպ հանցագործությունները»,- նշում էր սենատոր Մենենդեզը[377]:

Բանաձևի ներկայացման կապակցությամբ Հայ դատի ամերիկյան հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը հանդես է գալիս հայտարարությամբ, որտեղ նշում է.«Մենք միանում ենք Նյու Ջերսիի, Իլինոյսի և Միացյալ Նահանգների ողջ հայության ու շնորհակալություն հայտնում սենատորներ Մենենդեզին ու Քիրքին երկար տարիների նրանց աշխատանքի համար՝ ուղղված Ամերիկայի կողմից

[377] Senators Menendez and Kirk Introduce Senate Armenian Genocide Resolution, https://anca.org/press-release/senators-menendez-and-kirk-introduce-senate-armenian-genocide-resolution/

Հայոց ցեղասպանության ճանաչումը կանխելու ուղղությամբ Թուրքիայի կողմից ճնշմանը դիմակայելու: Թուրքիան իրավունք չունի մարդկության դեմ իր կատարած հանցագործությունը ժխտելու հարցում պատանդ պահել Ամերիկային»[378]:

2012 թ. ԱՄՆ-ում անցկացվող նախագահական հերթական ընտրությունների կապակցությամբ Հայ դատի ամերիկյան հանձնախմբի նախագահ Քեն Խաչիկյանը հայտարարում է, որ հանձնախումբը չի պաշտպանում թեկնածուներից ո՛չ Օբամային, որն այդպես էլ չկատարեց նախորդ ընտրության ժամանակ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու վերաբերյալ իր տված խոստումը, ո՛չ էլ հանրապետական կուսակցության ներկայացուցիչ, Մասսաչուսեթսի նախկին նահանգապետ Միթ Ռոմնիին, որն առանձնապես հետաքրքրություն չի ցուցաբերել հայ համայնքի և նրա խնդիրների նկատմամբ[379]:

Փոխարենը, հայկական լոբբիստական կազմակերպությունները մեծապես կարևորում էին 2013 թ. Կոնգրեսի ընտրությունները: Ծավալած մեծ աշխատանքի շնորհիվ Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախումբը համալրվում է ևս 90 կոնգրեսականներով: Միաժամանակ Ներկայացուցիչների պալատի և Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովների նախագահներ են ընտրվում Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախմբի համանախագահներ Էդ Ռոյսը և Ռոբերտ Մենենդեզը:

Հայ դատի հանձնախումբը ընտրությունների հետ կապված հայտարարում էր, որ նոր Կոնգրեսը ամերիկահայերին հնարավորություն է տալիս

---

378 Նույն տեղում:

379 Տե՛ս ANCA Withholds Support for Presidential Candidates, https://anca.org/press-release/anca-withholds-support-for-presidential-candidates/

տարբեր արժեքների շուրջ ընդլայնել կապերը նորընտիր օրենսդիրների հետ՝ սկսած Հայոց ցեղասպանության և արցախահայության ինքնորոշման իրավունքի հարցում արդարության հաղթանակից մինչև ԱՄՆ-Հայաստան կապերի ամրապնդում և հայությանն առնչվող այլ հարցեր[380]:

Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանի՝ Վաշինգտոն կատարած պետական այցի օրերին՝ 2013 թ. մայիսի 20-ին, կոնգրեսականներ Գրիմմը, Շիֆը, Վալադաոն և Փալոնեն Ներկայացուցիչների պալատ են ներկայացնում թիվ 227 բանաձևը, որը կոչվում էր «Հայոց ցեղասպանության վերաբերյալ ճշմարտության և արդարության բանաձև»: Դրանով կոնգրեսականները կոչ էին անում ԱՄՆ-ի նախագահին հայ-թուրքական հարաբերությունների հիմքում դնել Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության փաստի ճանաչումը: Իր ելույթում Ֆրենկ Փալոնեն նշում էր, որ ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու ժամանակը վաղուց անցել է և իրենք չեն կարող անտարբեր մնալ, քանի դեռ Թուրքիայի կողմից ցեղասպանության վերաբերյալ ճշմարտությունը խեղաթյուրվում է[381]:

Ամերիկահայ լոբբիի խոշոր ձեռքբերումներից էր այն, որ 2014 թ. ապրիլի 10-ին Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովը վերջին 25 տարիների ընթացքում առաջին անգամ ձայների 12/5 հարաբերակցությամբ ընդունում է «Ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր» հայտարարող թիվ 410 բանաձևը[382]: Այն դեռևս ապրիլի 3-

---

380 Տե՛ս New Congress, New Opportunities: ANCA Welcomes 113th Congress, https://anca.org/press-release/new-congress-new-opportunities-anca-welcomes-113th-congress-2/

381 Տե՛ս Armenian Genocide Truth and Justice Act introduced in U.S. House of Representatives, https://anca.org/press-release/armenian-genocide-truth-and-justice-act-introduced-in-u-s-house-of-representatives/

382 Տե՛ս Senate Foreign Relations Committee Adopts Armenian Genocide Resolution, https://anca.org/press-release/senate-foreign-relations-committee-adopts-armenian-genocide-resolution/

ին Սենատ էին ներկայացրել Ռոբերտ Մենենդեսը և Մարկ Քիրքը: Բանաձևի ընդունումը կրկին հարուցում է Թուրքիայի դժգոհությունը: Վերջինիս արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն զանգահարում է ԱՄՆ-ի պետքարտուղար Ջոն Քերիին և հայտնում, որ Թուրքիայի կառավարությունը համապատասխան միջոցառումներ է իրականացնում այն նախաձեռնությունների դեմ, որոնք «կարող են անհանգստացնել Թուրքիային»: Թուրք նախարարը հույս էր հայտնում, որ իրադարձությունները նման զարգացում չեն ստանա:

Մեծ եղեռնի 100-ամյակի նախօրեին՝ 2015 թ. մարտի 18-ին, կոնգրեսականներ Ադամ Շիֆը, Ֆրենկ Փալոնեն, Դեյվիդ Վալադաոն, Էլիոթ Էնգելը և ուրիշներ, Ներկայացուցիչների պալատ են ներկայացնում թիվ 154 բանաձևը, որը ԱՄՆ-ի նախագահին կոչ էր անում նախագահին քայլեր ձեռնարկել արդար, կառուցողական, կայուն և երկարաժամկետ հայ-թուրքական հարաբերություններ հաստատելու ուղղությամբ, որոնք հիմնված կլինեին Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության փաստի ճանաչման և մարդկության նկատմամբ իրականացված այս հանցագործության վերաբերյալ միջազգային արդար բանաձևի ընդունման վրա[383]:

Ինչպես տեսնում ենք, թիվ 154 բանաձևը նախորդներից տարբերվում էր նրանով, որ այն ԱՄՆ-ի նախագահից պահանջում էր ոչ թե ճանաչել և դատապարտել Հայոց ցեղասպանությունը, այլ վերանայել Միացյալ Նահանգների արտաքին

---

[383] Տե՛ս H. Res. 154, Calling on the President to Work Toward Equitable, Constructive, Stable, and Durable Armenian-Turkish Relations Based Upon the Republic of Turkey’s Full Acknowledgment of the Facts and Ongoing Consequences of the Armenian Genocide, and a Fair, Just, and Comprehensive International Resolution of this Crime Against Humanity, https://www.congress.gov/bill/114th-congress/house-resolution/154/text

քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ՝ հաշվի առնելով Ցեղասպանության փաստը:

Հարկ է ուշադրություն դարձնել բանաձևի այն հատվածի վրա, որտեղ նշվում է, որ ԱՄՆ-ի պետական շահերի համատեքստում հնարավոր չի հասնել հաջողության՝ արդար, կառուցողական, կայուն և երկարաժամկետ հայ-թուրքական հարաբերությունների հաստատման, քանի դեռ այդ երկու երկրների միջև առկա են պետական, քաղաքական ու իրավական խնդիրներ, ինչպես նաև Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ժխտման հետ կապված հարցեր:

Ե՛վ Հայ դատի հանձնախումբը, և՛ Ամերիկայի Հայկական համագումարը, կոչ էին անում Կոնգրեսին և ԱՄՆ-ի նախագահին ճանաչել թիվ 154 բանաձևը:Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը նշում էր, որ ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման պետք է կողմնորոշվի և ասի ճշմարտությունը՝ աջակցելով ցեղասպանության դեմ պայքարին ուղղված միջազգային ջանքերին կամ տեղի տա Թուրքիայի իշխանություններին: Համբարյանը նշել է, որ իրենք միանում են ԱՄՆ սենատորների ջանքերին և ողջունում այդ բանաձևի նախագիծը:

«Սա այն Ցեղասպանությունն է, որը ճանաչել են սենատոր Բարաք Օբաման, սենատոր Քերրին, որը ճանաչել և որի մասին գիրք է գրել ՄԱԿ-ում դեսպան Փաուերը: Ժամանակն է, որպեսզի և՛ օրենսդիր, և՛ գործադիր իշխանությունները նույնն անեն: Մենք պետք է Թուրքիայի կառավարությանը ցույց տանք, որ չի կարող անտեսել պատմությունը, քանի որ Հայոց ցեղասպանության ժխտումը ոչ միայն ցեղասպանության վերջին քայլն է, այլ հաջորդ ցեղասպանության առաջին քայլը»,- նշում էր Ներկայացուցիչների պալատի արտաքին

հարաբերությունների հանձնաժողովի անդամ Բրեդ Ծերմանը[384]:

Ի՞նչ ելույթով հանդես եկավ Միացյալ Նահանգների նախագահ Բարաք Օբաման Մեծ եղեռնի 100-ամյակի տարելիցին և արդյո՞ք օգտագործեց «ցեղասպանություն» բառը ամերիկահայ համայնքին ուղղված իր՝ 2015 թ. ապրիլ քսանչորսյան ուղերձում: Այդ հարցերի պատասխանները տալիս են նրա ուղերձի հետևյալ տողերը. «Այս տարի մենք նշում ենք XX դարի առաջին ամենամեծ դաժանության՝ Մեծ Եղեռնի հարյուրամյակը: 1915 թվականից սկսած Օսմանյան կայսրությունում ապրող հայերը տեղահանվեցին, կոտորվեցին և մահվան դատապարտվեցին: Ոչնչացվեցին նրանց մշակույթն ու ժառանգությունը իրենց պատմական հայրենիքում: Այս սարսափելի բռնությունների հետևանքով մեկուկես միլիոն մարդ սպանվեց: Այս հարյուրամյակը շատ կարևոր է, որը կոչ է անում մեզ արժևորել պատմական հիշողության կարևորությունը և հաշվի նստել անցյալի հետ: Ես հետևողականորեն արտահայտել եմ իմ տեսակետը 1915 թ. դեպքերի հետ կապված, որը անփոփոխ է մնացել: Այս դեպքերի ամբողջական և արդար ճանաչումը բխում է բոլորիս շահերից: Ժողովուրդներն ու ազգերը ավելի ուժեղ են դառնում և կառուցում են ավելի արդար ու հանդուրժողական ապագա՝ հենց անցյալի ցավալի դեպքերը ճանաչելով: Այս կարևոր հարյուրամյակին մենք կանգնած ենք հայ ժողովրդի կողքին՝ հիշելով նրանց կորուստները: Մենք երաշխավորում ենք, որ այդ մարդկանց տառապանքները երբեք չեն մոռացվի: Մենք պարտավոր ենք դասեր քաղել այս ցավալի

384 ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության բանաձևի աջակիցների թիվը շարունակում է աճել, https://artsakhpress.am/arm/news/15176/podderzhka-proekta-rezolyucii-o-genocide-armyan-v-kongresse-prodolzhaet-rasti.html

ժառանգությունից, որպեսզի ապագայի սերունդները այն չկրկնեն»[385]:

Փաստորեն նախագահ Օբաման այդպես էլ չօգտագործեց «ցեղասպանություն» բառը, թեև գործածեց «Մեծ եղեռն» արտահայտությունը: Ամերիկահայ համայնքը իր դժգոհությունը հայտնեց այս առիթով, իսկ թուրքական պաշտոնական շրջանակներն էլ հանդես եկան դատապարտող հայտարարություններով՝ նշելով, որ «Եղեռն»-ը հավասարազոր է «ցեղասպանություն» բառին:

Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը Օբամայի ուղերձի հետ կապված նշել է, որ վերջինս արտաքին ուժերի ազդեցության ներքո ցեղասպանության հարցում տխուր բառախաղ է խաղում, ինչը գցում է ամերիկյան ժողովրդի հեղինակությունը[386]:

Ինչ վերաբերում է ամերիկյան նահանգների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը և դատապարտմանը, ապա պետք է նշենք, որ եթե 2015 թ. դրությամբ դրանց թիվը հասնում էր 43-ի, ապա ներկայումս հասել է 47-ի: 2015 թվականից հետո Հայոց ցեղասպանությունը ճանաչել են Արևմտյան Վիրջինիա (2016 թ. մայիսի 4), Վայոմինգ (2017 թ. ապրիլի 22), Տեխաս (2017 թ. մայիսի 19) և Այովա (2017 թ. օգոստոսի 24) նահանգները: Ընդ որում, նահանգների կողմից Ցեղասպանության ճանաչումը կարող է լինել ինչպես տվյալ նահանգի Սենատի ընդունած որոշման, այնպես էլ նահանգապետերի կողմից «Ապրիլի 24-ը հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր» սահմանելու միջոցով:

2015 թ. մայիսին Վաշինգտոնի Մայր տաճարում տեղի է ունենում Հայոց ցեղասպանության 100-

---

385 Barack Obama, Statement by the President on Armenian Remembrance Day, http://www.armenian-genocide.org/Affirmation.447/current_category.4/affirmation_detail.html

386 Տե՛ս ANCA Executive Director Aram Hamparian's Comment on President Obama's April 24th Statement, https://anca.org/press-release/anca-executive-director-aram-hamparians-comment-on-president-obamas-april-24th-statement/

ամյակի նշումը, որին մասնակցում էին Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսները, ՀՀ նախագահը, Միացյալ Նահանգների փոխնախագահ Ջո Բայդենը և ՄԱԿ-ում ԱՄՆ-ի մշտական ներկայացուցիչ Սամանտա Փաուերը[387]։

Այսպիսով, ԱՄՆ-ի Սենատում և Ներկայացուցիչների պալատում բազմիցս քննարկվել են Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության վերաբերյալ բանաձևեր։ Ներկայացուցիչների պալատը երկու անգամ ընդունել է համապատասխան որոշումներ «Ապրիլի 24-ը հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր սահմանելու» մասին, իսկ Սենատն էլ մի քանի անգամ բավականին մոտ է եղել Հայոց ցեղասպանության ճանաչմանը։ Այնուամենայնիվ, ամերիկյան պետական ու քաղաքական շահերը և Թուրքիայի հետ հարաբերությունների վատթարացումը ստիպել է ԱՄՆ-ի կառավարությանը հրաժարվել Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևերի վերջնական հաստատումից։ Այսօր էլ պաշտոնական Անկարան սպառնում է ԱՄՆ-ին նման բանաձև ընդունելու դեպքում թուրք-ամերիկյան հարաբերություններում լուրջ բարդությունների հնարավոր առաջացմամբ՝ ընդհուպ մինչև ՆԱՏՕ-ից իր դուրս գալը։

Այդ ամենը նշանակում են, որ ԱՄՆ-ի հայկական լոբբիստական կազմակերպությունները առաջիկա տարիներին ստիպված են լինելու հաղթահարել լրջագույն դժվարություններ՝ Հայոց ցեղասպանության ճանաչմանը նպատակաուղղված իրենց հետագա գործունեության մեջ։ Ըստ որում նրանք լուրջ խնդիրներ ունեն լուծելու՝ կապված

387 Տե՛ս Մսըրլեան Զ., Հայկական հարցի եւ Արցախեան հիմնախնդրի հոլովոյթը Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակին, //«Հայկազեան հայագիտական հանդէս», հատ. ԼԶ, էջ 583-584։

ինչպես վերջին երեք նահանգների □Ալաբամա, Ինդիանա և Միսիսիպի□ կողմից ցեղասպանության փաստը ճանաչելու հետ, այնպես էլ դրանից հետո, հատկապես ԱՄՆ-ի գործադիր իշխանության կողմից այդ ուղղությամբ վարվող քաղաքականության արմատական փոփոխության հետ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնախնդրի ուսումնասիրությունը մեզ հանգեցրել է հետևյալ հիմնական եզրակացություններին:

1. Առաջին հայերը ԱՄՆ են մեկնել դեռևս XVII դարի սկզբներից, ինչը հիմնականում պայմանավորված էր անձնական, կրթական, տնտեսական, քաղաքական և կրոնական գործոններով: Օսմանյան կայսրության հայ ժողովրդի նկատմամբ համիդյան, երիտթուրքական և քեմալական վարչակարգերի կողմից շուրջ երեք տասնամյակների ընթացքում (1894-1923 թթ.) իրականացված կոտորածների հետևանքով հայության ներգաղթը դեպի Միացյալ Նահանգներ վեր է ածվում տնտեսական, քաղաքական, մշակութային ու կրոնական ապահով կյանքի հեռանկարից զրկված և հասարակության բոլոր շերտերը ներառող բնակչության զանգվածային գաղթի: Դրա հետևանքով մեծանում է հայության թվաքանակը ԱՄՆ-ում: Ձևավորվում է ԱՄՆ-ի հայ համայնքը:

2. Թուրքական կոտորածներից փրկված և ԱՄՆ-ում հաստատված հայերի ու նրանց սերունդների խնդիրն է դառնում հասնել ԱՄՆ-ի օրենսդիր և գործադիր իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը և դատապարտմանը: Այդ նպատակին հասնելու համար հայերը դիմում են ԱՄՆ-ի քաղաքական կյանքում մեծ տարածում ունեցող լոբբինգի ինստիտուտին: Ստեղծվում են ամերիկահայ առաջին լոբբիստական կազմակերպությունները՝ Ամերիկայի հայ ազգային միությունը, Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն, որի իրավահաջորդն է դառնում Հ. Յ. Դաշնակցություն կուսակցության կողմից 1941 թ. ստեղծված Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը, Ամերիկայի հայ ազգային խորհուրդը, Հայաստանի օգտին ամերիկյան եկեղեցական հանձնախումբը և այլն:

3. Լոբբինգը ԱՄՆ-ի քաղաքական կյանքի անբաժանելի բաղադրիչ է,որի հիմքում ընկած է այն գաղափարը,ըստ որի,անհատները կամ խմբերը կարող են անմիջական մասնակցություն ունենալ երկրի քաղաքական գործընթացներում: Լոբբինգը հիմնավորվում է ԱՄՆ-ի Սահմանադրությամբ ամրագրված Միջնորդության իրավունքով: Նրա հիմնական նպատակն է ազդել պաշտոնավարող քաղաքական գործիչների և պետական իշխանական կառույցների վրա՝ ուղղորդելով նրանց ընդունելու համապատասխան որոշումներ՝ ի շահ և ի նպաստ որոշակի խմբերի:

4. Ամերիկահայ լոբբին իր տեսակով էթնիկական է և ստեղծվել է հայ համայնքի կողմից: Ստեղծված կազմակերպությունները պաշտոնապես չեն ներկայացնում ԱՄՆ-ի ողջ հայ համայնքը, բայց սերտորեն կապված են վերջինիս հետ և ֆինանսավորվում են նրա կողմից: Ամերիկահայ

համայնքը հայկական լոբբիին մեծ օժանդակություն է ցուցաբերում ոչ միայն դրամական միջոցներով, կազմակերպված նախաձեռնություններին ու միջոցառումներին անմիջական ակտիվ մասնակցությամբ, այլև ԱՄՆ-ում տեղի ունեցող նախագահական, Կոնգրեսի և նահանգային ընտրություններին արձագանքելով՝ փորձելով միասնաբար հանդես գալ և ներկայացնել հայ համայնքի դիրքորոշումը:

5. Վերջին ավելի քան կես դարի ընթացքում ամերիկահայ լոբբիստական գլխավոր կազմակերպությունները երկու խոշոր կառույցներ են, որոնք պաշտոնապես հանդես են գալիս Ամերիկայի Հայ դատի հանձնախումբ և Ամերիկայի Հայկական համագումար անուններով: Նրանք ակտիվ և ուժեղ են հատկապես Կալիֆորնիա, Մասսաչուսեթս և Միչիգան նահանգներում: Երկու կազմակերպություններն ունեն գործունեության ընդհանուր գծեր, նրանց նպատակներն էլ առաջին հայացքից նույնական են թվում: Մինչդեռ իրականում դրանք բավականին տարբեր են:Հայ դատի հանձնախումբն իր հիմնական նպատակն է հռչակել «Միացյալ, ազատ և անկախ Հայաստան»-ը, իսկ Ամերիկայի Հայկական համագումարը՝ «ցեղասպանության դատապարտումը և մարդու իրավունքների պաշտպանությունը»: Հայկական լոբբիստական կազմակերպությունները միմյանցից տարբերվում են նաև լոբբինգ իրականացնելու մեխանիզմներով: Հայ դատի հանձնախումբը հենվում է մեծաքանակ կողմնակիցների և համակիրների վրա, իսկ Ամերիկայի Հայկական համագումարը՝ ազդեցիկ անձանց վրա:

Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրն առանցքային է երկու կազմակերպությունների

գործունեության մեջ: Այս նպատակին հասնելու համար նրանք լոբբինգ են իրականացնում ոչ միայն Կոնգրեսի երկու պալատներում, այլև նահանգային ու քաղաքային մակարդակներում: Հայ դատի հանձնախումբն ունի 45 գրասենյակ՝ տեղակայված տարբեր նահանգներում: Դրանք ջանում են ամերիկահայ համայնքի ձայնը լսելի դարձնել դաշնային, նահանգային և տեղական մակարդակներում:

Չնայած տարբերություններին, երկու կառույցների համատեղ ջանքերի շնորհիվ է, որ 1995 թ. հնարավոր եղավ կյանքի կոչել Կոնգրեսի Հայկական հարցերով հանձնախումբը, որն այսօր կարևոր դերակատարում ունի հայկական շահախնդրությունների, հայանպաստ որոշումների և բանաձևերի ընդունման գործում: Ամերիկահայ համայնքը, երկար ճանապարհ է անցել և բավականին կազմակերպված է՝ ունենալով թե՛ ներքին, թե՛ արտաքին հարցերով զբաղվելու մեծ փորձ ու վաստակ:

6. Հայկական լոբբիստական կազմակերպությունների գործունեության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը ԱՄՆ-ի կողմից: Այդ ուղղությամբ տարվող պայքարը նոր թափ է ստանում Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցից՝ 1965 թվականից սկսած: Ամերիկահայ լոբբիի գործունեության այս շրջանի ձեռքբերումներից կարելի է առանձնացնել ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի կողմից Հայոց ցեղասպանությունը դատապարտող թիվ 148 և 247 համատեղ բանաձևերի ընդունումը և ամերիկյան շուրջ երկու տասնյակ նահանգների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը:

7. Ամերիկահայ լոբբին Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման համար իրականացվող իր

